Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ 1918 –1920 ԹԹ. ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 633 (2Հ)+66.5(2Հ)
Ղ 471

*Հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը*

**Ղարիբյան Ալիկ**
Ղ 471 Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թթ. և Մեծ Բրիտանիան: Մենագրություն / ԵՊՀ; Ա. Ղարիբյան.-Եր.: ԵՊՀ հրատ.- 282 էջ:

Աշխատության մեջ ներկայացվում են Հայոց Հայրենիքի մի հատվածի՝ Արցախ աշխարհի շուրջ ծավալված իրադարձությունները 1918-1920 թթ.: Համակողմանի վեր են հանվում Առաջին աշխարհամարտի ավարտին գերտերությունների շահերի բախումը Այսրկովկասում, թուրքթաթարական նկրտումների դրսևորումը հայկական երկրամասերի նկատմամբ: Մենագրության մեջ Արցախահայության ազատագրական պայքարին տրվում է առանցքային տեղ:

Հավելվածով ներկայացված են բազմաթիվ արխիվային վավերագրեր, որոնցից շատերը մինչ այժմ գիտական շրջանառության մեջ դրված չեն եղել:

Հասցեագրվում է ընթերցող լայն շրջանակներին:

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 633 (2Հ)+66.5(2Հ)

ISBN 978-5-8084-1671-0

© ԵՊՀ հրատ., 2012
© Ղարիբյան Ա., 2012

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ............ 5

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՀԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԻՆ
1.1 Իրավիճակը Լեռնային Ղարաբաղում առաջին աշխարհամարտի ավարտին ............ 7
1.2 Թուրքական ներխուժումն Անդրկովկաս և երկրամասը բռնակցելու ծրագրերը ............ 20
1.3 Դաշնակից երկրների շահերի բախումն Անդրկովկասում առաջին աշխարհամարտի ավարտին ............ 36

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**
**ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՄՈՒՏՔՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԵՎ ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ**
2.1 Բրիտանական զորքերի մուտքն Անդրկովկաս: Իրադրությունը Ղարաբաղում 1918 թ. վերջին ............ 45
2.2 Մուսավաթականների նկրտումները Լեռնային Ղարաբաղում: Հայ բնակչության կոտորածները և անգլիական զինվորական հրամանատարության դիրքորոշումը ............ 77

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**
**ՀՀ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 1919-1920 ԹԹ.**
3.1 Իրավիճակը Լեռնային Ղարաբաղում 1920 թ. սկզբին և ՀՀ դիրքորոշումը բրիտանական զորքերի դուրս բերումից հետո ............ 142
3.2 Լեռնային Ղարաբաղի խնդիրը Փարիզի Վեհաժողովում, հայկական և բրիտանական պատվիրակությունների փոխհարաբերությունները ............ 157

**ՎԵՐՋԱԲԱՆ** ............ 167
**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ** ............ 170
**ՀԱՎԵԼՎԱԾ** ............ 175

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի քաղաքակրթական գործընթացներում մարդկությունը հայտնվում է յուրօրինակ իրավիճակում: Մի կողմից ամբողջ թափով աշխարհում ընթացող գլոբալացումը և մյուս կողմից տարբեր շրջաններում գլուխ բարձրացրած ծայրահեղականությունը ծնում են նոր հիմնախնդիրներ, որոնք պահանջում են առանձնահատուկ լուծումներ: Աստիճանաբար զարգացող և ընդլայնվող ռազմաքաղաքական գործընթացները մարտահրավերներ են նետում պետություններին, ազգերին, էթնիկ հանրություններին: Այս պայմաններում կարևոր խնդիր է դառնում իրադրության լիարժեք տիրապետումը և համակողմանի վերլուծությունը: Անվիճելի է նաև, որ մարդկային կենսագործունեության օրինաչափությունները մեծ մասամբ շաղկապված են պատմական անցյալի հետ: Պատմության օրինաչափություններից է նաև այն, որ միայն պայքարող էթնոսները կարող են իրենց գոյը շարունակել անգամ այն պարագայում, երբ նրան սպառնում է թշնամին թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական ժամերին:

Այս իմաստով, անտարակույս, պատմական իրադարձությունների օրինաչափությունների բացահայտումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն:

Վերոնշյալ բնութագրումները լիովին համապատասխանում են հայկական մի երկրամասին՝ Արցախին, նրա պատմական անցյալին և ապա՝ ներկային: Պատմական Հայաստանի այդ հրաշագեղ երկրամասի հայությունն իր մաքառումով ժամանակների հորձանուտում միշտ պահպանել է նվիրումը, կապը մայր հայրենիքի հետ՝ լինելով և մնալով նրա անբաժան մասը: Չնայած բազում բռնի փորձերին և ճնշումներին՝ այդ երկրամասը շարունակել է հարատևել:

Արցախ-Ղարաբաղի պատմությունը ևս ունեցել է բարդ և դժվարին ժամանակահատվածներ, որոնց մեջ հատկապես առանձնանում է 1918-1920 թթ. շրջանը, երբ տեղի հայության գլխին կրկին կախվեց ոչնչացման և օտարման վտանգը: 1918-1920 թթ. Արցախ աշխարհում տեղի ունեցած իրադարձությունները, բրիտանական զորքերի

մուտքը և ՀՀ կազմավորումը նոր իրավիճակ ստեղծեցին հայության համար: Հայաստանի անկախությունը, չնայած մեծ կորուստներին, ազգային վերածնության հույսեր էր ներշնչում, ինչը եղավ նաև մեր օրերում՝ 1990-1991 թթ.: Ստեղծված կացությունը և քաղաքական իրադրությունը հայ ժողովրդից պահանջում էր բոլոր ուժերի համախմբում ազգային խնդիրների շուրջ:

1918-1920 թթ. շրջանում հայ ժողովուրդը կենաց և մահու պայքար մղեց թշնամու դեմ: Այդ պայքարում եղան նաև բացթողումներ ու թերացումներ, ինչի հետևանքով մենք ունեցանք անդառնալի կորուստներ: Այս տեսանկյունից կենսականորեն անհրաժեշտ է պատմության այս շրջանի ճիշտ արժևորումը և գնահատումը: Իրականացման դեպքում հնարավոր է ոչ միայն ճիշտ գործել ներկայում (ինչպես նաև 1988 թ. Արցախյան Շարժման ժամանակ), այլև ապագայում: Ահա այստեղ է, որ յուրաքանչյուր հայ պետք է լավ ընկալի իր իսկ պատմության դասերը, յուրացնի դրանք ապագայում այն ճիշտ կիրառելու համար:



# ԳԼՈՒԽ I

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՀԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԻՆ

## 1.1. ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԻՆ

Հայ ժողովրդի պատմական ճակատագրում մեծ տեղ ու դեր է ունեցել «Արցախ» նահանգը: Արցախ-Ղարաբաղի շուրջ վեճեր սկսվեցին, երբ թուրք-մուսավաթական ուժերը իրենց զավթիչ նպատակներին հասնելու համար փորձեցին այս երկրամասը ամեն գնով անջատել Հայաստանից:

Ներկայիս Լեռնային Ղարաբաղի տարածքը կազմում է պատմական «Արցախ» նահանգի մի մասը: Այն Մեծ Հայքի 15 նահանգներից առանձնանում էր իր բարձրադիրությամբ, անառիկությամբ և կոչվել է «Ամուր»[1]: Ղարաբաղը ընդգրկում է Արցախի կամ Առան անունով ևս հայտնի նահանգի միջնամասը՝ Սյունիքից մինչև Կուր: Ըստ Ղևոնդ Ալիշանի, Ղարաբաղը իր այդ անունը ստացել է խոր անտառների, այգիների և դրանց ստվերների պատճառով: Հայտնի է նաև «Սև Այգի» (Ղարա-Բաղ) անունը պարսկերենից:

Ղարաբաղը հայկական լեռնաշխարհի հետ կապված է եղել թե՛ աշխարհագրորեն, թե՛ տնտեսապես և թե՛ քաղաքակրթական առումով: Դա են վկայում նույն ազգությամբ, կրոնով և ավանդույթներով կապված ազգաբնակչության գոյությունը մինչ օրս, որտեղ գերեզմանները նույնիսկ և պատմական բազում հետքեր՝ հուշարձաններ, կոթողներ, կառույցներ և այլ մշակութային արժեքներ վկայում են անհիշելի ժամանակներից այդ երկրամասի զուտ հայկական լինելը[2]:

---

[1] **Ալիշան Ղ.**, Արցախ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1993, էջ 6:

[2] Armenia: Political & Ethnic Boundaries 1878 –1948; London, 1998, p. 800-801 (Այսուհետ՝ Armenia: Political & Ethnic Boundaries 1878 –1948):

Արցախը հնուց ի վեր բնակեցված է եղել հայերով: XVI - XVIII դարերի ընթացքում Ղարաբաղի հյուսիսային սահմաններն են ներթափանցում թուրքական քոչվոր ցեղերը: Այդուհանդերձ, Արցախի մելիքությունները (Վարանդա, Խաչեն, Դիզակ, Ջրաբերդ, Գյուլիստան) երկար ժամանակ կարողացել են պահպանել իրենց ինքնուրույնությունը:

Արցախահայությունը աչքի է ընկնում հայրենասիրությամբ: Պատմական, ռազմավարական, ազգագրական տեսանկյունից Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է: Այն պատմական Հայաստանի տարածքներից մեկն է, որը, չնայած բազում քաղաքական խառնաշփոթ իրավիճակներին, արտագաղթին և ձուլմանը, մնացել է հայկական: Ղարաբաղի հայ բնակչության առավելություններից է և այն, որ զերծ է մնացել ձուլումից և հազվադեպ է նկատվել բնակչության արտագաղթ:

Հայ բնակչությունն այստեղ ունեցել է նստակյաց կյանքին բնորոշ կենսակերպ: Արցախի (Լեռնային Ղարաբաղ) պատկանելիության վերաբերյալ վեճերը ծագեցին 1918 թ., երբ Անդրկովկասում պատմական որևէ նախահենք չունեցող Ադրբեջանն իր կազմավորման պահից հանդես եկավ տարածքային հավակնություններով՝ ձգտելով գրավել հայկական Արցախը, Զանգեզուրը և Նախիջևանը:

1813 թ. Գյուլիստանի և ապա 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրերով հաստատվեց Արցախի պատմական տարածքի անցումը Ռուսաստանի տիրապետության տակ: 1868 թ. այն գերակշիռ մասով մտավ նոր կազմավորված Ելիզավետպոլի նահանգի մեջ: Ղարաբաղի ազգային կազմի մասին հավաստի տեղեկություններ կարող ենք քաղել ցարական կառավարության վիճակագրությունից[1]: Ըստ այդ վիճակագրության՝ 1916 թ. տվյալներով Շուշի քաղաքի 43 869 բնակչությունից 23 396 – ը հայեր էին, 1.249–ը՝ ռուսներ, 35-ը՝ եվրոպացիներ, 36-ը՝ քարթվելներ, 25-ը՝ լեռնականներ և միայն 19.121–ը՝ մահմեդականներ: Նույն վիճակագրությունը ցույց է տալիս, որ բնակչության մեծամասնությունը (53.33%) հայեր էին: Շուշի քաղաքը, որը Արցախի կենտրոնն էր համարվում, բաժանված էր երկու մասի՝ հայկական և մահմեդական:

Անդրկովկասի հայ բնակչության վերաբերյալ հստակ և մեկնաբանված տվյալներ են բերվում բրիտանական արխիվների՝ 1998 թ.

[1] Кавказский Календарь на 1 января, 1916 г, Тифлис, 1917 г..



հրատարակված փաստաթղթերի և քարտեզների ժողովածուի մեջ[1]: Տվյալների բազան կազմում է ցարական վիճակագրությունը:

Կովկասի բնակչության բաժնում նշվում է, որ Ադրբեջանի պատվիրակությունը բացարձակ կեղծում է հայ բնակչությանը վերաբերող տվյալները և թվերը[2]: Օրինակ՝ Անդրկովկասում բնակվող հայերի թիվ է նշվում 1.465.504-ը, որը չի համապատասխանել իրականությանը: Նույն փաստաթղթի համաձայն, հայերի իրական թվաքանակը 1 809.605 է, այլ խոսքով, ադրբեջանական կողմի կեղծիքն ակնհայտ է՝ տարբերությունը կազմում է 344.101:

Նույն ժողովածուի մեջ, «Հայաստանի Հանրապետության բնակչությունը» փաստաթղթում, հիշատակվում է նաև Հայաստանի Հանրապետության 67.350 քառ. կմ տարածքի հայ բնակչության թվաքանակը՝ 1.294.792 մարդ, որը կազմում էր ՀՀ բնակչության 60%-ը[3]: Հայերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ.

1. Կարսի մարզ. 15.000 քառ. կմ, 122.056 մարդ
2. Ախալքալակ. 2.550 քառ. կմ, 82.775 մարդ
3. Բորչալու (մի մասը). 5.200 քառ. կմ, 64.000 մարդ
4. Ղազախ (մի մասը). 3.400 քառ. կմ, 61.000 մարդ (ընդգծումը մերն է՝ Ա.Ղ.)
5. **Ելիզավետպոլ** (մի մասը). 4.000 քառ. կմ, 52.000 մարդ
6. **Ջևանշիր** (մի մասը). 3.700 քառ. կմ, 22.000 մարդ
7. **Շուշի** (մի մասը). 2.300 քառ. կմ, 98.000 մարդ
8. **Կարյագինո** (մի մասը). 450 քառ. կմ, 22.000 մարդ
9. **Զանգեզուր** (մի մասը). 6.000 քառ. կմ, 100.000 մարդ
10. Երևան. 24.750 քառ. կմ, 669.871 մարդ:

Անառարկելի էր, որ Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն էր կազմում: Այդուհանդերձ, Ադրբեջանի Հանրապետությունը իր ստեղծման պահից սկսած հավակնություններ է ներկայացնում և հակամարտություն հրահրում այդ շրջանում բնակվող հայ և մահմեդական ազգաբնակչության միջև: Հաշվելով Ղազախ, Շուշի, Ելիզավետպոլ, Ջևանշիր, Կարյագինո գավառների լեռնային հատվածների տարածքը, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է

[1] Armenia: Political and Ethnic Boundaries 1878-1948, London, Editor Anita L.P. Burdett, Archive Edition, 1998.

[2] Նույն տեղում, էջ 453:

[3] Նույն տեղում, էջ 489:

Ղարաբաղի պատմական տարածքին, գալիս ենք այն եզրակացությանը, որ պատմաաշխարհագրական և էթնիկ առումներով Ղարաբաղը 1917 թ. ներկայացրել է ամբողջություն՝ իր մեջ ընդգրկելով մոտ 13 850 քառ. կմ տարածք՝ Ղազախի, Ելիզավետպոլի, Շուշու, Զանգեզուրի, Կարյագինոյի գավառների մի մասով և 255.000 հայ բնակչությամբ: Այս տարածքում բնակվել են նաև 72.500 մահմեդականներ, որոնք փոքրամասնություն էին, իսկ հայերը կազմել են բնակչության 75.46%-ը[1]: Նույն տվյալներն են բերված նաև "Кавказский Календарь"-ում, ըստ որի հայերը տեղաբաշխված էին.

1. Ղազախի գավառ՝ 61.000
2. Ելիզավետպոլի գավառ՝ 52.000
3. Զանգեզուրի գավառ՝ 22.000
4. Շուշիի գավառ՝ 98.000
5. Կարյագինոյի գավառ՝ 22.000[2]:

Ընդհանուր՝ 255 000:

Պակաս չէին Ադրբեջանի նկրտումները նաև հայկական Զանգեզուրի նկատմամբ: Ավելին, Ադրբեջանի հավակնությունների սլաքն ուղղված էր նաև Երևանի և Թիֆլիսի նահանգների վրա, որտեղից Շարուր-Դարալագյազի գավառի I, II ոստիկանության տեղամասերը (նախկին ցարական բաժանմամբ) Նախիջևանի գավառից I, II, III, IV ոստիկանության տեղամասերը, Նոր Բայազետի գավառից I, II շրջանները աներկբա համարվում էին Ադրբեջանի անվիճելի տարածք, իսկ մի շարք շրջաններ Երևանի նահանգից՝ Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Նոր - Բայազետի գավառներից, համարվում էին վիճելի: Վիճելի էին համարվում նաև Թիֆլիսի նահանգից Թիֆլիսի, Սղնախի, Բորչալուի բազմաթիվ ոստիկանական տեղամասեր:

Այլ կերպ ասած՝ Երևանի նահանգից Ադրբեջանի «անվիճելի մաս» էր համարվում 9 858.69 քառ. կմ, իսկ վիճելի՝ 7 913.17 քառ. կմ-ը: Թիֆլիսի նահանգից վիճելի էր համարվում 3 685.13 քառ. կմ տարածք[3]:

Այլ աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն, Ղարաբաղի հայ բնակչության թվեր են նշվում 150 000 կամ 182 000[1]: Սակայն պետք է փաստել, որ Ղարաբաղի բնակչությունը այս աշխատությունների մեջ հաշվարկվել է ըստ ցարական վիճակագրերի, ուր ներառված չեն Արցախ-Ղարաբաղի բոլոր լեռնային հատվածները կամ պատմական մասերն իրենց բնակչությամբ (Գյուլիստան, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ, Դիզակ): Այնտեղ միայն ներառված է Շուշու և Զանգեզուր-Կարյագինոյի մի մասը, ուր 1910 թ. տվյալներով 150.000 հայեր էին բնակվում: Մենք այն ներկայացնում ենք ստորև:

Ղարաբաղի հայ բնակչության մասին, բնականաբար, կան նաև բազմաթիվ հայկական վկայություններ, որոնցից մեկը Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի տվյալներն են:

1914 թ. դրությամբ Ղարաբաղի Հայոց Թեմն իր մեջ ընդգրկում էր 206 768 լուսավորչական հայեր[2]:

Հավաստի տվյալներ պարունակող հայկական մեկ այլ փաստաթուղթ, որը թվագրվում է 1917 թ., փաստում է հետևյալը (փաստաթուղթը տրվել է Թիֆլիսի անգլիական հրամանատարությանը[3]).

| **Բնակավայրի անունը** | ընտ. թ. | տղմ. | կին | ընդ. |
|---|---|---|---|---|
| Քաղաք Շուշի | 3000 | 10779 | 10372 | 21151 |
| Վարանդա | 6399 | 26446 | 22479 | 50034 |
| Դիզակ | 4156 | 17361 | 14970 | 32308 |
| Խաչեն | 3943 | 15277 | 12374 | 27770 |
| Ջրաբերդ | 2254 | 10070 | 8174 | 18244 |
| Ելիզավետպոլ | 1418 | 5454 | 4328 | 9782 |
| Գյուլիստան | 4296 | | | 45657 |

Ըստ վերոնշյալ փաստաթղթի՝ Ղարաբաղի լեռնային մասի հայ բնակչությունը կազմել է մոտ 240 հազար:

Ընդհանուր առմամբ, բուն Արցախ-Ղարաբաղում (ներառյալ Ղա-

[1] Armenia: նշվ. աշխ., էջ 477:
[2] Кавказский Календарь, նշվ. աշխ., էջ 194-195:
[3] Адрес-Календарь Азербайджанской Республики на 1920 г., под ред. Ставровского, Баку, 1920 г., cm. 50.



[1] **Հ. Մ. Հարությունյան,** Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., ՀՀ ԳԱԱ, Երևան, 1996, էջ 33 (տողատակ) այնտեղից էլ ՀՀ ՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 128, թ. 249, Armenia: Political & Ethnic Boundaries: 1878 –1948; page 577 (1912 թ. Էջմիածնի Կաթողիկոսական տվյալներ), ՀԱԱ, ֆ. 314; ց. 1, գ. 34, թ. 21: Աբրահամ Իսայի Կիսիբեկյան; «Հուշեր», մաս հինգերորդ, Ղարաբաղ-Բաքու, 1945-1947:
[2] **Վահրամ Բալայան;** Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2002, էջ 293:
[3] ՀԱԱ, ֆ.150, ց.1, գ. 59, թ. 1-8:

գախի, Ելիզավետպոլի, Շուշու, Ջևանշիրի, Կարյագինոյի գավառների լեռնային մասերը) բնակվել են 255.000 հայեր: Եվ եթե դրան ավելացնենք Զանգեզուրի հայ բնակիչների թիվը, ապա այն կկազմի 355.000, 122 000 մահմեդականության դիմաց:

Ամփոփելով բոլոր փաստական տվյալները, ակնհայտ է դառնում, որ Ղարաբաղում հայերի թիվը գերազանցել է 200.000-ը, իսկ եթե ավելի ճշգրիտ գտնվենք, այն հասել է մոտ 255 000-ի: Ուստի, միանգամայն հիմնավոր էր Կոստանդնուպոլսում 1918 թ. հուլիս-նոյեմբերին կայացած կոնֆերանսին «Ղարաբաղի Հայ Գյուղացիության» ուղարկած փաստաթղթում նշված այն վկայությունը, որ. «Հայերը կազմում են Ղարաբաղի լեռնային մասի գերակշիռ մասը»[1]: Ասենք նաև, որ վիճակագրական վերջին տվյալներով (1917 թ..) Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Շուշու, Կարյագինոյի և Զանգեզուրի գավառների հայ բնակչությունը (մոտ 300 000 մարդ), և տեղաբաշխված լինելով հիմնականում այս գավառների լեռնային մասերում, թաթարական բնակչության հետ համեմատած բացարձակ մեծամասնություն էին կազմում:

Արցախի Գյուղացիական համագումարը դիմելով Կ.Պոլսի կոնֆերանսին, փաստում էր, որ «Ղարաբաղի Հայ Գյուղացիությանը, ելնելով ազգերի խաղաղ գոյակցությանը նպաստելու պատրաստակամությունից և հարգելով արդարության, ազգերի անբաժանության սրբազան իրավունքները, միաժամանակ, Կոստանդնուպոլսի Խաղաղության Կոնֆերանսի մասնակիցներից խնդրում էր Ղարաբաղի հարցը քննարկելու ժամանակ նկատի ունենալ 300 000 հայ բնակչությամբ այդ շրջանի անվիճելի իրավունքը միանալու Հայաստանի Հանրապետությանը, գտնելով, որ **հարցի այլ լուծումը միայն կհանգեցնի հայության այդ հատվածի նյութական և բարոյական նոր տառապանքների**»[2]:

Արցախահայությունը քաջ գիտակցում էր, որ Ադրբեջանի հանրապետությունը իր գոյության սկզբից կորդեգրի այս շրջանների հայ բնակչության վերացման քաղաքականություն: Չմոռանանք նաև, որ 1918 թ. ընթացքում Արցախի հայ բնակչության նկատմամբ ցեղասպանության քաղաքականություն փորձեցին իրագործել թուր-

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., **В. А. Микаелян,** А. Н. Армении, Институт Истории, Сборник док. и материалов, Ереван, 1992, стр. 7.

[2] Նույն տեղում:



քերը: Կոտորածներ կազմակերպվեցին Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչության նկատմամբ[1]:

Էլ ավելի ողբերգական ճակատագիր բաժին ընկավ Շուշիին: 1920 թ. մարտի 23-ին ադրբեջանական ցեղասպանները բնաջնջում են հայկական թաղամասը: Այդ մասին է վկայում հայոց կաթողիկոսին ուղարկված Շուշիի Կարապետ քահանա Վարդապետյանցի և ատենադպիր Միրզա Տեր-Սարգսյանի հաղորդագրությունը. «12-13 հազար հայությունից 6 հազարը փախան գյուղերը, իսկ 4 հազարը՝ մեծ մասը տղամարդիկ, սրի քաշվեցան, գնդակահարվեցան ու հրկիզվեցան... մոտ 3 հազարը մնացին քաղաքում, գերի թուրքերի ձեռքին, որոնց մի մասը 400 հոգի երիտասարդ ուժեր տներում և բանտերում սրածվեցան, 700 հոգի կին ու երեխա, ծեր ու պառավ արձակվեցան և հասան գյուղերը, իսկ մնացածը, սիրուն կանանց ու աղջիկերանց հետ գտնվում են թուրքերի տներում, նահանգապետ Սուլթանովի մոտ և բանտերում»[2]: Այս կերպ և այսպիսի միջոցներով հայաթափվեց Շուշին, մեծ հարված հասցնելով Ղարաբաղի հնօրյա հայկական կենտրոնին:

Այն, որ Ղարաբաղը և Զանգեզուրը մշտապես կենսական կարևոր տարածք հանդիսացել և հանդիսանում են հայ ժողովրդի համար, հակամարտող երկու կողմերն էլ լավ հասկանում էին: Ղարաբաղի և Զանգեզուրի միջով է իրականացվել կապը հայկական մյուս տարածքների հետ, ուստի դրանց կորուստը կհանգեցներ մահմեդականների կողմից հայկական տարածքների օղակմանը[3]: Կարծում ենք, որ նույն գիտակցումը պետք է լինի նաև այսօր և ապագայում, առանց որի հայ ժողովրդի գոյությունը կդրվի հարցականի տակ:

Ղարաբաղի անջատումը միաժամանակ, կնշանակեր անպաշտպան թողնել հայությանը արևելյան Անդրկովկասից՝ Դաղստանից եկող վտանգից, քանի որ տեղի մահմեդական բնակչությունը մեծ ցանկություն ուներ համախմբելու մահմեդական բնակչությանը մեկ միասնության մեջ:

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. / Քաղաքական պատմ. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, ՀՀ կառավարությանը առընթեր արխիվային գործերի վարչություն, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2000, էջ 471:

[2] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., նշվ. աշխ., էջ 470:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355 (մաս I), թ. 3:

1917 թ. փետրվարյան իրադարձություններն իրենց ազդեցությունն ունեցան նաև Ղարաբաղում: Հասարակական-քաղաքական կյանքը նկատելիորեն աշխուժացավ հատկապես Շուշիում: Սկսեցին ակտիվանալ կուսակցական ամենատարբեր խմբակները և հատկապես մամուլը[1]: Ճիշտ է, քաղաքական նոր իրադրությունը ազատ գործելու և ազգային խնդիրների իրագործման հնարավորություն էր ընձեռում, սակայն հասարակական կառույցները բավարար ակտիվություն դեռ չէին դրսևորել: Կարևոր է այն, որ «Շուշիի հայ մտավորականությունը գործնական հետաքրքրություն է ցուցաբերում Ղարաբաղի և նրա բնակչության վիճակի բարելավման և նորմալացման ուղղությամբ: Հատկապես եռանդուն գործունեություն են ծավալել քաղաքական խմբերը, երբ լուր ստացվեց Պետրոգրադում Հոկտեմբերյան հեղափոխության մասին: Շուշիի հայկական մասում ուժեղ դիրքեր ունեն Դաշնակցություն կուսակցությունը, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատները, մենշևիկները, բոլշևիկները, էսէռները, կադետները և ուրիշները»[2]: Ուստի, 1917 թ. փետրվարից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակահատվածը կարելի է բնորոշել Ղարաբաղում որպես քաղաքական կյանքի ակտիվացման շրջան: Ժամանակահատվածը նպաստավոր էր նաև բազմաթիվ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները լուծելու համար: Հայտնի է, որ 1917 թ. մարտի 9-ին ստեղծվում է Անդրկովկասի կառավարման հատուկ մարմինը «Օզակոմը» և վերջինիս հրահանգներով ստեղծվեցին գավառային, քաղաքային և գյուղական գործադիր կոմիտեներ:

Գործնականորեն մեկ քայլ առաջ պետք է համարել ժամանակավոր կառավարության կողմից Արցախի, Գանձակի, Ախալքալակի և Շարուր-Նախիջևանի հայկական տարածքների ճանաչումը, ինչը ազգային կյանքն էլ ավելի ակտիվ կազմակերպելու հնարավորություններ ստեղծեց:

1917 թ. մարտի 13-ին կազմակերպվում է 40 հոգուց բաղկացած Ղարաբաղի գործերի կոմիտեն, որը պետք է իրականացներ երկրամասի կենսագործունեության ապահովումը[3]: Ազգային համախմբման և կազմակերպման գործում իր անվիճելի և հեղինակավոր կշիռն ուներ Հայոց ազգային խորհուրդը, որի նախաձեռնությամբ էլ Ղարաբաղի հայկական գավառներում ստեղծվեցին ազգային խորհուրդներ: Բնականաբար, այս մարմինների գործունեությունը Ղարաբաղում էլ ավելի արդյունավետ էր մյուս մարմինների համեմատությամբ, քանզի իրենց կազմերով դրանք ազգային էին և նպատակադիր էին կարևոր խնդիրների լուծմանը: Վերոնշյալ 40 հոգուց կազմված կոմիտեին այդպես էլ բախտ չվիճակվեց երկար գործելու, քանզի վրա հասած բոլշևիկյան հեղաշրջումը խառնեց նրանց հաշիվները, հատկապես եթե նկատի ունենանք դրա կազմի մահմեդական և թաթար գործիչների մուսավաթական և պանթուրքական ուղղվածությունը: Վերջիններիս նպատակն էր ամբողջապես յուրացնել Ղարաբաղի տարածքը, դրանով իսկ կապ ստեղծել Թուրքիայի հետ: Այս նկրտումները նոր թափ էին ստանում, քանզի սպասվում էր թուրքական զորքերի ժամանումը:

Ղարաբաղի գործադիր կոմիտեն շուտով կազմալուծվեց: Հայերի համար կարևոր նշանակություն ուներ Ղարաբաղի Ազգային բյուրոյի ստեղծումը:

Այնուհանդերձ, 1917 թ. մատուցեց իր սարսափելի անակնկալը. Հոկտեմբերյան հեղաշրջմամբ Անդրկովկասում սկսվեց անիշխանության, թուրք-գերմանական վտանգի մեծացման, թուրք-մուսավաթական բարբարոսությունների և հայերի մաքառումների մի ամբողջ ժամանակաշրջան: Այս ամենի սկիզբը դրվեց այն ժամանակ, երբ կազմալուծվեցին տեղական կառավարման նախկին շատ թե քիչ գործող մարմինները և այնուհետև հետ քաշվեցին երկրամասում տեղակայված ռուսական զորամասերը: Նոյեմբեր ամսից սկսած. «Անդրկովկասում և թուրքական ճակատում գտնվող ռուսական զորքերը մոլեգնորեն մերկացնում էին ռազմաճակատները, իսկ նրանց քայլ առ քայլ հետապնդում էր թուրքական բանակը: Ռուսական զենքին և ռազմամթերքին հիմնականում տիրացան թաթարները ու վրացիները, իսկ Հայաստանին բաժին հասավ թուրքական արշավանքը, բազմահազար հայ գաղթականությունը և թաթար - ադրբեջանական թշնամությունը»[1]:

Չնայած պակաս չէր ռուսների կողմից հայերին թողած զենք-

---

[1] **Ս. Դ. Ավագյան**, Ղարաբաղի Մամուլի Պատմություն (1828-1920), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1989, էջ 246-249:

[2] **З. Мелик-Шахназаров**, Записки Карабахского Солдата, Воспоминания участника событий 1918-1920 в. Н. Карабахе, Ереван, стр. 7.

[3] **Վ. Բալայան**, Արցախի պատմությունը հնագույնից մինչև մեր օրերը: Երևան, «Ամարաս», 2002, էջ 296:



---

[1] **Հ. Հարությունյան**, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996, էջ 12-13:

զինամթերքը, այնուամենայնիվ հայերը չկարողացան տիրանալ դրան: Այս վիճակը տրամադիր և ի վիճակի էլ չէր շտկելու Անդրկովկասի միացյալ կառավարությունը, որը ժամանակավրեպ էր և իր գործողություններով ավելի աղետալի դարձրեց ստեղծված կացությունը հատկապես հայ ժողովրդի համար: Ճիշտ է, այստեղ կար Ռուսաստանի դիրքորոշման ճշտմանը սպասելու միտում, սակայն դա ավելի շատ ժամանակի կորստի բերեց: Եվ սա այն պարագայում, երբ թուրքական ուժերը օր օրի շարժվում էին առաջ, և հայության գլխին կախվում էր բնաջնջման վտանգը: Ուստի, այն հույսերը, թե հոկտեմբերյան իրադարձությունները զարգացում չեն ունենա և ընդհակառակը՝ հետընթաց կապրեն, ցավոք ժամանակավրեպ էր և չհիմնավորված[1]:

Այս պայմաններում վտանգված էր նաև Ղարաբաղի հայության ճակատագիրը: Խափանվել էր պարենավորման գործը: Ղարաբաղը կտրվել էր արտաքին աշխարհից, բացակայում էր փոստ-հեռագրային կապը: Ղարաբաղի համար ծայրաստիճան լարված ժամանակաշրջանում օր օրի թանկանում էին մթերքների գները: Վիճակը Շուշիում առավել սրվեց, երբ մոտ 500 հոգուց բաղկացած ռուսական կայազորը թողեց քաղաքը, թեպետ հայ ղեկավարները բավականին ջանքեր թափեցին համոզելու ռուսական կայազորին չհեռանալու քաղաքից[2]:

Ի դեպ, ռուսական հեռացող զինվորների ճակատագիրը ողբերգական եղավ, քանզի նրանք ամբողջապես կոտորվեցին և ոչնչացվեցին թուրք- թաթարների կողմից:

Աստիճանաբար մեծանում էր թուրքական հարձակման վտանգը: Թուրք-մուսավաթական ուժերը նպատակադիր կերպով կտրել էին Ղարաբաղի կապը Երևանի, Բաքվի և Գանձակի հետ. Հայաստանի մնացած մասին տիրանալու համար անհրաժեշտ էր գրավել Ղարաբաղը: Այդպիսին էր թուրքական ծրագրերի նպատակը: Մյուս թևով հարձակում էր կազմակերպվելու Բաքվի վրա: Ղարաբաղի հայ բնակչությունը գոյատևելու համար պարտավոր էր նախապատրաստվել թուրք-մուսավաթական հարձակումներին: Այս նույն գոր-

[1] **Գ. Գալոյան**, Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1999, էջ 17-18:
[2] **Հ. Թումյան**, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ., Խորհրդային Ղարաբաղ, 5 նոյեմբերի, 1989 թ.:



ծին էին լծված նաև Արևելահայ և Արևմտահայ խորհուրդները, որոնք փորձում էին «հայոց կամավորական գնդերով ապահովել Թուրքահայաստանի ճակատի պաշտպանությունը: Հսկայական աշխատանք էր ծավալված կազմակերպելու և ամրապնդելու ճակատները և կանոնավոր զորաբաժիններով փոխարինելու հայ կամավորական գնդերին»[1]: Ղարաբաղի հայությունը ստիպված էր հույսը դնել միայն սեփական ուժերի վրա՝ չնայած այն հանգամանքին, որ ցարական բանակներում քիչ չէին կռվող ղարաբաղցիները ընդհանուր հայ զինվորների թվաքանակի մեջ, որի մասին Ե . Իշխանյանը հիշատակում է 300 հազար[2]:

1917 թ. հոկտեմբերին տեղի ունեցած Շուշու քաղաքային խորհրդի ընտրություններից հետո ձևավորված միջկուսակցական բյուրոն փորձում էր կազմակերպել վերոնշյալ կարևոր խնդիրը: Միջկուսակցական բյուրոն ստեղծվել էր գործող տարբեր կուսակցություններից.

| | |
|---|---|
| ՀՅ դաշնակցությունից. | Մենշևիկներից. |
| Հայրապետ Մուսայելյան | Լևոն Վարդապետյան |
| Անուշավան Տեր-Միքայելյան | Աշոտ Մելիք – Հովսեփյան |
| Եղիշե Իշխանյան | Նիկոլայ Խախանյան |
| Հարություն Թումյան | Աստվածատուր Ավետիսյան |
| | |
| Էսեռներից. | Բոլշևիկներից. |
| Հռիփսիմե Մելիք-Հովսեփյան | Ալեքսանդր Ծատուրյան |
| Արամ Միքայելյան | Արմենակ Ղարագյոզյան |
| Ալեքսանդր Մելքումյան | Մելիքսեթ Եսայան[3]: |

Բյուրոյի նախագահ ընտրվեց Հայրապետ Մուսայելյանը, քարտուղար՝ Նիկոլայ Խախանյանը:

Փաստորեն, գավառի նախկին կոմիսար Լևոն Վարդապետյանի նախաձեռնությամբ ստեղծվեց ժամանակավոր կառավարություն: Տեղի ունեցած ժողովում ճիշտ գնահատական տրվեց ստեղծված կացությանը, և Կառավարության ստեղծումը հիմնավորվեց հետևյալ

[1] **Ռ. Փիրումյան**, Հայաստանը ՀՅԴ-բոլշևիկ հարաբերությունների ոլորտում 1917-1921, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1997, էջ 46-47:
[2] **Ե. Իշխանյան**, Լեռնային Ղարաբաղ 1917-1920 թթ., Երևան, Հայաստան, 1999, էջ 93:
[3] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 47; З. Мелик-Шахназаров, նշվ. աշխ., էջ 8:

կերպ. «Լեռնային Ղարաբաղի 200.000-ից ավելի հայության (որ կազմում էր երկրամասի բնակչության 95% (Ա.Ղ.)) կյանքի և խաղաղ աշխատանքի ապահովության համար բոլոր հեղափոխական կազմակերպությունների ներկայացուցիչներից պետք է ստեղծել Լեռնային Ղարաբաղի կառավարություն, որի հիմնական նպատակն է լինելու համախմբել ժողովրդին, վերջ տալ անիշխանությանը, բոլոր միջոցներով պահպանել խաղաղությունն ու համերաշխությունը երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների միջև: Ժողովը նաև ժխտողական վերաբերմունք ցուցաբերեց Անդրկովկասյան կոմիսարիատի նկատմամբ»[1]: Ստեղծված մարմինն անվանվեց «Միջկուսակցական բյուրո», որին հետագայում իրենց մասնակցությունը հրաժարվեցին բերել բոլշևիկները: Գիտակցելով, որ մոտեցող թուրքական վտանգը կանխելու համար պետք է թուլացնել լարվածությունը մահմեդական բնակչության հետ և կարգավորել բազմաթիվ ծագած խնդիրները, ուստի ստեղծվում է նաև «Ազգամիջյան Կոմիտե» անվանմամբ մեկ այլ մարմին: Այն կազմվում է 6 հայ, 6 մահմեդական և 1 չեզոք անդամներից:

Տեղերում փորձ է կատարվում կազմակերպել զինվորական ուժեր: Հույս կար, որ Ղարաբաղ կգա արցախցիներից կազմված «Շուշիի» գունդը՝ ցարական բանակի արցախցի հայ մարտիկներից, սակայն գնդի վերադարձը տարբեր խոչընդոտների պատճառով, ձգձգվում էր:

Իր հերթին, մահմեդականների ստեղծած Ազգային կոմիտեն ի վիճակի չէր և նույնիսկ չէր էլ ուզում զսպել թուրք-մուսավաթական անկարգությունները, թալանը, որն էլ ավելի էր ծանրանում սովի պատճառով: Ղարաբաղի հայությունը աստիճանաբար ռազմական պատրաստություններ էր տեսնում երկրամասի պաշտպանունակությունը բարձրացնելու համար: Հավաքվում է բնակչության մոտ եղած զենքը և ռազմամթերքը, որը, թեև, շատ սակավ էր: Կտրված լինելով արտաքին աշխարհից և հույսը դնելով միայն սեփական ուժերի վրա՝ Ղարաբաղի հայերը կամավորներից հավաքագրում են մոտ 17 հազար մարդ (չնայած նրան, որ կամավորների մի ստվար մաս 18 տարեկանից ցածր էր)[2]:

---

[1] **Յ. Թումյան**, Նշված աշխատությունը; Խորհրդային Ղարաբաղ, 5 նոյեմբերի, 1989 թ:

[2] З. Мелик-Шахназаров, Նշվ. աշխ., էջ 9:



Շուշիում ստեղծվում են զինագործական մի շարք արհեստանոցներ և գործարան՝ փամփուշտներ արտադրելու համար: Հիշատակության է արժանի Գրիգոր Բաղդատյանի ղեկավարությամբ գործող ձեռքի նռնակների արհեստանոցը: Կատարվածը, սակայն բավականին քիչ էր թուրքական ուժերին դիմակայելու համար:

1917 թ. վերջին – 1918 թ. սկզբին թուրք-մուսավաթական ուժերը նախապատրաստվում էին իրականացնելու ոչ միայն Ղարաբաղի, այլ հայության մնացած հատվածի ոչնչացումը:

Գիտակցելով ահագնացող վտանգը և տիրող անիշխանության հետևանքները՝ արցախահայերը փորձում էին սեփական ուժերով իրականացնել երկրամասի կառավարումն ու պաշտպանությունը:

Ընդհանրացնելով այս ամենը, պետք է փաստել հետևյալը.

Ա. Ղարաբաղի հայությունը տիրող անիշխանության պայմաններում պետք է իրականացներ ինքնակառավարում և համապատասխան մարմինների ստեղծումը, ինչն էլ թեպետ ոչ բավարար չափով, սակայն, այդուհանդերձ, կատարվեց:

Բ. Երկրամասում նախապատրաստական աշխատանքներ էին ընթանում թուրք-մահմեդական, ապա և մուսավաթական հարձակումներին դիմագրավելու համար՝ ստեղծելով համապատասխան զինվորական ուժեր:

Գ. Արցախահայության համար գլխավոր խնդիր էր մնում Հայաստանի կենտրոնական շրջանների հետ կապի պահպանումն ու ապահովումը՝ համապատասխան օժանդակություն ստանալու համար, ինչպես նաև թույլ չտալու Ղարաբաղի մեկուսացումը մայր հայրենիքից:

## 1.2. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԱՅՍՐԿՈՎԿԱՍ. ԵՐԿՐԱՄԱՍԸ ԲՌՆԱԶԱՎԹԵԼՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

Փետրվարյան և հոկտեմբերյան իրադարձությունները երիտթուրքերի համար բավականին նպաստավոր պայմաններ ստեղծեցին իրենց հեռահար նպատակների իրականացման համար. Կովկասի մահմեդականների աջակցությունը ստանալուց հետո ծրագրվում էր շարժվել առաջ և տիրանալ Ղրիմին, Պովոլժիեին և Միջին Ասիային: Այդ ծրագրերի իրականացմանն աջակից և պատրաստ կանգնած էին կովկասյան թաթարները: «Մինչև 1917 թ. վերջերը Մուսավաթը մի խղճուկ կուսակցություն էր, իսկ 1918 թ. սկզբին «Մուսավաթը»՝ Անդրկովկասի ամենաուժեղ քաղաքական կուսակցությունը, դուրս եկավ և հավակնեց վճռել երկրամասի բախտը: Զինաթափելով ռուսական զորքերին և տենդայնորեն զինելով ազգային զորամասերը՝ «Մուսավաթը» նախապատրաստվում էր թուրքական բանակների Անդրկովկաս ներխուժելու դեպքում նպաստել նրանց զավթողական ծրագրերի իրականացմանը»[1]:

Ռուսական զորքերի կողմից ռազմաճակատի հապշտապ լքումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին թուրքերի պանթուրանական ծրագրերի իրագործման համար: Այդ ամենի մասին իր մտահոգությունները շատ իրատեսական է արտահայտում զորավար Անդրանիկը. «Թուրքերը կգրավեն Էրզրումը և նրանց բաժին կհասնի 600 հրանոթ: Սիրտս արյունով է ողողվում, երբ այդ մասին եմ մտածում»[2]: Իրոք, զորավարը չէր սխալվում: Թուրքական ծրագրերի իրականացման մեջ շարունակական էր մնում հայերի ամբողջական բնաջնջման գիծը: Այսկովկասին տիրանալու համար երիտթուրքերը, չնայած պատերազմում տարած անհաջողություններին, շարունակում էին համառել այն հաջողելու համար: 1918 թ. փետրվարի 27-ին գաղտնի գրությամբ ռազմական նախարարի անունից Անդրկովկասում հայերին ամբողջովին կոտորելու հրաման էր տրվում: Հրամանում ասվում էր. «Իրադրությունը պահանջում է հայ ժողովրդի

[1] Հ. **Սիմոնյան**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, «Հայաստան», 1991, էջ 290:

[2] **Дж. Киракосян**, Младотурки Перед Судом Истории, стр. 226.



ամբողջական ոչնչացումը, որն էլ հրամայված էր սուլթանական հրամանագրով»[1]:

Այս առումով թուրքերը ստիպում էին արագացնել Անդրկովկասի անջատումը և ամբողջական օտարումը Ռուսաստանից, որը կհեշտացներ իրենց ծրագրերի իրականացումը: Սա, իհարկե, գիտակցում էին հայ հասարակական-քաղաքական շրջանակները, ուստի ոչ մի ձևով նրանք կողմ չէին Ռուսաստանից անջատվելուն, սակայն նրանց ներկայացուցիչների ձայնը լսելի չէր Սեյմում:

Կովկասին տիրանալու գործընթացում սրվեց մրցակցությունը Թուրքիայի և Գերմանիայի միջև: Մինչ Ռուսաստանի պատերազմից դուրս գալուց հետո իրենց քաղաքականությունը չհստակեցրած և ուժերը չվերադասավորված դաշնակիցներն ուշքի կգային, թուրքգերմանական ուժերը պայքարում էին Կովկասի համար: Այն դեպքում, երբ գերմանացիները ձգտում էին դեպի Վրաստան և հյուսիսային շրջաններ, ապա Թուրքիան ուժերը կենտրոնացրել էր հարավում՝ Բաքվի ուղղությամբ: Թուրք-գերմանական լարվածությունը ևս մեծանում էր. «Լյուդենդորֆը իր հուշերում տրտնջում է, որ զավթելով Բաթումի նավթի պահեստները, թուրքերը նավթահորից բաժին չհանեցին իրենց: Մենք կարող էինք Բաքվի նավթի հետ հույս կապել այն դեպքում, եթե այն վերցնենք ինքներս»[2]:

Թուրքերը ձգտում էին վերականգնել իրենց տիրապետությունը Եգիպտոսում, Պաղեստինում, Սիրիայում, Միջագետքում[3]: Պակաս չէին թուրքական նպատակները Բաքվի նավթին տիրանալուց հետո, երբ ողջ Ադրբեջանը նվաճելուց հետո, նրանք պետք է զավթեին Դաղստանի մի մասը, Վլադիկավկազը: Այս ամենը պետք է իրականացվեր մահմեդական եղբայրներին օժանդակության հասնելու քողի տակ:

Թուրքական զավթողական նպատակներն այդ պահին ձգվում էին նույնիսկ մինչև Աֆղանստան և Հնդկաստան:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրով մոլորեցնելով խորհրդային կողմին և ժամանակ շահելով՝ թուրքերը նախապատրաստեցին ուժերը և ոչնչացնելով տեղի քրիստոնյա ընդդիմադիրներին՝ «հանրաքվեի» միջոցով Կարսը, Արդահանը, Բաթումը հայտարարեցին

[1] **Дж. Киракосян**, Младотурки Перед Судом Истории, էջ 228:

[2] **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 297:

[3] **Հ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 282:

Թուրքիայի տարածքներ[1]: Հաջողացնելով իրավական կողմը, թուրքերը շատ չանցած, կանոնավոր զորքերի միջոցով սկսեցին գրավել և կոտորել տեղի տարածքների քրիստոնյա բնակիչներին:

1918 թ. հունվարից մինչև ապրիլն ընկած ժամանակաշրջանում թուրքական ռազմական ուժերը գրավեցին Երզնկան, Բաբերդը, Մամախաթունը, Էրզրումը, Կարսը և Արևմտյան Հայաստանի այլ տարածքներ: Հաշվի չառնելով նույնիսկ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի խախտումը՝ թուրքերը տիրացան Կարսին և Ալեքսանդրապոլին: Անդրկովկասի նվաճումը թուրքերի կողմից դառնում էր էլ ավելի սպառնալի: Այս ընթացքում թուրքերը կարողացան տիրանալ ռուսական բանակի թողած հսկայական քանակությամբ զենքի և պարենի պաշարներին (ռուսական բանակը հայերին թողեց մոտ 3 հազար թնդանոթ, 3 հազար գնդացիր, 1 միլիոն ռումբ և ական, մեկ միլիարդ փամփուշտ, 100 հազար հրացան, 100 հազար զինվորական համազգեստ, նույնքան մարդու համար հատկացված պարեն, մասնավորապես Կարս բերդաքաղաքում ցորենի հսկա ամբարներ և այլն)[2]: Այս ընթացքում հայկական փոքրաթիվ ուժերն ի վիճակի չէին լուրջ դիմադրություն ցուցաբերել թուրքական գերակշիռ ուժերին, որոնք գլխովին ոչնչացնում էին իրենց ճանապարհին ընկած բնակավայրերի քրիստոնյա, հիմնականում՝ հայ բնակիչներին: Այդ մասին Ստամբուլում գերմանական ներկայացուցիչ Ֆոն Լոսովը կառավարությանը հղած նամակում նշում էր, որ թուրքերի նպատակն է «Անդրկովկասի օկուպացումը և հայերի բնաջնջումը: Թալեաթի և Էնվերի հակառակ պնդումները ոչինչ են»[3]:

Այդուհանդերձ, թուրքերի առաջխաղացումը հնարավոր չեղավ կանգնեցնել Կարսի տակ, որի դիմադրելու կարողությանը չէր կարելի կասկածել: Սակայն Ա. Չխենկելու անհեռատես և ոչ խելամիտ պնդմամբ թուրքական բանակները ապրիլի 24-ին տիրացան Կարսին[4], իսկ մայիսի 15-ին մտան Ալեքսանդրապոլ:

Այս ռազմական գործողությունների ընթացքում հայկական մոտ 15-20 հազ. զորքերի դեմ կանգնած էր բավականին լավ զինված թուրքական 50-60 հազարանոց բանակը:

[1] **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 294:
[2] **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 295:
[3] В. Шамбаров, նշվ. աշխ., էջ 615.
[4] Նույն տեղում, էջ 615:



Թուրքերը ծրագրում էին դուրս գալ Արարատյան դաշտ և Երևանի գրավումով վերջնականապես լուծել Հայկական հարցը, ապա գրավել Թիֆլիսը, Բաքուն: Այս ընթացքում մուսավաթականների օգնությամբ նախատեսված էր ստեղծել «մահմեդական բանակ» և շարժվել դեպի հյուսիս[1]: Թուրքերի նպատակների իրականացումը դյուրանում էր, քանի որ Ալեքսանդրապոլի կռիվներից հետո թուրքերին դիմադրություն ցույց տված Հայկական կորպուսը մեծ կորուստներ տալով (միայն 4 հազար գերի)՝ բաժանվել էր 3 մասի, մի մասն Անդրանիկի գլխավորությամբ շարժվում է հյուսիս՝ դեպի Բորչալու, մյուսը՝ գեներալ Նազարբեկովի գլխավորությամբ՝ Ղարաքիլիսա, երրորդը՝ Էջմիածին և Երևան:

Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի ճակատագիր կունենար հայ ժողովուրդը, եթե մայիսյան հերոսամարտերում ցույց չտար մաքառման ու հերոսացման այդպիսի փայլուն օրինակներ: Հայերի հաջողությունն աներկբա էր և կարող էր շարունակվել, սակայն Բաթումում գտնվող մեր պատվիրակները անտեղյակ սեփական ուժերի հաղթանակներին, թույլ տվեցին, որ կնքվելիք պայմանգրի կետերը թելադրեն թուրքերը: Այդ նույն ժամանակ, Բաթումում իրենց գործերը հաջողացրած վրաց մենշևիկները հռչակեցին Վրաստանի անկախությունը:

Բանակցությունների ընթացքում հայերը մնացին միայնակ: Այդուհանդերձ, մայիսյան հերոսամարտերում տարած հաղթանակի արդյունքում էր, որ 1918 թ. մայիսի 28-ին Ազգային խորհրդի՝ հայ ժողովրդին ուղղված դիմումով հռչակվեց Հայաստանի անկախությունը:

Բաթումի պայմանագիրը կնքվեց Հայաստանի համար մեծ կորուստների գնով: Պատմագիտության մեջ տիրապետող է այն կարծիքը, որ մայիսյան հերոսամարտերից հետո Բաթումի պայմանագիրը ժամանակավրեպ էր: Դժգոհողների թվին էր պատկանում նաև զորավար Անդրանիկը, ըստ որի՝ պետք էր շարունակել հաջողությունները և Թուրքիային ստիպել կնքել մեզ համար շահավետ պայմանագիր: Սակայն դժվար է ասել՝ արդյո՞ք մոտ կես միլիոն հայ գաղթականներով լցված և ընդամենը երկու տասնյակ հազար ոչ մարտունակ զինվորներ ունեցող Կովկասահայաստանը կարող էր լուրջ հաջողություններ ապահովել գերակշիռ թուրքական ուժերի դեմ:

[1] Նույն տեղում, էջ 617:

Ինչևէ, Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, սակայն նրանից խլվեցին Կարսի, Արդահանի, Կաղզվանի, Օլթիի շրջանները, Երևանի նահանգից՝ Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլ քաղաքը և Ալեքսանդրապոլի ու էջմիածնի գավառների երեք քառորդը, Երևանի գավառի կեսը, Շարուր-Դարալագյազի գավառի մեկ հինգերորդը[1]: Հայաստանից խլվում է Նախիջևանը ևս:

Բնորոշ է գերմանացի դիվանագետ Բերնսդորֆի հումորը. «Թուրքիան թողել է հայերին միայն Սևանա լիճը, որտեղ նրանք կարող են լողանալ, սակայն դուրս գալու և չորանալու տեղ չունեն»[2]:

Հատկանշական է, որ թուրք-մուսավաթականները չէին բավարարվում Բաթումի պայմանագրով ստացածով, այլ «... պնդում էին, թե Երևանն իր բնակչությամբ ու պատմությամբ ադրբեջանական քաղաք է, ուստի պահանջում էին այն կցել Ադրբեջանին, իսկ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը, ըստ նրանց, պետք է լիներ էջմիածինը (նախկին Վաղարշապատը)»[3]: Ուստի, այս համատեքստում միանգամայն հասկանալի է դառնում թուրքերի կողմից Կովկասի հանրապետությունների ճանաչումը: Թուրքիան դրանով նպատակ էր հետապնդում այդ տարածքները Ռուսաստանից ամբողջովին անջատելու և հետագայում դրանց հեշտությամբ տիրանալու համար:

Մյուս կողմից, տարածաշրջանում մեծ էին նաև գերմանական ծրագրերի իրականացման հնարավորությունները: Բրիտանական արխիվների ժողովածուում տեղ գտած գաղտնի մակագրությամբ մի փաստաթղթից պարզ է դառնում, որ Անդրկովկասի կառավարության անունից Փարիզ մեկնած Ղամբաշիձեն, որը փորձում էր երկխոսության կոչել եվրոպական պետություններին Անդրկովկասի պետությունների հետ, սակայն ֆրանսիական կառավարության կողմից արձագանք չստացավ, իսկ փոխարենը իր համերկրացիներից Փարիզում տեղեկանում է գերմանական կառավարության Անդրկովկասի նկատմամբ ունեցած հետևյալ նպատակների մասին[4].

- Բաժանել Անդրկովկասը երկու առանձին քաղաքական նահանգների, որոնցից առաջինը կոչել Ադրբեջան՝ ներառյալ ներկայիս

[1] **Հր. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 306:
[2] **Дж. Киракосян**, նշվ. աշխ., էջ 239.
[3] **Հր. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 306:
[4] Armenia, նշվ. աշխ., էջ 387.



նահանգը, որն ունի այդ անունը: Նրա մեջ թեպետ չէր մտնելու Թավրիզը, սակայն փոխարենը ներառվելու էր Բաքվի կառավարությունը, Ելիզավետպոլն ու Երևանը: Նահանգական կենտրոն էր նախատեսված Բաքուն:

Երկրորդ նահանգը պետք է կազմվեր Վրաստանից՝ ներառելով Թիֆլիսի կառավարությունը, Զաքաթալայի, Քութայիսիի, Սուխումիի շրջանները և Սև ծովի առափնյա շրջանի մի մասը, մինչև Տուափսե: Նրա մեջ չէր ներառվելու նաև Բաթումը և վերջինիս անունով կոչվող շրջանը: Գերմանիան փաստում էր, որ Վրաստանն իր ազգային սահմանների մեջ է, իսկ Հայկական հարցը չի կարող լուծվել, քանզի հայկական տարածքներն ընդգրկված են Թուրքիայի կազմում: Կարսն ու Բաթումը արդեն կազմում են օսմանյան տարածքի մի մաս[1]:

Փաստորեն, այս ծրագրերից պարզ է դառնում, որ գերմանացիները Անդրկովկասում չէին ճանաչում հայերի և ոչ մի իրավունք: Ավելին, Անդրկովկասը նվաճելու դեպքում նրանք նախատեսում էին մասնատել հայկական տարածքները: Անդրկովկասում թուրքերը իրենց դաշնակիցներից առավել ակտիվ քաղաքականություն էին ծրագրել իրականացնել. ահա թե ինչպես են ներկայացվում թուրքական գործողությունները վերոհիշյալ գաղտնի փաստաթղթում. «Հայաստանի, Վրաստանի և Թուրքիայի միջև ստորագրած պայմանագրի համաձայն, Թուրքիան իրավունք էր ստանում իր զորքերը տեղափոխել Անդրկովկասի տարածքներով անցնող երկաթուղով: Սույն պայմանագրերից, ըստ էության, պետք է դժգոհեր Գերմանիան, իսկ Վրաստանը, ճնշվելով Թուրքիայի կողմից, կարիք ուներ գերմանական հովանավորության: Թուրքական ներկայացուցիչը մերժեց գերմանական միջնորդությունը Վրաստանի հետ բանակցություններում»[2]:

Վրաստանի պատվիրակությունը մեկնում է Գերմանիա՝ հայտնելու իր անկախությունը և ստանալու վերջինիս հովանավորությունը: Այս առումով գերմանացիները հասկանում էին, որ միայն արագ գործողություններով կարող էին շրջանցել թուրքերին. «Գերմանական առաջին զորքերը, որոնք հայտնվեցին Անդրկովկասում, Բավարիայի և Ջագարի 11-րդ հարձակողական գումարտակներն էին: Վեր-

[1] Armenia, նշվ. աշխ., էջ 392.
[2] Նույն տեղում:

ջիններս Փոքի ժամանեցին հունիսի 8-ին և անմիջապես ուղարկվեցին Թիֆլիս, ուր հասան հունիսի 12-ին»[1]: Թուրք - գերմանական հարաբերությունները իրենց լարվածության գագաթնակետին հասան Բաքուն գրավելու շուրջ ծագած տարաձայնությունների պատճառով, սակայն մի խնդրում, որ պետք է «հայերին ու բոլշևիկներին հեռացնել Բաքվից»[2], նրանք համակարծիք էին:

Թուրքերը ծրագրում էին Բաքուն գրավել Ադրբեջանում ստեղծած «Իսլամի բանակի» միջոցով, որի ուժերը պետք է հասնեին մոտ 300.000-ի: Մոտ երեք ամիս առաջ Տրիպոլիից Անդրկովկաս ժամանած Նուրի փաշան՝ Էնվեր փաշայի կրտսեր եղբայրը, պետք է գլխավորեր թուրք–մուսավաթական ուժերը և այն հրոսակախմբերը, որոնք պետք է շարժվեին Բաքվի վրա: Միաժամանակ, առաջարկ էր արվել Վրաստանի արևմուտքում բնակվող մահմեդականներին, որպեսզի սրանք էլ միանան արշավանքին, վերջիններս սակայն, մերժում են առաջարկը[3]: Տեղեկանալով այս ամենի մասին, գերմանացիները փորձում են խոչընդոտել թուրքական ծրագրերին: Եվ չնայած այն հանգամանքին, որ հունիսի 12-ին Թիֆլիսում հիմնվեց գերմանական զինվորական կոմիսարիատ, այնուամենայնիվ, նրանց կողմից թուրքական գնացքների կանգնեցումը միայն ժամանակավոր բնույթ կրեց: Գերմանացիները պահանջում էին, որ թուրքական զորքերը նահանջեն մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված գիծը, սակայն թուրքերը կարողանում են ձևացնել, թե իրենք չեն շարժվում բրիտանացիների դեմ: Էգան Կրյուգերը գերմանացիների ուժերը փորձում է կենտրոնացնել Բաքվի վրա[4]:

1918 թ. հունիսի 28-ին Նուրի փաշան, իրեն հռչակելով սուլթանի փոխանորդ, սկսում է հարձակումը: Նույն օրը երկու գերմանական ինքնաթիռներ պտտվեցին Բաքվի վրա:

Յուլիսի 3-ին Բաքվում թուրքական վտանգը դառնում է սպառնալից, հայերը հուսադրվում էին՝ բրիտանական օգնության գալստյան հույսով: Բաքվի հայկական և ռուսական զորքերը վատ էին զինված և մարտունակ չէին:

Թուրքական հարձակումը շատ բնորոշ է ներկայացրել Ստեփան

[1] Armenia, նշվ. աշխ., էջ 393.
[2] Նույն տեղում, էջ 392.
[3] **Յր. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 308:
[4] Armenia; նշվ. աշխ., էջ 393.



Շահումյանը, որը Ռուսաստանի ժողկոմխորհին հղած նամակում գրել է. «Թուրքիան այժմ պատերազմ է սկսում Անդրկովկասի դեմ: Թուրքիայի այդ հարձակումը պետք է կապվեր մուսուլմանների ելույթի հետ Անդրկովկասի ներսում... Մենք հիմա անընդհատ պատերազմի վիճակում ենք: Եթե նրանք հաղթանակեին, Բաքուն կհայտարարվեր Ադրբեջանի մայրաքաղաք, բոլոր ոչ մուսուլմանական տարրերը զինաթափ կարվեին ու կկոտորվեին»[1]:

Պատերազմի ընդհանուր ճակատներում գերմանացիների անհաջողությունները թուրքերին թույլ տվեցին ավելի ակտիվանալ՝ չնայած անգլիական ուժերի ներկայությանը Էնզելիում: Անգլիական շահերն Անդրկովկասում ավելի հստակ դարձան այն բանից հետո, երբ ռուսական զորքերի նահանջով վտանգվեց թուրքերի հետ ռազմաճակատի գիծը և ուժեղացավ ընդհանուր ճակատի քայքայման վտանգը: Թուրքերի կողմից Բաղդադը վերագրավելու սպառնալիքը կարող էր իրական դառնալ, եթե թուրքական 200 000 զորքերը կենտրոնացվեին Տիգրիսի վրա. «Նման քայլ մը կրնար վտանգել ապահովությունն ու հանդարտութիւնը Յիւսիս-Արևմտեան Սահմանագլխին, Յնդկաստանին և արեւմտեան Պարսկաստանին»[2]:

Յայտնի է, որ դեռևս XIX դարի վերջից անգլիական նավթային ընկերությունները որոշակի տեղ էին զբաղեցնում Բաքվի նավթարդյունաբերության մեջ: Այդ ծավալներն ավելի մեծացան առաջին համաշխարհայինի նախօրյակին:

Բացի այդ, Անդրկովկասում առանձնահատուկ նշանակություն ունեցող ճանապարհներին (տնտեսական և ռազմական) թուրքերի տիրանալը կխեշտացներ նրանց տիրապետության հաստատումը Միջին Ասիայի և Մերձավոր Արևելքի վրա, ինչպես նաև զգալիորեն կկրճատեր ճանապարհը դեպի Յնդկաստան[3]:

1917 թ. մարտին անգլիական զորքերը գրավեցին Բաղդադը և թուրքերին ստիպեցին իրենց զիջել Միջագետքը: Այս ամենի հետ սերտորեն կապված էր նաև Իրանի տարածքում ռուսական ազդեցության փոխարինումը բրիտանականով. «Այսպիսով, 1917 թ. սկզբին Անգլիան մտցրեց ռազմական իշխանություն Իրանի ողջ

[1] **Գ. Գալոյան,** նշվ. աշխ., էջ 26:
[2] **Ա. Նասիպեան,** նշվ. աշխ., էջ 99:
[3] В. Адамия, Из Истории Английской Интервенции в Грузии (1918-1921), АБГОСЛИЗДАТ, Сухуми, 1961, стр. 12-13.

տարածքում: Իրանում՝ Սեյիստանից մինչ Խուզիստան, տեղակայվում է 10 հազար անգլո-հնդկական զինվոր՝ ներառյալ 10 հազար վարձկաններ»[1]:

Ռուսական կայսրության անկումից հետո հավասարապես մեծանում էր ինչպես գերմանացիների, իսկ ավելի շատ՝ թուրքերի ներխուժման վտանգը դեպի Կովկաս և Բաքու, ապա նաև՝ անգլիացիների թիկունք: Ինչպես նշում է գեներալ Դենստերվիլը. «Գերմանացիների նպատակն էր շարժվել Բեռլին-Բաքու-Բուխարա ուղղությամբ և պարզ է, որ այս սխեմայում Անդրկովկասը, Բաքուն և Կասպից ծովը պետք է առանձնահատուկ դեր ունենային»[2]:

Լլոյդ Ջորջի գլխավորած կառավարությունը, չնայած Անգլիայի ունեցած կորուստներին, ամրապնդելով դիրքերը երկրի ներսում, շարունակում էր Թուրքիայի դեմ պատերազմը Միջագետքում և նրա հսկողության տակ եղած այլ տարածքներում. «Լլոյդ Ջորջը ակտիվ հետաքրքրվում էր Պաղեստինի և թուրքական հսկողության տակ գտնվող տարածքների գրավման ծրագրերով»[3]:

Չնայած երկակի քաղաքականությանը և բազմաթիվ խոստումներին՝ Լլոյդ Ջորջի նախագծերի մեջ ևս նախատեսվում էր ազատ Հայաստանի գոյությունը: Ճիշտ է՝ այն բաժանվել էր ազդեցության գոտիների, և ամենայն հավանականությամբ քննարկումները տանում էին մանդատային համակարգի կիրառմանը և այնուամենայնիվ. «Այն, ինչ որ ցանկանում է Մեծ Բրիտանիան, Գերմանիայի գաղութներն են Աֆրիկայում, արևելյան և արևմտյան, անկախ Արաբիա՝ Մեծ Բրիտանիայի գերիշխանության տակ: Պաղեստինը տրվում է սիոնիստներին՝ բրիտանական կամ, եթե մեզ ցանկալի կլինի, ամերիկյան վերահսկողությամբ, ***անկախ Հայաստան*** (ընդգծումը իմն է՝ Ա. Դ.) և նեղուցների միջազգայնացում»[4]:

Շատ կարևոր և ուշագրավ էր նաև այն, որ հենց Լլոյդ Ջորջի քաղաքական նպատակներից էր բխում սուլթանին Կոստանդնուպոլիսից վտարումը և Հայաստանի (ներառյալ թուրքական և ռուսական տարածքները) ու նեղուցների մանդատի հանձնումը Միացյալ Նա-

[1] Л. Мирошников, Английская Экспансия в Иране (1914-1920), Издательство Восточной Литературы, Москва, 1961, стр. 43.

[2] Британский Империализм в Баку и Персии 1917-1918 (воспоминания), Изд. “Советский Кавказ”, Тифлис, стр. 1.

[3] **К. Виноградов**, Дэбид Ллойд Джордж, Мысль, Москва, 1970, стр. 245.

[4] Архив Полковника Хауза, том 3, Москва, 1939, стр. 283, ...



հանգներին: Այն հնարավորություն կտար ԱՄՆ-ին հեռու պահել տարածաշրջանից, թուրքական և գերմանական մյուս տարածքները բաժանելուց[1]: Սակայն նախքան պատերազմի ավարտը պետք է ապահովվեր միջագետքյան զորքերի թիկունքը, Կովկասի և Պարսկաստանի հնարավոր գավթումը. «Վերջապես մենք պետք է, եթե հնարավոր է, պաշտպանենք հայկական ուժերին ոչ միայն նրա համար, որ ապահովենք մեր միջագետքյան զորքերի թիկունքը Պարսկաստանի և Կովկասի կողմից, այլ նաև հայերը, վրացիների հետ մեկ ավտոնոմ պետության մեջ կարող են միակ պատվարը լինել պանթուրքական շարժման դեմ Կոստանդնուպոլիսից մինչև Չինաստան, ինչը Գերմանիային էլ ավելի վտանգավոր զենք կտա և իր հերթին կարող է մեծ վտանգ դառնալ խաղաղությանը, քան գերմանական հսկողությունը Բաղդադի ճանապարհի վրա»[2]:

Հասկանալի է, որ Ռուսաստանի դուրս գալը պատերազմից, հնարավորություն տվեց գերմանացիներին զորքեր տեղափոխել արևմտյան ռազմաճակատ: Դաշնակիցները ևս վերջին ճիգերն էին գործադրում պատերազմի վերջնական փուլի ծանրությանը դիմանալու համար:

Այսպիսով, նույնիսկ պատերազմի ավարտին, դաշնակիցներին անհրաժեշտ էր վերականգնել արևելյան ճակատը, ուստի չպետք է թույլ տրվեր ռուսական զենքի անցումը հակառակորդին: Նպատակահարմար էր համարվում ազգային ուժերին օժանդակելը[3]:

Դիտելով որպես պաշտպանության օղակ, իսկ մյուս կողմից հումքի (նավթ, բենզին, տնտեսական հումք) բազա՝ անգլիացիները Անդրկովկասի գրավման քայլերը ձեռնարկեցին՝ լավ պատկերացնելով տեղի իրավիճակը: Դա են վկայում հրապարակի վրա եղած բազում փաստաթղթեր (Armenia 1878 -1948, A. Burdett, London 1998 և Caucasian Bounderies 1802-1946, A. Burdett, 1996), որոնց մանրամասն վերլուծականը կներկայացվի աշխատության հաջորդ գլխում:

Հատուկ միջդաշնակցային ժողովում որոշելով քայլեր ձեռնար-

[1] **В. Трухановский**, Внешная Политика Англии на Первом Этапе Общего кризиса Капитализма (1918-1939); Москва, 1962, стр. 95.

[2] **Д. Ллойд Джордж**, Военные Мемуары, том 5, Гос. Соц-Эконом. Изд., 1938, стр. 94.

[3] Архив Полковника Хауза, том 3, Москва, 1939, стр. 283: **В. Черчиль**; Мировой Кризис, Гос.-Военное изд., Москва, 1932, стр. 50.

կել թուրք-գերմանական և բոլշևիկյան ուժերի դեմ՝ բրիտանացիները անցան իրենց նպատակների իրագործմանը: Նախ՝ բոլորին պարզ էր, որ անգլիացիներին առաջին հերթին հետաքրքրում էին պարսկական և մերձկասպյան նավթի պաշարները, ապա՝ ռազմաստրատեգիական նշանակության տարածքներն ու ճանապարհները: Հսկայական էին նավթի պաշարները Բաքվում, իսկ անգլիացիները հստակ հետապնդում էին այդ կապիտալին տիրանալու խնդիր ևս[1]: Ընդ որում, ռազմաքաղաքական այս նպատակներին հետամուտ, իրականացված բոլոր քայլերը վերջիններիս կողմից շղարշվում էին քրիստոնյաներին օգնելու բարձրագոչ քարոզներով ու կոչերով:

Իհարկե, մյուս կողմից, չպետք է գերագնահատել բրիտանական գործողությունների արդյունավետությունը, քանզի նրանք բավարար ուժեր չունեին լիարժեք գործելու համար. «Հեշտ է հասկանալ, թե ինչքան դժվար էր մեզ համար կենտրոնացնել ուժեր Բաքվի վրա հարձակման համար»,- գրում է Դենստերվիլը[2]: Ի դեպ, 1917 թ. վերջին Անդրկովկաս մտնելու համար բրիտանական միջագետքյան ճակատից առանձնացվեց հենց այս գեներալի ջոկատը: Վերջինիս էքսպեդիցիան Բաղդադից անցնելով հյուսիսային Իրան, պետք է հասներ Թիֆլիս, ապա՝ Բաքու: Անգլիական այս գեներալին տրված հրահանգների մեջ էր մտնում նաև թուրքական և բոլշևիկյան ուժերի դեմ պայքարի նախապատրաստումը, թեպետ այդպիսի ծրագիր իրականացնելու համար բրիտանական ուժերը բավականին սակավաթիվ էին, մյուս կողմից, տարածաշրջանում տիրող մթնոլորտը այդ նպատակի իրագործումը դարձնում էր համարյա թե անհնար, եթե նկատի ունենանք, օրինակ, միայն հայերի սեփական ուժերով պայքարելու հանգամանքը:

Այս պարագայում բրիտանացիների ձեռնարկումներն ավելի քան ուղղված էին բոլշևիզմի տարածման դեմ, ինչը բխում էր 1917 թ. դեկտեմբերի 23-ին Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքված գաղտնի համաձայնագրի դրույթներից, ըստ որի՝ Կուբանը, Հայաստանը (Արևելյան և Արևմտյան), Վրաստանը, Ադրբեջանը և Քրդստանը, այլ խոսքով, ամբողջ Կովկասը վերահսկվելու էր Անգլիայի, իսկ Բեսա-

[1] А. Раевский, Английская Интервенция и Мусаватское Правительство, Баку, 1927, стр. 20.

[2] Генерал-Майор Денстервиль, նշվ. աշխ., էջ 123:



րաբիան, Ուկրաինան և Ղրիմը՝ Ֆրանսիայի կողմից[1]: Եվ չնայած բրիտանական նվաճողական այս ձգտումներին՝ այդուհանդերձ, հայ ժողովրդի համար առավել քան կարևոր էր թուրքական զորքերի հեռացումը, որոնք ամենևին էլ չէին պատրաստվում պարտության դեպքում շուտափույթ հեռանալ Անդրկովկասից և Արևմտյան Հայաստանից:

Պատմական դարավոր փորձը ցույց է տվել, որ թուրքական բարբարոսությունները նույնիսկ պատերազմում կրած անհաջողություններից հետո շարունակել են էլ ավելի բուռն ուժով. այսպես, չնայած պարտությանը՝ թուրքերը մուսավաթականների հետ ձգտում էին ոչնչացնել Դաշտային և Լեռնային Ղարաբաղների, Ելիզավետպոլի նահանգի ողջ հայ բնակչությանը: 1918 թ. մայիս-հունիս ամիսներին հայերի դեմ կազմակերպված զանգվածային ցեղասպանությունը Շամախի, Գյոկչայի, Օրդուբադի, Նախիջևանի, Գանձակի, Ագուլիսի, Նուխիի և Արեշի հայաշատ շրջաններում, դրա անվիճելի վկայությունն են[2]: Թուրքերի կողմից գրաված բոլոր բնակավայրերի հայությունը կա՛մ ամբողջովին կոտորվում էր, կա՛մ տարագրվում: Այս ընթացքում փախստական դարձան մոտ կես միլիոն հայեր: Հնարավոր հետագա կոտորածների ծավալը և ընթացքը կարող էին դադարեցվել միայն համաշխարհային պատերազմում թուրքերի լիակատար պարտության և դաշնակից զորքերի ներկայությամբ ու ակտիվ միջամտությամբ: Այդ ժամանակ արդեն որոշակիորեն պարզ էր, որ բրիտանական քաղաքականությունը ձգտում էր դեպի Կովկաս: Նրանց համար պարզ էր նաև, թե որ երկիրը և ժողովուրդը պետք է հենարան հանդիսանար այդ քաղաքականությունը տարածաշրջանում իրականացնելու համար:

Հստակ տիրապետելով իրադրությանը և տեսնելով, որ հայերը չունեն դաշնակիցներ և օժանդակող ուժ, բրիտանացիները ամենից առաջ նպատակադրվեցին օգտագործել հայության ուժը. «Հայաստանն ամենափոքրն է Անդրկովկասում: Կան երկու կուսակցություններ՝ դաշնակցություն և սոցիալիստներ: Բոլշևիզմը արմատներ չունի: Նուբար փաշան ճանաչվում է որպես լիդեր: Հայերը ձգտում են միավորել հայկական հողերը ինքնավար պետության... Եթե

[1] Л. Мирошников, նշվ. աշխ., էջ 69; В. Адамия, Из Истории Английской Интервенции в Грузии (1918-1921), АБГОСЛИЗДАТ, Сухуми, 1961, стр. 28:

[2] Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 286:

մանդատն ընդունվի, ապա Հայաստանի սահմանները կձգվեն Սև ծովից մինչև Միջերկրական ծով: Եթե կոնֆերանսն ընդունի Նոր Հայաստանը, ապա հնարավոր է, որ մեծ գաղթ լինի դեպի Թուրքիայի հայկական տարածքները. հայերը պահպանել են իրենց հավատը և անկոտրում ոգի ունեն: Այստեղ պետությունների կոնֆեդերացիայի հարցը կարելի է օրակարգից հանել: Ռուսաստանն այլևս ի վիճակի չէ ապահովելու սահմանների անվտանգությունը և խաղաղություն հաստատել այստեղ: Սակայն այս մեծ տարածքի հարցում, որը ենթակա է բաժանման, հարկավոր է համաձայնության գալ, որը պետք է բավարարի բոլոր շահագրգիռ կողմերին: Դրա միակ երաշխիքն, իհարկե, դաշնակից տերությունների միջամտությունն է»,- ասվում էր անգլիական փաստաթղթերից մեկում[1]:

Փաստորեն, այս փաստաթղթի շարունակական միտքն այն է, որ առանց դաշնակիցների մասնակցության, հնարավոր չէ լուծել տարածքային խնդիրները Կովկասում, ինչը և բնականաբար «արդարացնում» էր Կովկասում բրիտանական ռազմական ներկայությունը տարածաշրջանում «ռուսական անկարողությանը» փոխարինելու համար: Զուր չէր, որ հետագայում մեկնաբանելով հայ ժողովրդի կրած տառապանքները իրենց վարած քաղաքականության պատճառով, Լլոյդ Ջորջը «Ճշմարտությունը խաղաղության պայմանագրերի մասին» գրքի երկրորդ հատորում գրում է. «**Փաստելով, որ հենց մենք թուրքերին հնարավորություն տվեցինք կատարելու այդ հանցագործությունները, ուստի մեզ վրա է ընկնում բարոյական պարտքը՝ օգտվելու մեզ ընձեռված հնարավորությունից, ուղղելու համար մեր կողմից թույլ տրված անարդարությունը և ուժերի ներածին չափով թույլ չտալու սարսափի կրկնումը, որոնց համար պատմությունը միշտ մեզ վրա կդնի կատարվածի մեղքը**»[2]: Որքանով նկատում ենք, անգլիացի նշանավոր քաղաքական գործչի արտահայտած այս մտքերում ուշագրավ խոստովանություն կա, թեպետ, եթե հետևենք անգլիական քաղաքականության տրամաբանությանը, այն ուղղակի արդարացման ձև էր:

Հետագայում միայն բրիտանացիները փորձեցին ամերիկյան կողմին հանձնել ազդեցության գոտիները, այդ թվում նեղուցները և Հայաստանը՝ ջանալով իրենց վրայից նետել գաղութարարի շղարշի գոնե մի մասը: Մի որոշ ժամանակ էլ անգլիացիների կողմից փորձ արվեց Ֆրանսիային զիջել այդ տարածքները (Կովկասը) ՝ վերջինիս Միջագետքից և Մերձավոր Արևելքից հեռացնելու համար: Բրիտանական ռազմական նախարարությանն ուղղված արտաքին գործերի նախարարության գաղտնի փաստաթղթերից մեկի 4-17-րդ կետերում կարդում ենք. «Բոլոր չորս մարզերն էլ (Վրաստան, Ռուսական Հայաստան, Ռուսական Ադրբեջան և Դաղստան) ազգությամբ ռուսներ չեն (բացի Ստավրոպոլից և հարակից հյուսիսային շրջաններից) և բոլորն էլ հայտարարել են իրենց անկախության մասին: Նրանք պահանջել են ինքնորոշման իրավունք, ուստի գործունյա քաղաքական գործիչը կսկսի հենց այդ պահանջի ճանաչումից: Դա կլինի խելամիտ մի գործ, որն ամենից քիչ դժգոհություն կպատճառի Ռուսաստանին և նրան որևէ հիմք չի տա բողոքելու, թե դաշնակիցներն օգտվել են իր ժամանակավոր թուլությունից:

Թվում է՝ անվտանգ և արդյունավետ է ճանաչել ազգային կառավարությունները ցանկացած մարզերում, որոնք հայտարարել են իրենց վերջնական անկախությունը Ռուսաստանից: Ժամանակավոր կարգավորման ընթացքը պետք է լինի բավականին երկար, որպեսզի հնարավորություն տա մի կողմից Ռուսաստանին վերադառնալու և կայուն քաղաքական հավասարակշռություն վերականգնելու, իսկ մյուս կողմից՝ Հարավային Կովկասի պետություններին արդարացի շանս տա՝ ոտքի կանգնելու և լիարժեք քաղաքական ինքնավարություն ստանալու դաշնակիցների հետ հարաբերություններում: Եթե Ռուսաստանը վերականգնվի արագ, նրանք կարող են վերամիավորվել նրա հետ որոշակի ֆեդերատիվ հիմունքներով, եթե անարխիան Ռուսաստանում շարունակվի երկար տարիներ, վերջինից նրանց փաստական բաժանումը հավանաբար վերջնական կլինի: Մեր քաղաքականությունը Կովկասում պետք է այնպես կառուցվի, որ իրականացվի ցանկացած հնարավորություն»[1]:

Փաստաթղթի տրամաբանությունից պարզ է դառնում, որ բրիտանական քաղաքականությունը Ռուսաստանի թուլացման հաշվին ձգտում էր քաղաքական տեսակետից անջատել Հարավային Կովկասը, իսկ ծայրահեղ դեպքում, եթե դա իրենց չհաջողվի, ապա

[1] Armenia: նշվ. աշխ., էջ 541-543.
[2] Д. Ллойд Джордж, նշվ. աշխ., էջ 390.

[1] Caucasian Boundaries, Documents and Maps 1802-1946, Edited by Anita L.P. Burdett, Archive Editions, 1996, p. 469.

թույլ տալ այստեղ իրենց համար ավելի ընդունելի պետության հովանավորությունը (խոսքը ԱՄՆ-ի կամ Ֆրանսիայի մասին է). «Այս ամենն անմիջականորեն բխում է բրիտանական շահերից, քանի որ այս շրջանները մոտ են Մերձավոր Արևելքին, ուր մեր շահերը մշտական են, ուստի, չպետք է թույլ տալ, որ այստեղ անարխիա առաջանա: Սա կարող է վտանգավոր լինել նաև Ռուսաստանի հետ մեր ապագա հարաբերությունների տեսանկյունից, քանզի Անգլիան պետք է լինի ազդեցիկ, որպեսզի կովկասյան հանրապետություններին օժանդակելու մանդատը առաջարկվի խորհրդի կողմից (նկատի ունի դաշնակիցների խորհրդին՝ Ա. Ղ.): Մեր շահերն ավելի լավ կպաշտպանվեն, եթե կարողանանք ապահովել մեր անմիջական դաշնակից որևէ մեծ պետության ներկայությունն այդ շրջաններում»[1]: Փաստաթղթում ուշագրավ մի առաջարկ էլ կա. եթե նպատակահարմար դիտվի և դա բխի բրիտանական շահերի տեսակետից, ապա ցանկալի է, որ թույլ կտրվի ***Ռուսական և Թուրքական Հայաստանների միավորումը*** (ընդգծումը մերն է՝ Ա. Ղ.): Միևնույն ժամանակ, փաստաթղթի 16-րդ կետում առաջարկվում է երրորդ տեսակետը. Հայաստանի մանդատը հանձնել Ֆրանսիային (ներառյալ 6 հայկական վիլայեթները Թուրքիայում, Կիլիկիան և Ռուսական Հայաստանը, եթե բնակիչները ցանկանան, իհարկե), իսկ Վրաստանի, Ռուսական Ադրբեջանի ու Դաղստանի մանդատը տալ ամերիկացիներին[2]:

Այսպիսով, ասվածից պարզ է դառնում, որ նվաճողական իրենց նպատակներին հետամուտ՝ բրիտանացիները ձգտում էին Ֆրանսիային և ԱՄՆ-ին դուրս մղել Մերձավոր Արևելքից և Իրանից, դեպի այսպես ասած, «պակաս շահութաբեր» Հայաստան և Հարավային Կովկաս: Հասկանալի է նաև, որ բրիտանացիների այս նպատակները ժամանակավոր էին Կովկասում, ուստի իրենց համար ավելի առաջնային էր համարվում թիկունքի և գաղութացման տեսակետից ավելի շահութաբեր տարածքների անվտանգության ապահովումը: Այս քաղաքականությունն էլ ավելի որոշակիացավ հետագայում, երբ բրիտանացիները փորձեցին, տեղի ուժերի միջոցով, պայքարել թուրք-գերմանական և ապա՝ բոլշևիկյան ուժերի դեմ՝ իրենց համար ուղղակի ապահովելով միանգամայն ընդունելի իրավիճակ: Ահա թե

[1] Caucasian Boundaries, նշվ. աշխ., էջ 469, 470:
[2] Նույն տեղում, էջ 472:



ինչու, երբ Լորդերի պալատում 1918 թ. նոյեմբերի 13-ին հայամետ դիրքորոշումներով հայտնի Վիսկոնտ Բրայսը ներկայացնելով հայ ժողովրդի ծանր ու ողբերգական վիճակը թուրքական արշավանքներից հետո, շուտափույթ օժանդակություն էր առաջարկում, արտաքին գործերի նախարարության (Ֆորին օֆիս) ներկայացուցիչ էյրլ Քրոուֆորդի պատասխանն այսպիսին էր. «Միլորդ, ես չեմ կարող խորանալ հարցի մանրամասների մեջ, սակայն... հարցը, որի մասին այստեղ հիշատակվեց, այս պահին դաշնակիցների հետ քննարկվող հարցերից մեկն է և գտնվում է Ձերդ գերազանցության կառավարության ուշադրության կենտրոնում: Ես ցավում եմ, սակայն... անհրաժեշտ կամ որևէ ցանկալի բան ձեռնարկել այս իրադրության մեջ, որը ներկայացվեց Ձեր կողմից, այս պահին հնարավոր չէ... Բայց ես ուրախ եմ տեղեկացնելու, որ Ձերդ գերազանցության կառավարությունը լի է վճռականությամբ կյանքի կոչելու համամարդկային շահերը և որոշել է ոչ մի ջանք չխնայել՝ հայերի իրական պահանջները լիովին բավարարելու համար»[1]:

Բրիտանական քաղաքականության էության բացահայտման այս օրինակը միայն վերջինիս որդեգրած երկակի խաղի վառ վկայությունն է, որի առավել ցայտուն դրսևորումները հայ ժողովրդի և հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, կփորձենք լուսաբանել մեր աշխատանքի հաջորդ հատվածում:

Այդուհանդերձ, վերոնշյալից նույնիսկ պարզ է դառնում, որ Մեծ Բրիտանիան նախապատրաստվում էր թուրք-գերմանական ուժերին ստիպել հրաժարվելու Անդրկովկասից և այն սեփական ուժերով օկուպացնելու ծրագրեր էր նախապատրաստում: Ուստի, ամփոփելով բաժինը, կարելի է առանձնացնել տարածաշրջանում ընթացող հետևյալ կարևոր գործընթացները.

- Իրադրությունը Անդրկովկասում փետրվարյան և ապա բոլշևիկյան իրադարձություններից հետո շարունակում էր մնալ ծայրաստիճան բարդ, միևնույն ժամանակ, անորոշ ու անիշխանության իրավիճակում:
- Այս պայմաններում թուրքերը շարունակում էին ակտիվ նախապատրաստությունները ողջ երկրամասը նվաճելու և հայ ժողովրդի մնացյալ հատվածին ոչնչացնելու համար:

[1] Armenia, Parlamentary Debates, House of Lords, November 13, 1918, House of Commons, October 23,24,30,31, November 6,7,14,18.1918, p. 7.

- Երկրամասի բրիտանական օկուպացումը եթե ոչ ուղղակի, ապա անուղղակիորեն նպաստելու էր թուրքերի նպատակների իրագործմանը: Էնվերի ծրագրերի մեջ էր մտնում մուսավաթականների միջոցով կործանիչ հարված հասցնել Արցախ-Զանգեզուրին և Հայաստանին՝ այն վերջնականապես օղակելու համար:
- Կոտորելով գրաված բնակավայրերի հայ բնակիչներին, թուրքերին հաջողվեց իրագործել այս ծրագրերի մի մասը:
- Այս պայմաններում Ղարաբաղի հայերը քաջ գիտակցում էին, որ ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ ելքը ինքնապաշտպանությունն էր և արտաքին օժանդակության հույսը, քանի որ թուրքական ներխուժումն արդեն հասնում էր Ղարաբաղ, իսկ արտաքին օժանդակությունն այդպես էլ տեղ չհասավ:
- Իրավիճակը գնալով աստիճանաբար ավելի ու ավելի էր բարդանում, ինչն էլ Անդրկովկասում հանգեցրեց քաղաքական լուրջ փոփոխությունների. 1918 թվականի երկրորդ կեսը հայության համար դարձավ պայքարի, մաքառումների և հույսերի մի ամբողջ ժամանակաշրջան:

## 1.3. ԴԱՇՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԻՆ

Ընդհանրապես, յուրաքանչյուր մեծ տերության, այս պարագայում Մեծ Բրիտանիայի, քաղաքականության սկզբունքները ուսումնասիրելու համար պետք է ծանոթ լինել երկրի և ժողովրդի մշակույթին, հոգեբանությանը և կենսակերպին:

Անգլիայում դեռ շատ վաղուց ստեղծվել է հարուստ մշակույթ և այդ երկրում են զարգացում ստացել այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են քաղաքացիական ազատությունները, անհատի անձեռնմխելիությունը, մտքի, խղճի, մամուլի, խոսքի ազատությունները և այլն: Այս երկրում են իրենց սկզբնական ձևավորումը ստացել նաև պառլամենտարիզմը և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպումը[1]: Հատկանշական է, որ երկրի ներսում ձևավորված քաղաքական լայն ազատությունների համակարգը հիմնված է պետական կառուցվածքի և դարերով պահպանված ազգային ավանդույթների վրա: Այս ամենը բնորոշ է Անգլիայի համար, եթե հաշվի չառնենք Բրիտանական կայսրությանը յուրահատուկ գաղութային համակարգին բնորոշ հատկանիշները:

Մեծ Բրիտանիան իր հզորացման ուղին բռնել է գաղութների անխնա շահագործմամբ: Վերջիններին դիտելով որպես հումքի աղբյուր և ապրանքների վաճառման շուկա՝ բրիտանացիները տեղերում հաստատում էին դաժան ռազմական ու վարչական իշխանություն, ինչը հնարավոր էր դառնում հզոր նավատորմի և ռազմական ուժի շնորհիվ:

XX դարի սկզբին Անգլիայի հզորացումը և ծաղկումը հասել էր գագաթնակետին: Կայսրությունը կազմում էր երկրագնդի ողջ ցամաքի գրեթե մեկ հինգերորդ մասը և զբաղեցնում էր 29.872.061 քառակուսի մղոն տարածք 390.950.829 բնակչությամբ[2]:

Տնտեսական ներուժով կայսրությունը գերազանցում էր իր մրցակիցներին: Ըստ ոսկու արդյունահանման ցուցանիշների՝ նրան էր պատկանում աշխարհում արդյունահանված ոսկու կեսը: Առևտրական շրջանառությամբ կայսրությունը գերազանցում էր շատ երկրների, այդ թվում նաև Ռուսաստանին (1904 թ. տվյալներով 1,405 մլն. ֆունտ ի համեմատություն ռուսական 166 մլն. ֆունտի): Անգերազանցելի էր բրիտանական ծովային ներուժը, որը շատ ավելի առաջ էր անցել իր մրցակիցներից (1.050.500 տոննա տարողությամբ ռազմածովային տեխնիկա, ի համեմատություն ֆրանսիական 397.600 և գերմանական 285.700 տոննայի):

1914 թ. հունիսին համաշխարհային առևտրական նավատորմի տարողությունը կազմում էր 42.514.000 գրոստոննա, որից Միացյալ Թագավորությանն էր պատկանում (ներառյալ գաղութները) 20.284.000 գրոստոննա, որն իր հերթին կազմում էր համաշխարհային նավատորմի չափի կեսը:

XIX դարի կեսից Մեծ Բրիտանիան անցել էր ազատ առևտրա-

---

[1] Տե՛ս **А. Гейкинг,** Англия: ее государственный, общественный, экономический строй, С-Петербург, типография М. М. Стас Юлевича, 1909. стр. 3:

[2] Տե՛ս **А. Гейкинг,** Англия: ее государственный, общественный, экономический строй, С-Петербург, типография М. М. Стас Юлевича, 1909, стр. 458:

կարգի: Տեղի էին ունենում տնտեսության ինդուստրացում և կապիտալիզմի զարգացում: Տնտեսության արագ տեմպերով զարգացումից բացի՝ շարունակվում էր օտար երկրներում կապիտալ ներդրումների աճը: 1906 թ. այն հասել էր 3.150.000.000 ֆունտ ստեռլինգի, երբ 1897 թ. այն 2.400.000.000 ֆունտ ստեռլինգ էր:

Այսպիսով, 20-րդ դարի սկզբին Մեծ Բրիտանիան իր զարգացման ցուցանիշներով, տնտեսական, ռազմական և ծովային ներուժով գերազանցում էր հողագնդի մյուս պետություններին: Ունենալով համաշխարհային ծովային գերակայություն՝ կայսրությունը թելադրող դիրք էր զբաղեցնում միջազգային հարաբերություններում: Հսկայական էր առաջընթացը գիտության, տեխնիկայի և մշակույթի բնագավառներում ևս:

Առաջին աշխարհամարտին մասնակցելով և ձգտելով համաշխարհային տիրապետության, Բրիտանիան, բնականաբար ուներ սեփական շահերը, ծրագրերը, և մեծ էր նրա վրա ընկած պատերազմական բեռը: Հիմնական ծանրությունն ընկած էր գաղութների վրա (գաղութներից մոբիլիզացվել էր 4.5 միլիոն մարդ): Բրիտանիայի աշխարհաքաղաքական դերակատարությանը հատկանշական բնորոշում է տվել Անգլիայում ամերիկյան ներկայացուցիչ Պեջը. «եթե Անգլիան հաղթի, իսկ նա վերջ ի վերջո կհաղթի, ապա նա կթելադրի հաղթության պայմանները, անգլիական նավատորմը կլինի ավելի ուժեղ, քան այն եղել է երբևիցե, բրիտանական ինքնակալությունն էլ ավելի կամրապնդվի, քան նախկինում: Չի լինի ոչ մի ռազմական սահմանափակում՝ բացառությամբ Գերմանիայի: Իսկ Միացյալ Նահանգները ձայն չեն ունենա հաշտության պայմանագրի պայմանների կազմման ժամանակ, Անգլիան կկառուցի իր առեւլի նավատորմը, իսկ Ռուսաստանը կպահի իր անհաշիվ բանակը»[1]: Այս ամենից կարելի էր եզրակացնել, որ բրիտանական ուժը և դերակատարությունը համաշխարհային թատերաբեմում մեծանում էր պատերազմի ավարտին զուգահեռ, իսկ պատերազմում հաղթանակ տանելը միայն արագացնում էր այդ գործընթացը: Չնայած նախնական համաձայնությանը՝ բրիտանացիները դեմ էին Ռուսաստանի կողմից Կ. Պոլսին տիրանալուն: Այդ մասին իրենց կարծիքն էին արտահայտում վարչապետ Բալֆուրը և նրան հաջորդած Լլոյդ Ջորջը: Այդ ան-

[1] М. Н. Покровский, Империалистическая Война 1915-1930, 1931, стр. 279.



համաձայնությունն ուղղակիորեն կապված էր բրիտանական շահերի հետ, քանզի այդտեղից ճանապարհը տանում էր դեպի Թուրքիայի նախնական բաժանմամբ իրենց բաժին հասած Միջագետք և Եգիպտոսին հարակից տարածքներ: Անգլիան աներկբա համաձայնվել էր Ռուսաստանին թողնել Հայաստանը և նրան որոշ հարակից շրջաններ[1]:

Անգլիայի և Ռուսաստանի միջև հակասությունները ավելի խորն էին, որոնք գալիս էին դեռ նախապատերազմյան ժամանակներից: Անգլիայի առևտրական հետաքրքրություններ Թուրքիայում և Պարսկաստանում Ռուսաստանին հայտնի էին դեռևս Պետրոսյան ժամանակներից սկսած: Հետագայում այս շահերի առանցքում առաջնային դարձավ նավթային գործոնը: Դեռ 1912 թ. սկսած՝ ռազմածովային նավատորմն անցել էր նավթային վառելիքի, ուստի Անգլիայի համար գերխնդիր էր դառնում. «փաստացի նավթային կառավարման հսկողությունը Իրանում և Միջագետքի նավթային պաշարներին տիրանալը»[2]: Անգլիայի կենսական հետաքրքրությունները, ինչպես փաստվում էր միջազգային հարաբերությունների անգլիական ինստիտուտի հետազոտությամբ, կազմում էին Միջագետքի և Արաբիայի նավթային հարստությունները: Դա բերում էր ուղղակի բախման ռուսական շահերի հետ Իրանում և Փոքր Ասիայում: Սակայն բրիտանացիները, տիրանալով Ջիբրալթարին, Մալթային, Կիպրոսին, Եգիպտոսին, Պաղեստինին (ոչ ուղղակիորեն) և ազատորեն հսկողություն ապահովելով Կարմիր ծովում, դեպի Հնդկաստան ազատ ճանապարհի հնարավորություն էին ստանում:

Հակասությունները Անգլիայի և Ռուսաստանի միջև Իրանում ունեցած շահերի տեսանկյունից, հասնում են իրենց գագաթնակետին 1911 թ. և ըստ Իզվոլսկու (Ռուսաստանի դեսպանը Փարիզում) կարող էին հանգեցնել Անգլիայի հետ հարաբերությունների խզմանը[3]:

Սակայն այնքան մեծ էին գերմանական ծրագրերը և վտանգավոր, որ անգլո-գերմանական մրցակցությունն էլ ավելի էր սրվում, քան դա կարող էր լինել անգլո-ռուսականի դեպքում: Այս պարա-

[1] Архив Полковника Хауза, том 3, Москва-1939, стр. 36.

[2] В. Г. Трухановский, Внешная Политика Англии на Первом Этапе Общего Кризиса Капитализма (1918-1939), Москва, 1962, стр. 90.

[3] Տես՝ Материалы по истории франко-русских отношений 1910-1914, Москва, 1922, стр. 24:

գայում փործելով Թուրքիային վերածել հլու կամակատարի, Գերմանիան ձգտում էր նրա սպառնալիքով Եգիպտոսի, Իրանի և Կովկասի նկատմամբ խափանել կապը Ռուսաստանի և նրա դաշնակիցների միջև: Գերմանացիները ձգտում էին, օգտագործելով թուրքական «սրբազան պատերազմի» ուժը, ոտքի հանել և դաշնակիցների դեմ պատերազմի մղել մահմեդական ենթակա ժողովուրդներին:

Պատերազմի ընթացքում թուրքական նպատակներն էլ ավելի խորն էին գնում՝ ներխուժել Կովկաս և Իրան: Էնվեր փաշայի մշակման համաձայն թուրքերը պետք է տիրանային Անդրկովկասին և Յյուսիսային Իրանին, Անդրկասպյան շրջանին, Միջին Ասիային: Իրան և Կովկաս ներխուժելուց հետո Էնվերի ծրագրերի մեջ մտնում էր նաև հարձակումը Սուեզի ջրանցքի և Եգիպտոսի վրա: Գերմանական գլխավոր հրամանատարությունը Թուրքիայի հետ համագործակցությամբ մտադիր էր պատերազմի սկզբում կոտրել ռուսական դիմադրությունը Կովկասում և իրանական Ադրբեջանում ու սկսել ռուսական հողեր ներխուժման ծրագրի իրագործումը:

Առաջին համաշխարհային պատերազմի ռազմական գործողությունների ընթացքում գերմանաթուրքական ծրագրերին բախտ չէր վիճակված իրականանալու՝ գերազանցապես ռուսական զենքի փայլուն հաղթանակների շնորհիվ:

Պատերազմում հայերը օժանդակում էին ռուսներին և դաշնակիցներին: Ազատություն ստանալու ակնկալիքով՝ նրանք ոչինչ չխնայեցին ապահովելու ռուսական զենքի հաղթանակը թուրքերի նկատմամբ: Դա առավել ցայտուն դրսևորվեց Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակի շարքերում և հայկական կամավորական գնդերի կազմակերպմամբ ու ներգրավմամբ:

Ռուսների հաղթանակը աստիճանաբար առաջին համաշխարհային պատերազմում դառնում էր ավելի աներկբա: Աճում էր Ռուսաստանի դերը և դաշնակիցների շարքերում, և պատերազմի մեջ: Պատերազմը մոտենում էր իր հաղթական ավարտին: Դաշնակիցների հետ դիվանագիտական հարաբերություններում Ռուսաստանի համար բավականին նպաստավոր իրավիճակ էր ստեղծվել: Կովկասին տիրանալու տեսակետից աստիճանաբար մեծանում էին հնարավորությունները:

Չնայած առկա բազմաթիվ հակասություններին՝ Ռուսաստանը



հստակ հետամուտ էր իր պահանջներին՝ Հայաստանի և ապա՝ նեղուցների հարցում: Ահա, թե ինչ է գրում Պալեոլոգը Պետրոգրադից. «Սեր Էդուարդ Գրեյի կողմից համայնքների պալատում արտահայտած երկիմաստ բառերը Կոստանդնուպոլսի ճակատագրի վերաբերյալ Ռուսաստանում թողել են անբարեհաճ տպավորություն: Ռուս հասարակությունը կարծում է, որ Անգլիան վերջին պահին կպնդի այս կամ այն որոշման վրա, որը ամբողջապես չի բավարարի ռուսական պատմական ձգտումները: Իսկ ահա Սազոնովը ինձ և Սըր Էդուարդ Բյուկենենին հաղորդեց հետևյալը. «Ես կարող եմ մտածել, որ նեղուցների հարցը չի բերի իր հետևից Կոստանդնուպոլսի անմիջական զբաղեցումը, սակայն ես այսօր պետք է փաստեմ, որ երկիրը պահանջում է այդ ռադիկալ որոշումը: Ի միջի այլոց, Սըր Էդուարդ Գրեյը բավարարվում է այն հաղորդումով, որ նեղուցների հարցը պետք է ամբողջովին որոշվի Ռուսաստանի հետ համաձայնությամբ: Ճիշտ է, թագավոր Գեորգ V-ը, ավելի առաջ գնալով, հայտնում է կոմս Բենկենդորֆին. «Կոստանդնուպոլսը պատկանում է ձեզ»: Բայց այժմ եկել է ժամը խոսել ավելի հստակ: Ավարտելով խոսքը՝ Սազոնովը խնդրեց Սըր Բյուկենենից պնդել Սըր Էդուարդ Գրեյի մոտ, որ անգլիական կառավարությունը տա իր համաձայնությունը Ռուսաստանի ծրագրերին»[1]:

Ռուսական ծրագրերը հաջողվեցին այն ժամանակ, երբ դաշնակիցները նախապատրաստվեցին գաղտնի բաժանել Օսմանյան Կայսրությունը: Նախ՝ Լոնդոնի 1915 թ. ապրիլի 26-ի, ապա 1916 թ. մայիսի 16-ին Սայկս - Պիկոյի, ապա՝ 1917 թ. ապրիլի 17-ի ժան դե Մաուրիեննի համաձայնություններով Օսմանյան կայսրության տարածքը բաժանվեց դաշնակից պետությունների միջև[2]:

Ըստ այդ համաձայնությունների, Ռուսաստանին էին զիջվում Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայեթները և իսկողությունը Կոստանդնուպոլսի վրա՝ պահպանելով ազատ նավահանգստի կարգավիճակը, նշվում էր նաև Փոքր Ասիայի հյուսիսային հատվածը[3]:

---

[1] Р. Пуанкаре, նշվ. աշխ., էջ 342:

[2] A History of The Peace Conference of Paris, edited by H.W.V. Temporley, in 6v, v 6, printed in England, at the Oxford University pres by Federick Hall, London, 1924, p. 18-19.

[3] Г. Г. Махмурян, Политика Велокобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. (Бремя белого человека/ (Инст. Истории НАН Армении, Ереван,

Ըստ համաձայնագրի Մեծ Բրիտանիան տիրանալու էր Միջագետքին և այն շրջաններին, որոնք հարակից են Եգիպտոսին:

Ֆրանսիան և Իտալիան ստանում են իրենց ազդեցության գոտիները Անատոլիայի մի մասում՝ մինչև նեղուցներ:

Այսպիսով, բարենպաստ իրադրության պայմաններում Ռուսաստանը դաշնակիցների թվում, կարող էր պատերազմը հասցնել հաղթական ավարտի և չնայած Անգլիայի անհամաձայնությունը տիրանալ նեղուցների հսկողությանը և Կոստանդնուպոլիսին: Սակայն իրադրությունը հիմնովին փոխվում է փետրվարյան և հոկտեմբերյան իրադարձություններից հետո:

Վերջին շրջանում պատմագիտության մեջ տեսակետներ են ամրապնդվում, որ 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած իրադարձությունները հասարակության մեջ համապատասխան հենք չունեին: Ռուսաստանում հեղափոխության արժեքը բարձր գնահատելու համար խորհրդային պատմագիտությունը տեղի ունեցած իրադարձությունները համարում էր օրինաչափ երևույթ: Սակայն, և՛ փետրվարին, և՛ հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած իրադարձություններն առնվազն օրինաչափ չէին: Ահա թե ինչ է գրում Վ. Շամբարովն այս մասին. «Այո՛, Ռուսաստանը փլուզվեց ոչ թե ռազմական աղետներից, այլ հարվածը հասցվեց թիկունքից, երբ այն գտնվում էր իր վերելքի մեջ: Մի խոսքով, ստացվեց այնպես, որ Ռուսաստանին չկարողացան կոտրել ո՛չ թշնամական բանակները, ո՛չ գերմանական լրտեսությունը, ո՛չ բոլշևիկները, ոչ անջատողականները, ո՛չ սոցիալիստները, ո՛չ մասոնները և ո՛չ էլ լիբերալները, իսկ ահա բոլորը միասին՝ իրենց գործը կատարեցին: Պատերազմը նրանց համար ժամանակի առումով միավորիչ գործոն դարձավ: Այն, թե փետրվարյան հեղափոխությունը կրում էր համաժողովրդական բնույթ և բոլոր կողմերից ընդունվեց ոգևորությամբ, միայն պատմական լեգենդ է»[1]: Հեղինակը համապատասխան փաստերով հաստատում է, որ հասարակության տարբեր շերտեր ոչ թե ուրախությամբ, այլ ցավով ու ափսոսանքով են ընդունել ցարիզմի կործանումը, ապա՝ ժամանակավոր կառավարության տապալումը:

Ընդհանուր առմամբ բնորոշելով ժամանակավոր կառավարու-

Лусакн, 2002, стр 11); Архив Полковника Хауза, том 3, Гос.-Соц.-эконом. Изд. М., 1939, стр. 36:

[1] В. Шамбаров, նշվ. աշխ., էջ 594:



թյան քայլերը և հետագա իրադարձությունները՝ կարելի է ասել, որ հեղափոխությունը փաթաթվեց Ռուսաստանի վզին, իսկ երկիրը և հասարակությունը պատրաստ չէին դրան:

Սակայն, ըստ խորհրդային պատմագրության՝ փետրվարյան, ապա նաև հոկտեմբերյան հեղափոխություններն օբյեկտիվորեն պայմանավորված էին երկրում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամով[1]: Պատերազմի տարիներին մեծ անկում ապրեցին արդյունաբերությունը, տրանսպորտը, գյուղատնտեսությունը: Պատերազմը ծայրահեղ կերպով սրեց երկրում առկա բոլոր հասարակական հակասությունները՝ հեղափոխությունը դարձնելով պատմական անհրաժեշտություն:

Ահա թե ինչպես է բնորոշել Ու. Չերչիլը 1917 թ. հոկտեմբերից Ռուսաստանի համար ստեղծված կացությունը. «Ռուսաստանը ընկավ ճանապարհի կեսին և այդ անկման ժամանակ ամբողջովին կորցրեց իր կերպարը: Հին դաշնակցի փոխարեն մեր դիմաց կանգնած էր ուրվական, մինչ այժմ երկրագնդի վրա գոյություն ունեցած որևէ բանի չնմանվող: Մենք տեսնում էինք պետություն՝ առանց ազգի, բանակ՝ առանց հայրենիքի, կրոն՝ առանց աստծու, կառավարություն, որը հավակնում էր իր դեմքով ներկայացնել որպես հեղափոխությամբ ծնված և ահաբեկչությամբ սնվող Ռուսաստան»[2]: Ռուսաստանին կործանարար հարված հասցրեց բոլշևիզմը իր 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջմամբ. այն անդառնալի կորուստներ բերեց ոչ միայն ռուսներին, այլև բազում ուրիշ ազգերի, որոնց ճակատագիրը այս թե այն կերպ առնչվում էր նրանց հետ:

Այն պարագայում, երբ ցեղասպանված ու հալածված հայ ժողովուրդը աշխարհամարտի ավարտին հույս էր փայփայում համախմբվել մեկ ամբողջական հայրենիքի տարածքում, բոլշևիկների «հայտնությամբ» այդ բոլոր հույսերն ու նպատակները հօդս ցնդեցին, հայ ժողովուրդը կրեց մարդկային, տարածքային և բարոյական ծանր ու անդառնալի կորուստներ:

[1] Н. И. Минц, История Великого Октября, т. 1-2, М., 1967-88; История Великой Октябрьской социалистической революции, М., 1967; Г. Н. Голиков, Революция, открывшая новую эру, М., 1967; Е. Н. Гордецкий, Рождение Советского государства 1917-1918, М., 1965; К. Цеткин, Октябрская Революция, Хар., 1924 և այլն:

[2] В. Черчиль, Мировой Кризис, Государственное Военное издательство, Москва, 1932, Ленинград, стр. 46.

Մյուս տեսանկյունից էլ, ինչպես իրավամբ փաստում է Ու. Չերչիլը, որ պատերազմի ողջ ծանրությունը ռուսների՝ ռազմական գործողություններից հրաժարվելուց հետո ընկավ դաշնակիցների, հատկապես Մեծ Բրիտանիայի վրա: Առաջացան նոր քաղաքական իրավիճակ և մոտեցումներ, որոնք, իրոք, կարիք ունեն բացահայտման:

Այսպիսով, աշխարհաքաղաքական բարդ պայմաններում, երբ Անդրկովկասի գլխին կախված էր թուրքական ներխուժման վտանգը, իսկ դաշնակիցները դեռ չէին ճշտել իրենց դիրքորոշումները Ռուսաստանի պատերազմից դուրս գալուց հետո, երկրամասը հայտնվում է անիշխանության մեջ: Չնայած ժամանակավոր կառավարության կողմից կազմակերպված մարմինների՝ (ՕЗАКОМ և տեղական կառ. այլ մարմիններ), իսկ հետո նաև Անդրկովկասյան Սեյմի գործունեությանը՝ այնուամենայնիվ, անիշխանությունը և անօրինականությունը գերիշխող դիրքերում էին: Ավելի ծանր վիճակում էր հայությունը՝ 1915 թ. Գողգոթայից հետո:

Դրությունն ավելի էր ծանրանում գերտերությունների շահադետ քաղաքականության պատճառով: Կազմալուծվում են Անդրկովկասի տարբեր հատվածների միջև ժամանակին գործող հաղորդակցության ուղիները, պարենավորումը, հասարակական-տնտեսական կյանքի շատ այլ ոլորտներ:

Այդպիսի վիճակում էր հայտնվել նաև Ղարաբաղի բնակչությունը, ուր վիճակն օրեցօր ծանրանում էր ահագնացող թուրքմահմեդական հարձակման վտանգով: Այսպիսով.

1. Առաջին աշխարհամարտի ավարտին Ռուսաստանի ազդեցության թուլացման հետ ավելի սրվեցին գերտերությունների շահախնդրությունները Անդրկովկասի նկատմամբ:
2. Այդ հակասությունները հատկապես ակնհայտ էին պատերազմող բլոկների շահերի շրջանակներում՝ մի կողմից գերմանա-թուրքական, մյուս կողմից բրիտանական:
3. Տարածաշրջանում էլ ավելի էր շիկանում պայքարը երկրամասի հաղորդակցության ուղիներին և վառելիքահումքային պաշարներին տիրանալու համար:



**ԳԼՈՒԽ II**

# ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՄՈՒՏՔՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԵՎ ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ

## 2.1. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՄՈՒՏՔՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ: ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 1918 թ. ՎԵՐՋԵՐԻՆ

Բրիտանական զորքերի մուտքն Անդրկովկաս և տեղի տարածքների օկուպացիան հետապնդում էին մի շարք նպատակներ: Այդ նպատակները թեպետ պատմագիտական դպրոցների կողմից մեկնաբանվել են տարբեր տեսանկյուններից՝ բոլշևիկյան, արևմտյան և այլն, սակայն ըստ էության, իրենց հիմքում հանգում են հետևյալին.

- Արևելյան ռազմաճակատի վերացումից հետո հարկ էր պաշտպանել բրիտանական ազդեցության գոտիները թուրք-գերմանական ուժերից Իրանում, Միջագետքում և Հնդկաստանում[1]:
- Տարածվող բոլշևիկյան շարժման դեմ պայքարելու և տեղի ուժերին օգտագործելու նպատակով հակաբոլշևիկյան արշավանք կազմակերպելու անհրաժեշտությունը:
- Հումքային պաշարներ ձեռք բերելու խնդիրը և այլն:

Վերոնշյալ նկատառումներով Դենստերվիլի արշավանքից զատ, Անդրկովկաս ներխուժման համար նախապատրաստվում էր նաև գեներալ Մալեսոնի բանակը: Բնականաբար, անգլիացիները կարևոր նշանակություն էին տալիս Իրանի արդեն գրավյալ տարածքների, Միջագետքի ու Հնդկաստանի միջև հաղորդակցության ապահովմանը: Նկատենք նաև, որ բրիտանական կողմի այս նախապատրաստություններին զուգահեռ, Հյուսիսային Իրանից իրականացվում էր ռուսական զորքերի դուրսբերումը: Ակնհայտ էր նաև, որ այս

[1] Տես The Armenian Review, ARTIN ARSLANIAN, The British Decision to Interone in TransCaucasia during World War I, 1974, vol. XXVII, V2-106, p. 146.

գործողությունները թելադրված էին անմիջապես գլխավոր շտաբից և ռազմական նախարարությունից. «Իր հեռագրերում 1918 թ. մայիսի 18-ին և 21-ին գլխավոր շտաբի պետ Հենրի Վիլսոնը համաձայնվում է հետաձգել միջագետքյան բանակի հարձակումը և հրամայում է գեներալ Մարշալին առավելագույն օժանդակություն ցույց տալ Դենստերվիլի ցամաքային ջոկատին»[1]:

Այսպիսով, Դենստերվիլի առաքելությունը նպատակաուղղված էր մի կողմից, օժանդակելու և կազմակերպական օգնություն ցույց տալու տեղի ուժերին՝ պանթուրքական ծրագրերի իրագործմանը հակազդելու համար, մյուս կողմից նպատակ ուներ աջակցելու բրիտանական միջագետքյան ուժերին՝ Իրանի անվտանգությունը ապահովելու համար[2]: Սակայն այս ամենը դեռ չէր նշանակում Անդրկովկասի անվերապահ օկուպացում, քանզի Դենստերվիլի առաքելության հետ կապված հույսերը իրականացան, իսկ ավելի ուշ կազմակերպված լրացուցիչ հակաթուրքական ուժերին այդպես էլ չհաջողվեց դիմագրավել թուրքական արշավանքին: Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ դեռ 1917 թ. դեկտեմբերին բրիտանական կառավարությունը պաշտոնապես որոշում էր ընդունել ֆինանսական և ռազմական փորձագետներով օժանդակություն ցույց տալ Հայաստանի և Վրաստանի ազգային միավորումներին[3]: Բնականաբար, Անգլիան դրանով նպատակ էր հետապնդում տեղի ազգային միավորների միջոցով պատվար ստեղծել թուրքական հարձակման և բոլշևիզմի տարածման դեմ: Դրա մասին են վկայում Պողոս Նուբար Փաշայի հետ Բալֆուրի, Ալֆրեդ Միլների (Ռազմական կաբինետի անդամ), Լորդ Բերտիլի (Փարիզում բրիտանական դեսպան), գեներալ Մագդոնոհի (ռազմական նախարարության հետախուզության բաժնի տնօրեն) առանձնազրույցները, որոնք խրախուսում էին դիմակայել գերմանա-թուրքական նկրտումներին նախկին ռուսական կայսրության տարածքներում և Արևմտյան Հայաստանում: Եվ սա այն ժամանակ, երբ սպառնալից էր դառնում թուրքական արշավանքը ռուսական զորքերի լքած տարածքներում:

Բրիտանացիները լրջորեն անհանգստացած էին գերմանացիների և թուրքերի կողմից ռուսական հսկայական հումքային պաշարների տիրանալու հեռանկարով. «Եթե դաշնակցային ինտերվենցիան անհապաղ չկազմակերպվի Սիբիրում, ապա մենք ոչ մի հնարավորություն չենք ունենա վերջնական հաղթանակի հասնել և լուրջ վտանգի կենթարկվենք...»[1]:

[1] Л. Мирошников, նշվ. աշխ., էջ 80:
[2] Տե՛ս **Ա. Նասիբեան**, «Բրիտանիա և Հայկական Հարցը 1915-1923 թթ.», էջ 108:
[3] Տե՛ս The Armenian Review, vol. XXVII, V2-106, 1974, p. 153:



Ինչ խոսք, աստիճանաբար ահագնացող բոլշևիկացման վտանգը սպառնում էր նաև Բրիտանիային: Տակավին պատերազմի ավարտին, երկրի ներսում նկատվեցին բանվորական և արհմիութենական շարժման ակտիվացումներ: Գնալով սպառնալից էին դառնում նաև իռլանդական հարցը և հուզումները գաղութներում: Այս պայմաններում պայքարը բոլշևիզմի դեմ դառնում էր առաջնային. 1918 թ. օգոստոսին Հնդկաստանի և Միջագետքի բանակներին տրված Ռազմական նախարարության հաղորդագրության մեջ ասված էր. «Գեներալ Դենստերվիլին պետք է հաղորդել, որ անհրաժեշտության դեպքում նա պետք է առանց տատանվելու ազատվի Բաքվի բոլշևիկյան մնացորդներից և վերոնշյալ հրահանգի կատարման համար կարող է ստանալ մեր լայն օժանդակությունը»[2]:

Դեպքերի ընթացքը այս առումով այնքան էր լրջացել, որ 1918 թ. հոկտեմբերին ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի ներկայացուցիչ Հաուզը նրան ուղղված զեկուցագրում գրում էր. «Ջորջը (խոսքը Լլոյդ Ջորջի մասին է ՝ Ա.Դ.) Անգլիային տանում է բոլշևիկացման»[3]:

Այս լույսի ներքո արդեն պարզ է դառնում գեներալ Դենստերվիլի գործողությունների բնույթը: Ուստի, տվյալ պահին Անդրկովկասի ամբողջական բռնազավթումը նախատեսված չէր, քանզի այն Անգլիայից պահանջում էր հսկայական նյութական և մարդկային միջոցներ[4]: Բոլշևիկների հեռացումը կարևորելով հանդերձ, Անգլիան փորձում էր այդ ամենը իրագործել տեղի ուժերով և անգլիական դիվանագիտությանը հատուկ «նուրբ մեթոդներով»:

Այս նույն ժամանակ Անդրկովկասի երեք հանրապետությունները ձգտում էին յուրովի լուծել իրենց առջև ծառացած հրատապ խնդիրները: Վրաստանը գտնվում էր գերմանական հովանավորության ներքո և սկսել էր իր նկրտումներն իրականացնել հայկական տարածքներում: Հայ-վրացական խառը բնակչությամբ տարածքնե-

[1] Архив Полковника Хауза, т. III, Гос-соц-экон. Изд., Москва, 1939, стр. 287.
[2] Л. Мирошников, նշվ. աշխ., էջ 113:
[3] К. Виноградов, Дэвид Ллойд Джорд, Мысль, Москва, 1970, стр. 270.
[4] Տես Г. Махмурян, նշված աշխատությունը, էջ 19:

րը համարվում էին Վրաստանի անբաժանելի մասեր և հունիսի առաջին կեսին մենշևիկյան Վրաստանի կառավարության անդամներ Ժորդանիայի և Ռամիշվիլու կողմից հրավիրված Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչների հետ հանդիպումներում բացեիբաց ներկայացնում էին այդ պահանջները: Հատկապես անհեթեթ էր Ի. Ծերեթելու արտահայտած տեսակետն այդ խնդրում. «Բաթումի դաշնագրից հետո հայերը չեն կարող կազմել որոշակի կենսական պետություն և նրանց շահերից է բխում հզորացնելու Վրաստանը, որպեսզի Կովկասում լինի քրիստոնեական ուժեղ պետություն, որը գերմանական օժանդակությամբ կպաշտպանի և՛ իրեն, և՛ թե հայերին»,- հայտարարում էր նա[1]: Ուստի, պարզ էր նաև «եղբայրական» Վրաստանի ակնկալիքները հայաբնակ տարածքները յուրացնելու խնդրում: Հանդիպումից մի քանի օր անց, վրացական զորքերը զբաղեցրին թուրքերից ազատ վիճելի տարածքները` հատկապես Բորչալուի գավառը: Պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ չունենալով, Հայաստանը հայտնվում է ծանր վիճակում, որին բնորոշ բնութագրություն է տվել ցարական գեներալ Ա. Ի. Դենիկինը. «Մնալով ողբերգական միայնության մեջ, Հայաստանի Հանրապետությունը, սպասում էր կամ իր գլխատմանն ու բաժանմանը, կամ էլ` հույսով և հավատով իր փրկությանը: Որտեղից կգար մեկը կամ մյուսը - կարելի էր միայն կռահել»[2]:

Իրենց հերթին, մայիսի 28-ին մուսավաթականները Գանձակում ոչ առանց թուրքերի օժանդակության հռչակեցին «Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը» և տենդագին անցան Ելիզավետպոլի և Բաքվի նահանգների հայության ոչնչացմանը: Այս ընթացքում թուրքական սպաները Նուրի փաշայի հրամանով հայերի դեմ հարձակվելու նախապատրաստություններ էին տեսնում: Քարոզչական լայն աշխատանքներ էին տարվում «թաթար» և մահմեդական բնակչության շրջանում[3]: Միաժամանակ, նախապատրաստվում էր արշավանքը Բաքվի վրա: Ծրագրվում էր բոլոր կողմերից «խեղդել» Հայաստանը` արևմուտքում թուրքական ճակատն էր, հարավում Ալաշկերտից` քրդերն էին, հարավ - արևելքում` թաթար խաների կողմից Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառներից կազմավորված արհեստածին «Արաքսյան Հանրապետությունը», արևելքում Ադրբեջանն էր թաթար բանդաների հետ միասին, իսկ հյուսիսում վրացական ուժերի կողմից բավականին լավ հսկվող վրացական սահմանն էր, որտեղից «նույնիսկ Թիֆլիսի նահանգին պատկանող բեռները բաց չէին թողնվում»[1]:

[1] А. Деникин, Очерки Русской Смуты, Москва, Мысль, 1991, стр. 141.
[2] Նույն տեղում:
[3] Տես, The Armenian Review, 1974, vol. XXVII, V1-105, … A Secret Military Pact, p. 40:



Այս պայմաններում, հարցին ինչ-որ լուծում տալու ակնկալիքով Բաթումից վերադարձած հայկական պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ մեկնում է Կ.Պոլիս` Գերմանիայի կողմից հրավիրված կոնֆերանսին մասնակցելու համար: Կ.Պոլիս էր ժամանել նաև ադրբեջանական պատվիրակությունը` Մահմեդ Ռասուլզադեի և Ալի Թոբչիբաշևի գլխավորությամբ: Վրաստանի պատվիրակությունը ներկայացնում էր Եվգենի Գեգեչկորին: Թուրքերի մայրաքաղաքում կազմակերպած կոնֆերանսը նպատակ ուներ Կովկասի հանրապետություններին ամբողջովին ենթարկել թուրքական քաղաքականությանը: Քաղաքական խաղն իր գագաթնակետին է հասնում այն ժամանակ, երբ չկայացած կոնֆերանսի հանդիպումներից պարզ է դառնում, որ Թուրքիան շահարկում է հայերի հետ բանակցությունները` ճշտելու համար վերջինիս դիրքերը և նրանից սպառնացող վտանգի աստիճանը: Գերմանա-խորհրդային բանակցություններից հետո, երբ պարզվում է, որ Կովկասը բաժանվում է երկու ազդեցիկ գոտիների, Թուրքիան անմիջապես շահարկեց հայերին վարկ տրամադրելու և սահմաններն ընդլայնելու համար օժանդակության հանգամանքը[2]: Հայաստանի ղեկավար այրերին սպասեցնելով երկար ժամանակ` թուրք–մուսավաթականները նախապատրաստվում էին զավթել Բաքուն և Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգների մյուս հայաբնակ բնակավայրերը: Սպառնալիքը մեծանում էր հատկապես Ղարաբաղի ուղղությամբ: Ղարաբաղը նվաճելու դեպքում Երևանի ու Սևանի շուրջ հավաքված մի բուռ հայությունը լիովին հայտնվելու էր շրջափակման մեջ: Եվ թեպետ Թալեաթի և Էնվերի կողմից Ահարոնյանին և Խատիսյանին տրված կեղծ հավաստիացումներին, թե իբր հարձակում չի լինելու Ղարաբաղի վրա, այդուհանդերձ, ինչպես նկատել էր նույն ինքը Խատիս-

[1] А. Деникин, նշվ. աշխ., էջ 140:
[2] Տես, **R. Hovannisian**, The Republic of Armenia, vol. 1, University of California Press, Berkeley, Los Angeles, London, p. 57.

յանը, «այդ հավաստիացումները ստորացուցիչ կեղծության և զավեշտի աստիճանի էին հասնում»[1]:

Ինչպես արդեն նշվեց, Գանձակում տեղակայված Նուրի փաշան նախապատրաստություն էր տեսնում Բաքվի վրա արշավելու համար: Հուլիսի երկրորդ կեսին թուրքերը սկսեցին հարձակումը: Թուրքական ուժերին հիմականում դիմակայեցին հայերը, քանզի քաջ գիտակցում էին, որ քաղաքը գրավելու դեպքում հայ ազգաբնակչությանը սպառնում էր գլխովին ոչնչացում: Առաջնային խնդիրը թուրքական յաթաղանից պաշտպանության հարցն էր: Հայերը, որոնք գործնականում ավելի ծանրակշիռ կերպով էին մխրճվել Բաքվի համար մղվող պայքարի մեջ, քան թե քաղաքը պաշտպանող մյուս ուժերից որևէ մեկը, փաստորեն քիչ էին շահագրգռված քարյուղի հանքերի պաշտպանության համար,- գրում են անգլիացի պատմաբաններ Ալլենն ու Մուրատոֆը:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Բաքվի վրա հարձակման մասին Ահարոնյանը և Խատիսյանը տեղեկանում են Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆից, վերջինս հայտնում է, որ գերմանացիները թուրքերից պահանջում են շարժվել Միջագետք, սակայն նրանք դանդաղում են, քանի որ ցանկանում են Բաքուն գրավել Ադրբեջանի համար, այսինքն՝ իրենց համար[2]:

Հունիսի երկրորդ կեսին թուրք-մուսավաթական հարձակումները դառնում են հաճախակի: Հայկական ուժերին հաջողվում է ետ մղել հակառակորդի գրոհները: Ելնելով ուժերի անհավասարակշռությունից և որպեսզի հայերը չգնան բոլշևիկներից օժանդակություն խնդրելու ուղով, Դենստերվիլը հուսադրում էր հայերին, թե շուտով օգնություն կուղարկեն Բիչերախովի ջոկատին, ինչպես նաև Երևանից հայկական ուժեր կգան: Վիճակը բարդանում է այն ժամանակ, երբ հուլիսի 26-28-ը թուրքերը սկսում են հրետակոծել քաղաքը: Դրան ավելանում է «օգնության եկած» Բիչերախովի դավաճանությունը, որը թուրքերին թիկունքից հարվածելու փոխարեն փախչում է Պետրովսկ՝ իր հետ տանելով 20 թնդանոթ, 40 գնդացիր և մեկ զրահագնացք:

Հուլիսի 29-ին հրավիրվում է Բաքվի խորհրդի նիստ, որին մաս-

[1] **Ալ. Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 110:

[2] Տես **Հ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 300:



նակցում էին պաշտպանության բոլոր ճակատների հրամանատարները: Համոզվելով, որ ոչ մի տեղից օգնության ակնկալիք չկա, վերջիններս քննարկում են անգլիացիներին քաղաք հրավիրելու հարցը: Ահա, այս ընթացքում է, որ անգլիացիները լուրեր են տարածում, թե իբր քաղաքին օգնության կարող են ուղարկել 5.000 զինվոր: Տեղեկություն կար նույնիսկ, որ այդ զորքերի թիվը կարող էր հասնել 40.000-ի, ինչը, բնականաբար, իրականությանը չէր կարող համապատասխանել: Ի վերջո, քննարկումների արդյունքում խորհուրդը որոշում է անգլիացիներին հրավիրել քաղաք:

Նույն այս ժամանակ էլ հրաժարական է տալիս Բաքվի ժողկոմխորհի նախագահ Ստեփան Շահումյանը: Հուլիսի 31-ին Բաքվում ստեղծվում է նոր մարմին՝ «Կասպիական նավատորմի կենտրոնական կոմիտեի և բանվորների, զինվորների, նավաստիների խորհրդի դիկտատուրա» անունով: Բաքվի կոմունայից հետո ստեղծված «Ցենտրոկասպյան դիկտատուրան» շտապ կարգով կազմեց կառավարություն և անմիջապես Բաքու հրավիրեց անգլիացիներին: Օգոստոսի 4-ին Բաքու մտավ անգլիացիների 400-500 հոգանոց խումբը: Այդ օրն ավելի է ուժեղանում թուրքերի հարձակումը, որը հայերին հաջողվում է մեծ զոհողությունների գնով հետ մղել: Մինչև օգոստոսի 17-ը գնդապետ Ստոքսը Բաքու է բերում ընդամենը 1640 հոգի, որոնցից կռվող էին միայն 900-ը: Բրիտանական ընդհանուր ուժերը ղեկավարում էր գեներալ Դենստերվիլը: Անգլիացիների պահանջով բոլշևիկներն անմիջապես քաղաքից հեռացվեցին, ինչը ջլատեց պաշտպանական ուժերը, քանզի բրիտանական «օգնությունը» բավարար չէր Բաքվի պաշտպանությունը շարունակելու համար[1]:

Աստիճանաբար անգլիացիներն իրենց ձեռքն էին վերցնում նաև տեղի իշխանությունը: Հատկապես նկատելի էր վերջիններիս հակառուսական տրամադրվածությունը: Այսպես, Բաքվի նավթը նրանք բացառապես օգտագործում էին իրենց կարիքների համար: Ավելին, հետախուզության սպա կապիտան Կոլամանյանցի զեկույցից պարզ է դառնում, որ անգլիացիները այդքան էլ շահագրգռված չէին Բաքվի պաշտպանությամբ և նույնիսկ խիստ բարյացակամ էին տրամա-

[1] Տե՛ս, **Վ. Ավագյան**, էջեր Անդրկովկասում օտարերկրյա ինտերվենցիայի պատմությունից (1918 թ.), Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 110:

դրված դեպի մահմեդականները, ինչը հաստատում էր նաև գեներալ Դենստերվիլը[1]:

Բաքվի պաշտպանների վիճակը հատկապես ծանրացավ օգոստոսի 26-31-ի կռիվներից հետո, երբ թուրքական քսանհինգ հազարանոց բանակին հաջողվեց փակել Բաքու եկող ջրատարը: Դենստերվիլը իր հուշերում գրում է, որ դիմադրությունը թույլ էր, քանի որ հաճախակի էին դարձել ճեղքվածքները ռազմաճակատի գծում, իսկ քաղաքի ներսի 80 հազարանոց թաթար բնակչությունը գերմանա-ավստրիական գործակալների հետ օժանդակում էին թուրքերին: Գեներալը անհարկի մեղադրում է նաև քաղաքը իրապես պաշտպանող հայերին, թե իբր նրանք դրությունը փրկելու համար բավականաչափ խիզախություն չեն դրսևորել[2]:

Բրիտանական քաղաքականության հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի վկայությունն է Բաքվի պաշտպանության շուրջ Համայնքների Պալատում կայացած հարց ու պատասխանը, որտեղ արտաքին գործերի քարտուղար Լորդ Սեսիլին տված հետևյալ հարցին, թե արդյոք կարող է Նոբլ Լորդը որևէ տեղեկություն տալ Բաքուն պաշտպանող ուժերի ապահովության վերաբերյալ, Սեսիլը պատասխանում է. «Հայկակա՞ն, թե բրիտանական ուժերի մասին է հարցումը»: Տեղեկանալով, որ բրիտանացիների մասին է խոսքը, վերջինս ավելացնում է. «Նրանց վտանգ չի սպառնում»[3]: Ուստի, բնականաբար, պարզ է, որ բրիտանացիները նպատակ էլ չունեին անհանգստանալու հայերի ապահովությամբ, որն էլ հետագայում հաստատվեց Բաքուն լքելու և հայերի կոտորածի ժամանակ:

Թուրքական ճնշումն աստիճանաբար ուժեղանում էր:

Թուրքերը սպառնում էին նաև հյուսիսային Պարսկաստանին, որով նրանք՝ ձգտում էին հայտնվել բրիտանացիների թիկունքում: Սեպտեմբերի առաջին կեսին թուրքերը տիրացան քաղաքի կարևոր հատվածներին: Սեպտեմբերի 14-ին քաղաքը լքեցին Ստոքսը և Շարդինեն, որին հետևեց Դենստերվիլի հրամանը՝ նավերի հեռացումը նախապատրաստելու մասին:

Սեպտեմբերի 15-ին թուրք-մուսավաթական ուժերը ներխուժեցին Բաքու:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թթ. 7-10:
[2] Տե՛ս, Генерал-майор Денстервиль, նշվ. աշխ., էջ 208:
[3] Armenia, Parlamentary Debats, page 8.



Այսպիսով, 1918 թվականի սեպտեմբերի 15-ին «Ադրբեջանական դեմոկրատական հանրապետությունը թուրքական սվինների օգնությամբ ժամանեց Բաքու: Ադրբեջանական պետությունը թուրքական հիմքով ստացավ իր մայրաքաղաքը»[1]: Քաղաքում ծավալված հետագա իրադարձությունները ուղեկցվեցին հայ բնակչության սարսափելի սպանդով: Քիչ անց, Բաքվում հաստատված դաշնակից զորքերի հրամանատար Վ. Մ. Թոմսոնին ուղղված նամակում Բաքվի թեմական առաջնորդ եպիսկոպոս Բագրատ սրբազանը նկարագրում է սարսափելի «կոտորածն ու թալանը հայ բնակչության նկատմամբ, որը տևել է 3 օր ու գիշեր»[2]: 4 օր շարունակ 25 բեռնատարներ տեղափոխել են հայերի դիակները: Ընդհանուր առմամբ, կոտորածին զոհ են գնացել քաղաքաբնակ 30 հազար, իսկ նահանգում՝ 20 հազար հայեր: Այսպիսով, թուրքերի սվիններին զոհ գնացած հայերի թիվը հասնում էր 50 հազարի:

Իրականացնելով Բաքվի գրավումը՝ Նուրի փաշայի զորքերն այնուհետև շարժվեցին Ղարաբաղ: Երկրամասի նվաճումը թուրքերին հնարավորություն կտար հայության մնացած հատվածին ևս օղակի մեջ առնել:

Ամփոփելով, պետք է փաստել, որ Բաքվի անկումը սարսափելի աղետով անդրադարձավ հայ բնակչության վրա: Դրանից հետո թուրքական ողջ զինուժը նետվեց Ղարաբաղի վրա, ինչը հնարավոր է դարձնում նաև Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների մեծ մասի հայ բնակչության ոչնչացումը: Բաքվի անկումը և հայական կոտորածները, թուրքական հետագա առաջխաղացումը, խիստ աղետալի հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար:

Բաքվի անկման լուրը Ահարոնյանը և Խատիսյանը ստացան Կ. Պոլսում, իսկ հայկական ուժերն այդպես էլ օգնության չհասան Բաքվի հայ պաշտպաններին: Թուրքական դիվանագիտության ներբերանգները սերտած երիտթուրք գործիչները կեղծ պայմանների շուրջ բանակցություններ էին վարում՝ ժամանակ շահելով և բացառելով հայերի օժանդակությունը Բաքվի պայքարին:

1917 թվականի վերջին միջդաշնակցային խորհրդում կայացել էր որոշում (1917 թ. դեկտեմբերի 18, Վերսալ), որով Օսմանյան

[1] А. Раевскиú, Английская интервенция и мусаватское правительство , Баку, 1927, стр. 31.
[2] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 25:

կայսրության տարածքների բաժանման և կայսրության ապագայի հարցը: Բազմաթիվ այլ հարցերի թվում, որոշման մեջ կար Հայաստանին վերաբերվող մի կետ, որով «Անտանտի կոմիտեի խումբը թուրքական կառավարումը Հայաստանում համարում է ծայրահեղ անհաջող: Սպանությունները և թուրքերի դաժանությունները Հայաստանում մարդկանց մոտ առաջացնում են ամոթի զգացում և նրանք ցանկանում են Հայաստանի հետագա բախտի տնօրինումը դնել եվրոպական պետությունների ամբողջական հայեցողության ներքո»[1]: Փաստաթուղթը փաստորեն անորոշ էր թողնում Հայաստանի և հայ ժողովրդի ապագան: Այն դեռ պետք է որոշվեր եվրոպական դիվանագիտական հորձանուտներում, որի «խաղերին» այնքան ծանոթ էր հայ ժողովուրդը:

1918 թվականի ընթացքում բրիտանական ծրագրերը դեռ շարունակվում էին մշակվել Ռազմական նախարարությունում (4-5 հոգուց բաղկացած մի հանձնախումբ էր զբաղված այդ խնդրով՝ Ա.Գ.), իսկ տարվա վերջին գործին ակտիվորեն ձեռնամուխ եղավ նաև Կայսերական ռազմական նախարարությունը: Կարևոր նշանակություն տալով խնդրին, ռազմական նախարարության կողմից շուտով ստեղծվեց նաև Արևելյան Կոմիտե (գոյատևեց մինչև 1919 թ. հունվարի 10-ը), որը ղեկավարում էր Լորդ Քերզոնը: Արևելյան Կոմիտեի կազմի մեջ ընդգրկվել էր Անգլիայի գրեթե ողջ ռազմաքաղաքական էլիտան՝ արտաքին գործերի նախարար Ա. Բալֆուրը, նրա օգնական Ռ. Սեսիլը, գեներալ Սմատսը, է. Մոնտեգյուն և գլխավոր շտաբի պետ Հենրի Վիլսոնը[2]: Եվ թեպետ վերջիններս լիարժեքորեն պատկերացնում էին իրավիճակը, սակայն թերացումները և անվճռականությունը Անդրկովկասի գործերում անխուսափելի եղան: Նրանցից և ոչ մեկը չպնդեց Անդրկովկասի լիակատար բռնազավթումը և թե Հայաստանի լիաժեք անկախության ճանաչումը ամբողջական տարածքով: Նրանց համար այդպես էլ առաջնային հարց մնաց բոլշևիզմի դեմ պայքարը՝ Անդրկովկասում ստեղծելով այսպես կոչված «բուֆերային հանրապետություններ», որոնք պատվարի դեր պետք է ծառայեին բոլշևիզմի դեմ հետագա պայքարի ծավալման խնդրում:

Մինչ այդ, 1918 թ. սեպտեմբերից հզոր հարձակում է սկսվում

[1] Д. Ллойд Джордж, Военные Мемуары, т. 5, Соц. эконом. Издательство, Москва, 1938, стр. 52.

[2] Տե՛ս, Г. Махмурян, նշվ. աշխ., էջ 29:



բրիտանական զորքերի կողմից թուրքերի դեմ Սիրիայում, ուր կենտրոնացած էին նրանց հիմնական ուժերը: Թուրքական բանակը չէր կարող երկար դիմակայել, ինչի մասին զեկուցել է Լլոյդ Ջորջը. «Թշնամու ուժերը գտնվում էին ողբալի վիճակում, պարզ էր դառնում, որ Թուրքիան հասունացել էր նրա համար, որ մենք նրան ջախջախենք»[1]:

1918 թ. վերջին Թուրքիայի պարտությունն անխուսափելի դարձավ, ինչը դաշնակիցներին հնարավորություն տվեց գրավել ողջ թուրքական կայսրության տարածքը: Թուրքիայի դեմ կենտրոնացվել էր ավելի քան 500 հազար անգլիական զինվոր[2]: Միջին Արևելքում կենտրոնացված էր ևս 900 հազար զինվոր: Բրիտանական զորքերն առանց դիմադրության զբաղեցրին Կիրկուկը, ապա և Մոսուլը: Դրանով էլ ավարտվեց պատերազմը Միջագետքյան ռազմաճակատում:

Չնայած Բաքվից անգլիական զորքերի փախուստին, բրիտանացիները լրջորեն տրամադրված էին կրկին զբաղեցնել այս բնակավայրը: Անդրկովկաս մուտք գործելու համար բրիտանացիները նախատեսել էին օգտագործել պարսկական գծի ուժերը, որոնք ներառում էին. «26-րդ և 62-րդ փենջաբյան հրաձգային գումարտակները, Խերդֆորդշիրյան գունդը, 5-րդ,12-րդ և 15-րդ սակրավորական ջոկատները, 48-րդ և 128-րդ գումարտակները, 72-րդ ինժեներական դաշտային ջոկատը և 26-րդ լեռնային հրետանու ջոկատը, ինչպես նաև «Նորդֆորս»-ի՝ Հյուսիսային Իրանի զորախումբը (հրամանատար գեներալ Թոմսոն), որի մեջ մտնում էին 36-րդ, 39-րդ ցամաքային խմբավորումները, Դենստերֆորսի զրահախումբը, 13-րդ դաշտային հրետանու խումբը, 6-րդ թեթև ինքնագնաց հրանոթների խումբը, 21-րդ լեռնային հրետանու ջոկատը, 14-րդ հուսարական գունդը, ինչպես նաև ինժեներական ստորաբաժանումների զորամիավորումները և 15 ինքնաթիռները[3] Ինչպես նկատում ենք, զորախումբն ի վիճակի էր ցանկացած պատերազմական գործողության:

Այսպիսով, բրիտանացիները պատրաստվում էին զբաղեցնել Անդրկովկասը և մինչ այստեղ կծավալվեին հետագա իրադարձու-

[1] Д. Ллойд Джордж, նշվ. աշխ., էջ 115:

[2] Տե՛ս, В. Трухановский, Внешняя политика Англии на первом этапе общего кризиса капитализма (1918-1939 гг.), Москва, 1962, стр. 94.

[3] Տե՛ս, Л. Мирошников, նշվ. աշխ., էջ 122:

թյունները, իրենց պարտությունը Առաջին աշխարհամարտում ընդունեցին Թուրքիան, ապա և Գերմանիան: Թուրքիայի հետ զինադադարի պայմանագիրը ստորագրվեց 1918 թ. հոկտեմբերի 30-ին: Մինչ թուրքական զորքերը ռազմաճակատներում զորացրվում էին, դաշնակիցները օկուպացնում էին նեղուցները: Հաղորդակցության միջոցները ևս անցան դաշնակիցների հսկողության ներքո: Թուրքիան հետ քաշեց իր զորքերը Հյուսիսարևմտյան Պարսկաստանից և Անդրկովկասից[1]:

Այսպիսով, զինադադարը հստակ դիրքորոշում չէր հայտնում Հայաստանի և հայ ժողովրդի մասին, մինչդեռ հայության հույսերը կապված թուրքական պարտության, դաշնակիցների հայանպաստ քաղաքականության և նոր Հայաստանի վերածննդի հետ, մեծ էին: Ժամանակի հայկական մամուլում տպագրվում էին ոգեշունչ հոդվածներ: Դրանցից մեկում, օրինակ, ասվում էր. «Իր դաշնակիցներէն կտրուած և լքուած քանի որ իրենք դժուարին կացութեան մէջ էին – շրջապատված ամէն տեսակ թշնամիներով՝ հայ ժողովուրդը հերոսի նման կռուեցավ, սակայն և այդ կռուի անմիջական հետեւանքը եղաւ Հայաստանի Հանրապետութեան իրական և իրաւական կազմումը: Հանրապետութեան հռչակումէն ետքը հայ երկրի մնացած մասերը կը շարունակէին հերոսական պայքարը: Կռիվները նպատակ ունէին՝ մեկ կողմէ դաշնակիցներու յաղթանակին նպաստել, որու նկատմամբ խորունկ հավատ ունէին, միւս կողմէն. Հանրապետութեան սահմանները ընդարձակել, ոչ թե անշուշտ նուաճողական դիտումներով, այլ զուտ եւ հայաշատ հայկական գավառներու միացումով: Զինադադարի հետևանքով տաճիկ զօրքերը պիտի թողնէին Կովկասի սահմանները և այսպիսով, հայաբնակ գավառները պիտի մնային Հայաստանի Հանրապետութեան: Սակայն այստեղ ևս հայ ժողովուրդին վիճակւած էր դարձեալ ու դարձեալ պայքարիլ, մինչև որ տիրանար պայքարի ուժով իր անկասկածելի իրավունքներուն»[2]: Բնական է, որ հայության հույսերը բրիտանական օգնության խնդրում ամենից առաջ կապված էին Արևմտյան Հայաստանի ազատագրության և Միացյալ Հայաստանի ստեղծման հետ[3]:

---

[1] Տես, Из истории иностранной интервенции в Армении в 1918 г., документы и материалы, Ереван, 1970, ЕГУ, стр. 235:

[2] Վերածնունդ, Գ տարի, թիւ 15, 19 Յունիս, 1919, Փարիզ, Շաբաթաթերթ, էջ 210:

[3] Վերածնունդ, Գ տարի, թիւ 12, 12 Յունիս, 1919, էջ 196-197:



Հետագայում, իհարկե, պարզ դարձավ, որ բրիտանացիները միտված չէին թույլատրել երկու Հայաստանների միացումը, ինչը մենք փորձեցինք ցույց տալ նախորդ գլխում համապատասխան արխիվային գաղտնի փաստաթղթի վերլուծությամբ: Եվ ցավալին այստեղ այն է, որ այս դիրքորոշումը իր հետագա զարգացումը ստացավ բրիտանական քաղաքականության մեջ:

Համաշխարհային պատերազմում դաշնակիցների հաղթանակով Եվրոպայում և Ասիայում Բրիտանիան ձեռք բերեց գերտերության կարգավիճակ: Անգլիայի համար առաջնային դարձավ ազդեցության գոտիների ճշտման հարցը, որն այս անգամ արդեն ներառում էր նաև Ռուսական կայսրության նախկին տարածքները: 1918 թ. նոյեմբերի 13-ին, Գերմանիայի հետ Անտանտի զինադադարի ստորագրումից մեկ օր հետո, Անգլիան և Ֆրանսիան հաստատեցին իրենց համաձայնագիրը ազդեցության գոտիների բաժանման վերաբերյալ, որը կնքվել էր դեռևս 1917 թ. դեկտեմբերին: Միաժամանակ, և հիմնականում Անգլիայի նախաձեռնությամբ սկսվում և արագ թափ են ստանում Ռուսաստան ինտերվենցիա կազմակերպելու գործընթացները: 1918 թ. նոյեմբերի 13-ին և 14-ին Անգլիայի ռազմական կաբինետը քննում է ցամաքային զորքերի գլխավոր շտաբի պետ Հենրի Վիլսոնի առաջարկները, որոնք հիմնականում հանգում էին հետևյալին.

ա) Ռուսաստանի շուրջ արևելաեվրոպական փոքր պետություններից ստեղծել սանիտարական արգելք,

բ) Սկսել ռազմական ինտերվենցիա,

գ) Օգնություն կազմակերպել հակահեղափոխական ուժերին[1]:

Բնականաբար, ռազմաքաղաքական այս ծրագրերը պետք է հանգեցնեին գերմանա-թուրքական ուժերի դուրս մղմանը Ղրիմից, Ուկրաինայից և Անդրկովկասից: 1918 թ. նոյեմբերի 22-ին Անգլո-ֆրանսիական նավատորմը ժամանեց Սևաստոպոլ, ուր դաշնակիցների զորքերի թիվը հասնում էր 20.000-ի: Այստեղ էր գտնվում նաև գեներալ Դենիկինի բանակը: Նոյեմբերի վերջին Անտանտի ռազմական նավատորմը ժամանում է Օդեսա: Նույն նոյեմբեր ամսին սկսվում է Անդրկովկասի ռազմակալումը:

Չնայած պարտությանը, թուրքական ուժերը չէին շտապում հե-

---

[1] Տես **Գ. Գալոյան**, Պատմության քառուղիներում, «Հայաստան», Երևան, 1982, էջ 242:

ռանալ Անդրկովկասից: Մուսավաթականների օժանդակությամբ և ֆինանսավորմամբ քարոզչությունը շարունակում էր Նուրի փաշան: Թուրքական սպաներից իրենց դժգոհությունն էին հայտնում և Ղարաբաղի հայերը (այստեղ Նուրի փաշան նշանակել էր իր պարետներին), և մուսավաթականներն ու Դաղստանի բնակիչները[1]: Թուրքերը շարունակում էին հետամուտ լինել իրենց ծրագրերի իրականացմանը, ինչին կարող էր միայն վերջ դնել դաշնակից զորքերի մուտքը տարածաշրջան: Մյուս կողմից, թուրքական դիվանագիտությունը ամեն զիջման գնում էր, բացի Փոքր Ասիայում, հատկապես արևմտահայկական ու Կիլիկիայի տարածքներից հեռանալուց: Այս ամենը, բնականաբար բերում էր մի իրավիճակի, որ ինքնաբերաբար հայերի շրջանում մեծանում էր դժգոհությունը դաշնակիցների նկատմամբ, ինչը քաջ գիտակցում էին նաև իրենք՝ բրիտանացիները, քանզի Մուդրոսի պայմանների քննարկումը ոչ մի դրական արդյունք չբերեց հայերին: Ընդ որում, ընդունելով իրենց կողմից «որոշ դավաճանություն մը», միևնույն ժամանակ և յուրօրինակ ձևով բրիտանացիները հասարակությանը զանազան պատճառաբանություններով բացատրություններ էին տալիս: Խնդիրն ի վերջո հանգում է նրան, որ Բրիտանիան ճանաչում է վեց վիլայեթների և Կիլիկիայի ինքնորոշման իրավունքը և որ «այդ երկրամասերը պետք է բոլորովին անջատուին Թուրքիայէն եւ կազմեն զատ Պետութիւն մը»[2]:

Այսպիսով, բրիտանացիները նույն կերպ Հայաստանը թողնում էին անպաշտպան, ինչպես արել էին ժամանակին բոլշևիկները «Թուրքահայաստանի մասին» հայտնի դեկրետով:

Բրիտանացիների կողմից Անդրկովկասի ռազմակալումը սկսվում է տարբեր ուղղություններով[3]: Բրիտանական զորքերին կրկին Բաքու հրավիրելու համար բանակցություններ էին վարում մուսավաթականները, որոնք կապի մեջ էին Էնզելիում տեղակայված գեներալ Թոմսոնի հետ:

[1] Զանգ, 1918 թ., 28 օգոստոսի, Հ. 4, էջ 1-2; Борьба За Победу Советской Власти в Азербайджане 1918-1920, Документы и Материалы, Баку, 1967, стр. 33; И. Гаджиев, Совместная борьба бакинского пролетариата и трудящихся Дагестана против английских интервентов контрреволюции в 1919-1920 гг., Махачкала, 1960, стр. 42.

[2] **Ա. Նասիպեան**, Բրիտանիա և Հայկական Հարցը, էջ 158:

[3] Տե՛ս, The Struggle For Transcaucasia, Firuz Kazemzadeh, New York, 1951, p. 165.



Բրիտանացիները սկզբում զբաղեցրին Անդրկովկասի ստրատեգիական կարևոր կետերը: Կայսերական գլխավոր շտաբի պետ Հենրի Վիլսոնի մշակած ծրագրով նախատեսված էր զբաղեցնել Անդրկովկասի կենսական կարևոր կենտրոնները. դա երկաթուղային հաղորդակցությունն էր և Բաթում-Բաքու ուղեգիծը:

1918 թ. նոյեմբերի 21-ին ռազմական գործողությունների ղեկավար գեներալ-մայոր Ռեդկլիֆին թույլատրվեց կարգադրություն անել նախապատրաստելու բրիտանական մի դիվիզիա՝ Բաթում մեկնելու համար»[1]: Ուշագրավ է, որ արևելյան կոմիտեն ղեկավարող Քերզոնը գլխավոր շտաբում պնդում էր Անդրկովկասի երկարատև օկուպացման վրա, որին, սակայն, դեմ էին արտահայտվում Բալֆուրը, Սեսիլը և Մոնտեգյուն: Այնուհանդերձ, որպես նախանշված ծրագրի շարունակություն, դեկտեմբերի 11-ին հետևեց ռազմական նախարարության հրամանը, որով թուրքերի հետ կնքած զինադադարի համաձայն, բրիտանական զորքերը պետք է զբաղեցնեին նավթամուղը և երկաթուղին Սև և Կասպից ծովերի միջև, ինչպես նաև Բաքուն, Բաթումը և, եթե հնարավոր է, նաև Թիֆլիսը[2]:

Ռազմակալման գործողությունները ընթանում էին բավականին արագ: Ռազմական ներխուժումը Անդրկովկաս սկսվում է 1918 թ. նոյեմբերի 17-ին՝ բրիտանական զորքերի Բաքու ժամանելով: Այդ ուժերը գլխավորում էր գեներալ Թոմսոնը: 1918 թ. դեկտեմբերի 6-ին Բաթում է ժամանում նաև անգլիական միսիան՝ Կովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնի ներկայացուցիչ Ուեբստերի գլխավորությամբ: Առաջին այս միսիայից հետո Բաթումի, ապա նաև Թիֆլիս են ժամանում բրիտանական և դաշնակից երկրների այլ ներկայացուցիչներ:

Արևելքի կոմիտեի նիստերում Լլոյդ Ջորջը ևս կասկած էր հայտնում մեծ քանակությամբ զորքեր Անդրկովկաս ուղարկելու հարցում: Քերզոնը մեկնաբանելով այնտեղ տիրող իրավիճակը և անգլիացիների ուժերի դերը երկրամասում, հիմնական շեշտը դնում էր տեղի ժողովուրդների անվտանգության ապահովման անհրաժեշտության վրա: Քննարկումներում հատկապես շարունակական էր այն միտքը, որ իրենց ազդեցության գոտիներից, որքան կարելի է, պետք է հեռու պահել բոլշևիզմը, ինչը, բնականաբար, հնարավոր էր միայն

[1] **Г. Махмурян**, նշվ. աշխ., էջ 40:

[2] Նույն տեղում:

Անդրկովկասը Ռուսաստանից անջատ պահելու պարագայում[1]:

Դեկտեմբերի 23-ին անգլիական զորքերը ափ իջան Բաթումում. այստեղ ստեղծվեց բրիգադային գեներալի պաշտոնակատար Կուկ Կոլլիսի ռազմակայանը: Դեկտեմբերի 25-ին Թիֆլիս ուղարկվեց Ֆորեստյե Ուոքերի ջոկատը: Ուշագրավ է, որ անգլիացիներին առաջիններից մեկը հետաքրքրում էր Կարսը, ուր և նրանք զինվորական կարգ հաստատեցին հունվարի 12-ին: Այսպիսով, Անդրկովկասը բաժանվեց 2 մասի՝ արևելյան և արևմտյան: Բրիտանացիները հատուկ ներկայացուցիչներ ունեին նաև հարավային Ռուսաստանի ուժերի հրամանատար Դենիկինի մոտ: Նրանք հետամուտ իրենց քաղաքականությանը՝ վերահսկողության տակ էին վերցրել զենքի, սննդամթերքի (Կարս) և ռադիոկապի միջոցները[2]: Չնայած այդ ամենին, բացի Կարս-Բաթումի գծից, մյուս հատվածների հեռակապը և տրանսպորտը հանձնվել էր Հայաստանի Հանրապետության ենթակայությանը:

Այսպիսով, 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին բրիտանական ուժերը Անդրկովկասից և Դաղստանից դուրս մղեցին գերմանաթուրքական զորքերին: Անգլիացիներն իրենց ձեռքում կենտրոնացրեցին Կովկասի ողջ քաղաքացիական և ռազմական իշխանությունը: Տարածաշրջանում վերահսկողությունը իրականացվում էր բացառապես բրիտանական զորամիավորումների միջոցով:

Ընդհանուր առմամբ, ինչպես փաստում է Ուինստոն Չերչիլը, բրիտանացիները օկուպացնելով Բաքուն, Բաթումը, Կովկասյան երկաթուղին, Սև և Կասպից ծովերի միջև ընկած տարածքները, այստեղ հանդիպեցին ջերմ ընդունելության: Բրիտանական զորքերը զբաղեցրին երկաթուղուն հարակից 40 մղոն տարածք՝ նրա երկայնքով: Նրանք կազմակերպեցին նաև նավատորմ, որը շուտով ապահովեց անգլիական գերակայությունը Կասպից ծովում: Բրիտանական զորքերը, որոնք 1919 թ. հունվարին կազմում էին ընդամենը 20 հազար, տեր դարձան աշխարհի կարևոր ամենամեծ ստրատեգիական ուղիներից մեկին: Ընդ որում, շնորհիվ Անգլիայի ծովային հզորության, երկու ներքին ծովերում էլ նրա թևերը պաշտպանված էին:

---

[1] В. Адамия, Из Истории Английской Интервенции Грузии 1918-1921 гг., Сухуми, 1961, стр. 48.

[2] Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, «Հայաստան», Երևան, 1982, էջ 242:



Փաստորեն, Բրիտանիայի հովանավորության տակ գտնվող Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդները պետք է օգտվեին անկախությունից: Ապահովված էր նաև բոլշևիզմի տարածման վտանգը դեպի Թուրքիա, Քրդստան և Պարսկաստան: «Այս գիծը մեզ հաջողվեց ստեղծել գրեթե մեկ տարվա ընթացքում, որը հեշտ գործ չէր»,- հետագայում գրում էր Ու. Չերչիլը[1]:

Ինչ վերաբերում է տարածաշրջանում վարած բրիտանական քաղաքականության սկզբունքներին, ապա դրանք ակնառու երևում են 1919 թ. հունվարին մանդատի վերաբերյալ ընդունված որոշումների համատեքստում: Այնտեղ փաստվում էր, որ «Դաշնակից և նրանց միացող պետությունները պայմանավորվում են, որ թուրքերի կողմից ճնշված ազգերի և ահավոր կոտորածների ենթարկված հայերի համար որոշում են՝ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան պետք է ամբողջովին անջատվեն թուրքական կայսրությունից: Այդպես չի որոշվում թուրքական կայսրության մյուս տարածքների հարցը»[2]: Որոշման 6-րդ կետում նշվում էր մանդատային համակարգի մասին, ներկայացվում էր ազգերի զարգացման աստիճանը, որոնք կարիք ունեին հովանավորության և որը պետք է սահմանվեր Ազգերի Լիգայի կողմից:

Բրիտանական դիրքորոշման մեջ որոշակի հստակություն են մտցնում նաև Ու. Չերչիլի արտահայտած հետևյալ մտքերը. «Հետագայում մենք պարզեցինք նաև հետևյալ միջոցառումների անհրաժեշտությունը.

1. Անմիջապես ավարտել Բաքու-Բաթումի արկածախնդրությունը Կովկասում և դուրս բերել մեր զորքերը այն պատասխանատու և վտանգավոր իրավիճակից, որի մեջ նրանք հայտնվել են:
2. Հաշտություն կնքել Թուրքիայի հետ և ընդ որում այնպիսի հաշտություն, որը Թուրքիային պետք է ցույց տա, որ ***Անգլիան նրա բարեկամն է*** ( ընդգծումը մերն է՝ Ա. Դ.)
3. Ամբողջովին կատարել մեր պարտավորությունները հակաբոլշևիկյան զորքերի մատակարարման և սպառազինման բնագավառում՝ դրա համար օգտագործելով մեր հսկայա-

---

[1] В. Черчиль, Мировой Кризис, Москва, 1932, стр. 106:

[2] Архив Полковника Хауза, том 4, июнь 1918 - ноябрь 1919, 1944 г., стр. 248:

կան ռազմական պաշարները: Սպիտակներին տալ հմուտ և գիտակ սպաներ և հրահանգիչներ բանակի վարժեցման համար»[1]:

Պարզից էլ պարզ էր, որ բրիտանացիները պատրաստ էին Թուրքիայի հետ պահպանել բարեկամական հարաբերությունները, իսկ նրանց քաղաքականության հետ առնչվող փոքր ժողովուրդներին բախտի քմահաճույքին: Փաստ էր նաև, որ բրիտանացիները օկուպացնելով Անդրկովկասը, Հայաստանի հարցում չունեին հատուկ մշակված քաղաքականություն: Բոլոր վիճահարույց հարցերի լուծումը թողնվում էր խաղաղության վեհաժողովի որոշմանը: Ակնհայտ էր նաև անգլիացիների անվստահությունը հայերի նկատմամբ, քանզի կառավարությանը ներկայացված հաշվետվություններում վերջիններս ներկայացվում էին որպես «**անուղղելի**» ռուսասերներ: Պատահական չէր նաև այդ լույսի ներքո Դենիկինի հետ Հայաստանի հանրապետության հարաբերությունների հանրահայտ մեկնաբանումը:

Բրիտանացիները պայքարում էին բոլշևիզմի դեմ և իրենց ներկայացմամբ օկուպացված նախկին ռուսական կայսրության տարածքները կպահեն մինչև Ռուսաստանի վերականգնվելը, սակայն մյուս կողմից, պետք է նշել, որ Անդրկովկասում իրենց ներկայության ժամանակ անթաքույց խրախուսվել են հակառուսական տրամադրությունները: Այդ են հաստատում Հայաստանի արտգործնախարարին հղած բազմաթիվ զեկուցագրերը, որոնցից մեկում, օրինակ, մասնավորապես ասվում է. «Անգլիան ամբողջ ուժերով կպայքարի Կովկասում ռուսական ազդեցության դեմ և երեք հանրապետություններին անհրաժեշտ է խզել բոլոր կապերը Ռուսաստանի հետ,- գրում է զեկուցագրի հեղինակ Միխայիլ Արզումանովը: - Վրաստանը և Ադրբեջանն արդեն խզել են իրենց կապերը Ռուսաստանի հետ, իսկ Հայաստանը դեռևս ներկայացուցիչ ունի Դենիկինի մոտ, իսկ վերջինս Երևանում պահում է շատ ռուս և հայ դենիկինյան սպաների»[2]:

Դենիկինի և Հայաստանի Հանրապետության հարաբերությունները կարիք ունեն հատուկ ուսումնասիրության, մասնավորապես եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ այդ ընթացքում դե-

[1] В. Черчиль, նշվ. աշխ., էջ 108:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 68:



նիկինյանները ազատագրված տարածքներում մեծ օժանդակություն էին ցուցաբերում հայ գաղթականներին: Ուշագրավ է նաև, որ Հայաստանը Դենիկինը համարում էր իր դաշնակիցը Անդրկովկասում, քանզի հայերը շարունակում էին իրենց ռուսամետ քաղաքական վարքագիծը[1]: Դրան հակառակ, հակառուսական քաղաքականության պատճառով սրվել էին հարաբերությունները կամավորական բանակի և մուսավաթական Ադրբեջանի ու մենշևիկյան Վրաստանի միջև: Ներքին հարաբերություններում, հայ-վրացական հակամարտության ժամանակ բրիտանացիները որոշակի օժանդակություն ցուցաբերեցին Վրաստանին, իսկ Հայաստանն այդ ընթացքում, չնայած բրիտանացիների դժկամությանը, ուղղակի կապերի մեջ էր Դենիկինի հետ: Ընդ որում, ուշագրավ է նաև վերջինիս վերաբերմունքը հայության հանդեպ. «Սահմանափակ հնարավորությունների մեջ մենք որոշակի օգնություն ցուցաբերեցինք Հայաստանին՝ հիմնականում հոգալով փախստականների և հայրենադարձների կարիքները»[2]:

Ինտերվենցիայի հարցում ևս դաշնակիցների քաղաքականությունը երկակի բնույթ էր կրում. «Դաշնակից կառավարությունները չունենալով հստակ քաղաքականություն այս հարցում, հանգեցրին գործողությունների ոչ լիարժեքության, որի անհաջողությունն արդեն կանխորոշված էր»,- գրում էր Պետրոգրադում Անգլիայի դեսպան Բյուկենենը[3]: Իսկապես, ինտերվենցիայի կազմակերպման գործում դաշնակիցների գործողություններում միասնություն չկար. մի կողմից Դենիկինին տրամադրվում էր ռազմական օգնություն, իսկ մյուս կողմից կոնֆերանսի էին հրավիրվում բոլշևիկները: Ակնհայտ էր, որ Դենիկինի և մյուս հակաբոլշևիկյան ուժերի հզորացումը և ***երբեմնի հզոր ռուսական կայսրության վերականգնման հեռանկարը ձեռնտու չէր դաշնակիցներին:*** Նույն կերպ բրիտանացիները բացասաբար էին տրամադրված Դենիկինի և Հայաստանի միջև որոշակի կապերի գոյության հանդեպ: Հայտնի է, որ Հայաստանի և Դենիկինի միջև հարաբերություններն ավելի խորացան, երբ վերջինիս սպիտակգվարդիական ուժերը

[1] Տես, **F. Kazemzadeh.** նշվ. աշխ., էջ 216; **Վ. Ավագյան**, էջեր Անդրկովկասի օտարերկրյա ինտերվենցիայի պատմությունից, էջ 124:
[2] А. Деникин, Г. Махмурян, նշվ. աշխ., էջ 183:
[3] Տես, Дж. Бьюкенен, Мемуары дипломата, Москва, 1991, стр. 334:

անմիջականորեն մոտեցան Անդրկովկասի սահմաններին: Ամբողջության մեջ ռուսական կայսրության նախկին տարածքների հավաքման հեռանկարը մեծանում էր Դենիկինի կողմից Բաքվի և Թիֆլիսի վրա հարձակման հավանականությունը: Բնական է, Վրաստանն ու Ադրբեջանն այս հարաբերությունների ֆոնի վրա թշնամաբար էին տրամադրված Հայաստանի նկատմամբ: Այս ամենը նկատի ունենալով, Դենիկինը Տագանռոգից Ադրբեջանում գտնվող սպաներին տալիս է հետևյալ հրամանը. «Ելնելով ադրբեջանական իշխանությունների ռուսական բանակի նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքից և ադրբեջանական զորքերի Հայաստանի հողերի վրա հավատուրաց ոտնձգություններից՝ հրամայում եմ ռուսական ծառայության բոլոր սպաներին, որոնք գտնվում են ադրբեջանական զորքերում, թողնել շարքերը»[1]:

Ամփոփելով Անդրկովկասի ռազմակալման ու բրիտանական քաղաքականության լուսաբանությանը նվիրված գլուխը, հարկ է այս ժամանակի իրադարձությունները բնութագրող և ընդհանրացնող մի շարք բնորոշ կետեր.

1. Առաջին համաշխարհային պատերազմում բրիտանացիների հաղթանակը արևելյան ռազմաճակատում:
2. Թուրքական կայսրության տարածքների բաժանումը Անտանտի երկրների միջև:
3. Բաքվի անկումը, հայերի կոտորածները և բրիտանական քաղաքականությունը:
4. Բրիտանական զորքերից Անդրկովկասի ռազմակալումը:
5. Հարաբերությունները բրիտանական, դենիկինյան և հայկական կողմերի միջև:

Բրիտանացիների կողմից Անդրկովկասի ռազմակալմամբ որոշվում էր նաև հայկական մեկ այլ երկրամասի ճակատագիրը: Բաքու արշավելու ժամանակ թուրքական զորքերը գործակալներ էին նշանակել Ղարաբաղում՝ ցանկանալով գրավել և հայաթափել երկրամասը: Թալեաթի և Էնվերի հավաստիացումները Ղարաբաղի անվտանգության վերաբերյալ կեղծ էին և խաբուսիկ, իսկ Ղարաբաղի նվաճման նպատակները Նուրի փաշան հստակորեն ներկայացրել է

[1] И. Шахдин, Дашнакцутюн на службе русской белогвардейшины и английского командования на Кавказе, Тифлис, стр. 11.



գերմանական հյուպատոսությանը[1]:

Այդ ընթացքում Ղարաբաղում լարված իրադրություն էր: Հարաբերությունները ծայրաստիճան սրվել էին Ղարաբաղի հայ և թաթար բնակչության միջև: Ծայրահեղ ծանր վիճակում էր պարենավորման խնդիրը: Ծագած հարցերին որոշակի լուծում էր փորձում տալ Ղարաբաղի առաջին համագումարի հրավիրումը, որն ընտրեց ժողովրդական կառավարություն: Ձեռնարկված քայլերի արդյունքում հնարավոր է դառնում Ղարաբաղի կենտրոն Շուշիում կարգ ու կանոն հաստատել. քաղաքի անվտանգությունը ապահովելու համար հուլիսի 27-ին կազմակերպվում է պարեկություն[2]: Օգոստոսի 2-ին հայտարարություն է արվում Գանձակի գավառի հայկական մասը Լեռնային Ղարաբաղին միացնելու մասին: Ստեղծվում են շրջանային դատարաններ: Կազմակերպական առումով այս քայլերը կարևոր նշանակություն ունեցան երկրամասի հայությանը համախմբելու համար, հատկապես եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ գնալով աստիճանաբար մեծանում էր թուրքական սպառնալիքը[3]:

Թուրք սպաները Նուրի փաշայի և Ջեմիլ Ջահիդի ղեկավարությամբ համակարգում էին թուրքական պարետների գործողությունները: Կազմակերպվում էին հատուկ բանդաներ, որոնք հետագայում հիմք պետք է հանդիսանային մահմեդական բանակի ստեղծման համար: Թուրքերի դրդմամբ ադրբեջանական կառավարությունը վերջնագրեր էր ուղարկում Հայոց Ազգային խորհրդին Ղարաբաղի՝ Ադրբեջանին պատկանելու վերաբերյալ[4]: Հայաստանի կառավարությունն իր հերթին, մշտապես հայտարարում էր Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մաս կազմելու մասին: Գանձակը պատրաստ էին զիջել, բայց Ղարաբաղը՝ ոչ[5]: Թուրքերի գործն ավելի հեշտացավ այն բանից հետո, երբ նրանց հաջողվեց գրավել Գանձակը: Տեղի հայ բնակչությունն ամբողջովին կոտորվեց: Այդ ընթացքում Ղարաբաղում ստեղծվում են պաշտպանական ուժեր. Վարանդայի զորահրամանատարն էր Սոկրատ Բեկ Շահնազարյանը, Դիզակինը՝ Արտեմ Լալայանը, Խաչենինը՝ Ալեքսան Դային, Ջրաբերդինը՝ Բագ-

[1] Զանգ, 1918 թ., 28 օգոստոսի, էջ 4:
[2] Նույն տեղում, 23 օգոստոսի, էջ 4:
[3] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 60:
[4] Տես, Нагорный Карабах 1920 г., նշվ. աշխ., էջ 5:
[5] Հայ Համայնք, Նոր Նախիջևան, հ. 23, հոկտեմբերի 14:

րատ Նազարյանը[1]: Մեծ հույսեր էր կապվում նաև այդ ժամանակ Զանգեզուրում գտնվող Անդրանիկի հետ: Հսկայական թիվ են կազմում օգնության խնդրանքով Անդրանիկին ուղղված նամակները[2]: Հայոց զորավարը պատրաստակամություն էր հայտնել անցնել Ղարաբաղ և մասնակցել երկրամասի պաշտպանությանը:

Արցախահայության Առաջին համագումարի կողմից 1918 թ. հուլիսի 22-ից 26-ը կազմավորված կառավարությունը պաշտպանությունը իրականացնելու նպատակով ստեղծեց կենտրոնական շտաբ՝ կապիտան Արտաշես Վարդապետյանի գլխավորությամբ: Շուշու գնդի և զինամթերքի տեղափոխությունը իրականացնելու համար, 1918 թ. օգոստոսի 20-ին 400 զինվորներ 300 սայլերով սկսեցին շարժվել դեպի Գորիս: 4 օր տևած կատաղի մարտերը և Գորիսից օգնություն ստանալու անհնարինության լուրը արցախցիներին ստիպեց նահանջել: Թուրք մուսավաթականները նրանց դեմ կենտրոնացրել էին 10 000 զինվոր: Ղարաբաղը հայտնվեց անհուսալի վիճակում. «Կտրվեց զինամթերք ստանալու միակ հույսը և Ղարաբաղը մերկ ձեռքերով հայտնվեց թուրքերի դեմ: Դրա հետ միասին խորտակվեցին Բաքվի կոմունային զինված օգնություն ցույց տալու հույսերը: Արդյունքում, ծախողման պատճառով Ղարաղշլաղ մեծ գյուղի մեծաքանակ բնակչությունը ստիպված էր տեղափոխվել Շուշի»[3]: Այս դեպքերից հետո, Աղդամի պարետը Ղարաբաղին Ադրբեջանի իշխանություններին անվերապահորեն ենթարկվելու մասին պահանջ է ներկայացնում:

Ղարաբաղի հերոսական պայքարի հաջողությունը կախված էր հայ բնակչության ինքնագիտակցության բարձր լինելու և ազատ ապրելու անկոտրում ոգու հետ: Ղարաբաղի հայությունը մերժեց Ադրբեջանին ենթարկվելու ցանկացած առաջարկ: Եվ այն, որ Ադրբեջանական նկրտումները՝ ոչնչացնել Զանգեզուր-Ղարաբաղի հայությանը ի դերև եղան, ամենից առաջ արցախահայության պայքարի շնորհիվ էր:

Թուրք մուսավաթականները քաջ գիտակցում էին, որ հաջողության հասնելու համար պետք է Ղարաբաղը անջատել Զանգեզուրից, ինչը թուրքերին մասնակիորեն հաջողվում է կատարել ավերե-

[1] Տե՛ս, **Վ. Բալայան,** նշվ. աշխ., էջ 298:
[2] Տե՛ս, Արցախը կանչում է Անդրանիկին, (փաստաթղթեր), Երևան, 1995:
[3] Խորհրդային Ղարաբաղ, 9-10 նոյեմբեր, 1989 թ., **Հ. Թումյան**, Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ.:



լով Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը (մասնավորապես Ղարաղշլաղը): Վերջինս Ղարաբաղի պաշտպանության համար կարևոր նշանակություն ուներ, քանի որ մի կողմից այն Զանգեզուրի հետ կապող միակ գյուղն էր, մյուս կողմից, Անդրանիկի և Շուշու գնդի օժանդակությունը պետք է ստացվեր հենց այդտեղով:

Զանգեզուրից Անդրանիկի Ղարաբաղին օգնության գնալու հույսը կտրվում է, երբ սկզբում Անդրանիկի ճանապարհը փակեցին Զաբուղի ավազակները և մահմեդական ջոկատները[1], իսկ երբ այդ արգելքը հաղթահարվեց, նրա անցումը կանգնեցրեց ղարաբաղցիներին ոչ անհայտ գեներալ Թոմսոնը:

Ղարաղշլաղի անկումից երկու օր հետո՝ Սեպտեմբերի 6-ին, գումարվում է Ղարաբաղի հայության երկրորդ համագումարը: Նախօրեին թուրքական հրամանատարությունը երկու գրություն է ուղարկում. առաջինն ուղղված էր Ղարաբաղի հոգևոր առաջնորդին, իսկ մյուսը տեղի բնակչությանը: Երկուսում էլ առաջարկվում էր անձնատուր լինել:

Համագումարը բացվեց սեպտեմբերի 20-ին Շուշիում և տևեց վեց օր, մինչև սեպտեմբերի 25-ը: Համագումարի մասնակիցների թվի մասին մեզանում տարբեր տեղեկություններ կան: Ե. Իշխանյանն իր «Լեռնային Ղարաբաղ 1917-1920 թթ.» աշխատությունում հաղորդում է, որ սեպտեմբերի 8-ին գյուղական բոլոր համայնքներից ընտրվեցին երեքական ներկայացուցիչներ, մյուս 22-ը գյուղական համայնքներից ընտրվեցին 66, քաղաքից 10, կառավարության որոշմամբ Զանգեզուրից հուլիս ամսին եկած տաճկահայերից՝ 3, ղարաղշլաղցիներից՝ 3, կուսակցություններից երկուական՝ ընդամենը 10: Փաստորեն, ընդհանուր թվով ստացվում է՝ 92 մարդ. այս թվի վրա ավելանում են կառավարության ևս 9 անդամներ: Ուստի, համագումարի մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 101 մարդ[2]: Պատմական գիտությունների դոկտոր Հ. Հարությունյանի և Բ. Ուլուբաբյանի աշխատություններում համագումարի մասնակիցների թիվը հասցված է 200-ի[3]:

Համագումարի օրակարգում դրված էին հետևյալ հարցերը. ճա-

[1] Մշակ, մարտի 7, 1919 թ., էջ 1:
[2] **Ե. Իշխանյան**, Լեռնային Ղարաբաղ 1917-1920 թթ., Երևան, 1999, էջ 197:
[3] Տես **Հ. Հարությունյան,** Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996, էջ 50; **Հ. Սիմոնյան**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 384; **Բ. Ուլուբաբյան**, Արցախյան գոյապայքար, Երևան, 1994, էջ 29:

ճանաչել Ադրբեջանի իշխանությունը՝ Աղդամի թուրք պարետի պահանջի քննարկումը, որը պարունակում էր մի շարք կետեր. ա. վերջ տալ անիշխանությանը, բ. բաց թողնել քոչվորներին, գ. ապահովել հաղորդակցությունը[1]:

Օրակարգում կային նաև Ղարաղշլաղի հարցի քննարկումը և կառավարության հաշվետվությունը:

Սկզբում ընթերցվում է Իսմայիլ Հակկի Բեյի գրավոր պահանջը, որտեղ պահանջվում էր առանց նախապայմանների ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, հանձնել զենքերը, դիմադրություն ցույց չտալ զորքին և թույլատրել նրա ազատ մուտքը Շուշի: Ի վերջո, քննարկումների արդյունքում ժողովականները հանգում են նրան, որ զենքը վայր դնելն ու ենթարկվելու պահանջը կատարելը նշանակում է՝ գլուխը դնել սրի տակ: Ուստի ժողովը միաձայն որոշում է մերժել թուրքական վերջնագիրը և պատգամավորություն ուղարկել Աղդամ, վերջիններիս հաղորդելու, որ Ղարաբաղը ունի իր կառավարությունը և պատրաստ է բանակցություններ վարել Ջեմիլ Ջահիդ Բեյի հետ:

Երկարատև քննարկումներից հետո համագումարը ընտրեց պատվիրակություն, որի կազմի մեջ ընդգրկվեցին Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը, իրավաբան Մելիք Հովսեփյանը, Ղուկասյան օրիորդաց դպրոցի տեսուչ Հայրապետ Մուսայելյանը, թեմական դպրոցի ուսուցիչ Արշավիր Քամալյանը և մի գյուղացի՝ Դանիել Առաքելյանը: Հայ պատվիրակների հետ Աղդամ պետք է մեկնեին նաև Ազգամիջյան կոմիտեի թուրք անդամները, որոնցից սակայն համաձայնվում է միայն Լյութֆալի բեկը:

Համագումարը քննարկելով Ղարաղշլաղ գյուղի հետ կատարված աղետի մանրամասները, քննադատում է կառավարությանը՝ արագորեն չարձագանքելու և օպերատիվ չգտնվելու մեջ: Այնուհանդերձ, համագումարը ընտրում է կառավարություն՝ կոչելով նոր անունով՝ Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհուրդ[2]: Կառավարության անդամների մեծ մասը վերընտրվում են, մեկով ավելանում է անդամների թիվը և հասնում է 10 -ի.

1. Եսայան Մելիքսեթ, չեզոք, քարտուղար
2. Զաքարյան Մուշեղ, դաշնակցական, խնամատար

[1] Մշակ, 22 փետրվարի, 1919 թ.:
[2] Տես, **Ե. Իշխանյան,** նշվ. աշխ., էջ 202:



3. Թումյան Հարություն, դաշնակցական, զինվորական
4. Իշխանյան Եղիշե, դաշնակցական, նախագահ
5. Մուսայելյան Հայրապետ, դաշնակցական
6. Հովհաննիսյան Արա, էսէռ, պարեն
7. Շահնազարյան Ռուբեն, կադետ, լուսավորություն
8. Վարդապետյան Լևոն, մենշևիկ, արդարադատություն
9. Տեր-Միքայելյան Անուշավան, դաշնակցական
10. Քամալյան Արշավիր, մենշևիկ[1]:

Համագումարը ընդունում է ազգաբնակչությանն ուղղված հատուկ կոչ, որում մեկ անգամ ևս շեշտվում է թուրքական արշավանքի վտանգը: Ժողովրդին ուղղված մեկ այլ դիմումում կոչ է արվում զգույշ լինել և առայժմ խուսափել թուրքերի դեմ քայլեր ձեռնարկելուց[2]:

Իհարկե, մյուս կողմից հարկ է արձանագրել, որ չնայած Ղարաբաղում տիրող համընդհանուր ոգեշնչման այս մթնոլորտին և որոշակի քանակի զինված ուժերի առկայությանը՝ Ազգային Խորհուրդը գտնում էր, որ Ղարաբաղը պատրաստ չէ թուրքական հարձակմանը դիմագրավելուն. զգացվում էր նաև զինամթերքի պակաս: Ի վերջո, այս ամենը կազմակերպելու համար ժամանակ էր պետք: Օգնություն սպասել որևէ տեղից գրեթե անհիմաստ էր. այս ընթացքում նվաճվել էր հայաշատ Բաքուն և տեղի հայությունը ամբողջովին կոտորվել էր:

Սեպտեմբերի 15-ին պատվիրակությունը դուրս է գալիս Շուշիից, սակայն երբ հասնում են Աղդամ, Ջամիլ Ջահիդ բեյը նույնիսկ ցանկություն չհայտնեց պատվիրակներին ընդունելու: Նա հրամայում է միանգամից ձերբակալել պատվիրակներին, իսկ նրանցից երկուսին՝ Մուսայելյանին և Առաքելյանին ազատ է արձակում, որպեսզի արցախահայությանը փոխանցեն վերջնագրի մեջ իր հաստատակամությունը, այն է՝ հպատակվել Ադրբեջանի կառավարությանը, զինաթափվել և թուրքական զորքերին ճանապարհ տալ դեպի Շուշի[3]:

Սեպտեմբերի 16-ին երկու պատվիրակները հասնում են Շուշի: Թուրքական վերջնագրին պատասխան տալու համար որոշվում է

[1] Տես, **Ե. Իշխանյան,** նշվ. աշխ., էջ 203:
[2] Մշակ, 22 փետրվարի, 1919:
[3] Մշակ, 27 փետրվարի, 1919:

գումարել արտակարգ համագումար, յուրաքանչյուր գյուղից հրավիրելով երկու պատգամավոր: Շուշիից ներկայանում է 18 մարդ: Համագումարին մասնակից անդամների ընդհանուր թիվը հասնում է մոտ 200-ի (այստեղ էլ տարբեր են պատգամավորների թվի մասին տվյալները՝ 300-ից մինչև 600): Պատգամավորների մեծ մասը համագումարին մասնակցելու էին եկել զինված[1]: Համագումարի նախագահ է ընտրվում Մուշեղ Զաքարյանը: Հայրապետ Մուսայելյանը և Դանիել Առաքելյանը զեկուցում են, որ Ջամիլ Ջահիդը պահանջել է անհապաղ վայր դնել զենքը, հեռու քաշվել Ասկերանից թողնելով զորքի մուտքը Շուշի, ճանաչել և ենթարկվել Ադրբեջանի իշխանությանը՝ մինչև Կոստանդնուպոլիսի կոնֆերանսի որոշումը:[2] Եռօրյա քննարկումներից հետո, երբ որևէ մեկը չէր ցանկանում հայտնվել «դավաճանի» դերում, ընդունվեցին հետևյալ որոշումները.

1. Հաշվի առնելով Բաթումի պայմանագիրը, ըստ որի Ղարաբաղի հարցը պետք է որոշվի Կ. Պոլսի կոնֆերանսում, ժամանակավորապես ճանաչել Ադրբեջանի կառավարությունը:
2. Զինադադարի հարցը չընդունել, մինչև չստեղծվեն հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը ապահովող իրավական երաշխիքներ:

Իհարկե, հանուն ճշմարտության պետք է փաստել, որ համագումարը անուղղակի ընդունելով Ադրբեջանի իշխանությունը, միաժամանակ,

1. Համաձայնություն չտվեց զինաթափմանը,
2. Չթույլատրեց ադրբեջանական զորամասերի մուտքը Շուշի,
3. Թույլատրեց միայն, այն էլ փոքրաթիվ թուրքական զորագնդի մուտքը Շուշի:

Համագումարում մթնոլորտն ավելի է շիկանում, երբ տեղեկություն է ստացվում, որ Հաջի Սամլուի քրդերը Խանքենդի հյուսիսարևմտյան կողմից հարձակում են սկսել Ղայբալի, Կրկժան, Փահլուլ և Գոմելլու գյուղերի վրա, որոնց արժանի դիմադրություն է ցույցաբերել Խաչենի ուժերի հրամանատար Ալեքսան Դային:

Սեպեմբերի 19 - ին Աղդամ է ժամանում Նուրի փաշան և բանտից ազատելով հայ պատգամավորներին, 24 ժամ է տրամադրում վերջնագրին պատասխանելու համար, այլապես սպառնում է ռազ-

[1] Տե՛ս, **Հ. Սիմոնյան**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 386:
[2] Տե՛ս, **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 211:



մական գործողություններ սկսել[1]: Նուրի փաշայի այս վերջնագրի մասին հայտնի է նաև մեկ ուրիշ ժամկետային տվյալ. 1918 թ. սեպտեմբերի 24-ը, թեպետ դրանով հարցի էությունը չի փոխվում: Վերջնագրում ուշագրավ մի ավելացում կար՝ «արգելք չհանդիսանալ Շուշի մտնելու համար, հակառակ պարագայում նրանց հետ կվարվեն այնպես, ինչպես ժամանակին վարվել են Սասունի ու Զեյթունի հետ»[2]:

Պատվիրակները և Նուրի փաշայի մոտ եկած Գանձակի հոգևոր առաջնորդ Լևոն վարդապետ Պսարյանը, դեռ Շուշի չհասած ձերբակալվում են հայ գյուղացիների կողմից: Շուշիից համապատասխան միջամտությունից հետո միայն նրանք ազատ են արձակվում և համագումարին տեղեկացնում են Նուրի փաշայի վերջնագրի մասին:

Սեպտեմբերի 20-ին կայացած նիստում համագումարը որոշում է Նուրի փաշայի հետ բանակցելու համար Աղդամ ուղարկել քաղաքագլուխ Գ. Մելիք–Շահնազարյանին, Գանձակի վարդապետ Պսարյանին և համագումարի նախագահ Գր. Ղարագյոզյանին: Ուշագրավ է, որ մի խումբ ըմբոստ գյուղացիներ ձերբակալում են նրանց և նույնիսկ որոշում են սպանել իբրև ազգը ծախող դավաճանների: Նույն բախտին է արժանանում նաև Շուշիից ուղարկված մեկ այլ պատվիրակություն՝ Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսի և Բյուզանդ վարդապետի մասնակցությամբ: Երկար բանակցություններից հետո միայն հաջողվում է գյուղացիներին համոզել, որ իրենք Աղդամ են մեկնում Նուրի փաշայի հետ բանակցելու համար: Սակայն, երբ սեպտեմբերի 21-ին նրանք հասնում են Աղդամ, արդեն լրացել էր Նուրի փաշայի վերջնագրի ժամկետը և թուրքերն «անցել էին իրեց գործին»:

Ջամիլ Ջահիդ Բեյի գլխավորությամբ թուրքական զորքերը անցնում են Ասկերանը, շարունակելով զարգացնել հարձակումը Ղարաբաղի վրա: Սեպտեմբերի 22-23-ին թուրքերը կարողանում են գրավել Ասկերանի աջ և ձախ թևերում գտնվող հայկական գյուղերը՝ Միրշալուն, Դահրազը, Վարազաբունը, Փիրջամալը, Խրամորթը, Քյաթուկը, Նախիջևանիկը, Խանաբադը, Քարագլուխը, Ղլիճբաղը,

[1] Մշակ, 27 փետրվարի, 1919 թ.; **Հ. Հարությունյան**, Տե՛ս, **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 57:
[2] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 67-69:

ինչպես նաև Դաշբաշից մինչև Միրիշեն ընկած գյուղերը[1]:

Թուրքական զորքերը արագ թափով շարժվում են Շուշիի վրա: Նրանց ուղեկցողների մեջ էր նաև մուսավաթական կառավարության լիազոր Իսմայիլ խան Զիաթխանովը: Շուշին թուրքերի կողմից գրավելու և թուրքական զորքերի թվաքանակի մասին պատմագիտական աշխատություններում տարբեր տեղեկություններ են հիշատակվում. Նշվում է սեպտեմբերի 24-ը և թուրքական 2000-ոց զորքի և ադրբեջանական ուժերի մուտքը Շուշի[2]: Նշվում է նաև, որ հայ ըմբոստ երիտասարդությունը թողնում է Շուշին և հեռանում գյուղերը՝ Սոկրատ բեկ Մելիք-Շահնազարյանի գլխավորությամբ պայքարը շարունակելու համար: Շուշիի գրավման ամսաթիվ են համարվում նաև սեպտեմբերի 25-ը և 26-ը: Ընդհանուր առմամբ ճիշտը սեպտեմբերի 25-ն է, երբ թուրքերը մտնում են Շուշի և զբաղեցնում քաղաքի թաթարական մասը: Ուշագրավ է, որ Հայաստանի ազգային արխիվում առկա մեկ փաստաթղթի համաձայն, հայերը կանխորոշելով թուրքերի հավանական պարտությունը դաշնակիցների կողմից և իմանալով Բուլղարիայի կապիտուլյացիայի մասին, դիմադրություն ցույց չեն տալիս թուրքերին[3]: Ըստ իս, բացատրությունը համոզիչ չէ և չէր էլ կարող լինել, քանի որ վերջիններս քաջ գիտակցում էին թուրքական արշավանքի հետևանքները հայության համար, ինչը և չուշացավ: Քաղաքի գրավումը ուղեկցվեց հայության կոտորածով, իսկ թուրքական զորքերի ետևից շարժվում էր թալանի և ավերածությունների պատրաստ մահմեդական խաժամուժը[4]: «Մշակը» տեղեկացնում է, որ սեպտեմբերի 25-ին թուրքական զորքը նվագածությամբ մտնում է Շուշի[5]: Այլ աղբյուրների համաձայն, Շուշին թուրքերի կողմից (1500-4000 զինվոր) գրավվել է սեպտեմբերի 26-ին[6]: Ըստ Ե. Իշխանյանի «Սեպտեմբերի 26-ին Ջեմիլ Ջահիդ Բեյը Գալլիպոլիեան 6000-ոց դիվիզիայի գլուխն անցած, 9 դաշտային թնդանոթներով, 66 գնդացիրներով և 3 զրահապատ ինքնաշարժերով,

[1] Մշակ, 27 փետրվարի, 1919 թ.: **Հ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 60: **Հ. Սիմոնյան,** Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 388:

[2] Զանգ, 24 նոյեմբերի, 1918 թ., էջ 6: **Հ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 60:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 22:

[4] Տե՛ս, 3. Мелик-Шахназаров, տե՛ս, **Ե. Իշխանյան,** նշվ. աշխ., էջ 30, **Վ. Բալայան,** տե՛ս, **Ե. Իշխանյան,** նշվ. աշխ., էջ 298:

[5] Մշակ, 22 հոկտեմբերի, 1918, էջ 1-2:

[6] Տե՛ս, **Հ. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 388: Մշակ, 27 փետրվարի, 1919:



մտնում է Շուշի»[1]: Քաղաք մտնելով, թուրքերը Ջեմիլ Բեյի գլխավորությամբ առաջինը այցելում է Ղազանչեցոց եկեղեցի, ուր Վահան եպիսկոպոսը հրապարակորեն հնազանդության կոչ է անում հայ ժողովրդին: Ջահիդ բեյը արգելում է մտնել հայերի տները և ստուգումներ անցկացնել, ինչը հայերին սիրաշահելու և զինաթափելու միտում ուներ. հայերը հավաքում են 150 հրացան և հանձնում թուրքերին: Թուրքական զորքերը տեղավորվում են տեղի ռեալական ու թեմական դպրոցներում, օրիորդաց միջնակարգ դպրոցում և նախկին ռուսական զորանոցում[2]:

Շուշիի գրավումից հետո թուրք-թաթարական ուժերը առաջինը հաշվեհարդար տեսան հայ մտավորականության և հասարակական-քաղաքական գործիչների հանդեպ: Հոկտեմբերի 1–ից սկսած թուրքերը Խոսրով Բեկ Ֆոլատովի և Հասան Բեյի ղեկավարությամբ, որոնց նշանակել էր Ջեմիլ Ջահիդ Բեյը, սկսում են ձերբակալությունները: Ընդհանուր առմամբ, տարբեր աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն, ձերբակալվում են 60-84 հոգի:[3] Թուրքերը ցրում են կառավարությունը, իսկ ձերբակալվածները հիմնականում կառավարության անդամներ էին: Մեծ թիվ էին կազմում հայտնի մտավորականները, արհեստագործները, հասարակական-քաղաքական գործիչները, որոնք ենթարկվեցին զանազան խոշտանգումների[4]:

Ղարաբաղում տիրում էր վախի և սարսափի մթնոլորտ: Առանց լուրջ մեղադրանքի մահվան էին դատապարտվում մի շարք անձինք: Թուրքերը ծրագրում էին զավթել նաև Ղարաբաղի մյուս հատվածները, ուստի համապատասխան զորամասեր էին կուտակում նախանշված ուղղություններում:

Հոկտեմբերի սկզբներին մոտ 400 հոգուց բաղկացած մի զորամաս Խոսրով Բեկ Ֆոլատովի հրամանատարությամբ Շուշիից շարժվում է Վարանդայի և Դիզակի ուղղությամբ՝ իրենց հետ ունենալով 4 թնդանոթ և 6 գնդացիր, նրանք անցնում են Շուշիքենդով դեպի Տռնավարզ և Խաչմաչ: Գունդը կանգ է առնում Մսմնա գյուղում: Դիզակի զորահրամանատար Արտեմ Լալայանը համախմբում է Դիզա-

[1] **Ե. Իշխանյան,** նշվ. աշխ., էջ 239:

[2] Տես **Բ. Ուլուբաբյան,** Արցախյան Գոյապայքար, Երևան, 1994, էջ 33:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 22;Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 62; Нагорный Карабах в 1918-1923 гг., նշվ. աշխ., էջ 24; Մշակ, 22 հոկտեմբերի, 1918թ.:

[4] Տես **Ե. Իշխանյան,** նշվ. աշխ., էջ 311:

կի և Վարանդայի աշխարհազորայիններին, իսկ Ասլան Մուրադխանյանի ջոկատին ուղարկում է թշնամու ճանապարհը փակելու: Վերջինս Մաշադիշեն գյուղի մոտ փակում է Ամարաս տանող ճանապարհը: Թուրքական գունդը, որին հետո հաջորդեց 600 հոգուց կազմված մեկ այլ զորամաս, պետք է գնար թաթարական գյուղերի ուղղությամբ, հասներ Կարյագինո և միանալով տեղի ուժերին մտներ Հադրութ և գրավեր տեղի զորանոցը: Այլ խոսքով, Շուշիից, Խանքենդից, Աղդամից, Կարյագինոյից, Ջեբրաիլից և Հադրութից միասնական հարձակումներով պետք է սկսվեր և ավարտվեր ողջ Լեռնային Ղարաբաղի նվաճումը:

Հայերի զինված մի խումբ թուրքերին շրջապատում է Սխտորաշեն, Մավազ, Հերհեր, Խերխան գյուղերի միջև ընկած տարածքում: Մյուս խումբը Ճարտարի կողմից շրջափակման մեջ է պահում թուրքերին: Այս երկու խմբերը օղակում են Մսմնան և սպասում լուսաբացին: Հոկտեմբերի 18-ի առավոտյան թուրքերը փորձում են առաջ շարժվել, սակայն գլխովին ջախջախվում են: Գիշերը հայերին օգնության էր եկել նաև Թևանի գլխավորությամբ գործող ջոկատը: Թուրքերն այստեղ տալիս են 95 զոհ, հայերի ձեռքն են անցնում 3 թնդանոթ և 4 գնդացիր: Սպանվում է նաև ջոկատի հրամանատար Քյազիմ բեյը: Ջախջախված թուրքերի մնացորդները Ֆոլատովի հետ փախչում են Շուշի: Նույն ճակատագրին է արժանանում նաև թուրքական այն ջոկատը, որը Վարանդայի վրայով փորձում էր անցնել Կարյագինո[1]: Թուրք-մուսավաթական արշավանքը շարունակվել չէր կարող, քանի որ Թուրքիան պարտություն կրեց համաշխարհային պատերազմում, իսկ դաշնակիցներն արդեն մտել էին Կ. Պոլիս: Հերթական սև գործը այնուամենայնիվ թուրքերը հասցրեցին կատարել. իրենց հեռանալուց առաջ, նրանք ողջ զենքն ու զինամթերքը թողեցին մուսավաթականներին, իսկ սպաները մնացին մարզելու թաթար զինվորներին:

Տեսնելով, որ ռազմական ճանապարհով չի կարողանում կոտրել արցախահայության դիմադրությունը, Ադրբեջանը գործի դրեց դիվանագիտական ճանապարհով Ղարաբաղը զավթելու միջոցները: Ահա, թե ինչ է հայտարարում Վրաստանում Ադրբեջանի ներկայա-

[1] Զանգ, 24 նոյեմբերի, 1918 թ., էջ 6; Մշակ, 2 մարտի, 1919 թ.: ՀԱԱ, Ֆ. 314, ց. 1, գ. 34, էջ 78: **Վ. Բալայան,** նշվ. աշխ., էջ 299: **Հ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 67: **Բ. Ուլուբաբյան,** նշվ. աշխ., էջ 34:



ցուցիչ Ջաֆարովը Հայաստանի Հանրապետության հավատարմատարին. «Իմ կառավարության հանձնարարությամբ և ի պատասխան 1919 թ. հուլիսի 23-ի Ձեր կառավարության հայտարարության, տեղեկացնում եմ Ձեզ, որ Ադրբեջանը ողջ բնակչության, այդ թվում նաև հայերի շրջանում իրականացվող զինաթափումը մեկ նպատակ ունի. այն է՝ կարգ ու կանոն հաստատել երկրում: Ձեր առաջարկությունը, թե հարկավոր է սպասել Կ.Պոլսի կոնֆերանսի արդյունքներին, մեզ համար անհասկանալի է, քանի որ Ադրբեջանի կառավարությունը գտնում է, որ անկախ այն բանից, թե որտեղ և ինչպես կլուծվի սահմանների հարցը, որևէ ձևով այն չի կարող վերաբերել Ելիզավետպոլի նահանգին, որը կազմում է Ադրբեջանի հանրապետության անբաժանելի մասը և պետք է կառավարվի առանց որևէ արտաքին միջամտության: Իմ կառավարությունը միաժամանակ հուսով է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կհամաձայնվի այս իրողության հետ և ինքը ևս ուժ կգործադրի, որպեսզի զինաթափումը կատարվի առանց լուրջ դիպվածքների»[1]: Բնականաբար, այս նկրտումները լիովին համահունչ էին անկախացման օրից Ադրբեջանի որդեգրած հայկական տարածքները բռնազավթելու քաղաքականությանը, որում նրան այդքան անգնահատելի օգնություն ցուցաբերեց «ավագ եղբայր Թուրքիան»: Հայաստանի կառավարությունը, չնայած հանրապետության ծանր վիճակին, դիվանագիտական միջոցներով փորձում էր պատասխան տալ ադրբեջանցիների ոտնձգություններին, փաստելով, որ Ղարաբաղի ճակատագիրը պետք է որոշվի տեղի բնակչության ազատ կամքի արտահայտության ճանապարհով: Իսկ որպես պատասխան, Ջաֆարովին է հանձնվում հետևյալ գրությունը. «Ինչ վերաբերում է Ղարաբաղ պատվիրակություն ուղարկելու մասին, պետք է նկատել, որ իմ առաջարկությունը քննարկելիս, Դուք անտեսել եք մի շատ կարևոր և էական հանգամանք, ՝ինչը Ձեզ ցավալի մոլորության մեջ գցելու պատճառ է դարձել: Բանը նրանումն է, որ իմ առաջարկությամբ ես ամենևին չեմ մտածել ներխուժել Ադրբեջանի հանրապետության իրավունքների մեջ, ինչպես նաև չեմ կարծում, թե Ձեր կառավարությունը կխառնվի Հայաստանի Հանրապետության ներքին գործերին: Եթե հարցը վերաբերվեր Ադրբեջանի հանրապետության որևէ վիճելի տարածքի, ապա ես անկասկած չէի փորձի

[1] В. Микаелян, նշվ. աշխ., էջ 18:

առաջարկել իմ ծառայությունը՝ վերացնելու համար այն թյուրիմացությունը, որ կծագեր տեղի ժողովուրդների միջև, այն ձևով, ինչպես ես եմ առաջարկել: Սակայն խնդիրը Ղարաբաղի վիճելի համարվող տարածքի և տեղի գերակշիռ հայ ազգաբնակչության մասին է, և մեզ բոլորովին ոչինչ հայտնի չէ, թե Ղարաբաղը կմիանա Հայաստանին կամ Ադրբեջանին, կամ թե իրենից կներկայացնի ինքնավար քաղաքական միավոր: Ուստի, այս վիճելի խնդիրն իր վերջնական լուծումը կստանա կամ Կ.Պոլսի կոնֆերենցիայում, կամ Ղարաբաղի ազգաբնակչության ազատ կամքի արտահայտությամբ»[1]:

Այդ ընթացքում, սակայն, մուսավաթական Ադրբեջանի անկանոն զորամասերի կողմից անընդհատ կատարվող թալանն ու ավերածությունները հնարավորություն չէին տալիս Ղարաբաղում խաղաղություն հաստատել: Օրեցօր ահագնացող վտանգից պաշտպանվելու համար հայկական բնակչությունն իր հույսը կապում էր միմիայն Հայաստանի Հանրապետության օգնության հետ. «Ջևանշիր գավառի Վանք, Դովշալու, Բազարքենդ, Կիզիլ-կայա, Քոզլու, Հոռաշաչ, Յայլա, Հայվանլու, Խասապետ, Դումուրլի, Հոռաթաղ, Մարտակերտ, Կիչի-Կարաբեկ, Ուլու-Կարաբեկ, Չարդախլու, Լյուլասազ, Մաղաղիս, Տոնաշեն, Դաստահիր, Տուրուս, Թալիշ, Վերին և Ներքին Չայլու, Մարաղալի, Գույլաշաղ, Ջայնաշաղ, Ուսադիդ և այլ գյուղեր տեղեկացնում են, որ Արարատյան կառավարությունը, հաշվի առնելով թուրք-թաթարական վայրագությունները, կարգ ու կանոնի ու խաղաղություն պահպանման համար կայանալիք կոնֆերենցիայում մեծ տերությունների ներկայացուցիչներին կփոխանցի մեր խնդրանքը՝ Ջևանշիրի գավառի բնակչության միացումը Հայաստանի Հանրապետությանը և մեզ չի թողնի Ադրբեջանի լծի տակ. հակառակ դեպքում դա կլինի մեր կամքին դեմ և երբեք կենդանի չենք հանձնվի հայ ազգը ոչնչացնող այդ մասնագետներին»,- ասվում էր արխիվային փաստաթղթերից մեկում[2]:

Այսպիսով, 1918 թ. վերջերին Ղարաբաղում տիրող իրադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դեռևս իր լիարժեք կայացումը չապրած Հայաստանի Հանրապետությունը, մինչև բրիտանական զորքերի մուտքը Անդրկովկաս, ի վիճակի չէր իրականացնել Ղարաբաղի հայ բնակչության պաշտպանությունը: Երկրամասը

[1] Մշակ, 10 սեպտեմբերի, 1918 թ.:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 49, թթ. 46-51:



հայտնվել էր թուրք-թաթարական օղակման մեջ: Ղարաբաղցիները փրկության հույսերը ստիպված էին կապել միմիայն սեփական ուժերի հետ:

## 2.2. ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆՆԵՐԻ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ: ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Անդրկովկասի գրավումից հետո բրիտանական զորքերը տեղակայվեցին երկրամասի բազմաթիվ հատվածներում: Չնայած այդ ամենին, թուրքական զորքերը չէին շտապում հեռանալ գրաված տարածքներից: Բրիտանացիներն իրենց ներկայացուցիչներն ունեին Հայաստանի ռազմավարական կարևոր բնակավայրերում: Հատկանշական է, որ անգլիական ներկայացուցիչ առաջինը ունեցավ Ղարաբաղը: Դեկտեմբերի 2-ին Գորիս է ժամանում Շուշիում Անգլիական առաքելության ղեկավար մայոր Մոնկ Մեսոնը[1]: Տեղեկացված լինելով իրավիճակին և Ադրբեջանում ստանալով Թոմսոնի հանձնարարականները, մայորն ի սկզբանե բացասաբար տրամադրվեց Ղարաբաղի հայերի հանդեպ: Կասկածից վեր է, որ Թոմսոնի վրա որոշակի ազդեցություն էին ունեցել մուսավաթականների հետ վարած բանակցությունները, որին հետևեցին բրիտանացիներին էնզելիից Բաքու հրավիրելու և Ահմեդ բեկ Աղաևի և Ուսուբեկովի՝ բրիտանացիներին անվերապահորեն ենթարկվելու և շողոքորթելու քայլերը[2]: Եվ թեպետ բրիտանական կառավարության կողմից Հայաստանի հարցում դեռևս չկար մշակված քաղաքականություն և ըստ Թոմսոնի «Դաշնակից զորքերի առաքումը Կովկաս նպատակ ուներ հասարակական անվտանգություն ապահովել ռուսական այդ հողակտորի վրա՝ Սև և Կասպից ծովերի միջև, ինչպես նաև հսկել զինադադարի պայմանների ճշգրիտ կատարումը»[3], այդուհանդերձ, դեկտեմբերի 2-ին մայոր Մոնկ Մեսոնն իր մոտ է հրավիրում Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհրդի անդամներին և հայերի համար խիստ աննպաստ հայտարարություններ անում.

[1] Տես, Г. Г. Махмурян, նշվ. աշխ., էջ 59:
[2] Տես, А. Раевский, նշվ. աշխ., էջ 32:
[3] Մշակ, 29 նոյեմբերի, 1918 թ., էջ 2:

1. Ճանաչել Ադրբեջանի իշխանությունը,
2. Հնարավորություն տալ քոչվորներին Զանգեզուրի սարերը բարձրանալու[1]:

Առաջին պահանջը, իհարկե, հայերի համար նորություն չէր, իսկ ահա դրան հետևած երկրորդ պահանջը հայ բնակչության համար ուղղակի իսկական աղետի էր վերածվել, քանզի հարթավայրերում բնակվող մահմեդականների մեծ մասը գարնանը թողնելով իրենց բնակավայրերը, անասունների հետ միասին բարձրանում էին լեռնային արոտավայրերը, ինչին հետևում է այդ վայրերում բնակվող հայերի թալանն ու կոտորածը:

Չնայած բրիտանացիների բացասական այս վերաբերմունքին և առավելապես Բաքվի նավթով շահագրգռված լինելու հանգամանքին, այնուամենայնիվ, ***բրիտանացիների գալուստը որոշակի խաղաղություն բերեց տարածաշրջանում*** (Ա. Դ.): Թուրքերի վրա ճնշում գործադրելու շնորհիվ շատ վայրերում մի առ ժամանակ դադարեցին հայերի նկատմամբ հետապնդումները:

Անգլիացիները Շուշի հասան դեկտեմբերի առաջին կեսին և անմիջապես ձեռնամուխ եղան իրենց նպատակների իրագործմանը. «...անգլո-ֆրանսիական միսիան գտնվում է Շուշիում: Միսիան այցելել է Թարթառ, Գանձակ և Ղազախ: Երկրում հանգստություն է տիրում»,- իր հեռագրում հայտնում էր Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարյանը[2]: Ինչ խոսք, հաստատված խաղաղությունը չէր կարող երկար տևել, քանի որ Ղարաբաղում տեղակայված բրիտանական զորքերը հիմնականում բաղկացած էին իրադրությունից և խնդրի էությունից բավականին անտեղյակ հնդիկներից[3]: Մյուս կողմից, բրիտանացիների Անդրկովկաս գալով հայ ժողովրդի համար ծագեցին մի շարք նոր անհարմարություններ: Նախ, պետք է փաստել, որ բրիտանական պահանջներին թուրքերն այնքան էլ ուշադրություն չէին դարձնում: Ավելին, իրականում թուրքական սպաները և բանակի մի շարք պարագլուխներ շարունակում էին մնալ Կովկասում՝ փորձելով սրել իրադրությունը տարածաշրջանում, դրանով նոր հող նախապատրաստել պանթուրքական ծրագրերի իրագործման համար: Իսկ ծրագիրն այսպիսին էր. պետք է

[1] ՀԱԱ, ֆ. 323, ց. 1, գ. 1, թ. 22:
[2] Մշակ, 12 դեկտեմբեր, 1918 թ., էջ 2:
[3] Տե՛ս, З. Мелик-Шахназаров, նշվ. աշխ., էջ 32:



վերացվեր հայ բնակչության շերտը Պարսկաստանի սահմանից սկսած մինչև Ելիզավետպոլ և Սևանի ափերը[1]: Դրան ավելանում էին նաև մուսավաթական նկրտումները. վերջիններս օգտագործելով իրենց հանդեպ բրիտանացիների բարյացկամությունը, «գայլային դիվանագիտությամբ» փորձում էին հասնել իրենց նպատակների իրագործմանը, որը ոչնչով չէր տարբերվում պանթուրքիստական ծրագրերից:

Այս տեսանկյունից, հայ ժողովրդի գոյատևման համար առանձնահատուկ նշանակություն ուներ Զանգեզուրի և Ղարաբաղի շրջանների պաշտպանությունը: Զանգեզուրում գտնվող Անդրանիկից օժանդակություն ստանալը, Ղարաբաղի բնակչության համար մեծ օգնություն կլիներ. կնշանակեր փրկվել կոտորածից: Զանգեզուրը ազատ էր մնացել թուրքական ներխուժումից: Տեղական թուրքերը ոգևորված իրենց հայրենակից հրահանգիչներից, մի քանի անգամ փորձ արեցին հարձակվելու Գորիսի վրա՝ Խոզնավար-Խնածախի և Կոռնիձորի ուղղությամբ, սակայն խայտառակ պարտություն կրելով և Կոռնիձորի մոտ 250 դիակ թողնելով՝ նահանջեցին:

Զանգեզուրի հայկական մնալու և թուրք-մուսավաթական նկրտումներից երկրամասը պաշտպանելու գործում անգնահատելի ծառայություն ցուցաբերեց Զորավար Անդրանիկը, որն իր ուժերով սատար կանգնեց Զանգեզուրի գաղթականներին: Անսալով Ղարաբաղի հայության խնդրանքներին և սպառնացող վտանգին՝ Զորավարը որոշեց սատար կանգնել նաև արցախահայությանը: 1918 թ. նոյեմբերի սկզբից Անդրանիկը նախապատրաստվում էր Ղարաբաղ արշավելու համար: Ընդառաջ գնալով Սոկրատ Բեկ Մելիք-Շահնազարյանի՝ արշավանքը Ղարաբաղ 10 օրով հետաձգելու խնդրանքին, Անդրանիկը արշավանքը սկսում է բավականին ուշ՝ նոյեմբերի 27-ին[2]: Արշավող զորախմբի թիվը հասնում էր 7000-ի: Անդրանիկը ծրագրել էր գրավել Զաբուղի պաշտպանական բլուրները (վերջինիս հաղթահարման դժվարությունների մասին խոսվել նախորդ բաժնում՝ Ա.Դ.), ապա մտնել Ավդալլար և շարժվել Շուշի է:

Զանգեզուրից Շուշի ընթացող ճանապարհը անցնում էր մահմեդական 20 գյուղերի, Զաբուղի և Հագարու գետի մոտով: Կռիվները տևեցին երեք օր: Զորավարը փայլուն հաղթանակներ տարավ: Զո-

[1] Նույն տեղում:
[2] **Հ. Սիմոնյան,** Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 445:

կատը հասել էր Ավդալլար գյուղը, երբ սպիտակ դրոշով նրանց հասավ դաշնակիցների առաքելությանը պատկանող ավտոմեքենան, որի մեջ էին անգլիացի կապիտան Գ. Ֆ. Սքուայրն ու ֆրանսիացի կապիտան Ն. Գասֆելդը: Վերջիններս էլ Անդրանիկին հանձնեցին Անդրկովկասում դաշնակից ուժերի նորանշանակ հրամանատար գնդապետ Թոմսոնի ուղերձը, ուր ասված էր. «Շատ շուտով Եվրոպայում նախատեսվող կոնֆերանսի ժամանակ կքննարկվի հայկական հարցը: Տեղեկանալով այդ մասին, դաշնակից երկրների պատվիրակները հորդորում են Անդրանիկին դադարեցնել պայքարը և վերադառնալ Գորիս, այնտեղ վերահաստատել Գորիսի վրա ունեցած իր իրավասությունները և սպասել գնդապետ Թոմսոնի հետագա հրահանգներին»[1]: Այսպես, անգլիացիների անհարկի միջամտությամբ դադարեցվում են Անդրանիկի կողմից սկսված ռազմական գործողությունները, իսկ այդ նույն ժամանակ, մահմեդական ուժերը, շարունակում են հարձակումները հայկական բնակավայրերի վրա:

1918 թ. վերջին Հայաստանի Հանրապետությունում ստիճանաբար իրավիճակը կայունանում է: Չցանկանալով թույլ տալ Հայաստանի Հանրապետության հզորացումը և տեղյակ լինելով նրա կապերին հարավային Ռուսաստանի ուժերի հետ՝ բրիտանացիները ամեն գնով ձգտում էին պահպանել իրավիճակի նկատմամբ գերակայությունը: Այդ նույն ժամանակ Դենիկինի հաջողությունները ևս ակնառու էին և նա նույնիսկ չէր ժխտում Հայաստանի հետ միացման հեռանկարը[2]: Հայկական հողերի միավորումը ևս ցանկալի չէր բրիտանացիների համար, քանի որ բրիտանական կառավարությունը չէր կարող թույլ տալ Ադրբեջանի և Թուրքիայի վերջնական թուլացումը իրենց իսկ շահերից ելնելով: Մուսավաթական իշխանությունները ուշադիր հետևելով իրադարձությունների ընթացքին և զգալով Անդրանիկի կողմից եկող վտանգը՝ իրենց բազմաթիվ հանդիպումներում ճնշում էին գործադրում Թոմսոնի վրա:

Հրաժարվելով Շուշի մտնելու մտադրությունից, Անդրանիկը, բնականաբար, երկմտանքի մեջ էր. «Եթե արհամարհեմ անգլիացիների հրահանգը, կարող եմ վնասել գործին,- գրում էր նա: Շուշի մտնելով ես բնականաբար պետք է ընդհարվեմ ոչ միայն Ադրբեջանի

[1] Տես, The Republic of Armenia, volume I, The First Year, 1918-1918, Richard G. Hovhannisian, University of California Press, p. 88-89:

[2] Մշակ, 29 նոյեմբեր, 1918:



թուրքերի, այլ նաև անգլիացիների հետ: Թուրքերը հենց դրան էլ ձգտում են»[1]:

Այսպիսով, բրիտանական քաղաքականության պատճառով ձախողվեցին Ղարաբաղի հայերին օժանդակություն հասցնելու Անդրանիկի ջանքերը: Դրան հակառակ, Անդրանիկի Զանգեզուրից հեռանալուց հետո, էլ ավելի սաստկացան Զանգեզուրը և Ղարաբաղը գրավելու մուսավաթականների նկրտումները: Ուշագրավ է, որ Անդրանիկի զորաշարժի կանգնեցումից շատ չանցած, դեկտեմբերի 9-ի գիշերը Ալիանլու շրջանի մահմեդական խուժանը շրջապատում է Զանգեզուրի գավառի հայկական մի քանի գյուղերը, որոնք գտնվում են Հագարու գետի ձախ ափին: Մեկ օր տևած կռիվների արդյունքում ավերվում և կրակի են մատնվում Արփա-Գյադուկ, Թեզ-Խարաբ, Սպիտակաշեն, Պետրոսաշեն և Չիշմանլու գյուղերը: Թշնամին փորձում է ավերել նաև Խծաբերդ ու Հին Թաղլար գյուղերը, սակայն տեղի ինքնապաշտպանական ուժերին հաջողվում է ետ շպրտել այդ ավազակախմբերին: Բրիտանացիների կողմից այս փաստը անուշադրության է մատնվում: Այսպիսի իրողություններ հետագայում էլի եղան և կրկին բրիտանացիների կողմից գործնական քայլեր չձեռնարկվեցին: Բնականաբար, այս պայմաններում Ղարաբաղի հայությունը հայտնվեց անօգնական վիճակում:

Փոքր ինչ շեղվելով շարադրանքից, մեկ անգամ ևս փորձենք ընդգծել, որ համաշխարհային պատերազմի ընթացքում բրիտանացիները ձգտում էին ապահովել առավելագույն թվով դաշնակիցներ և ամեն ինչ ներդնում էին պատերազմը հաղթական ավարտին հասցնելու համար: Վերջիններիս կողմից հայերը ևս համարվում էին Անտանտի երկրների դաշնակիցներ: Այս իրողությունը բազմիցս հաստատել են դաշնակից երկրների ղեկավարները, մասնավորապես Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը: Բրիտանական խորհրդարանի մեջ իր հանրահայտ ճառում, նա մեկ անգամ ևս հաստատեց միասնական և անկախ Հայաստանի ստեղծման անհրաժեշտությունը[2]:

Պատերազմն ավարտվեց և անգլիացիները ժամանեցին Կովկաս: Անգլիական առաքելության ղեկավար Թոմսոնը շուտով հան-

[1] **Հ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 460:

[2] Տես, **Ենովք Արմեն**, Լոյտ Ճորճի Հռչակաւոր ճառը և Հայկական Խնդիրը Անգլիական Խորհրդարանին Մէջ, Կ.Պոլիս, 1918, էջ 1-8:

դես եկավ հայտարարությամբ, որ Մեծ Բրիտանիան Ադրբեջանի տարածքը համարում է միասնական ամբողջություն և այդ տարածքի վրա ճանաչում է միայն մեկ իշխանություն, այն է՝ ադրբեջանականը: Բնականաբար, «Միասնական տարածք» ասելով անգլիացի գնդապետը նկատի ուներ նաև Ղարաբաղն ու Զանգեզուրը[1]:

Զարգացնելով այդ քաղաքականությունը՝ Շուշիում անգլիական առաքելության մեկ այլ ղեկավար՝ մայոր Գիբոնը 1918 թ. դեկտեմբերին հայտարարեց, թե քրիստոնյա հայերը և մահմեդականները բրիտանական կառավարության համար հավասար են: Դրանով, սակայն մոռացվում էր այն փաստը, որ ոչ վաղ անցյալում նույն մահմեդականները թուրքերի հետ կռվում էին դաշնակիցների դեմ, ինչպես նաև մոռացվում էին հայերի կրած անլուր տառապանքները պատերազմում հենց դաշնակիցներին օգնելու համար: Ամեն ինչ զոհաբերվում էր սեփական շահերին: Սա բրիտանական քաղաքականության անկյունաքարն է: Ցանկանալով թուլացնել մահմեդական Թուրքիային՝ բրիտանացիները փոխարենը ուժեղացնում էին իրենց համար հեռանկարային և խոստումնալից երիտասարդ մի պետություն՝ մահմեդական Ադրբեջանին, որն ուներ հարուստ նավթահանքեր և միաժամանակ հեշտ կառավարելի էր[2]: Ճանաչելով Ադրբեջանի իշխանությունը՝ բրիտանացիները վերջինիս խոստանում էին համակողմանի օգնություն. «1918 թ. դեկտեմբերի 7-ին Ադրբեջանի պառլամենտի և դեկտեմբերի 26-ին Ֆ. Խոյսկու կառավարության կազմավորման ժամանակ գնդապետ Թոմսոնը հանդես եկավ նոր հայտարարությամբ, որով նրան խոստանում էր մեծ աջակցություն և օգնություն: Ուշագրավ է, որ ադրբեջանական կառավարությունը նույն ջերմությամբ էր ընդունում նաև Անդրկովկասում դաշնակից զորքերի հրամանատար գեներալ Միլլնին»[3]:

Իհարկե, ինչպես ասում են, շքանշանը ունի նաև հակառակ կողմ. բրիտանացիներն այստեղ ունեին իրենց սեփական սպասելիքները: Որպես «բարի կամքի դրսևորում» Ադրբեջանը վերջիններիս թույլատրում էր ազատորեն բեռներ տեղափոխել. «առանց որևէ հարկման թույլատրել բրիտանական զորքերի կարիքների համար ապրանքների արտահանումը»,- ասվում էր Ադրբեջանի կառավա-

[1] Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 460:
[2] Տե՛ս, Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 178-179:
[3] П. Дарабади, նշվ. աշխ., էջ 125.



րության հրահանգում[1]: Այս քաղաքականությունը շարունակվեց և ավելի խորացավ նավթային ապրանքների արտահանման ծավալների ավելացմանը զուգահեռ[2]:

Միևնույն ժամանակ չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ չնայած Ղարաբաղի նկատմամբ որդեգրած այս քաղաքականությանը, բրիտանացիները որոշակի մտավախություն ունեին ադրբեջանցիների դեմ պայքարի հայերի հաստատակամությունից, ուստի, երբեմն ստիպված էին սիրաշահելու որոշ քայլեր կատարել:

Բնականաբար, Ղարաբաղի հայերը բրիտանական քաղաքականությանը անվերապահորեն չէին կարող ենթարկվել, քանի որ վերջինս սպառնում էր նրանց գոյությանը և հայ գործիչները հաստատակամ էին Ղարաբաղը Հայաստանի Հանրապետությանը միացնելու հարցում[3]:

Անդրանիկի հետ Գիբոնի վարած բանակցություններում Ադրբեջանի և Զանգեզուրի միջև սահման համարվեց Հագարու գետը: Փաստորեն, դա բրիտանացիների կողմից Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ընդգրկելու առաջին փորձերից մեկն էր: Անդրանիկի Զանգեզուրում գտնվելը յուրատեսակ կանխարգելման երաշխիք էր Ղարաբաղի և Զանգեզուրի համար ադրբեջանական զորքերի հարձակման դեպքում: Բազմաթիվ են այն նամակները, որոնցում տեղի հայությունը խնդրում էր զորավարից չհեռանալ, զգուշացնելով, որ դրանով երկրամասերի հայ ազգաբնակչությունը կհայտնվի ոչնչացման վտանգի առջև: Ադրբեջանցիները դա լավ հասկանալով, յուրօրինակ վայնասուն էին բարձրացրել «իբր Անդրանիկից եկող վտանգի շուրջ»[4], ուստի ամեն տեսակ դիվանագիտական ճնշումներ գործադրելով, նրանք փորձում էին բրիտանացիների միջոցով հասնել Անդրանիկի հեռացմանը Զանգեզուր-Ղարաբաղի սահմաններից:

Ղարաբաղի հայության հերոսական պայքարի պատմության մեջ մի նոր էջ է բացվում 1919 թ. հունվարից, երբ բրիտանացիների համաձայնությամբ ադրբեջանական կառավարությունը Զանգեզուրի, Շուշիի, Ջևանշիրի և Ջեբրայիլի գավառներից ստեղծում է ժամանակավոր գեներալ-նահանգապետություն: Ղարաբաղի և Զանգեզուրի

[1] Борьба за победу советской власти в Азербайджане 1918-1920 гг., Документы и материалы, Баку, 1967 г., стр. 142.
[2] Նույն տեղում, էջ 143:
[3] Մշակ, 2 մարտ, 1919:
[4] Տե՛ս, Нагорный Карабах в 1918-1923 гг., նշվ. աշխ., էջ 63:

բնակչությանն ուղղված բրիտանական ռազմական առաքելության պաշտոնական հաղորդագրությունում նշվում էր հետևյալը.

«1. 1919 թ. հունվարի 15-ին Ադրբեջանի կառավարության հրամանով դոկտոր Սուլթանովը նշանակվում է ժամանակավոր գեներալ-նահանգապետ Զանգեզուրի, Շուշու, Ջևանշիրի և Ջեբրայիլի գավառներում: Նա ստանում է բրիտանական հրամանատարության օժանդակությունը:
2. Նշանակվում է գեներալ-նահանգապետի օգնական քաղաքացիական գործերով:
3. Վեց փորձառու հայերից կազմվում է խորհուրդ, գեներալ-նահանգապետի ղեկավարությամբ, բոլոր ազգությունների կարիքները բավարարելու համար:
4. Բրիտանական մեկ սպա կարող է ներգրավվել խորհրդի մեջ, որպես բրիտանական հրամանատարության ներկայացուցիչ:
5. Ադրբեջանական գանձարանը կհատկացնի բոլոր անհրաժեշտ գումարները գեներալ-նահանգապետության ծառայողների համար:
6. Բոլոր վիճելի հարցերը վերջնականապես կլուծվեն խաղաղության կոնֆերանսում:
7. Գեներալ-նահանգապետության սահմաններում զորքերի բոլոր տեղաշարժերը պետք է տեղեկացվեն բրիտանական հրամանատարությանը:
8. Բրիտանական միսիան պնդում է, որ գեներալ-նահանգապետի բոլոր օրինական հրամանները պետք է ճշտությամբ կատարվեն: Բրիտանական հրմանատարությունը կհաստատի և կօժանդակի գեներալ-նահանգապետի կողմից օրինականության հաստատմանն ուղղված բոլոր քայլերը»[1]:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ Սուլթանովը բոլոր միջոցների դիմել է համոզելու բրիտանացիներին Ղարաբաղում և Զանգեզուրում այսպես կոչված «կարգ ու կանոն» հաստատելու համար: Ուշագրավ է, որ բրիտանացիները այդ քայլին գնացին՝ խոսքով բեկ Սուլթանովի թուրքական գործակալ լինելու մեջ տեղեկություններ ունենալով հանդերձ:[2] Այս առումով հետաքրքրական է, որ Կարսը ևս ի սկզբանե չհանձնվեց հայերին, այլ հետագայում, երբ վտանգավոր էր դարձել թուրքական գործակալների կազմակերպած «Շուրա» բանդայի գործունեությունը: Ուստի մեզ մնում է արձանագրել, որ Ղարաբաղի և Զանգեզուրի հարցում բրիտանական մոտեցումները ոչ միայն մշակված չէին, այլև անհեռատես ու հեղհեղուկ բնույթ էին կրում: Սուլթանովի նշանակումը կատարված փաստի առջև կանգնեցրեց ոչ միայն Զանգեզուր–Ղարաբաղի հայ բնակչությանը, այլև Հայաստանի Հանրապետության իշխանություններին: Ադրբեջանի կառավարության դիրքորոշումն այս հարցում առավել քան հստակ էր՝ «թիկունքին ունենալով Թոմսոնի պես ուժեղ հենարան, տեր դառնալ Ղարաբաղին»[1]:

Գիտակցելով աստիճանաբար ահագնացող մուսավաթական վտանգը՝ Ղարաբաղի Հայոց ժողովրդական Խորհուրդը (գոյատևել է մինչև 4-րդ համագումարը) 1919 թ. հունվարի 15-ին դիմում է Բաքվի Հայոց Ազգային Խորհրդին, ուր մանրամասը շարադրում է իր տեսակետները. «Շուշիի անգլիական միսիան միանգամայն համոզված է,- ասվում էր փաստաթղթում,- որ մենք ներկայումս ավելի անելանելի դրության մեջ ենք գտնվում, քան առաջ և ամեն անգամ այդ միսիան հեռագրով մեր ներկայացրած զեկուցագրերը ուղարկում է Բաքու դաշնակից պետությանց ղեկավարին՝ խնդրելով զինվորական ուժ, սակայն իրենց այդ իրավացի խնդրանքը ոչ մի ուշադրության չի արժանանում: Քանիցս Շուշիի անգլիական միսիան մեզ պարզապես հայտնել է, որ ինքն է թուրքերի հարձակումների առաջն առնելու և հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը ապահովելու, քանի որ Բաքվում տեղակայված շտաբը անպատասխան է թողնում իրենց պահանջները: Մենք պատրաստել ենք համառոտ զեկուցագիր, թե ինչ հարձակումներ են տեղի ունեցել ադրբեջանական զորքերի, տաճիկների և տեղական մահմեդականների կողմից հայերի վրա, դորա պատճենները ուղարկել ենք գեներալ Թոմսոնին, գեներալ Բիչերախովին և Ձեզ: Զեկուցագրի ամեն մի կետի վերաբերյալ մանրամասն և փաստացի գրավոր տեղեկություններ են հայտնվել այստեղի անգլիական միսիային մի ամբողջ ամսվա ընթացքում, բայց մեր վիճակը դորանով ոչ միայն չի թեթևացել, այլ ավելի է ծանրացել

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., նշվ. աշխ., էջ 62:
[2] Տե՛ս, **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 326:

[1] **Գ. Գալոյան**, նշվ. աշխ., էջ 68:

և գուցե շատ շուտով ողբերգականի վերածվի»[1]:

Շարունակելով իրենց մտահոգությունը, Ղարաբաղի խորհուրդը միաժամանակ հույս է հայտնում, որ բրիտանական զինվորական առաքելության գալստյամբ հայ ազգաբնակչության կյանքը կխաղաղվի և որ նրանց վտանգ չի սպառնա: Սակայն այս անգամ ևս հայերին հուսախաբություն էր սպասում, թեպետ Թոմսոնի լռությունը ուղղակի զարմանք էր հարուցում. վերջինս ամեն օր հեռագրերով ու նամակներով տեղեկացվում էր իրավիճակի մասին: Այս պայմաններում, ազգային խորհուրդը նույնիսկ ցանկալի էր համարում անգլիական առաքելության կողմից Ղարաբաղի կառավարումը: Խորհուրդը տեղեկացնում էր նաև, որ «հունվարի 5-ից սկսած Ադրբեջանի զորքերը,- ասվում էր խորհրդի հաղորդագրության մեջ,- Ղարաբաղում մնացած թուրքերի և զանազան մահմեդական խմբերի հետ ռազմական շտաբ են կազմել Աղդամի մոտ և տաճիկ սպաների գլխավորությամբ մեծ քանակությամբ ռազմամթերք, թնդանոթներ ու գնդացիրներ են ձեռք բերել: Մի քանի հազար հոգուց բաղկացած զորաջոկատը մտնելով Ջաբուղի ձորը, կրկին վերագրավել է անընդունելի նոր զորախումբ է ուղարկվել Խանքենդի ուղղությամբ, գրավված է Ասկերանը: Ադրբեջանի իշխանությունները Ղարաբաղը շրջապատել են ճակատից և թիկունքից»[2]:

Այս տեսակետից խորհրդի եզրակացությունը թեպետ փոքր ինչ հուսահատական, սակայն բավականին իրատեսական էր. «լսելով անգլիացիներին և քայլեր չձեռնարկելով պաշտպանության ուղղությամբ, սարսափելի վիճակ է ստեղծվում Ղարաբաղի հայության համար կամ այլ խոսքով ասած, մենք մեր ձեռքով փորում ենք Ղարաբաղի հայության գերեզմանը»[3]: Այնուհանդերձ, Ղարաբաղի Ազգային խորհուրդը լիազորում է Աշոտ Մելիք-Հովսեփյանին և Գր. Խաչիյանին՝ Բաքվի ազգային խորհրդին, Բիչերախովին, ինչպես նաև դաշնակից պետությունների շտաբին հաղորդելու Ղարաբաղի հայության ծանր վիճակի մասին և նրանցից օգնություն խնդրելու համար:

Ղարաբաղի պաշտպանության կազմակերպման համար 1919 թ.

[1] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003, էջ 190-191:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:



հունվարի 24-ին գումարվում է զինվորական միության ընդհանուր ժողով: Մտքերի փոխանակումից հետո, կայացվում է հետևյալ որոշումը. «ենթարկվել բացառապես ժամանակավոր ազգային խորհրդին, վերջինիս օժանդակել ամեն հարցում, հնարավորինս շուտ հրավիրել Ղարաբաղի 4-րդ համագումարը, օրինական ձևով ընտրել ազգային խորհուրդ, որին էլ կճանաչենք որպես միակ ղեկավար մարմին»[1]: Ժողովը միաժամանակ որոշում է երկու սպաների՝ Արտեմ Պետրոսյանին և Միքայել Ալավերդյանին ուղարկել Բաքու՝ Բագրատունուն ներկայանալու և նրանից օգնություն խնդրելու համար:

Հայերի հաստատակամությունից անհանգստացած, հունվարի վերջին, Շուշիի բրիտանական ներկայացուցիչ կապիտան Սերրայդը Ազգային Խորհրդին հրավիրում է իր մոտ՝ Ղարաբաղի հարցը քննարկելու համար: Հարցի պատմությունից անտեղյակ, անգլիացի սպան և այն էլ ադրբեջանցիների անունից, հայտարարում է, թե իբր նրանք են Զանգեզուրի և Ղարաբաղի տեղաբնիկները, ուստի պետք է ենթարկվել Ադրբեջանի իշխանությանը: Հայ պատվիրակները ստիպված են լինում լուսավորել օտարազգի սպային և պատմական ակնարկով վերջինիս ներկայացնում են Արցախ երկրամասի պատմությունը: Դրանից հետո կապիտան Սերրայդը, ի պատիվ իրեն, հայտարարում է, որ «Խոսրով բեկ Սուլթանովը վատ մարդ է, որ համալսարանական կրթություն ստացած և բժիշկ լինելով հանդերձ, իրեն սուտ տեղեկություններ է հայտնել Ղարաբաղի մասին, թե այն իբր թուրքական հող է և, որ հայերը եկվոր են»[2]: Այսքանից հետո, բնականաբար, պարզ էր, որ Սուլթանովը ամեն տեսակ խարդավանքների միջոցով ցանկանում էր շեղել անգլիացիներին իրենց առաքելությունից, ավելին, անվստահության մթնոլորտ ստեղծել հայերի հանդեպ:

Տեղեկանալով ստեղծված կացության մասին և սատար կանգնելով երկրամասերի հայության գոյապայքարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1919 թ. հունվարի 21-ին որոշում է ընդունում Զանգեզուրի և Ղարաբաղի կառավարման սկզբունքների մասին: Ծրագիրը մշակվել էր ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա. Խատիսյանի մասնակցությամբ: Այն բաղկացած էր

[1] **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 330:
[2] Նույն տեղում, էջ 331:

16 կետից, որից առաջինը ազդարարում էր, որ Զանգեզուրը և Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս համարվում և կառավարվելու են բացառապես նրա օրենքներով: Ընդհանուր վարչության ղեկավարությունը հանձնվում էր «Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհրդին»: Այնուհետև՝ անհրաժեշտ գումարներ էին տրամադրվում Հայաստանի Հանրապետության գանձարանից. ընթացիկ ծախսերի համար հատկացվում էր 400 000 ռուբլի, կառավարությունը նշանակելու էր պետական կոմիսար, որը վերահսկողություն էր հաստատելու շրջանային խորհրդի գործունեության վրա: Պետական կոմիսարի ընտրությունը կատարվելու էր նախարար-նախագահի, ներքին գործերի և զինվորական նախարարների մասնակցությամբ: Կառավարության այս քայլը թեև ուշացած կարելի էր համարել, սակայն նրա նշանակությունը մեծ էր, հենց միայն Զանգեզուրի և Ղարաբաղի պաշտպանունակության ոգին բարձրացնելու տեսակետից:

Այդ ընթացքում Հայաստանի Հանրապետության համար կարևոր երկու նշանակալից իրադարձություններ ևս տեղի ունեցան. դրանցից առաջինը 1919 թ. հունվարի 8-ին Կարսի հանձնման մասին ստորագրված համաձայնությունն էր, (բրիտանացիները Կարսի շրջանը ամբողջովին Հայաստանին հանձնեցին ապրիլի 19-ին՝ Ա. Ղ.), երկրորդը՝ Նախիջևանի գրավումը[1]:

Իրադարձություններն Ղարաբաղ-Զանգեզուրում շիկանում են հատկապես հունվար ամսվա վերջին, երբ ադրբեջանական կառավարությունը կանոնավոր զորքեր է ուղարկում այն հայկական շրջանները, որոնք նախկինում գրավված էին եղել թուրքական զորքերի կողմից: Ինչպես պարզվում է, Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդից Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված զեկուցագրից. «թնդանոթներով և գնդացիրներով զինված» ադրբեջանցիները կենտրոնանում են Խանքենդում, մի քանի հարյուրյակ էլ ամրանում են Ասկերանում: Մեր կողմից ուղարկված բազում զգուշացումներին ի պատասխան,- ասվում էր զեկուցագրում,-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 39, թթ. 1-4: **Է. Զոհրաբյան,** Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբերի – 1920 թ. ապրիլ), Երևան, 2002, էջ 72:



բրիտանական միսիան միայն հաղորդում է, թե այդ տարածքները պատկանում են Ադրբեջանին»[1]:

Բրիտանական աջակցությունից ոգևորված, հունվարի 15-ին Աղդամում կայանում է մահմեդականների համագումար, որտեղ քննարկվում է նաև Ղարաբաղի հայերի անհնազանդության հարցը: Առաջարկները հիմնականում երկու հարցի շուրջ էին. լիովին զինաթափել հայերին և անվերապահ ենթարկվել Ադրբեջանին: Վերջիններս նույնիսկ իրենց մոտ են պահում Քյազիմ բեկ անունով թուրք մի սպայի՝ հայերի դեմ զորքերը գլխավորելու և գարնանը Անդրանիկի դեմ դուրս գալու համար: Մեծ քանակությամբ զորքեր են կուտակվում Ջաբուղի շրջանում:

Ղարաբաղի Ազգային Խորհուրդը հաշվի առնելով իրադրության աստիճանական բարդացումը, Հայաստանի կառավարությունից օգնություն է խնդրում. «Արարատյան Հանրապետությունը կարող է և պետք է իր սահմանների պաշտպանության համար Զանգեզուր ուղարկի մի գունդ, որը նեցուկ կհանդիսանա նաև մեզ համար, երբ վտանգ կառաջանա մեր ֆիզիկական գոյության համար: Հարկավոր է ուղարկել նաև ռազմամթերք և դրամ, քանի որ մենք կտրված և շրջապատված ենք բոլոր կողմերից: Եթե Զանգեզուրում չլիներ գեներալ Անդրանիկը, ապա հավանաբար Ղարաբաղն այսօր իրենից ավերակների կույտ կներկայացներ: Եթե գարունը բացվելուն պես գեներալ Անդրանիկը կուղևորվի Նախիջևան կամ արևմտյան Հայաստան, ինչպես առաջարկել էր անգլիական միսիան, ապա մեր դրությունը բոլորովին անելանելի կդառնա: Ուստի Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհուրդը խնդրանքով դիմում է Ձեզ Ղարաբաղ ուղարկել զինամթերք և գումար, որի միջոցով հնարավոր կլինի պահպանել թե մեր ֆիզիկական գոյությունը և թե անկախությունը»,- ասվում էր խնդրագրում[2]:

Իսկապես, հենց այդ օրերին Ադրբեջանական զորքերը, թուրք ասկյարները և զինված խուժանը թուրք սպաների առաջնորդությամբ մի քանի հազար հոգով Ջաբուղի կիրճի գրավումից հետո սկսում են հարձակումը Ջիբրայիլի (Կարյագինոյի) գավառի հայկական գյուղերի վրա: Վտանգն ավելի է սաստկանում, երբ ադրբեջանական իշխանությունները Ջիբրայիլի հայ ազգաբնակչությանը են-

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., նշվ. աշխ., էջ 68.
[2] Նույն տեղում, էջ 72:

թարկվելու և զենքերը հանձնելու վերջնագիր են ներկայացնում[1]:

Այս ընթացքում անգլիացիները շարունակում էին օժանդակել ադրբեջանցիներին: Սուլթանովի նահանգապետությունը ընդունելու համար Թոմսոնը հրահանգում է Շուշիի ներկայացուցիչներին (այս մասին վկայում է նաև կապիտան Սերրայդը) ճնշում գործադրել հայերի վրա: Կապիտան Սերրայդը տեղեկանալով ադրբեջանցիների կեղծիքին (Ղարաբաղի ոչ հայկականության մասին է խոսքը՝ Ա. Ղ.), փորձում է կապերի մեջ մտնել հայերի հետ: Սակայն շուտով նա ետ է կանչվում Բաքու, քանի որ Սուլթանովը բողոքել էր անգլիացիներին Սերրայդի այսպես ասած հայամետ պահվածքի և նրանց վրա ճնշում չգործադրելու համար[2]: Հետագայում նրա փոխարեն Շուշի է ուղարկվում անգլիական մեկ այլ սպա՝ Մոնկ Մեսոնը: Բնական է, որ այս քայլերը կատարվեցին Ղարաբաղի հայերի վրա ճնշումը ուժեղացնելու համար: Իսկ նպատակը մեկն էր. ստիպել նրանց ընդունելու Ադրբեջանի իշխանությունը:

Բնականաբար, Հայաստանի կառավարությունը չէր կարող չարձագանքել իրադարձությունների այսպիսի զարգացմանը: Հունվարի 26-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը բողոք է ներկայացնում Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությանն՝ իրեն պատկանող տարածքներում գեներալ-նահանգապետություն հիմնելու դեմ: Հունվարի 31-ին Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ադիլխան Զիաթխանովը պատասխան հայտարարությամբ Զանգեզուրի, Ջևանշիրի, Շուշիի և Ջեբրայիլի շրջանները համարում է Ադրբեջանի անբաժանելի մաս:

Արցախահայերը փորձում են ելք գտնել ստեղծված ծանր կացությունից: Բանը հասնում է նրան, որ 1919 թ. փետրվարի 4-ին բրիտանական առաքելությանն ուղղված դիմումում նույնիսկ առաջարկ է արվում Ղարաբաղում մտցնել ինքնակառավարում՝ բրիտանացիների հսկողության ներքո: Ազգային խորհրդի կողմից ներկայացված այս առաջարկը հիմնավորվում էր նրանով, որ «ադրբեջանական կառավարությունը իր զորքերը մտցրել է մեզ համար ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող՝ Ասկերան, Խանքենդ, Զաբուղ, Շուշի և Կարյագինո բնակավայրերը: Ղարաբաղը, որտեղ հայերը կազմում են 75-90% գերակշիռ մեծամաս-

[1] Յառաջ, 1919, 29 հունվար, համար 3, էջ 2:
[2] Տե՛ս, **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 335-337:



նություն, անհրաժեշտ է գտնում մտցնել ինքնակառավարում բրիտանական հսկողության ներքո»[1]: Սակայն այս դիմումը ևս մյուսների նման բրիտանացիների կողմից մնում է անպատասխան:

1919 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին, Հայաստանի հանրապետությունը իրադրությունն իր ձեռքում պահելու համար նշանակում է Զանգեզուր–Ղարաբաղի իր կոմիսարին: Հունվարի 30-ի կոմիսարի պաշտոնում նշանակվում է շտաբս կապիտան Արսեն Շահմազյանը[2]:

Փետրվարի 10-ին Շուշիի թեմական դպրոցի սրահում տեղի է ունենում Ղարաբաղի հայության 4-րդ համագումարը: Այդ նույն ժամանակ բանակցությունների համար Շուշի է ժամանում նաև Խոսրով բեկ Սուլթանովը՝ պահանջելով իր մոտ ներկայանալ Գ. Մ. Շահնազարյանին, Վահան եպիսկոպոսին, Ե. Իշխանյանին և Գ. Մանասբեկյանին:

Համագումարի նախագահ է ընտրվում Ասլան Շահնազարյանը, որի աշխատանքներին մասնակցում էր 84 պատգամավոր: Օրակարգը կազմված էր 8 կետից, որոնց մեջ առանձնանում էին ինքնապաշտպանության կազմակերպման, Ղարաբաղը Հայաստանին միացնելու, հայ-թուրքական հարաբերությունների և այլ հարցեր: Համագումարը իր աշխատանքները շարունակեց 10 օր և այդ ընթացքում ընդունեց մի շարք կարևոր որոշումներ: Առաջիններից մեկը ընդունվում է Ղարաբաղի ժամանակավոր կառավարման նախագիծը, որն իր մեջ ներառնում է հետևյալ դրույթները:

«Առաջիկայում, մինչև խաղաղության կոնֆերանսի որոշումը, հայկական Ղարաբաղը ղեկավարվելու է ներքոհիշյալ կանոնների հիման վրա:

1. Հայկական Ղարաբաղ է կոչվում Շուշիի, Կարյագինոյի, Ջիվանշիրի (Ջրաբերդ) և Ելեզավետպոլի (Գյուլիստան) գավառների լեռնային գոտիները:
   Զանգեզուրի գավառը կառավարվում է առանձին:
2. Կառավարումը կենտրոնանում է մարզային խորհրդի ձեռքում, որի նստավայրը լինելու է Շուշին:
3. Խորհուրդը կազմվելու է 7 հոգուց (մեկական ներկայացուցիչ

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., նշվ. աշխ., էջ 74.
[2] Խորհրդային Ղարաբաղ, 4 հոկտեմբերի, 1989, համար 226, էջ 3:

քաղաքից, Խաչենից, Դիզակից, Ջրաշենից, Ելիզավետպոլից, երկուսը՝ Վարանդայից) և երեք մահմեդականներից:

4. Շուշիի բրիտանական ներկայացուցչության ղեկավարը ընդգրկվելու է խորհրդի կազմի մեջ[1]: Մյուս 6 կետերում կանոնակարգվում էին ղեկավար մարմինների նշանակման և օրենսդրական բնույթի այլ հարցեր:

Ղարաբաղի հայության IV համագումարը քննարկեց նաև Ադրբեջանի կառավարության փետրվարի 19-ի պատասխան նոտան Հայաստանի կառավարությանը և անհամաձայնություն հայտնեց Ադրբեջանի կառավարության նկրտումների հանդեպ, հատկապես՝ Հայկական Ղարաբաղը իր տարածք համարելը: Համագումարի հայտարարության մեջ ասվում էր. «Կանգնած լինելով Ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա Ղարաբաղի հայ բնակչությունը հարգանքով է վերաբերվում հարևան ժողովրդի ինքնորոշման իրավունքին և միաժամանակ կտրուկ բողոքում է Ադրբեջանի կառավարության փորձերի դեմ, որն ուղղված է հայկական Ղարաբաղի ինքնորոշման ձախողմանը և որը երբեք չի ընդունել և չի ընդունի ադրբեջանական իշխանությունը: Համագումարը պնդում է իր իրավունքների պաշտպանությունը, ինչպես Կովկասում դաշնակիցների ներկայացուցիչների առջև, այնպես էլ Խաղաղության կոնֆերանսում»[2]: Համագումարի ավարտին ընտրվում է Ղարաբաղի Ազգային Խորհուրդ՝ բաղկացած վեց անդամներից և երկու փոխանդամներից:

Փետրվարի 20-ին Շուշիի բրիտանական ներկայացուցիչ Մոնկ Մեսոնը իր մոտ է հրավիրում Ե. Իշխանյանին և պահանջում, որ համագումարում չհնչեն հակաանգլիական ելույթներ: Փաստ էր, որ Մոնկ Մեսոնը անընդհատ ստանում էր հակահայկական ստահոդ լուրեր:

Այդ ընթացքում Սուլթանովը իր մոտ է կանչում հայկական մասի վարչակազմի և քաղաքի դպրոցների ուսուցիչներին, որպեսզի նրանք ստորագրություն տան Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու համար: Համագումարը այս անձանց ևս արգելում է որևէ հարաբերություն ունենալ ադրբեջանական իշխանությունների հետ:

Այս ամենից գազազած, Սուլթանովը փակել է տալիս հայկական մասում գտնվող գանձարանը և արգելում որևէ դրամական գործա-

[1] Խորհրդային Ղարաբաղ, 6 հոկտեմբերի, 1989, համար 228, էջ 3:
[2] Нагорный Карабах в 1918-1923 гг., նշվ. աշխ., էջ 80.



ռություն կատարել[1]: Սպասելով համագումարի աշխատանքների ավարտին՝ Սուլթանովը փետրվարի 21-ին մեկնում է Զևանշիր, իսկ ապա փետրվարի 25-ին Ադրբեջանի կառավարությանը հղած իր զեկուցագրում բացահայտ դժգոհություն է հայտնում հայկական Ղարաբաղի անհնազանդության վերաբերյալ: Սուլթանովը միաժամանակ հայտնում է այն միտքը, թե «հայերի հետ համաձայնության ճանապարհը ես տեսնում եմ միայն անգլիացիների հետ համագործակցելու և հայերի վրա ունեցած նրանց ազդեցության մեջ: Իմ այն հարցին, թե ինչ են նրանք ցանկանում, հայերը պատասխանեցին, թե ուզում են միանալ Ռուսաստանին: Ճշտումից հետո պարզվեց, որ դա վերածնված Ռուսաստանը պետք է լինի: Այս ամենը բերեց անգլիացիների՝ հայերի նկատմամբ անվստահության խորացման: Գեներալ-նահանգապետի իշխանությունը չընդունելուց և բրիտանական ծրագրերը մերժելուց հետո մայորը եղավ ինձ մոտ և հայտարարեց, որ ինքը համոզվել է նրանում, թե հայ-դաշնակները խաղաղություն չեն ցանկանում և որպես «անհանգիստ տարր», պետք է ձերբակալվեն և ուղարկվեն Ղարաբաղի սահմանից դուրս, իսկ ադրբեջանական վարչակազմը պետք է ընդունվի ամենուր, չնայած դրա համար անհրաժեշտություն կզգացվի օգտագործել անգլիական ռազմական ուժերը, որի մասին որոշակիորեն հայտարարել է գեներալ Թոմսոնը:

Այսպիսով,- շարունակում է իր տեսակետները ներկայացնել Սուլթանովը,- առաջին կարևոր խնդիրը անգլիացիների վստահությունը ստանալն է և դրան հակառակ, իմ կարծիքով, նրանց մեջ անվստահության ուժեղացումը հայերի նկատմամբ: Քայլ առ քայլ, առանց ֆիզիկական ուժի կիրառման, ես կարող եմ ստիպել հայերին ճանաչել ադրբեջանական իշխանությունը: Ուստի, անհրաժեշտ է մեծացնել 90% կազմող հայ աղքատ բնակչության անվստահությունը իրենց ղեկավարների նկատմամբ: Միաժամանակ պետք է գործել անգլիացիների միջոցով՝ հայկական ղեկավարներին ձերբակալելու և արտաքսելու համար: Կարծում եմ, առանց արտակարգ միջոցների կարելի է չեզոքացնել Ղարաբաղի հարցը: Մարտի 5-10-ի ընթացքում Անդրանիկը կթողնի Ղարաբաղի տարածքը»[2]:

Խիստ ուշագրավ է նաև 1919 թ. փետրվարի 26-ին ՀՀ արտաքին

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 24:
[2] Нагорный Карабах в 1918-1923 гг., նշվ. աշխ., էջ 89-90:

գործերի նախարարությանն ուղղված Բաքվի Ազգային խորհրդի զեկուցագիրը, ուր որոշակիորեն նշվում էր, որ Խան - Խոյսկու կառավարության նպատակն է «չսպասել խաղաղության կոնֆերանսին և նվաճել Ղարաբաղը»: Այդ նպատակին է ծառայում Սուլթանովի գեներալ-նահանգապետության ստեղծումը, որը պետք է դիտել Ղարաբաղում հայության դեմ պատերազմի հայտարարում»[1]:

Փետրվարի երկրորդ կեսին բրիտանացիները ուժեղացնում են ճնշումը հայերի վրա: Սուլթանովի իշխանությունը ճանաչելու պահանջով փետրվարի 24-ին ՀՀ արտաքին գործերի նախարարին հատուկ գրություն է ուղարկում Երևանում բրիտանական միսիայի ներկայացուցիչ գեներալ Ասսերը: Փետրվարի 18-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությունը Սուլթանովի նշանակման դեմ նամակով բողոք է հղում Ֆորեստիե Ուոքերին: Ճնշումների դրսևորման մի նոր ձև էր նաև մայոր Մոնկ Մեսոնի Ազգային խորհրդին արված առաջարկությունը, որով «ճշտվում են» Ղարաբաղի հայության հարաբերությունները Ադրբեջանի նկատմամբ: Այն ներկայացված էր «Ղարաբաղ» վերտառությամբ 7 կետից կազմված բաժնում: Դրան հակակշիռ, Ազգային խորհուրդը Թոմսոնից պահանջում է հայկական Ղարաբաղը կառավարել խառը հանձնաժողովի միջոցով[2]:

Համադրելով մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերը, կարծում եմ, որ բրիտանացիները չէին վստահում հայերին ռուսների հետ ունեցած կապերի պատճառով: Դա վերաբերում էր ինչպես հարավային Ռուսաստանի, այնպես էլ բոլշևիկների հետ հայերի ունեցած կապերին: Հայերի դեմ անգլիացիների մոտ անընդհատ բամբասում էին նաև վրացիները, թե՝ «հայերը ցանկանում են ռուսների վերադարձը Կովկաս և չեն վստահում անգլիացիներին»[3]: Այս ամենի մասին ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված գրությունում իր մտահոգությունն էր հայտնում Վրաստանում Հայաստանի ներկայացուցչի խորհրդական Ռ. Թումանյանը:

Փետրվարի 28-ին Շուշիի անգլիական միսիան Ազգային խորհրդից պահանջում է ընդունել իրենց կողմից նշանակած Սուլթանովի գեներալ-նահանգապետությունը: Ազգային խորհուրդն իր հերթին հանդես է գալիս հայտարարությամբ, որում մասնավորապես ասվում էր. «Հայկական Ղարաբաղը չի կարող հաշտվել նման փաստի հետ, որովհետև կախումը Ադրբեջանի կառավարությունից, ինչպիսի ձևով էլ այն արտահայտվի, Ղարաբաղի հայությունը համարում է անընդունելի: Հայկական Ղարաբաղը ամբողջ աշխարհին ցույց է տվել, որ նա իր սահմաններում չի ճանաչել և չի ճանաչում Ադրբեջանի իշխանությունը, ինչը վերջերս հաստատվեց Ղարաբաղի համագումարում: Ելնելով նրանից, որ հայկական Ղարաբաղը ճանաչված է բրիտանական հրամանատարության կողմից մի տարածք, որը մինչև խաղաղության կոնֆերանսի որոշումը չպետք է ենթարկվի որևէ պետության, հետևապես և Ադրբեջանին, ուստի Ազգային խորհուրդը հայկական Ղարաբաղի կառավարման միակ ընդունելի ձևը համարում է անգլիական գեներալ- նահանգապետի նշանակումը, որի մասին և խնդրվում է հաղորդել անգլիական բարձր հրամանատարությանը»[1]: Ադրբեջանի իշխանությունը ընդունելու պահանջով անգլիական միսիան դիմում է նաև հայկական զորամասերի հրամանատարներին, ինչին հետևում է վերջիններիս կտրուկ մերժումը:

Այս իրադարձություններից հետո, ադրբեջանական կողմը նախապատրաստություններ է տեսնում հարցը ռազմական ճանապարհով լուծելու համար: Սուլթանովը փետրվարի 21-ին մեկնում է Ջևանշիր զորահավաք կազմակերպելու համար: «Սուլթանովը նորանոր համալրումներ է ստանում, ապահովում է զորքերը զենքով և սննդամթերքով, ամրացնում է ռազմավարական կարևոր կետերը»,- ասվում էր զեկուցագրերից մեկում[2]:

1919 թ. մարտի 1-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական առաքելության զեկուցագրից պարզվում է, որ գեներալ Թոմսոնը տեղեկացված լինելով Ազգային խորհրդի գործունեության մասին, հայ պատվիրակներին հաղորդում է, որ մտադիր է հստակեցնել Ղարաբաղի հարաբերությունները Ադրբեջանի հետ: Փետրվարի վերջին գեներալ Թոմսոնը Ազգային խորհրդի անդամներին կանչում է Բաքու՝ իբր «բացատրություն տալու որոշ հարցերի մասին»[3]:

Բրիտանական սպառնալիքները և պահանջները հաջորդում էին մեկը մյուսին: Բնականաբար, Թոմսոնի կողմից խորհրդի անդամնե-

---

[1] Տե՛ս, Нагорный Карабах в 1918-1923 гг., նշվ. աշխ., էջ 91:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 29:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս 1, թթ. 35-36:

[1] Խորհրդային Ղարաբաղ, 10 նոյեմբեր, 1989 թ., համար 256, Հ. Թումյան, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ.:
[2] Г. Абрамян, Политика английских завоевателей по отношению к Арцаху (ноябрь 1918-август 1919 гг.), Ереван, 1989, стр. 5.
[3] **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 357:

րին Բաքու կանչելը առաջին հերթին նպատակ ուներ նախ ճնշում գործադրել նրանց վրա, ապա հեռացնել երկրամասից: Գիտակցելով այս ամենը, այնուամենայնիվ, Ղարաբաղի հայերը պատասխանում են, որ իրենց ներկայացուցիչներին կուղարկեն Բաքու: Դատելով ցուցակից, պատվիրակությունը բավականին ներկայացուցչական է եղել. այսպես, բանագնացների թվում էին.

Շուշու քաղաքապետ Գ. Շահնազարյանը,

Ազգային Խորհրդի անդամ Ա. Տեր-Միքայելյանը,

Չենախչի գյուղական համայնքի կոմիսար Ա. Թամասյանը,

Ազգային Խորհրդի գաղթականների բաժնի վարիչ Կ. Մինասբեկովը,

Վստահված ատենակալ Մ. Վարդապետյանը,

Մանկավարժական Խորհրդի նախագահ Մ. Ղուկասյանը և Ա. Տեր-Միքայելյանը[1]:

Մարտի 9-ի հատուկ գրությամբ, միաժամանակ տեղեկացվել էր, որ պատգամավորներին մինչև Բաքու կուղեկցի բրիտանական ներկայացուցիչը, իսկ մինչ այդ, Բաքվում էին արդեն Վահան եպիսկոպոսը և Ազգային Խորհրդի անդամ Բախատուրովը:

Ուշագրավ է, որ բրիտանական քաղաքականության մասին 1919 թ. մարտին ամբողջական զեկուցագիր է կազմում Հայաստանի արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանը և ուղարկում Փարիզի վեհաժողովի ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին: Վերջինս միանգամից իր մտահոգությունն էր հայտնել, թե բրիտանացիները հենց սկզբից չեն պահպանում նախօրոք ստորագրված համաձայնության կետերը և «բավական վարանոտ փութկոտությամբ տեղի տվեցին թուրքական «ճվճվոցներին»: Օսմանյան և Ադրբեջանի թուրք օֆիցերների ու ագիտատորների ձեռքով կազմակերպված տեղական «կառավարությունը»՝ «Շուրան», գրեթե ճանաչվեց բրիտանական նահանգապետի կողմից, իսկ մեր նահանգապետը իր պաշտոնյաներով ստիպված էր հեռանալ Կարսից,- ասվում է զեկուցագրում»[2]: Արտաքին գործերի նախարարը միաժամանակ հաղորդում էր, որ բրիտանական զինվորական նահանգապետը իրենց ոչնչով աջակցություն ցույց չի տալիս: Զեկուցագրում նշվում է նաև, որ այս ամենը վատ հետևանքներ են

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 21:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 43, թ. 1:



ունենում. թուրքերը դրանից ոգևորվում են. բավական է նրանք որևէ հակառակություն ու բողոք ցուցադրեն Հայաստանի կառավարության դեմ, անգլիացիներն անմիջապես հանդես են գալիս նրանց պաշտպանությամբ. «Մեր զորամասերը առաջ էին ընթանում դեպի Շարուր, Նախիջևան, Ջուլֆա՝ օսմանյան զորքերից դատարկած վայրերը գրավելու: Թուրքերը դիմադրում էին. հայ-թաթար բանակցության արդյունքում թուրք խաղաղ ժողովուրդը պատրաստվում էր հաշտ ու խաղաղ ընդունել հայոց զորքին: Սակայն վրա հասած անգլիական կապիտան Լոուրենը անցավ Նախիջևան՝ իբր տեսնելու, թե ինչ կա - չկա, հետո նշանակվեց Նախիջևանի բրիտանական զորակայանի նահանգապետ, որից հետո սակայն, թուրքերը եկան Երևան՝ պահանջելու, որ մեր զորքերը ետ քաշենք նույնիսկ Դավալուից հյուսիս: Անգլիացիները նույն խաղը խաղալու պատրաստություններ են տեսնում նաև Սուրմալուում, - ասվում էր այնուհետև զեկուցագրում: - Բրիտանական հովանավորության տակ Ադրբեջանի գեներալ-նահանգապետությանն է կցվում Ղարաբաղը: Այսպիսով,- եզրակացնում էր այնուհետև զեկուցագրի հեղինակը,- Անդրկովկասի թուրքերը բրիտանական զորահրամանատարության օրոք ավելի նպաստավոր պայմանների մեջ են գտնվում, քան օսմանագերմանական հաղթական օկուպացիայի ժամանակ»[1]:

Տիգրանյանը հաղորդում էր նաև, որ անգլիացին չի հավատում հային՝ համարելով նրան անուղղելի ռուսասեր: Դրա վկայությունն էր նաև Ֆորեստիե Ուոքերի պահանջով Դենիկինի ներկայացուցչի հեռացումը Եկատերինոդար: «Անգլիան չի ուզում հենվել որևէ հայ ուժի վրա, որովհետև իր կարծիքով, հայն ավելի ռուս է, քան ինքը ռուսը և չի կարելի հենվել հայի վրա, երբ Ռուսիայի դեմ որևէ բան է ձեռնարկվում: Բանը հասավ նրան, որ բրիտանական հրամանատարությունը արգելեց մեզ գրավել ռազմաթերքի տեսակետից Անդրկովկասում որոշ ստրատեգիական կարևոր կետեր և այդ բոլորը մնացին թուրքերի ձեռքում»[2]:

Հարկ է նշել, որ Հայաստանում բրիտանական քաղաքականությունը բնութագրող նման բովանդակության փաստաթղթերը արխիվային ֆոնդերում շատ են: Ասենք, հենց թեկուզ այս մեկը՝ անգլիական կառավարությանն ուղղված գեներալ Թոմսոնի զեկուցագրում

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 43, թ 1:
[2] Նույն տեղում:

ասվում է, թե Հայաստանի և հայ ժողովրդի համար գլխավոր չարիք շարունակում է մնալ «Դաշնակցություն» կուսակցությունը և քանի դեռ իշխանության ղեկին այդ կուսակցությունն է, դժվար է Հայաստանում օրինական պետականաշինություն և խաղաղ գոյակցություն հուսալ հարևան ազգերի հետ: Դաշնակցության տեսքով ներկայացված իշխանության ճանաչումը Հայաստանում կասկած է հարուցում: Թեպետ ոչ այսպես կտրուկ, սակայն գրեթե այսպիսի մտքեր է հայտնել Ուոքերը Քաջազնունուն: Ընդ որում, Թոմսոնի հաղորդմամբ, նման դիրքորոշում ունեն նաև ամերիկացիները. ամերիկյան ներկայացուցիչ Արոլը բազմիցս իր դժգոհությունն է հայտնել հայ մի շարք գործիչների վերաբերյալ[1]:

Բրիտանացիները մշտապես առաջնորդվում էին իրենց շահերով և այդ քաղաքականությունից փոքր շեղումն անգամ և հրահանգների չկատարումը դժգոհություն էր առաջացնում նրանց մոտ: Ավելին, նրանք գտնում էին, որ հայերը դեռևս չեն կարող ղեկավարել մահմեդական բնակչությամբ տարածքները: Հայությանը մնում էր մխիթարվել միայն նրանով, որ օրհասական վիճակում գտնվող հայ ժողովրդին դաշնակից երկրների օգնությունն ուղղակի փրկություն է...

Ճիշտ է, բրիտանական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ փոքր-ինչ փոխվեց 1919 թ. գարնան վերջին, սակայն Զանգեզուրի և Ղարաբաղի հարցում այն շարունակում էր մնալ նույնը: Օգտվելով դրանից՝ ադրբեջանական իշխանությունները փորձում էին իրագործել իրենց ընձեռված սուղ ժամանակահատվածը Ղարաբաղի հարցը իրենց օգտին լուծելու համար: Այսպես, մարտի 17-ին Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդ ուղարկած Ազգային Խորհրդի գրությունում հաստատվում է, որ «պետք է ամեն ինչ անել ընդհարումից խուսափելու համար... Հայկական Ղարաբաղը կարող է դուրս բերել 10-12 հազար զինվոր, սակայն մենք չունենք ռազմական ամուր կազմակերպվածություն, գումար, ռազմական հեղինակավոր ղեկավարներ և ամենակարևորը՝ ունենք բավականին քիչ ռազմամթերք, այն դեպքում, երբ գլխավոր ստրատեգիական կետերը զբաղեցված են ադրբեջանական զորքերով»[2]: Հատկանշական է, որ այս շրջանում բավականին հաճախանում են օգնության խնդրանքով Հայաստանի Հանրապետության

[1] Տե՛ս, Г. Г. Махмурян, նշվ. աշխ., էջ 78:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 53:



կառավարություն ուղարկված դիմումները: Վերոհիշյալ գրությունում օրինակ, Հայաստանի Հանրապետության կառավարությանը տեղեկացվում էր, որ Ղարաբաղը գրավելուց հետո ադրբեջանցիները պատրաստվում են գրավել Նախիջևանը, Շարուրը, ապա և Սուրմալուն: Ադրբեջանում ռազմական ինտենսիվ պատրաստություններ էին ընթանում: Այս ամենի մասին Ղարաբաղի Ազգային Խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը մանրամասն հաղորդում է նահանգապետ Ա. Շահմազյանին, վերջինիս միաժամանակ հորդորելով հետևողական և վճռական լինել Ղարաբաղի հարցում. «Ղարաբաղի հայությունը վերջին երեք ամիսների ընթացքում իր հայացքն ուղղել է Արարատյան Հանրապետությանը՝ հուսալով, որ վերջինս լուրջ քայլեր կձեռնարկի իր ազդեցությունը Ղարաբաղի վրա որքան հնարավոր է արագ տարածելու ուղղությամբ: Սակայն մեր հույսերը ինչպես երևում է, չեն իրականանալու, քանի որ Արարատյան հանրապետությունը բոլորովին մոռացության է տվել Ղարաբաղը: Նա չափազանց ուշացել է Ղարաբաղում և Զանգեզուրում գեներալ-կոմիսարիատի նշանակման խնդրում և այդ ուշացումը բավականին վնասել է գործին: Դրանով հնարավորություն տրվեց Ադրբեջանի կառավարությանը, որը քնած չէր և նկատելով մեր թուլությունը, հունվարի վերջին վայրենի դիվիզիայի 4 հարյուրյակի միջոցով մի գիշերվա ընթացքում տիրացավ Խանքենդին: Մի բան մեզ համար պարզ դարձավ, որ Ադրբեջանը ցանկացած հարմար առիթ օգտագործում է Ղարաբաղին տիրանալու համար»[1]: Շարունակելով շարադրել իր մտահոգությունները՝ Իշխանյանը պնդում է, որ գեներալ-մայոր Անդրանիկին պետք է համոզել չհեռանալ Զանգեզուրից, այլ «բոլոր հնարավոր միջոցները գործադրել, որպեսզի նա անցնի Ղարաբաղ՝ ուշադրություն չդարձնելով անգլիական միսիայի հարկադրանքներին: Մենք համոզված ենք, որ եթե Անդրանիկը գա Ղարաբաղ, անգլիական միսիան չի հարկադրի նրան հեռանալ մեր շրջանից: Քանի դեռ ուշ չէ, պետք է ուղարկել մի հմուտ, եթե ոչ գեներալ, ապա գոնե գնդապետ, որը կկարողանա սանձել բոլորին: Համոզված եղեք, որ առանց այդ ղեկավար ուժի, անհնար կլինի ի մի բերել գործող բոլոր զինվորական ուժերը»[2]:

Ազգային Խորհրդի նախագահը միաժամանակ անհրաժեշտ էր

[1] Նույն տեղում, թ. 57:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 57:

համարում օր առաջ մի գունդ ուղարկել Զանգեզուրի գավառ: Հատկապես ուշագրավ է զեկուցագրի հետևյալ հատվածը. «Հայաստանի Հանրապետությունը պետք է համոզված լինի, որ եթե խաղաղարար կոնֆերանսում Ղարաբաղի հարցը լուծվի հօգուտ հանրապետության, ապա Ադրբեջանը չի հանդուրժելու և ամեն կերպ աշխատելու է հակամարտություն ստեղծել: Իսկ եթե այսուհետ Հայաստանի Հանրապետությունը շարունակի զաքարեական լռություն պահպանել, ապա Ղարաբաղի հայությունը դա համարելու է Ղարաբաղի հայության դեմ ուղղված դավաճանական քայլ»,- ասվում էր զեկուցագրում[1]:

Ղարաբաղի ազգային խորհրդի նախագահի մտավախությունն, իհարկե, անտեղի չէր. Ադրբեջանն իսկական պատերազմի էր նախապատրաստվում Ղարաբաղի դեմ: Սկզբում նրանք փորձ են կատարում իրենց վարչական նշանակումներով, այսպես ասած, «խաղաղ միջոցներով» տիրանալ Ղարաբաղին: Սակայն մյուս կողմից, գեներալ-նահանգապետին շնորհել էր առանձնահատուկ լիազորություններ:

Մարտի 19-ին հույժ գաղտնի հաղորդագրությամբ ադրբեջանցիների այս քայլերի մասին գեներալ Բագրատունին տեղեկացնում է Հայաստանի կառավարության նախագահին, ռազմական նախարարին և գեներալ Սիլիկովին: Ելնելով ստեղծված իրավիճակից և դիմելով կառավարությանը, գեներալ Բագրատունին գտնում էր, որ «հարկավոր է ակտիվ միջոցներ կիրառել՝ Ղարաբաղի հայաբնակ հատվածներում հայկական կառավարում մտցնելու համար: Խնդիրը խիստ անհետաձգելի է, չպետք է կորցնել և ոչ մի ժամ»[2]: Անհրաժեշտ է համարվում նաև այնտեղ գործուղել մարդկանց, որոնք պետք է հանդես գային իրենց անունից և գործեին անաղմուկ: Իր կողմից, գեներալ Բագրատունին խոստանում էր Բաքվից հեռացնել այնտեղ գտնվող 8-10 հազար թուրք զինվորներին, այլապես մուսավաթականների հետ նրանց միանալու պարագայում իրավիճակն ավելի կբարդանար:

Հայաստանի կառավարությունը Զանգեզուր է ուղարկում մոտ երկու տասնյակ մարդ: Փորձ է կատարվում նաև դիվանագիտական ճանապարհով շտկել իրավիճակը. Տիգրանյանը համապատասխան

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թթ. 56-57:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 47:



պահանջագիր-նամակ է ուղարկում Երևանում տեղակայված բրիտանական ուժերի հրամանատար Տեմպըլեյին, սակայն՝ ապարդյուն: Այդ ընթացքում՝ մարտի 19-ին, Շուշիի անգլիական միսիան հաղորդում է Ազգային Խորհրդին, որպեսզի նոր ներկայացուցիչներ ուղարկեն Բաքու՝ Զանգեզուր - Ղարաբաղի նահանգապետության հարցի շուրջ բանակցելու համար. ընդ որում, պահանջը կոնկրետ էր՝ Ասլան Շահնազարյանին, Աշոտ Մելիք-Հովսեփյանին և Եղիշե Իշխանյանին, այսինքն՝ Ազգային Խորհրդի դիվանին: Ազգային Խորհուրդը քննարկելով այս հարցը, գալիս է եզրահանգման, որ Թոմսոնի այս պահանջը նպատակ ունի ուղղակի «աքսորել» Ղարաբաղի ղեկավարներին և ճնշում գործադրելով նրանց վրա՝ հաջողության հասնել: Բացի այդ, Ազգային Խորհուրդը համոզված էր, որ այդ ամենը Սուլթանովի սադրանքներն են: Մարտի 20-ի միջկուսակցական խորհրդակցությունից հետո որոշվում է Բաքու ուղարկել Ազգային Խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանին, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանին, փաստաբան Գրիգոր Մինասբեկյանին և թեմական դպրոցի ուսուցիչ Անուշավան Տեր-Միքայելյանին:

Թոմսոնի այս քայլերի մասին բողոք է ներկայացնում նախկին ռուսական միսիայի անդամ Միքայել Արզումանովը (ի դեպ, միսիան պետք է մեկներ Եվրոպա), որը փաստում է, որ անգլիացիները ևս դժգոհ են գեներալից: Արզումանովը միաժամանակ դժգոհել է, որ Ղարաբաղի հարցում Թոմսոնը «ոչինչ չի հասկանում և որ գործը նա կհասցնի արյունահեղության»[1]: Շատելվորդը նախ ծանոթացավ և զրուցեց Ղարաբաղի Ազգային Խորհրդի ղեկավարների հետ, իսկ Թոմսոնը 1919 թ. մարտի 25-ին ժամանելով Երևան, հանդիպում ունեցավ հանրապետության ղեկավարների հետ: Վերլուծելով Ղարաբաղի հարցը, գեներալը հաղորդում է, որ ադրբեջանական զորքի տեղաշարժերի մասին հայերին հասած տեղեկությունները չափազանցված են և որ Սուլթանովը պատասխանատու է միմիայն հաղորդակցության և մատակարարման ապահովման համար, ուստի վերջինս չի կարող գործել՝ առանց Մոնկ Մեսոնի հետ խորհրդակցելու: Թոմսոնն ամեն ինչում փորձում էր արդարացնել իր կատարած քայլերը, թեպետ կռահում էր, որ դրանք այնքան էլ համոզիչ չեն: Այնուհանդերձ, հանդիպումից հետո Թոմսոնը խոստանում է. «Հետևել, որ ադրբեջանական զորքերը չշարժվեն իրենց տեղերից և չմեծանա

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 68:

նրանց քանակը: Առանց Մոնկ Մեսոնի թույլտվության Սուլթանովին արգելվի ինչ որ բան ձեռնարկել: Կապի պահպանման համար Մոնկ Մեսոնի մոտ կնշանակվի հայկական կառավարության ներկայացուցիչը: Զանգեզուրը կկառավարվի այնպես, ինչպես մինչ այժմ՝ Ազգային Խորհրդի կողմից: Մտքերի փոխանակությունից հետո Հայաստանի կառավարությունը մնում էր իր տեսակետին. Ղարաբաղի լեռնային մասը կազմում է Հայաստանի անբաժանելի մասը և ներկա պահին կառավարվում է Ազգային Խորհրդի կողմից»[1]:

Դեպքերի ընթացքը չփոխվեց նաև այն ժամանակ, երբ Թոմսոնին փոխարինեց Շատելվորդը: Վերջինս ևս փորձում էր հայերի վրա ճնշում գործադրելով, հարցը լուծել հօգուտ Ադրբեջանի: 1919 թ. մարտի 26-ին նա հանդիպում է Ասլան Շահնազարյանի և Շուշու քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի հետ: Զրույցին մասնակցում էին նաև Մոնկ Մեսոնը և Կլատենբերգը: Անդրադառնալով Ղարաբաղի հարցին Շատելվորդը պնդում էր, որ «վիճելի խնդիրները պետք է որոշի կոնֆերանսը, իսկ ներկայումս Ձեզ (Ազգային Խորհրդի անդամների մասին է խոսքը՝ Ա. Ղ.) անհրաժեշտ է բացատրել ազգին, որ մինչ կոնֆերանսի ավարտը, այն պետք է ենթարկվի գեներալ-նահանգապետին»[2]: Ի վերջո, քննարկումները հանգում են նրան, որ Շատելվորդը ստիպում է խորհրդի անդամներին համոզելու ժողովրդին՝ ենթարկվելու Ադրբեջանի իշխանությանը, սպառնալով, որ «Ադրբեջանի և նրա գեներալ-նահանգապետի դեմ անհնազանդությունը կդիտվի որպես ելույթ Մեծ Բրիտանիայի դեմ, իսկ մենք այնքան ուժեղ ենք, որ կստիպենք Ձեզ ենթարկվել: Դուք ինքներդ եք պատասխանատու և մենք ձեզնից դա կպահանջենք»,- ասվում է Շատելվորդի վերջնագրում[3]:

Ղարաբաղի ներկայացուցիչները հրաժարվում են կատարել Շատելվորդի պահանջը, ինչին շուտով հետևում է վերջինիս արձագանքը. «Շուշու Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչները կանգնած են ծայրահեղ անհաշտ դիրքի վրա,- գրում է նա: - Նրանք չկարողացան որևէ հիմնավոր փաստարկ ներկայացնել դոկտոր Սուլթանովի անօրինական կամ դաժան գործողությունների դեմ:

[1] Դրօշակ, թ. 10, 9 սեպտ. 1992 թ., **Վ. Միքայելյան**, Հայաստանի Հանրապետությունը և արցախյան հարցը 1918-1920 թվականներին, էջ 31 (483); Нагорный Карабах в 1918-1930 гг., Е., 1992, cm. 134:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 293, թթ. 45-46:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 293, թթ. 47-48:



Նրանք ընդունեցին, որ ազատ մուտք են ունեցել Մոնկ Մեսոնի մոտ: Ամենաանհաշտը հայերից Շահնազարյանն է, որը հայտարարեց, որ երբևէ հայերը չեն ենթարկվի ադրբեջանական հրահանգներին և որ նրանք ռազմական դիմադրություն ցույց կտան բոլորին, ով կձգտի ներթափանցել իրենց երկիրը: Դրանից հետո ես զրուցեցի Սուլթանովի հետ: Մենք վիճեցինք և ես բացատրեցի նրան, որ շատ լավ գիտենք նրա անցյալի, կապերի և թուրքերի, և պանիսլամիստական շարժման հետ ունեցած նրա սերտ հարաբերությունների մասին և այնուհանդերձ գեներալ Թոմսոնը համաձայն է նրան նշանակել Զանգեզուրի նահանգապետ և որ այդ առաջարկությունը գալիս է Ադրբեջանի կառավարությունից»[1]: Ինչպես ասում են, մեկնաբանությունները ավելորդ են դառնում, քանզի բրիտանացիները իրենց դաշնակցին հանձնում էին նախկին թշնամու հայեցողությանը:

Մարտի 23-ին Սուլթանովը բրիտանական միսիայի միջոցով կրկին պահանջ է դնում Ազգային Խորհրդի առջև, որ հայերը ճանաչեն Ադրբեջանի իշխանությունը և ենթարկվեն իր հրահանգներին, սակայն կրկին մերժում է ստանում: Նա կարծում է, թե «անգլիական հրամանատարությունը Ազգային Խորհրդից ներկայացուցիչներ պահանջելով և ազդու հայտարարություններ անելով հայերին կհարկադրի ճանաչել Ադրբեջանի իշխանությունը», թեպետ հասկանում էր, որ հարկադրանքներից ու սադրանքներից հայերը ավելի համառ են դառնում իրենց որոշումների մեջ»[2]:

1919 թ. մարտի 28-ին Հայաստանի կառավարությունը նոր առաջարկությամբ դիմում է Բաքվի անգլիական հրամանատարությանը. «Ղարաբաղի հայկական մասը հայտարարել Ադրբեջանի ՆԳՆ-ը ենթարկվող ղարաբաղյան գեներալ-նահանգապետությունից դուրս, մաքրել երկրամասը ադրբեջանական ջոկատներից, այնտեղ ճանաչել միայն Ազգային Խորհրդի իշխանությունը»[3]:

Այդուհանդերձ, դիվանագիտական այս քայլերը լուրջ արդյունքներ չեն տալիս. Ադրբեջանը շարունակում է Ղարաբաղի և Զանգեզուրի շուրջ զորքերի կենտրոնացումը: Սուլթանովի սպառնալիքները ավելի են սաստկանում. նա փորձում է Գ. Մելիք-Շահնազար-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 9:

[2] **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 376:

[3] «Լրաբեր հասարակական գիտությունների», ԳԱԱ, հ. 2, մայիս-օգոստոս, Եր., 2001, էջ 70:

յանին զրկել քաղաքագլխի պաշտոնից, ավելացնելով, որ աշխատակիցները աշխատավարձ կստանան միայն այն դեպքում, երբ նախօրոք կստորագրեն, որ հունիսից սկսած կծառայեն Ադրբեջանին: Այս որոշումները մեծ դժգոհություն են առաջացնում: Մինչ այդ, բրիտանացիների «միջամտությամբ» բազմաթիվ հայ գործիչներ հեռացվել էին Ղարաբաղից, որոնց թվում էին Գ. Բալայանը, Լ. Զարաֆյանը, Ա. Շահնազարյանը և այլոք: Նախապատրաստական այս քայլերից հետո Սուլթանովը և անգլիացիները ձեռնամուխ եղան հակահայկական նոր ճնշումների:

1919 թ. ապրիլի 3-ին Բաքվի բրիտանական հրամանատարությունը Ղարաբաղի և Զանգեզուրի հայ ազգաբնակչությանը պաշտոնապես հաղորդում է Սուլթանովի նշանակման մասին: Գնդապետ Շատելվորդի հաղորդագրությունում նշված էին նաև դեռևս 1919 թ. հունվարի 15-ին գեներալ-նահանգապետություն ստեղծելու և կիրարկելու մասին իրենց կողմից ընդունած որոշման կետերը: Մյուս կողմից, բրիտանացիները հույս ունեին, թե Ղարաբաղի հայ ղեկավարներին հեռացնելուց հետո ազգաբնակչությունը կընդունի Ադրբեջանի իշխանությունը, չհասկանալով, սակայն, որ համընդհանուր ազգային շահերի հետ գործ ունեն: Այդ է վկայում գնդապետ Կլատենբերգի անգլիական 39-րդ բրիգադի հրամանատար գեներալ Բիչին ուղղված զեկույցը, ուր նշվում է, թե Սուլթանովը չի կարող բացատրություն տալ ադրբեջանական զորքերի թվի մասին, իսկ նրանց ռազմական նախարարը հրաժարվում է որևէ տեղեկություն տրամադրելուց[1]: Դժվար չէր եզրակացնել, որ անգլիացիներն իսկապես կանգնած էին Ադրբեջանի թիկունքին:

Հուսալքված բրիտանացիների քաղաքականությունից, Հայաստանի Հանրապետության իշխանությունները փորձում են հարցը տեղափոխել միջազգային հարաբերությունների ոլորտ: Բազմիցս նամակներ են հղվում Ավ. Ահարոնյանին և Պողոս Նուբար-Փաշային` հարցը Եվրոպայում բարձրացնելու համար: Վրաստանում Հայաստանի ներկայացուցչության անդամ Թումանովը արտգործ նախարարությանը հաղորդում էր, որ իր խնդրանքով հանձնաժողով է կազմվել Ղարաբաղում ռազմական գործողությունները կանխելու համար:

1919 թ. ապրիլի 4-ին Հայաստանի ներքին գործոց նախարար Ա.

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թթ. 11 – 12:



Ի. Խատիսովը մեկնում է Թիֆլիս` մասնակցելու այն խորհրդակցությանը, որին ներկա էր լինելու նաև Կովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնը, գեներալ Բիչը (Կովկասում բրիտանական հրամանատարության քաղաքական բաժնի ղեկավար), գեներալ Բրաֆը (Կովկասում երկաթուղային գործերի վարիչ), գնդապետ Շարդինին, ամերիկյան հյուպատոս Սմիտը, ամերիկյան ներկայացուցիչ Մուրը, կապիտան Պուադեվարը և վրացական կառավարության անդամները:

Քննարկվող հարցերի թվում էին Հայաստանի Հանրապետության Կարսի մարզի, Շարուր-Դարալագյազի, Նախիջևանի, Սուրմալուի, Բորչալուի, Ախալքալակի և Ղարաբաղի հարցերը:

Ղարաբաղի հարցի շուրջ Թոմսոնի տեսակետները ոչնչով չէին փոխվել: Վերջինս Խատիսյանին է փոխանցում Ղարաբաղի կառավարման վերաբերյալ Շատելվորդի զեկույցը: Խատիսյանը միաժամանակ, նկատում է, որ Ղարաբաղի շուրջ տարաձայնություններ կան գեներալ Թոմսոնի, գնդապետ Շարդինիի և կապիտան Սմիտի միջև: «Այդ տարաձայնությունները առիթ տվեցին ինձ համապատասխան նամակ գրել Սմիտին և Շարդինիին, որտեղ ես հայտնեցի մեր կառավարության տեսակետը»[1],- գրում է Խատիսյանը:

Ապրիլի 4-ին Բաքվից վերադարձած բոլոր ներկայացուցիչները, բացի Ասլան Շահնազարյանից (վերջինս Շատելվորդի հրամանով դեռևս պահվում էր Բաքվում) զեկուցում են Ղարաբաղի Ազգային Խորհրդին: Այդ ընթացքում Շատելվորդը հայ պատգամավորների առջև դրեց նոր համագումար հրավիրելու պահանջը: Ապրիլի 7-ին Ազգային Խորհրդի անդամները անգլիական առաքելությանը տեղեկացնում են, որ նոր համագումարը հրավիրվելու է ապրիլի 23-ին: Ապրիլի 10-ին, Զինվորական Միության Վարչության և Ազգային Խորհրդի որոշումների համաձայն վճռվում է ինքնապաշտպանության ղեկավար կենտրոնը քաղաքից փոխադրել գավառ` այնտեղ թողնելով միայն 150 հոգուց բաղկացած վաշտ: Կենտրոնատեղի է որոշվում Դռնավազ գյուղը:

Մինչ վճռական գործողությունների անցնելը, ադրբեջանական կողմը Հայաստանում հետախուզական գործողություններ է իրականացնում: Ահա թե ինչ տեղեկություններ է հաղորդում Հայաստանում Ադրբեջանի ներկայացուցիչ Թեքինսկին իր կառավարությանը. «Հա-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թթ. 74-75:

յաստանի Հանրապետությունն ունի 6 հետևակային գունդ, բացի այդ կազմավորվում են ևս 6 ղարաբաղյան և 1 երևանյան պարտիզանական գումարտակներ, հավաքագրվում են նաև խմբապետական զորամասեր, իսկ քանի որ ողջ հետևակը առայժմ չի գերազանցում 10 հազարը, ուստի գնդերի լրացման համար «մոբիլիզացիա» է հայտարարված: Հեծելազորի վիճակն այսպիսին է. հեծելազորային 3 դիվիզիոն, 3 էսկադրոն, որից միայն մեկն է հեծյալ, 2 դաշտային մարտկոց...: Հայերն իրենց տրամադրության տակ ունեն նաև վրացիներից գրավված 3 զրահագնացքներ»[1]: Ուստի, կասկածից վեր է, որ այսպիսի տեղեկություններ հաղորդողն իր տրամադրության տակ չունենար լրտեսական լայն ցանց:

Հայերի նկատմամբ անգլիացիների որդեգրած քաղաքականությունը իրականացվում էր ոչ միայն Ղարաբաղում, այլ նաև Ադրբեջանի ողջ տարածքում. Ղարաբաղի հետ հաղորդակցության բոլոր ուղիները վերջիններիս կողմից խիստ հսկողության տակ էին: Մյուս կողմից, Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը պարբերաբար հաղորդում էր հայերի հաճախակի դարձած սպանությունների վերաբերյալ[2]:

Ղարաբաղում իրավիճակը սկսում է սրվել հատկապես թաթարական քոչի ժամանակ, քանի որ հարթավայրերից դեպի Զանգեզուրի լեռներ տանող ճանապարհն անցնում էր բազմաթիվ հայկական գյուղերի միջով և Զաբուղով ձգվում էր հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևմուտք:

1919 թ. ապրիլի 18-ին գրված զեկուցագրում բրիտանական ներկայացուցիչը նույնիսկ խոստովանում էր, որ «... զորքերի տեղաշարժման մասին իրեն տեղեկացնելու Մեսոնի հրահանգը Սուլթանովը հաշվի չի առնի: Ավելին, Ադրբեջանը խնդրել է արտակարգ քայլեր ձեռնարկել հայերի վրա ազդելու համար»[3]:

Լարվածությունն ավելի է շիկանում, երբ ապրիլի 23-ին գումարվում է Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը: Նրա աշխատանքներին մասնակցելու համար ապրիլի 23-ի առավոտյան Շուշի է ժամանում նաև գեներալ Շատելվորդը: Հենց նրա հրահանգով արգելվում է Եղիշե Իշխանյանին մասնակցել համագումարին, պատճառաբանելով, թե վերջինս խոչընդոտում է համաձայնության կայացմանը:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 59:
[2] ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 4, թթ. 45-50:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թթ. 15-16:



Համագումարի աշխատանքներին մասնակցում են 84 պատգամավոր. պատվավոր նախագահ է ընտրվում Ղարաբաղի եպիսկոպոսը, իսկ նախագահ՝ Նիկոլայ Իսախանյանը:

Համագումարին ներկա էր նաև Մոնկ Մեսոնը: Գեներալը թարգմանչի միջոցով պատգամավորներին տեղեկացնում է բրիտանական հրամանատարության դիրքորոշումը, այն է՝ Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը և ենթարկվի նրան՝ մինչև որ ճշտվեն Ադրբեջանի և Հայաստանի սահմանները: Ուշագրավ է նաև հետևյալ դիպվածը. բանն այն է, որ մինչև համագումարի բացումը Վահան եպիսկոպոսը առաջարկել էր համաձայնվել Ադրբեջանի ժամանակավոր իշխանության ճանաչմանը: Հոգևոր առաջնորդը իր առաջարկությունը հիմնավորում էր այն իրողությամբ, որ Հ. Բահատրյանի և Հ. Քաջազնունու միջև կայացած զրույցի ժամանակ վերջինս խորհուրդ էր տվել չհավատալ դաշնակիցների բարյացկամությանը և բանակցությունների մեջ մտնել Ադրբեջանի ներկայացուցչի հետ՝ փորձելով համաձայնության եզրեր գտնել[1]: Պատգամավորները եպիսկոպոսին արգելում են այդ առաջարկը անել համագումարի ընթացքում: Ի վերջո, բազում ճնշումներից հետո, ընդունվում է այսպես ասած, կոմպրոմիսային տարբերակը. եթե ժամանակավորապես է լինելու այդ իշխանության ճանաչումը, ապա մինչև խաղաղության խորհրդաժողովում հարցի կարգավորումը, նպատակահարմար է անգլիական կոմիսարի նշանակումը: Ի դեպ, բազմաթիվ կարծիքներ լսելուց հետո Շատելվորդը «հորդորում» է պատգամավորներին լրջորեն մտածել առաջադրված հարցերի շուրջ, ապա թողնում է ժողովը և հեռանում: Հաջորդ օրը՝ ապրիլի 24-ին վերջինս իր մոտ է հրավիրում Ե. Իշխանյանին և նրանից բացատրություններ պահանջում: Ի պատասխան Շատելվորդի սպառնալիքներին, Իշխանյանը հայտարարում է, որ իրենք չեն կարող գործել առանց համագումարի կարծիքը հաշվի առնելու: Այդպես էլ դժգոհ մնալով համագումարի ընթացքից, Շատելվորդը ապրիլի 26-ին մեկնում է Շուշիից:

Համագումարի աշխատանքները շարունակվում են մինչև ապրիլի 29-ը և ընդունում մի շարք կարևոր որոշումներ: Համագումա-

[1] Տե՛ս, **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 352:

րին իր ողջույնն է հղում նաև Արսեն Շահմազյանը: Հիմնավորելով, որ Ղարաբաղը ոչինչ չունի հարևան Ադրբեջանի ժողովրդի ինքնորոշման դեմ, համագումարը միաժամանակ գտնում է, որ բոլոր վիճելի հարցերը պետք է լուծվեն կոնֆերանսում և որ Ղարաբաղի հայերը ևս ունեն ինքնորոշման հավասար իրավունք: Ընդ որում, համագումարը ի գիտություն անգլիացիների, հատուկ ընդգծում է այն հանգամանքը, որ Ադրբեջանը մշտապես հանդիսացել է թուրքական կողմնորոշման կրողը. «Ադրբեջանը թուրքերին հրավիրել է Անդրկովկաս և դեռ չի դադարել երազել թուրքերի այստեղ վերադարձի մասին, ուստի շարունակում է պարբերաբար հետապնդել հայերին: Հայերի նկատմամբ Ադրբեջանի տնտեսական բոյկոտը կիրառվում է թուրքական արշավանքների նախօրյակին և ընթացքում, որն էլ հետագայում վերաճեց պետական քաղաքականության: Սպանությունները, թալանը, ավազակությունը, ճանապարհներին հայերի որսը սովորական է դարձել Ադրբեջանի համար: Այս ամենը տեղի է ունենում, երբ նույնիսկ մեր կողքին են հզոր Անգլիայի ներկայացուցիչները, երբ մենք ենթարկված չենք ադրբեջանական իշխանությանը»,- ասվում էր համագումարի արձանագրությունում[1]: Համագումարի մասնակիցների ելույթներում բազմիցս նշվում էր, որ իրենք հավատացած են, որ Ադրբեջանը հետևելով իր ավագ եղբոր՝ Թուրքիայի օրինակին, կձգտի ոչնչացնել հայերին:

Ելնելով վերոհիշյալից, համագումարը գտնում է, որ Ղարաբաղի հայերի «քաղաքական-պատմական, իրավամշակութային և հատկապես տնտեսական պայմանները ոչ մի հիմք չեն տալիս, որ հայ ժողովրդի վզին փաթաթվի Ադրբեջանի թեկուզև ժամանակավոր իշխանության վարչական ձևը: Այս ամենի հիման վրա Ղարաբաղի հայերի 5-րդ համագումարը անհնար է գտնում ընդունել յուրաքանչյուր վարչակարգ, որը որևէ կերպ առնչություն կունենա Ադրբեջանի հետ: Համագումարը միաժամանակ հայտարարում է, որ այս որոշումը հիմնված է հայ ժողովրդի անբեկանելի ընտրական կամքի վրա, որում անգլիական հրամանատարությունը կարող է համոզվել համաժողովրդական հանրաքվեի միջոցով ***(որքա՛ն նմանություն ներկա իրավիճակի հետ***՝ Ա. Դ.)»[2]:

Ի վերջո, Ղարաբաղի 5-րդ համագումարի 48 պատգամավորնե-

[1] Տե՛ս, **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 352:
[2] Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 163:



րի և դիվանի կողմից միաձայն ստորագրված բանաձևն ընդունվեց 1919 թ. ապրիլի 24-ին: Նրանում ասվում էր. «Խաղաղության և կարգուկանոնի կայացման բացարձակ ջատագովը և կողմնակիցը լինելով Ղարաբաղում և անկեղծ ընդառաջ գնալով հարևան թուրքական ժողովրդի հետ խաղաղ և բարեկամական հարաբերություններ պահպանելու անգլիական հրամանատարության ցանկությանը և միաժամանակ, նկատի ունենալով, որ Ղարաբաղի վերաբերյալ տարածքային և սահմանային հարցերը պետք է լուծվեն խաղաղության կոնֆերանսում, ինչպես գեներալ Շատելվորթը հայտարարեց այդ մասին, Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը գտնում է, որ այդ առաջարկվող ծրագիրը չի համապատասխանում հայ ժողովրդի ցանկություններին և կենսական շահերին: Համագումարը գտնում է նաև, որ Ադրբեջանին ենթարկվելու ծրագրի բռնի իրագործումը ազգամիջյան արյունահեղության և անհամերաշխության անխուսափելի պատճառ կդառնա, որի պատասխանատվությունը համագումարը ոչ մի դեպքում չի վերցնի իր վրա»[1]:

Այս ամենը ցույց էր տալիս, որ համագումարում ընդունված որոշումներում վառ կերպով դրսևորվում են արցախահայության անկոտրում կամքն ու պայքարի հաստատակամությունը: Նրանց չվախեցրին ո՛չ բրիտանական սպառնալիքները, ո՛չ ստեղծված տնտեսական ծանր իրավիճակը, և ո՛չ էլ ադրբեջանական կողմի ռազմական և դիվանագիտական ճնշումները: Չմոռանանք, որ այս ամենին զուգահեռ, Ղարաբաղի հայության դեմ մղվում էր նաև քարոզչական պատերազմ: Դրա վառ վկայությունն է «Ազերբայջան» թերթի ապրիլի 14-ի Մեհմեդ Սադըկ ստորագրությամբ «Հայերն ու մենք» հոդվածը: Նրանում նշվում է, որ «Ղարաբաղի հայերին սովամահության մատնելով կարելի էր նրանց ստիպել ընդունել Ադրբեջանի առաջարկած պայմանները: Թող հայտնի լինի մեր կառավարությանը, որ եթե մեր հացի շուկաների ճամփաները փակվեն հայ ազգաբնակչության առաջ, ապա քիչ ժամանակ կպահանջվի, որ Ղարաբաղի ողջ հայությունն ընդունի Ադրբեջանի բոլոր պահանջներն ու հպատակվի: Հայերի սովամահության փորձանքին չեն կարող ճար անել ո՛չ

[1] ՀԱԱ, ֆ. 323, ց. 1, գ. 1, թթ. 1-3, ֆ.199, ց. 1, գ. 38, թ. 27, Ա. (Միսակ Տեր-Դանիելյան), Ղարաբաղի տագնապը (պատմության համար) օրագրության (26 ապրիլ-26 հուլիսի 1919 թ.), Երևան, 1993, էջ 17:

Արարատյան կառավարությունը, ո՛չ անգլիական ներկայացուցիչները և ո՛չ էլ զանգեզուրցիները»[1]:

Ուշագրավ է նաև, որ համագումարի ընթացքում և նրանից հետո Սուլթանովը հայերին հրավիրում էր իր մոտ՝ «մի շարք կարևոր հարցեր» քննարկելու համար, ինչը մշտապես մերժվում և անընդունելի էր համարվում արցախահայության կողմից:

Այդուհանդերձ, համագումարի որոշումները Ղարաբաղի հայերի դեմ նոր բռնությունների ու հայահալած քաղաքականության ալիքի դրսևորման պատճառ դարձան: Նախապատրաստվում էր թաթարական քոչը, ինչն արդեն անխուսափելի էր դարձնում առճակատումը:

Ակնհայտ էր, որ բրիտանական կառավարությունը քայլեր կձեռնարկեր տիրանալու նաև Զանգեզուրին, քանզի երկրամասի ամբողջովին անկախ և աննվաճ մնալը իր դրական ազդեցությունն էր ունենում Ղարաբաղի հայության վրա: Այդ քաղաքականության դեմ մշտապես բողոքել է նահանգապետ Արսեն Շահմազյանը. «Հայտարարությունը, որ Զանգեզուրը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը և ընդունի նրա զորքերին և պաշտոնյաներին, և, որ խոչընդոտներ չպետք է ծագեն քոչվորների՝ մեր սարերը բարձրանալու ընթացքում, մեզ բերում է այն եզրակացության,- ասվում էր բրիտանական ներկայացուցչին ուղղված նամակում,- որ դաշնակիցների խնդրանքը մերժելու դեպքում Զանգեզուր-Ղարաբաղի հայությունը կարող է հայտնվել ողբերգական վիճակում»[2]: Շահմազյանը միաժամանակ հայտնում էր, որ իրենք չեն պատրաստվում Բրիտանիայի դեմ պայքարել, քանզի չեն կարող կռվել «ծովերի տիրակալի» հետ, այլ պատրաստվում են կենաց ու մահու պայքարի:

Բնականաբար, անգլիացիների պահանջից պարզ է դառնում, որ վերջիններս լուրջ մտադրություն ունեն ռազմական ուժ մտցնել Զանգեզուր «իրականացնելու համար թաթարական քոչը» և դրանով նպաստել երկրամասում Ադրբեջանի իշխանության հաստատմանը:

Հայերի հուսահատությունն էլ ավելի խորացնելու նպատակով, Շատելվորթը դիմում է բացահայտ կեղծիքի՝ հայտարարելով, թե Հայաստանն արդեն ճանաչել է Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղի վրա[3]: Բնականաբար, հերքելով այս ամենը՝ Հայաստանի

[1] Նոր Աշխատավոր, 18 ապրիլի 1919 թ., էջ 4:
[2] Нагорный Карабах, 1918-1923, նշվ. աշխ., էջ 177:
[3] ՀԱԱ,ֆ. 252, ց. 1, գ.1, թթ. 58-59:



Հանրապետության կառավարությունը կրկին հաստատում է, որ մայիսի սկզբին Ղարաբաղում նշանակել է երկու պաշտոնական ներկայացուցիչ: Այդ մասին համապատասխան հայտարարությամբ հանդես է գալիս Խատիսյանը: Ի պատասխան դրան, Շուշիի բրիտանական միսիան մի կեղծ հայտարարություն է տարածում, որի գրավոր տեքստը փոխանցում է Շուշիում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Մ. Արզումանյանին. որ իբր Հայաստանի Հանրապետության կառավարությունը համաձայնվել է Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մեջ մտցնելուն:

Իրադարձությունները զարգանում են նոր թափով, երբ բրիտանական ուժերի հրամանատարությունը պահանջ է ներկայացնում Արսեն Շահմազյանին, որ վերջինս լքի Զանգեզուրը: Մայոր Մոնկ Մեսոնը նույնիսկ սպառնում է Շահմազյանին՝ եթե նա ադրբեջանական կառավարության դեմ Զանգեզուրում որևէ բան ձեռնարկի: Մյուս կողմից, նա ամեն կերպ աշխատում էր նրան հեռացնել Բաքու, կամ Թիֆլիս[1]:

1919 թ. մայիսի 3-ին Հայաստանի Հանրապետության արտգործ նախարար Խատիսյանը մեկնում է Թիֆլիս՝ Նախիջևանի և Ղարաբաղի հարցի քննարկմանը մասնակցելու համար: Թիֆլիսի հանդիպմանը ներկա էին նաև Թոմսոնը, Բիչը, Բրոֆը և Դևին: Ներկայացվում է Շատելվորդի և Մոնկ Մեսոնի կողմից կազմած զեկույցը Ղարաբաղի և Արսեն Շահմազյանի գործունեության մասին: Հայաստանի ազգային արխիվում պահված վավերագրում այդ մասին ասվում է. «Շատելվորդի զեկույցի համաձայն հայկական զինվորական ուժերը Ղարաբաղում ղեկավարում են Հայաստանի սպաները: Հայոց Ազգային Խորհուրդը մերժում է քոչվորների տեղաշարժը, որի հետևանքով թաթարները հայտնվել են ծանր դրության մեջ: Շահմազյանը հայտարարել է, որ Ղարաբաղի զորքերը մտնում են Հայաստանի բանակի կազմի մեջ և, ընդհանրապես, Ղարաբաղին խոստացել է ցանկացած օգնություն: Նշվում է, թե հայերը չեն հասկանում անգլիացիների քաղաքականությունը և թե ինչու են նրանք օժանդակում Թուրքիայի դաշնակցին: Հայերը կտրուկ հայտարարում են, որ չեն հավատում հայտնի թուրքոֆիլ Սուլթանովին: Հայերը վկայում են, թե կան շշուկներ անգլիացիների հեռանալու մասին, որից հետո նրանք կմնան թուրքերի հետ դեմ առ դեմ, եթե նրանք

[1] ՀԱԱ,ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 25:

համաձայնեն ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Շատելվորդ նկատում է, որ թաթարների քոչը ընդհատվել է, անասունները սատ կում են, նրանց տրամադրությունը վատ է: Չի կարելի զինաթափե թաթարներին, այլապես հայերը նրանց բոլորին կոչնչացնեն (սա Մոնկ Մեսոնի կարծիքն էր՝ Ա.Ղ.): Հայերը հայտարարում են, որ եթե Սուլթանովը ներկա գտնվի խորհրդակցությանը, ապա իրենք չեն մասնակցի: Ինքը՝ դոկտոր Սուլթանովը գտնում է, որ հույս չունի, թե հայերը կճանաչեն Ադրբեջանի իշխանությունը: Շատելվորդը հայտարարում է, թե Շահմազյանը Ղարաբաղում զորքեր է կազմավորում Հայաստանի Հանրապետության կառավարության անունից: Ինչ վերաբերվում է Շուշիի համագումարին, ապա նրան մասնակցում էր 43 պատգամավոր և որ Զանգեզուրից ներկայացուցիչներ չեն եղել: Շատելվորդը հայտարարում է հայերին, որ մինչև խաղաղության կոնֆերանսը անգլիացիները ցանկանում են ժամանակավոր կառավարություն ստեղծել: Սուլթանովը տալիս է հայ մեկի ազգանունը, թե իբր նրանք ուրախ կլինեն ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, թե իբր այդ ամենի մեղավորը դաշնակցությունն է և որ նրա կյանքը վտանգված է: Շատելվորդը հայտարարեց, որ Ազգային Խորհուրդը Զանգեզուրում դա նույնն է, ինչ որ «Շուրան»՝ Կարսում, թե իբր նրա և Ազգային Խորհրդի նախագահ Իշխանյանի հանդիպման ժամանակ վերջինս իրեն ասել է, թե հայերը կհաշտվեն Ադրբեջանի իշխանության հետ: Սոկրատ բեկ Մելիք-Շահնազարովն էլ իբր ասել է Շատելվորդին, թե չպետք է ուշադրություն դարձնել Ազգային Խորհրդին և որ մինչև թուրքերի գալը նրանք թաթարների հետ խաղաղ են ապրել, որ ամեն ինչ կեղծում է Ազգային Խորհուրդը: Սակայն, երբ հետագայում Շատելվորդը հանդիպել է պատգամավորներին, նրանք գրավոր հայտարարել են Ադրբեջանին ենթարկվելու իրենց անհամաձայնության մասին և չեն վախենում սպառնալիքներից: Այդուհանդերձ, Շատելվորդը գտնում է, որ քոչը կարելի է կազմակերպել, իսկ Սուլթանովը համաձայն է քոչվորներին չուղեկցել»[1]: Որքանով թույլ են տալիս դատել զեկույցում բերված տեղեկությունները, իրավիճակը բավականին լարված է եղել: Այդուհանդերձ, հետևենք քննարկման հետագա ընթացքին:

Զեկույցի ընթերցումից հետո Թոմսոնը մեղադրում է Հայաստանին, որ Ղարաբաղի հարցում կարծես պատերազմ է հայտարարվել

[1] ՀԱԱ,ֆ. 200, ց. 1, գ. 309, թթ. 36-39:



Անգլի... ...ո հայկական կառավարությունը իր գործակալներով գրգռում ... ...ությունը տարածաշրջանում: Անգլիացիները սպառնում են դ... ...նել զորքերի առաջխաղացումը Նախիջևան, եթե Ղարաբաղից ե... ...վեն Շահմազյանը և մյուսները: Ընդ որում, Թոմսոնը Հայաստա... ...ավարությունից պահանջում է Ղարաբաղի մասին հայտարարութ... ...նել, նշելով, որ ադրբեջանական կառավարությանը ցանկացած ... ...գում անթույլատրելի է և որ քոչը պետք է տեղի ունենա: Այդ դ... ...միայն կվերսկսվի ...արժումը դեպի Նախիջևան:

Հայաստանի կառավարության ներկայացուցիչ ... ...անն իր ...երթին անգլիացիներին է ներկայացնում 11 կետից բա... ...՝ իր ...կատառումները: 1. Հայաստանի կառավարությունը Ղարա... ...ճանաչում է Հայաստանի Հանրապետության անբաժան մաս, բայց ...ինչև Փարիզի վեհաժողովը նպատակահարմար է գտնում, որ կա...ավարվի բրիտանացի գեներալ-նահանգապետի կողմից, հայ և ...ահմեդական ազգային խորհուրդների հետ, առաջինը՝ հայկական ...արաբաղում, երկրորդը՝ մահմեդականում (Ասկերանից արևելք): 2. ...այաստանի կառավարությունը Ղարաբաղում ունի միայն երկու ...աշտոնական ներկայացուցիչ՝ Արզումանյանը և Շահնազարյանը: 3. Հայկական կառավարությունը գտնում է, որ Ղարաբաղի Ազգային Խորհուրդը պետք է ունենա իր զինված ուժերը, որոնք չեն համարվում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մաս, ուստի հայկական կառավարությունը նրանց հրահանգներ տալ չի կարող: 5. Հայկական կառավարությունը հնարավոր է գտնում թույլատրել մահմեդական քոչվորներին սարերը բարձրանալ՝ պայմանով, որ նրանց կուղեկցեն անգլիական զորքերը՝ հայերից և մահմեդականներից կազմված հսկիչներով, սակայն հրամայել Խորհրդին՝ կառավարությունը իրավասու չէ: 6. Ստեղծված պայմաններում հայկական կառավարությունը չի կարող պատասխանատու լինել անգլիական հրամանատարության համար: Դրա համար բրիտանացիները պետք է Ղարաբաղի կառավարումը հանձնեն հայերին: 7. Հայաստանի կառավարությունը Ղարաբաղում գործակալներ չունի, իսկ եթե այնտեղ կան հայ սպաներ, ապա դա կառավարության գործառույթների մեջ չի մտնում: 8. Նախիջևանի հարցը չպետք է կապվի Ղարաբաղի հարցի հետ, ինչը համազոր է թուրքական քաղաքականության սկզբունքներին: 9. Հայկական կառավարության և Ղա-

րաբաղի Ազգային Խորհրդի տեսակետները Ղարաբաղի հարցում միայն դաշնակցություն կուսակցության տեսակետը չէ և այն կիսում են Հայաստանում գոյություն ունեցող բոլոր կուսակցությունները: Այնուհետև Խատիսյանը առաջարկում է գաղթականներին Նախիջևան տեղափոխելու հարցը: Երկարատև քննարկումներից հետո միայն, Թոմսոնը համաձայնվում է շարունակել զորքերի առաջխաղացումը դեպի Նախիջևան[1]:

Որքանով նկատում ենք, այս խորհրդակցությունը ևս որևէ փոփոխություն չարձանագրեց բրիտանական դիրքորոշման մեջ, այն դեպքում, երբ ադրբեջանական իշխանությունները շարունակում էին մտմտալ ոչ միայն Ղարաբաղը գրավելու, այլ նաև Նախիջևանը զավթելու մասին: Այն ժամանակ, երբ ադրբեջանցիները ծրագրում էին զորքերի տեղաշարժ կատարել, բրիտանական հրամանատարությունը շարունակում էր պնդել Հայաստանի ներկայացուցիչներին Ղարաբաղից ետ կանչելու համար[2]:

Հայաստանի ղեկավարությունը, բնականաբար, տեղյակ էր բրիտանական քաղաքականության վայրիվերումներին: Ավետիս Ահարոնյանին ուղղված մի հաղորդագրությունում Խատիսյանը այն տեսակետն է հայտնում, թե «անգլիական հրամանատարությունը ցանկանում է դրսի աշխարհին անտեղյակ դարձնել Կովկասի անցուդարձերին, ինչը կարող է աշխարհի ուշադրությունը գրավել և, թերևս, փոխվեն բրիտանական հրամանատարության ինքնագլուխ կարգադրությունները: Կարծում ենք,- գրում էր Խատիսյանը,- այդ պատճառով է, որ անգլիացիները որոշ դժվարություններ են հարուցում եվրոպական երկրների և մանավանդ ձեզ հետ կանոնավոր հարաբերություններ ունենալու խնդրում:

Ղարաբաղյան հարցում անգլիական հրամանատարության դիրքորոշումը, կարծում եմ, անմիջական կապ ունի կովկասյան քաղաքականության հետ, քանի որ նրանք Ադրբեջանը համարում են իրենց կենսական շահերի մեջ մտնող տարածք: Վերջերս Թիֆլիսի մամուլում որոշ ակնարկներ եղան անգլիական կենսատարածքը Վրաստանի և Ադրբեջանի վրա տարածելու մասին. եթե դա ստույգ է, ապա անգլիացիք կցանկանան այն խորացնել` հետագայում դրանք

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թթ. 36-39:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 4, գ. 463, թ. 1:



իրենց ազդեցության գոտում պահելու համար»,- ավարտում է Խատիսյանը[1]:

Այս ընթացքում գեներալ Շատելվորդը կրկին մեկնում է Զանգեզուր և պահանջում օժանդակել երկրամասում ադրբեջանական վարչական իշխանությունը տարածելու համար: Սուլթանովը փորձում է միանալ նրան, սակայն գեներալը Զանգեզուր է գնում անգլիական ջոկատի հետ: Հայերը թույլ չեն տալիս Շատելվորդին առաջ շարժվել ջոկատի հետ: Վերջինս միայնակ հրավիրվում է Ազգային Խորհուրդ, ուր խիստ մերժում է ստանում Ադրբեջանի իշխանության ճանաչման խնդրում: Շատելվորդը պահանջում է իրեն հանձնել Շահբազյանին, Շիրինյանին և Օսիպովին, սակայն հավաքված ամբոխը` զինված երեք դաշտային հրանոթներով ու գնդացիրներով, սպառնում են գեներալին և հայտարարում, որ որևէ մեկին չեն հանձնի:

Սուլթանովը տեղեկանալով այս ամենի մասին իր կառավարությանը հայտնում է, որ վերջինս «հոգա Ղարաբաղի պաշտպանության համար, կամ էլ հայտարարի, որ բնակչությունն ինքը պետք է պաշտպանի Ղարաբաղը, ինչպես կարող է: Խնդրում եմ անմիջապես պատասխանել, թե կարող եմ արդյոք ես երկու հազար հրացանի, միլիոն փամփուշտի, մեկ մարտկոցի և 10 գնդացիրների, բավականաչափ ռազմամթերքի և զինված ուժերի հույս ունենալ, անգլիացիների անզորության պարագայում»[2]:

Ադրբեջանական կառավարությունն, իհարկե, տեղյակ էր Ղարաբաղի հարցում անգլիացիների վարած քաղաքականության նկատմամբ ֆրանսիական կողմի դժգոհության մասին: «Թոմսոնը հասավ Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու նպատակին, որն, ըստ ֆրանսիացիների, բացահայտ անարդարություն է: Այստեղ տարվող քաղաքականությունը պետք է փոխվի: Ֆրանսիացիները Ադրբեջանի հետ կվարվեին այլ ձևով, քան անգլիացիները»,- ասվում էր հայկական կողմի հետ ֆրանսիական ներկայացուցչի հանդիպման ընթացքում[3]:

Հայաստանի կառավարության դիմում-բողոքները բրիտանական իշխանություններին ոչ մի արդյունք չեն բերում: Ահարոնյանի

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս 1, թ. 225:
[2] Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 210:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, մաս 1, թ. 61:

բազմաթիվ նամակներին հետևում է մեկ պատասխան միայն, թե իբր բրիտանական ձեռնարկումները Ղարաբաղում և Զանգեզուրու կրում են բացառապես ժամանակավոր բնույթ: Մինչդեռ Աղամսի և Լ. Մալլեթի գրագրությունից ակնհայտ է դառնում, որ Ահարոնյանը պահանջում է դաշնակիցների կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչումը (ներառյալ Արևելյան և Արևմտյան Հայաստանները): Լոնդոնում Պողոս Նուբար Փաշայի ներկայացուցիչ Մալկոլմը բազմիցս հաղորդել է Ահարոնյանին, որ ներկայումս դա հնարավոր չէ: Վեհաժողովի ընթացքում Ղարաբաղի հարցով Ահարոնյանի և անգլիացիների հետ հանդիպումներում վերջինս փորձում էր ապացուցել, որ «հայերը պատմականորեն մեծ նշանակություն են տալիս այս շրջանին, քանզի նրանց հերոսներից շատերը անցյալում ծնվել են այստեղ, ինչպես՝ Մելիքովը և այլոք: Այս շրջանը հերոսական վայր է եղել թուրքական և պարսկական նվաճողների դեմ պայքարում: Անդրանիկը և նրա բանակը պայքարել են այստեղ թուրքերի և թաթարների դեմ: Այս շրջանը հայ ազգի բնական հայրենիքն է եղել: Ահարոնյանը գծագրում է ապագա քարտեզը մոտավորապես և առաջարկում է այնպես, որ Ադրբեջանի հետ հնարավոր լինի Ղարաբաղի շրջանի համար փոքր-ինչ փոխանակություն Օրդուբադի և Նախիջևանի միջև ընկած տարածքից: Սակայն, Ահարոնյանը սա այնքան էլ չհաստատեց, քանզի մտածում էր, որ Ադրբեջանը բավա կանին մեծ կլինի: Նա փոխանցեց, որ Երևանի կառավարությու դժգոհ է բրիտանական ռազմական ղեկավարներից ժամանակավո մահմեդական վարչակազմի հաստատման առումով և ոչ միայն Ղա րաբաղում, այլև՝ Ախալքալակի և Կարսի շրջաններում: Ես ներկա յացրեցի պրն. Ահարոնյանին, որ այդ միջոցառումները կիրառվու են ժամանակավոր ռազմական նպատակներով»,- ասվում էր անգ լիական փաստաթղթերից մեկում[1]: Հետաքրքրական է, որ մշակվա սխեմայի համաձայն՝ (պրոֆեսոր Դուգլաս Ջոնսոնի կողմից) այս սահմանները, որոնք առաջարկվում են Ահարոնյանի և գեներա Ղորղանյանի կողմից, տնտեսական և ռազմավարական առումներու գործնական չեն: Սահմանային գիծն իր մեջ ներառում է բոլոր հայ կական գյուղերը՝ Շուշիի, Ջևանշիրի, Ելիզավետպոլի, Ղազախի և Զանգեզուրի գավառներում, ինչպես նաև Ջեբրայիլը: Այս գիծը

[1] Caucasian Boundaries, Documents and Maps, 1802-1946,. Edited by Aneta L.P.Burdett. Archive Editions, 1996, pp. 671-673.



ւևելյան լեռնագոտու ստորին երկայնքով ձգվում է մինչև Կուրի ավազան և չունի որևէ պաշտպանիչ գիծ: Այսպիսով, սա բաժանում էր Կուրի հարթավայրերը լեռներից, որոնցից կախման մեջ են հարթավայրի անասնապահները, և հակառակը՝ կտրում է լեռնային բնակիչներին հարթավայրերից, որոնցից նրանք տնտեսապես կախված ։ն: Այս գիծը հայկական շատ գյուղեր է թողնում Ադրբեջանի կազմում և ընդհակառակը՝ շատ թաթարական գյուղեր՝ Հայաստանի յազմում: Այս գիծը լավագույն սահմանը չէ: Իհարկե, դա իրագործելի համաձայնություն է, իրական ռազմավարական սահման, ւրը հնարավորություն կտա Հայաստանի կազմում ընդգրկել Զանգեզուրի գավառը և Շուշի քաղաքը, որոնք երկուսն էլ ունեն ւայկական հոծ բնակչություն»[1]:

Վերոնշյալ փաստաթղթում նշվում է, որ գեներալ Ղորղանյանի յողմից ներկայացված քարտեզը հիմնված է բրիտանական միջազգային քարտեզի և ռուսական քարտեզի հիման վրա: Այդ գիծը ւկսվում է Արաքս գետից մինչև Բարգուշատ գետի բերանը, իսկ նյուս կողմից՝ մինչև Բալկա-Չախմախ: Այնուհետև գնում է հյուսիս, ինչև այս գետերի ջրբաժանը, արևելքում թողնելով Խազաբերդ յյուղից հանդիպակած Մեծ Քիրս Լեռը, ինչը համընկնում է հայերի յողմից պահանջված Զանգեզուրի գավառի սահմանի հետ: Մեծ Քիրս Լեռան կողմից սահմանը ձգվում է վերին Հագրու արևելյան ջրբաժան՝ Շուշի քաղաքից հյուսիս: Այստեղ այն կտրում է Հագրուն և ձգվում է արևմուտք Խանքենդ քաղաքից հարավ: Այստեղից համընկնելով Զանգեզուրի հյուսիսային սահմանի հետ, այն ձգվում է արևմուտք Չիլգիզ Դաղ, Միկտուկին Դաղ, Գալին Կարա Դաղ, որոնք ձևավորում են հյուսիսից արևմուտք Հագրու ավազանը, հանդիպելով Երևանի (նկատի ունի ՀՀ բուն տարածքը՝ Ա. Ղ.) արևելյան սահմանին, այստեղից դեպի հյուսիս ընդգրկվում է Հայաստանի մեջ մինչև Ելիզավետպոլ, Քեթի Դաղից դեպի հարավ-արևմուտք, այստեղից սահմանը համընկնում է Հայաստանի արևմտյան սահմանագծի հետ[2]:

Ադրբեջանի իշխանությունը չճանաչելու Զանգեզուրի հայության հաստատակամությունը և հետևողականությունը Շատելվորդին ստիպեցին ետ կանչել իր զորքերը երկրամասից, սակայն դրա արդ-

[1] Caucasian Boundaries, նշվ. աշխ., էջ 672-673:
[2] Նույն տեղում, էջ 672:

յունքում Զանգեզուրը կտրվում է Շուշիից: Շատելվորդի Զանգեզուրից հեռանալուց հետո իրավիճակը բավականին սրվում է: Համաձայնությունը դառնում է քիչ հավանական: «Մեր պարտքն ենք համարում կառավարության ուշադրությունը հրավիրել զինված քոչվորների շարժման հնարավոր հետևանքների և անհրաժեշտ քայլերի ձեռնարկման վրա», - ՀՀ վարչապետին էր գրում արտգործ նախարարը[1]:

Ղարաբաղում այդ նույն ժամանակ սկսվում են ձերբակալությունները: Ջրաբերդի շրջանում, օրինակ, մայիսի 15-ից ձերբակալվում են աչքի ընկնող պաշտոնյաներ, հուզումներ են առաջանում բնակչության մեջ[2]: Մայիսի 25-ին, նախնական որոշման համաձայն, Վարանդայի Դրնավազ գյուղում գումարվում է զինվորական համագումար: Համագումարը քննարկում է ինքնապաշտպանության կազմակերպման ծրագիրը և վարչության հաշվետվությունը: Համագումարը որոշում է ինքնապաշտպանություն կազմակերպել բոլոր շրջաններում, «կազմ պատրաստ լինել, որևէ կողմից վտանգ լինելու դեպքում անակնկալի չգալու համար, նկատի ունենալով այն լարված դրությունը, որ ստեղծվել է անգլիացիների գործակցությամբ Ադրբեջանի կողմից ապօրինի կերպով Սուլթանովին նահանգապետ նշանակելով»[3],- ասվում էր որոշման մեջ:

Ղարաբաղը բաժանվում է հինգ ինքնապաշտպանական շրջանների, նախապատրաստական աշխատանքներ են տարվում պաշտպանունակությունը ամրացնելու ուղղությամբ, քանզի մուսավաթական հարձակումը օր օրի սպառնալից էր դառնում:

Մայիսի 28-ին թաթարները հարձակվում են հայկական Խծաբերդ գյուղի վրա: Հազարից ավելի այդ հրոսակախումբը գլխավորում էր թուրքական նախկին սպա Քյազիմ Բեյը: Հենց այդ ժամանակ ադրբեջանական իշխանությունները արագացնում են զորահավաքը, ինչի մասին գլխավոր շտաբը հաղորդում է Սուլթանովին՝ հորդորելով նրան նպաստելու նոր զինվորական մասերի կազմավորմանը: Ուշագրավ է, որ նրանում առանձնակի նշվում էր, որ Ղարաբաղի և

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 146, թթ. 37-38:
[2] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 218, թ. 4:
[3] **Ե. Իշխանյան**, նշված աշխատությունը, էջ 416:



Զանգեզուրի հարցի լուծման համար նշված հրահանգների կատարումը պետք է արագացնել[1]:

Բռնություններն ու սպանությունները հայերի նկատմամբ դառնում են մասսայական, ինչին բրիտանական ներկայացուցիչները ոչ մի նշանակություն չեն տալիս: Ուշագրավ է, որ հարձակումների էին ենթարկվում նույնիսկ բրիտանական ներկայացուցիչները: Միաժամանակ հետախուզական և դիվանագիտական ակտիվ պատերազմ է իրականացվում Հայաստանի դեմ՝ Ադրբեջանը, բացի Հայաստանից, հիմա ուրիշ թշնամի չունի և պետք է Հայաստանի վրա հատուկ ուշադրություն դարձնել»[2]: Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունները այսպես էր բնութագրում Հայաստանում վերջինիս ներկայացուցիչ Թեքինսկին: Բռնության ենթարկվեց նաև Շուշիի բրիտանական միսիային կից ՀՀ ներկայացուցիչը: Նրանից խլվում են այն փաստաթղթերը, որոնք վերաբերում էին թուրք հրոսակների գազանություններին:

Փոխանակ գործնական միջոցներ ձեռնարկելու ադրբեջանական նկրտումների դեմ, հունիսի սկզբին անգլիական միսիան իր մոտ է կանչում Ազգային Խորհրդի անդամներին և նրանցից ստորագրություն վերցնում քաղաքական գործընթացներին չխառնվելու համար: Թաթարները շտապում են 2 գնդացիր տեղադրել Շուշիից 2 վերստ հեռավորության վրա՝ «Յարմա» բլուրի մոտ, կտրելով Շուշու հաղորդակցությունը: Հայերը դիմում են անգլիական միսիային՝ պահանջելով վերացնել շրջափակումը: Անգլիացիները վերջիններիս վստահեցնում են, որ անհանգստանալու կարիք չկա:

Թաթարներն այնուհետև փորձում են գրավել քաղաքի հայկական մասը: Կազմակերպված դիմադրության շնորհիվ նրանք ետ են շպրտվում: Միջամտում է անգլիական միսիան, ինչի արդյունքում գրավվում են հայկական դիրքերը և ներկայացվում է մի վերջնագիր, ըստ որի 3 օրվա ընթացքում խորհրդի անդամները պետք է հեռանային Ղարաբաղի սահմաններից, հակառակ դեպքում Սուլթանովին իրավունք էր վերապահվում զենքի ուժով գրավելու քաղաքը: Սուլթանովը Շուշիի վրա կենտրոնացրել էր մոտ հազար մարդ, այն դեպ-

[1] Нагорный Карабах, 1918-1923, նշվ. աշխ., էջ 221:
[2] Նույն տեղում, էջ 234:

քում, երբ հայերի ինքնապաշտպանական ուժերը հազիվ հասնում էին 500-ի[1]:

Ավելին, բրիտանական հրամանատարությունը Սուլթանովին հասցրել էր հայտնել, թե ժողովրդին գրգռում և վիճակը ապակայունացնում են հենց Ազգային Խորհրդի անդամները[2]: Կեղծ հայասիրությամբ հատկապես աչքի է ընկնում մայոր Մոնկ Մեսոնը: Հայտարարելով, որ Շատելվորդը իրեն հրամայել է բոլոր հայ ղեկավարներին ձերբակալել, սակայն ինքը խոստանում է նրանց ապահով հասցնել Թիֆլիս: Հայերը, հավատալով, որ իրենց հեռանալուց հետո մայորը ամեն ինչ կանի վիճակը խաղաղեցնելու համար, տալիս են իրենց համաձայնությունը:

Հայերի նկատմամբ բռնությունները մեծ արձագանք են ունենում և այդ մասին Ադրբեջանի պառլամենտի անդամ Զուբարյանը ի հակակշիռ Կարաբեկովի զեկուցման, հանգամանալից ներկայացնում է գործուղված խմբի ավելի հավաստի տեղեկություններ Շուշիի դեպքերի մասին: Զուբարյանը վկայում է, որ «հունիսի 2-3-ին գեներալ-նահանգապետը ցանկանում է գանձարանը և փոստ-հեռակապը քաղաքի հայկական մասից տեղափոխել մահմեդական թաղամաս: Հայերը դիմադրություն են ցույց տալիս, որից հետո Սուլթանովը ստիպված է լինում հրաժարվել այդ մտադրությունից: Երեկոյան նա քաղաքի շուրջը տեղակայում է պարետներ, որոնց և հայերի միջև հրաձգություն է սկսվում: Սուլթանովը իր գործողությունները արդարացնում է հայերի կողմից քոչի կանգնեցումով, ինչը սակայն իրականությանը չի համապատասխանում: Սուլթանովի նպատակն է հայ հասարակությանը և Ազգային Խորհուրդին դնել անելանելի դրության մեջ, որպեսզի վերջիններս ճանաչեն իր իշխանությունը»[3]:

Հունիսի 5-ին անգլիական միսիայի անդամները Ազգային Խորհրդի ներկայացուցիչներին հեռացնում են քաղաքից, սակայն հրաձգությունը չի դադարում: Մի քանի օրվա ընթացքում բազմաթիվ հայեր են սպանվում, որոնց դիակները թողնվում են ժողովրդին ի ցույց: Այրվում և թալանվում է հայկական Փախլուլ գյուղը: Ադրբեջանական զորքերն այնուհետև գրավում են Շուշիի զորանոցները և ինչպես Սուլթանովն էր զեկուցում «Հույս կա, որ Շուշի քաղաքի

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 136:
[2] Տե՛ս, **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 445:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 226:



հնազանդեցման արդյունքում արագ և բարեհաջող կավարտվի Ղարաբաղի հայերի հպատակեցումը»[1]:

Կատարվող իրադարձությունների մասին շտապ տեղեկացվում է բրիտանական միսիային, որն էլ իր հերթին համապատասխան զեկուցագրով դիմում է Ադրբեջանի կառավարությանը: Զեկույցի մեջ նշվում է, որ պետք է դադարեցնել հետագա հարձակումները, սակայն հենց նույն օրը սկսվում է հայկական Ղայբալիքենդ թաղամասի կոտորածը, որտեղ գտնվում էր նաև Սուլթանովի տունը: Կոտորածը շարունակվում է նաև հունիսի 6-ին: Փախլուլ գյուղին ոչ մի օգնություն չի ցուցաբերվում: Հունիսի 7-ին հրդեհվում է Կրկժան գյուղը, հարձակում է կատարվում նաև հայկական Դաշքենդ գյուղի վրա: Զեկույցի համաձայն, Սուլթանովը «ռազմական գործողություններ է սկսել, իբր տեղեկություն ունենալով, թե 700 զինված հայեր մուտք են գործել Շուշի և նույնիսկ պատրաստվում են նոր ուժեր մտնել այնտեղ»[2]: Ուշագրավ է, որ զեկույցի մեջ նշվում է, թե գնդապետ Կլատենբերգը հունիսի 5-ին այդ ամենի մասին տեղեկացրել է Սուլթանովին և պահանջել, որ վերջինս քայլեր ձեռնարկի այդ ուղղությամբ: Սուլթանովն, իհարկե, «տեղեկացնում է» գնդապետ Կլատենբերգին «ձեռնարկված քայլերի մասին»՝ նշելով, որ հունիսի 7-ին, իր ուղարկած պահակախումբը զեկուցել է, թե Հայբալիքենդ գյուղն արդեն այրված է եղել: Կլատենբերգը գրում է, որ Սուլթանովն այս ամենի համար պետք է պատասխան տա Ադրբեջանի կառավարության առջև և որ կոտորածը քրդերի ձեռքի գործն է: «Սուլթանովը ասում է, թե քրդերը Շուշիում հայտնվել են թալանելու նպատակով,- գրում է նա,- սակայն ռազմական գործողությունները Շուշիում սկսվել էին ամսի 4-ին, իսկ քրդերը գյուղի վրա հարձակվել են ամսի 5-ին»[3]: Նույն գնդապետի հաղորդմամբ, Հայբալիքենդի 700 բնակչից մնացել էր ընդամենը 11 տղամարդ, 87 կին և երեխա: Ամեն դեպքում այն փաստը, որ Սուլթանովը ևս քուրդ էր և կապիտան Գոունասը տեսել է, թե ինչպես են թալանված ունեցվածքը բերել Շուշի, ուստի նրա «արդարացումների» կեղծությունը նույնիսկ նկատում էին անգլիացիները:

Հարցի հանգուցալուծմանը չի բերում նաև հունվարի սկզբներին

[1] Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 233:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 58, թթ. 1-2, ֆ. 200, գ.1, ց.309, թ.165
[3] Նույն տեղում:

Թիֆլիսում տեղի ունեցած անդրկովկասյան ժողովուրդների կոնֆերանսը: Հայաստանի արտգործ նախարար Տիգրանյանի հետ հանդիպման ժամանակ գեներալ Կորին հաղորդում է, որ Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները անհանգստացնող են և որ իր կողմից այնտեղ է ուղարկվել սպա Կիշբենը: Վերջինս հավաստիացնում է նաև, որ անգլիական զորքերը չեն լքի Անդրկովկասն այնքան ժամանակ, մինչև նրանց չփոխարինեն իտալական զորքերը: Սակայն միաժամանակ, փաստ էր այն իրողությունը, որ բրիտանական զորքերը չփորձեցին կանգնեցնել Սուլթանովի գործողությունները: Չթույլատրվեց նույնիսկ օգնություն ցույց տալ գաղթականներին: Շուշի ժամանած ամերիկյան միսիային խոչընդոտում էին սովյալներին ինչ-որ կերպ օգնություն ցույց տալու խնդրում[1]: Գործը հասնում է նրան, որ Սուլթանովը որոշում է նրանց դեմ զինուժ կիրառել[2]: Տեսնելով, որ իրադրությունը դառնում է անկառավարելի, «բրիտանական զորքերը միջամտում են և դադարեցվում է մահմեդական հարձակումը»[3]: Չնայած բրիտանական ուժերի Անդրկովկասյան հրամանատար Կորին Հայաստանի կառավարությանը երաշխավորում է Ղարաբաղի հայ ազգաբնակչության անվտանգության խնդրում, սակայն, մյուս կողմից, նույն բրիտանացիները Սուլթանովին պատժիչ գործողությունների էին մղում:

Ղարաբաղի հայության համար այդ բախտորոշ պահին, Ազգային Խորհուրդը կայացնում է ճիշտ որոշում «ուժեղացված կազմով տեղափոխվել շրջան՝ շարունակելով իր ձեռքում պահել Լեռնային Ղարաբաղի ողջ իշխանությունը: Ընդհարման առաջին օրը մոտ 4 հազար հոգուց բաղկացած մի հայկական զորագունդ շրջանից տեղափոխվել է դեպի Շուշի, սակայն անգլիացիների միջամտությամբ զորագնդին արգելվել է քաղաք մտնել[4]: Ադրբեջանական իշխանությունների լկտիությունը հասնում է նրան, որ Ղարաբաղում հայերի կոտորածների վերաբերյալ Հայաստանի բողոքները համարում էին միջամտություն իրենց ներքին գործերին[5]: Այս ամենից ոգևորված, Սուլթանովը շարժվում է դեպի Զանգեզուր՝ այն գրավելու մտադրությամբ:

[1] Աշխատավոր, 1 հունիսի, 1919, էջ 3:
[2] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 42, թ. 192:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 158:
[4] Աշխատավոր, 10 հունիսի, 1919, հ.113, էջ 2:
[5] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 65:



Ղարաբաղում հայերի կոտորածների և բռնարարքների դեմ բազմաթիվ միտինգներ են տեղի ունենում Երևանում, Թիֆլիսում և Անդրկովկասի այլ հայաշատ վայրերում: Միտինգների ժամանակ հայ մտավորականները նշում են, որ 600-ից ավել հայերի կոտորածը և 6 գյուղերի ավերումը ցույց են տալիս իրենց նախնիների պատգամներին հավատարիմ լինելու թուրք-մուսավաթականների պատրաստակամությունը, փաստելով, որ ադրբեջանական խաժամուժին գլխավորել են թուրք սպաները: Միտինգներում դիմումներ են հղվում դաշնակիցների ներկայացուցիչներին՝ դիմագրավելու և կանգնեցնելու ադրբեջանական եղեռնագործությունը[1]:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվում են հարցաքննված բազմաթիվ անձանց վկայությունները մայիսի վերջից մինչև հունիսի սկիզբը տեղի ունեցած կոտորածների մասին (հայեր, մահմեդականներ, ռուս զինվորներ), ուր պարզորեն և բազմաթիվ տեսանկյուններից նշագծվում է կատարվածի իրական պատկերը, ինչն անառարկելիորեն ապացուցում է, որ կոտորածները ծրագրված են եղել հենց Սուլթանովի կողմից[2]:

Ղարաբաղի կոտորածների մասին իրենց վերաբերմունքն արտահայտեցին նաև ամերիկյան ներկայացուցիչները: Նրանք տեղի ունեցածի մասին ոչ միայն տեղեկացնում էին հայերին, այլև հաղորդագրություններ էին ուղարկում Վաշինգտոն և Փարիզ՝ խաղաղության կոնֆերանսին[3]: Ամերիկյան բարեգործական կոմիտեի ներկայացուցիչ դոկտոր Բրաունը այս առումով հետևյալ միտքն է արտահայտել, ինչը մեր կարծիքով, բավականին լույս է սփռում խնդրո առարկա հարցի վրա. «անհերքելի և անժխտելի է, որ Զանգեզուր-Ղարաբաղը Հայաստանի մասն է, որի ապացույցը՝ նրա բազմադարյա պատմությունն է և հազարամյա վանքերն ու տաճարները: Ադրբեջանի պահանջներն ապօրինի են, ուղղակի պարզ ոտնձգություն է»,- եզրակացնում է ամերիկացի գործիչը[4]:

Արցախահայերի կոտորածի մասին լուրը առաջ է բերում ողջ հայության զայրույթն ու բողոքը: Հայաստանի կառավարությունը 1919 թ. հունիսի 16-ին բողոքի նոտա է ուղարկում Երևանում Ադրբե-

[1] Աշխատավոր, 24 հունիսի, 1919, հ.124, էջ 1, Նոր աշխատավոր, 27 հուլիսի, հ.150, էջ 4; ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ.139:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս I, թթ. 86-97:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 144; Աշխատավոր 18 հունիսի, 1919 թ.:
[4] **Ե. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 490:

ջանի ներկայացուցիչ Թեքինսկուն՝ Ղարաբաղի հայերի կոտորածի հարցով[1]: Հունիսի 22-ին Անդրկովկասի բրիտանական զորքերի հրամանատարին հատուկ ուղերձով է դիմում նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ը՝ բրիտանական հրամանատարությանը հորդորելով գործնական քայլեր ձեռնարկելու Ղարաբաղի հայերին կոտորածից պաշտպանելու համար:

Ցավալին այն է, որ բրիտանական ներկայացուցիչները ոչ միայն չեն միջամտում կոտորածին, այլև դրանով թույլ են տալիս, որ Սուլթանովը շարունակի իր գործողությունները ստիպելու համար հայերին իրեն ենթարկվել:

Ղարաբաղում ժողովուրդն, իսկապես, սարսափի մեջ էր՝ այս ընթացքում դադարեցվել էր բերքահավաքը, թաթարական զինված հրոսակախմբերի պայմաններում անհնար էր դարձել գյուղատնտեսական մյուս աշխատանքների կատարումը: Այս պարագայում ժողովրդի մոտ կարծես «տրամադրություն է ստեղծվում հաշտվելու ստեղծված իրավիճակի հետ, արժանապատիվ ճանապարհ և հաշտության եզրեր գտնել Ադրբեջանի իշխանությունը ընդունելու համար»,- գրում էր Ադրբեջանում ՀՀ ներկայացուցիչը՝ Վրաստանի իր կոլեգային և հաղորդում, որ իրավիճակից դուրս գալու համար հունիսի 20-ից հետո մտադիր է գումարել նոր համագումար[2]: Բացահայտ էր նաև, որ Սուլթանովը նախապատրաստվում էր ռազմական խոշոր հարձակման:

Ստեղծված կացությունից դուրս գալու համար, իր հերթին ելքեր էր փնտրում նաև բրիտանական հրամանատարությունը: Անփառունակ մայոր Մոնկ Մեսոնի փոխարեն Շուշիի միսիայի ղեկավար է նշանակվում մայոր Տարտը: Հունիսի 15-ին Աղդամից Շուշի է շարժվում անգլիական 500 հոգանոց մի զորագունդ: Ծրագրվում է Շուշիում տեղակայված անգլիական զինվորների թիվը հասցնել 2000-ի[3]: Իհարկե, այս ամենը սպասված արդյունքները չտվեցին և ադրբեջանական զորքերը, խուժանի հետ հունիսի 23-ին հարձակվում են Զանգեզուրի վրա, փորձելով գրավել Ղարաբաբա, Ագարակ և Եղվարդ գյուղերը: Ադրբեջանական ջոկատը, որի թիվը հասնում էր 1500-ի, իսկ նրան հետևող խուժանինը՝ 2000 (հրամանատարն էր

[1] Տե՛ս Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 254:
[2] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 42, թթ. 111-112:
[3] Աշխատավոր, 18 հունիսի, 1919 թ., համար 120, էջ 2:



քյազիմ փաշան) իր տրամադրության տակ ուներ 7 գնդացիր և 10 ֆուրգոն փամփուշտ: Ղարաբաբան թուրքերի կողմից թալանվում և այրվում է: Ագարակը փրկվեց դիմադրություն կազմակերպելու շնորհիվ: Զանգեզուրի մյուս վայրերում ևս հայերի պայքարը որոշակի հաջողություն է ունենում, բռնագրավվում է հակառակորդի 120 հրացան, 3 գնդացիր և փամփուշտներ:

Հայաստանի տնտեսական ծանր վիճակը կառավարությանը հնարավորություն չի տալիս լիարժեք քայլեր ձեռնարկելու իր սահմանների պաշտպանության ուղղությամբ: ՀՀ պատվիրակությունը դիմում է ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին՝ խնդրելով վերջինիս օգնությունը, զորքեր ուղարկելու Հայաստան կամ գոնե միջնորդելու, որ անգլիացիները մնան Կովկասում: Շուտով հայտնի է դառնում, որ աշխատավորական կուսակցության ճնշման տակ անգլիական կառավարությունը որոշում է ընդունում զորքերը ետ կանչել: Դիմում է ուղղարկվում անգլիական կառավարությանը՝ բրիտանական բանակները Անդրկովկասից դուրս չբերելու խնդրանքով[1]:

Զանգեզուրի և Ղարաբաղի դեմ թուրքական լայնածավալ գործողությունները նոր համագումար հրավիրելու անհրաժեշտություն են ստեղծում: Թեպետ Զանգեզուրը կարողացավ դիմակայել Խալիլ փաշայի հարձակմանը, սակայն, պարզ էր, որ նոր նախապատրաստություններ են կատարվում Զանգեզուրի դեմ[2]:

Իրավիճակի սրացումը թուլացնելու նպատակով հունիսի 27-ին ադրբաջանական կառավարությունը ստեղծում է միջկառավարական հանձնաժողով, որի մեջ մտնում էին նաև դաշնակիցների ներկայացուցիչները: Հանձնաժողովը, սակայն, որևէ լուրջ ձեռնարկ չի կատարում Ղարաբաղի հարցի կարգավորման ուղղությամբ:

Հունիսի 29-ին Վարանդայում գումարվում է Ղարաբաղի հայության 6-րդ համագումարը: Այն հրավիրվում է հայկական քաղաքային կոմիտեի նախաձեռնությամբ: Համագումարին մասնակցելու հրավեր է արվում նաև Սուլթանովին: Պետք է ժամանեին նաև ադրբեջանական կառավարության ներկայացուցիչները: Համագումարը նպատակ ուներ բանակցությունների միջոցով գտնել Ղարաբաղի հարցի լուծման խաղաղ պայմանները, մինչև խաղաղության կոնֆերանսի

[1] Վերածնունդ շաբաթաթերթ, գրական հասարակական-քաղաքական, Գ տարի, թիվ 22/52), 21 օգոստոս, 1919 թ., Փարիզ, էջ 65:
[2] Հայրենիք, Պոսթոն, 1920 թ., էջ 39:

վերջնական որոշումը: Համագումարին մասնակցում էին նաև Թիֆլիսի և Բաքվի ղարաբաղցիների հայրենակցական միությունների ներկայացուցիչները[1]: Հունիսի 28-ին Շոշ գյուղում համագումարը սկսում է իր աշխատանքները: Ադրբեջանի ներկայացուցիչները չհասցրեցին ներկայանալ, ուստի, երեք օր հետո, ափսոսանք հայտնելով, որ վերջիններս չեն ժամանել, մասնակիցները ցրվում են:

Համագումարին սակայն, հաջողվում է ադրբեջանցիների հետ բանակցությունների պայմանները ճշտելու համար ընտրել պատվիրակություն հետևյալ կազմով՝ Միսաք Տեր-Դանիելյան, Ռուբեն Շահնազարյան և Մելիք Յոլչյան: Ադրբեջանի ներկայացուցիչներ Շարիֆ Բեկ Ուսուբեկովը և Շահսուվարովը Ղարաբաղ են հասնում հունիսի 30-ին[2]: Շուշիի հայկական կոմիտեն մշակում է Ղարաբաղի և Ադրբեջանի միջև համաձայնության նախնական տեքստ՝ հարևան երկու ժողովուրդների արյունահեղությունից խուսափելու համար: Որոշվում է, որ համագումարի կողմից ընտրված հայ պատվիրակները պետք է մեկնեին Բաքու՝ հայերի իրավունքները երաշխավորող համաձայնություն ձեռք բերելու համար: Ասենք, որ համաձայնության նախնական տեքստում պայմանների մեջ որոշակի սահմանափակումներով նախատեսվում էր նահանգապետի իշխանության ճանաչումը:

1919 թ. հուլիսի 2-ին ՀՀ ներկայացուցիչը Վրաստանում հաղորդում է արտգործ նախարարին, որ Կորին արգելել է Սուլթանովին այլևս Շուշի վերադառնալ[3]: Սա դիվանագիտական խաբուսիկ քայլ էր, որն անուղղակիորոն ուղղված էր հայերի հնազանդեցմանը: Շատ չանցած՝ հուլիսի 6-ին բրիտանական հրամանատարությունը պահանջում է Շուշու միսիային կից ՀՀ ներկայացուցիչ Իշխան Արղությանին փոխարինել մեկ ուրիշով[4]:

Այսպիսով, Ղարաբաղի հայության 6-րդ համագումարը մշակում է մի շարք պայմաններ, որոնց շուրջ էլ պետք է կայանար Ադրբեջանի հետ համաձայնությունը: Այդ պայմաններն էին. 1. ադրբեջանական իշխանությունը ընդունվում է ժամանակավորապես, մինչև խաղաղության կոնֆերանսի որոշումը, 2. Ղարաբաղի ընդհանուր նահան-

---

[1] Աշխատավոր, 3 հուլիս, 1919 թ., էջ 2:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 212; Նոր Աշխատավոր, 13 հուլիսի, 1919 թ., համար 138, էջ 2:

[3] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 42, թ. 199:

[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թթ. 188-189:



գապետին կից ընտրվում է Խորհուրդ, բաղկացած վեց հոգուց՝ երեք հայից և երեք մահմեդականից: Խորհուրդը կրելու է հսկիչ բնույթ և առանց այդ խորհրդի համաձայնության և վավերացման, նահանգապետը ոչ մի կարևոր որոշում ընդունել չի կարող 3. նահանգապետը պետք է ունենա հայ օգնական: 4. Ղարաբաղի հայաշատ վայրերում բոլոր պաշտոնյաները պետք է լինեն ազգությամբ հայ: 5. Հայկական վայրերից թուրքական զորքերը դուրս են բերվելու և կենտրոնացվելու են Խանքենդում և Շուշիում: 6. Դադարեցվում են հայերի նկատմամբ հալածանքները[1]:

Ադրբեջանական կողմը սկզբում նույնիսկ չի ընդունում հայերի նախապայմանները և առաջարկում է անվերապահորեն ընդունել Ադրբեջանի իշխանությունը, սակայն, տեսնելով, որ գործը կարող է հասնել արյունահեղության, խնդիրը թողնվում է հետագա բանակցությունների քննարկմանը: Այս ընթացքում Ադրբեջանը ակտիվացնում է քարոզչական գործողությունները այն աստիճան, որ «Բաքվում անհայտ գործակալների կողմից անընդհատ կազմակերպվում են ցույցեր, որոնցում կոչ է արվում արշավանքներ կազմակերպել Ղարաբաղ և Զանգեզուրի միջով շարժվել դեպի Նախիջևան, ճանապարհին ոչնչացնել ողջ հայկական բնակչությանը, Ադրբեջանի իշխանությունը տարածել մինչև Թուրքիայի հետ նախկին ռուսական սահմանը: Ուշագրավ է նաև, որ ադրբեջանցիները իրենց ծրագիրը իրականացնելու համար պարսկական խաների հետ համաձայնության էին եկել Մեղրու վրա հարձակումը սկսելու դեպքում պարսկական կողմից աջակցություն ստանալու հարցում»[2]:

1919 թ. հուլիսի 24-ին ՀՀ վարչապետը բողոքում է բրիտանական ուժերի հրամանատարությանը, որ վերջիններիս հավաստիացումը, թե Սուլթանովը չի վերադառնա Շուշի, իրականությանը չի համապատասխանում, քանի որ ինքը տեղեկություններ է ստացել, որ Սուլթանովը վերադարձել է Ղարաբաղ: Միաժամանակ, ադրբեջանական կողմը Ղարաբաղում հուլիսի 20-ին վերսկսում է ռազմական գործողությունները և ավերում է մի քանի հայկական գյուղեր՝ Դոլանլարը, Բինյաթլուն և Առաքյուլը[3]: Սուլթանովը ամեն ինչ անում էր ուժեղացնելու Զանգեզուրի վրա ճնշումը՝ Նախիջևանի հետ կապ-

---

[1] Նոր աշխատավոր, 5 օգոստոս 1919 թ., էջ 2:

[2] Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 310-311:

[3] Տե՛ս, նույն տեղում, էջ 312-313:

վելու համար: Զանգեզուր–Ղարաբաղի շրջանային խորհրդի ղեկավար Շահմազյանը դիմում է ՀՀ կառավարությանը՝ զինամթերք ստանալու ակնկալիքով (պահանջում է 0.5 մլն. փամփուշտ, հագուստ և դեղորայք)[1]:

Ադրբեջանական նկրտումները 1919 թ. երկրորդ կեսին էլ ավելի են ակտիվանում, քանզի աստիճանաբար մեծանում է Հայաստանի դեմ պայքարում թուրքական օժանդակությունն ու հովանավորությունը: Բանակցությունների արդյունքում կայանում է թուրքական հովանավորության վերաբերյալ պայմանագրի ստորագրումը, ինչն, անկասկած, կապված էր Թուրքիայում ծավալված քեմալական շարժման հետ: Վերջինս ***Ադրբեջանի նկատմամբ հատուկ վերաբերմունք դրսևորելով, 1919 թ. նոյեմբերի 29-ին գաղտնի պայմանագիր է ստորագրում, որն ուղղված էր «ոչ մահմեդական տարրերի, հատկապես հայերի ոչնչացմանը:*** Դրա համար պայմանագրում նախատեսվում էր ստեղծել հատուկ կազմակերպություններ»[2]:

1919 թ. օգոստոսի 6-ին բրիտանական աղբյուրներից տեղեկացվում է, որ որոշված է անգլիական զորքերը հեռացնել նախկին Ռուսաստանի սահմաններից: «Լոնդոնի կառավարությունը նման որոշում կայացնելու համար անշուշտ ունեցել է բավարար հիմքեր, բայց դրանց մեջ հաշվի չի առնվել ո՛չ անդրկովկասյան ժողովուրդների տրամադրությունը և ո՛չ էլ, մասնավորապես, Հայաստանի ծանր ողբերգական վիճակը,- նշում էր «Նոր աշխատավոր» օրաթերթը: - Եվ օրհասական այս ժամին դաշնակից զորքերը հեռացվում են Կովկասից, թեպետ անհերքելի է և բոլորին էլ հայտնի, որ բրիտանական զորքերի հեռացումը Հայաստանը կթողնի անօգնական վիճակում՝ թուրքերի ոտնձգությունների դեմ: Հայերը, որոնք հույս ունեին պաշտպանություն գտնել, կհանձնվեն թուրքերի և քրդերի ձեռքը»[3]: Բերված քաղվածքը անգլիական հաղորդագրությունն է, որն իրապես բնորոշում է Կովկասում ստեղծված վիճակը: Ուշագրավ է, որ իրենք՝ բրիտանացիները ևս կանխատեսում էին նման որոշման ծանր հետևանքները հայերի համար: Այդ մասին է վկայում 1919 թ. օգոստոսի 9-ին Բալֆորի նամակը Լլոյդ Ջորջին. «Ես ան-

[1] Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 317:
[2] The Armenian Review, A, Krieger, A. Secret Military pact, 1974, vol. XXVII, p. 20-21.
[3] Նոր աշխատավոր, 6 օգոստոս, 1919 թ., էջ 1:



հանգստացած եմ Կովկասում տիրող դրությունից: Ամեն կողմից մեզ տեղեկություններ են հասնում, որ բրիտանական զորքերի հեռացմանը կհետևի հայերի ամենազարհուրելի կոտորածը և ընդհանուր արյունահեղությունը ողջ Կովկասով մեկ: Ես ամբողջովին կողմ չեմ զորքերի հեռացմանը: Իմ կարծիքով, դա ամեն տեսակետից կարևոր է: Խոստովանում եմ, ես չէի ուզենա տեսնել այն օրը, երբ կասեն, որ բրիտանացիները կոտորածի ենթարկել տվեցին հայերին՝ դիտավորյալ հեռացնելով իրենց զորքերն այն դեպքում, երբ տեղական իշխանությունները տեղյակ էին պահել հնարավոր բոլոր հետևանքների մասին: Ես կուզենայի ասելու պրն. Փոլքին (ԱՄՆ ներկայացուցիչը Գերագույն Խորհրդում) բրիտանական կառավարության անունից, որ Հայաստանի և Կովկասի համար բրիտանական զորքերի հեռացման հնարավոր հետևանքներից մենք նույնքան ենք անհանգստացած, որքան ամերիկացիները, բայց, որ տարբեր պատճառներով անհնար է դարձել բրիտանական զորքերի մնալը և մեր թողնել-հեռանալու մտադրությունը իրազեկ ենք դարձրել դեռևս մարտ-ապրիլ ամիսներին, ուստի եթե ամերիկացիները պատրաստ են մինչև սեպտեմբերի 30-ը անհրաժեշտ քանակությամբ սպաներ և զորք բերել պաշտպանելու հայերին, ապա բրիտանական կառավարությունը իր զորքերին կպահի այնտեղ մինչև այդ ժամկետը, սակայն եթե Ամերիկան չի կարող տեղավորվել այդ ժամկետում, ապա մեզ այլևս ոչինչ չի մնա վերսկսել զորքերի դուրսբերումը օգոստոսի 15-ից»[1]:

Բացի վերոնշյալ փաստաթղթից, առկա են նաև բազմաթիվ այլ փաստաթղթեր, որտեղ բրիտանացիները փորձում են շահագրգռել ամերիկյան կողմին իրենց փոխարինելու համար: Ավելի վաղ, փորձ էր արվել անգլիացիներին փոխարինել իտալական զորքերով (1919 թ. մարտի 24-ին Փարիզում գլխավոր շտաբների կողմից կնքած պայմանագրի համաձայն), սակայն ձեռնարկումը ձախողվեց, երբ Իտալիայում Օռլանդոյի կառավարությանը փոխարինեց Նիտտիի կառավարությունը, իսկ վերջինս նպատակահարմար չգտավ 30 հազարանոց զորքի ուղարկումը Անդրկովկաս:

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ. Ջ. Կիրակոսյան, Երևան, 1972 թ., էջ 544-545; Documents on British Foreign Policy 1919-1939 edited by E. L. Woodward, volume 1, 1919, London, His Majesty's Stationery Office, 1947, p. 389:

1919 թ. մայիսի 14-ին դաշնակիցների խորհուրդը որոշում է Հայաստանի մանդատը տրամադրել ԱՄՆ-ին, իսկ Հայաստանի սահմանների հարցը թողնել Նախագահ Վիլսոնի հայեցողությանը[1]:

Պետք է նկատել, որ բրիտանական քաղաքականությունն այս շրջանում որոշակի ճգնաժամ է ապրում, քանզի գաղութներում ծավալվել էին հզոր ապստամբական շարժումներ, լարվածության էր հասել իռլանդական հարցը, երկրի ներսում նոր թափ էր ստացել բանվորական շարժումը[2]:

Բրիտանական միսիան համարելով ավարտված Կովկասում, Չերչիլը, որպես ամփոփիչ խոսք, հիշատակում է 1915 թ. հայերի սարսափելի կոտորածները, նկարագրում է պատերազմում կրած հայերի վնասները և այնուհետև ամփոփում. ***«կոտորածները, ռազմական կորուստները, բռնի արտագաղթը հանդիսանում են ավելի հեշտ սպանության միջոցներ, որոնք Հայաստանի բնակչությունը կրճատեցին ավելի քան մեկ երրորդով, 2.5 մլն. բնակչից զոհվեց երեք քառորդը: Թվում էր, թե դրանով հայ ժողովրդի տանջանքները պետք է ավարտվեին: Թվում էր, թե եկել է ժամանակը, երբ հայերին պետք է տրվեր արդարացի վերաբերմունք և նրանք ստանան խաղաղ ապրելու իրավունքը իրենց հայրենիքում: Նրանց հետապնդողները, բռնակալները զոհվել էին պատերազմի կամ հեղափոխության ընթացքում: Հաղթող հզոր ազգերը հանդիսանում էին հայերի բարեկամները և պետք է մտածեին հայկական գործի հաղթանակի համար: Կասկածից վեր էր, որ այդ 5 հաղթական պետությունները պետք է կարողանային իրականացնել իրենց կամքը: Սակայն, հետագայում պարզվեց, որ դաշնակիցների մտահոգությունները միայն դատարկ խոսքեր էին: Ոչ մի պետություն չէր ցանկանում վերցնել Հայաստանի մանդատը: Բրիտանիան, Իտալիան, Ամերիկան, Ֆրանսիան թեպետ կարեկցում էին, սակայն միայն թափահարում էին գլուխները»[3]:***

Այսպիսով, բրիտանացիների՝ Անդրկովկասից հեռանալը էլ ավելի նպաստեց հայկական տարածքներին տիրելու թուրք-թաթարական նկրտումների իրականացմանը: Եվ չնայած դրան զուգահեռ մեծանում էին ամերիկյան հետաքրքրությունները Անդրկովկասում, սակայն բրիտանական զորքերի հեռացումը հնարավորություն չէր տալիս արագ կերպով Անդրկովկասում տեղակայել դաշնակից զորքեր, թեպետ որպես դաշնակից երկրների ներկայացուցիչ Անդրկովկաս ժամանեց ամերիկացի գնդապետ Վ. Հասկելը, որն այդ պաշտոնին էր նշանակվել 1919 թ. հուլիսի 5-ին: Վերջինս լիազորված էր գործել դաշնակիցների անունից Անդրկովկասում և Կ. Պոլսում: Օգոստոսի սկզբին ամերիկյան կոնգրեսը որոշում է ռազմական առաքելություն ուղարկել Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ, հիմնավորումով, որ «օգոստոսի 15-ից բրիտանական զորքերի հեռացումը հայերին կրկին հանձնելու է թուրքերի և քրդերի ձեռքը: Ուստի ամերիկյան մանդատի կիրառման հույսը կարող էր խաղաղություն բերել Հայաստանին»[1]:

Օգոստոսին Հայաստան ժամանած Հասկելին ևս դիմումներ են հղվում Ղարաբաղի հարցի շուրջ, սակայն վերջինս չէր կարող հետաձգել բրիտանական զորքերի հեռացումը: Բազմաթիվ են հայկական դիվանագիտական շրջանակների դիմումներն ու խնդրագրերը, անգլիական զորքերի հեռացումը որոշ ժամանակով կասեցնելու համար: Իրավիճակը ճիշտ էր բնորոշում Խատիսյանը. «Օգոստոսի 15-ին բրիտանական զորքերը հեռացան Անդրկովկասից և Էրզրումից: Թուրք-թաթարական շարժումները արդեն սկսում են սպառնալ հայ ժողովրդի գոյությանը: Բրիտանական ուժերի ներկայությունը մասամբ զսպում էր այդ շարժումը: Նրանց հեռացումով անխուսափելի աղետ կսկսվի: Հայ ժողովրդի գոյությունը վտանգի տակ է, այն դեպքում, երբ դաշնակիցների հաղթանակը Հայաստանին խոստանում էր ազատություն և կյանք»[2]: Ճիշտ է, բրիտանական զորքերը հեռացան Անդրկովկասից, սակայն Հայաստանը շարունակում էր ստանալ վերջիններիս օգնությունը. «Փոթի նավահանգստով Հայաստան է հասնում Ռոշ սիստեմի 25 հազար հրացան, Մաքսիմ սիստեմի 400 թեթև գնդացիր, 58 մլն. փամփուշտ, 80 տոննա բիսկվիտ, 40 հազար համազգեստ»[3]:

---

[1] Տես А. Мортон, Дж. Тейт, История английского рабочего движения 1770-1920, Москва, 1959, стр. 380, 384; В. Черчиль, Мировой Кризис, Москва, 1932, стр. 190-192:

[2] Տես Д. Джордж, Правда о мирных договорах, т. 2, Москва, 1957, стр. 394-396:

[3] В. Черчиль, նշվ. աշխ., էջ 278:

[1] Նոր աշխատավոր, 5 օգոստոսի, 1919 թ., էջ 2; ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 171, թ. 22:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 20, թ. 72Ա:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թթ. 53-56:

Այս ընթացքում, ղարաբաղյան իրադարձությունները օգոստոսի երկրորդ կեսին հասնում էին լարվածության բարձրակետին: Դեռևս օգոստոսի 10-ին Շուշիից ետ էր կանչվել բրիտանական միսիան, որն արդեն հայերին իր գործողություններով դրել էր լարված վիճակի մեջ: Սուլթանովը վերադառնում է Ղարաբաղ և շարունակում իր քաղաքական բռնությունները: Այս ամենի հետևանքով, Ղարաբաղի հայությունը հայտնվել էր ողբերգական վիճակում: 1919 թ. օգոստոսի 12-ին կայանում է Ղարաբաղի հայերի 7-րդ համագումարը: Սուլթանովը առաջարկում է այն գումարել Շուշիում: Համագումարի անդամները հասկացան, որ դա հնարավորություն կտա Սուլթանովին ճնշում գործադրել պատգամավորների վրա, ուստի նրանք հրաժարվում են: Համագումարը հրավիրվում է Վարանդայի Շոշ գյուղում, որին մասնակցում էին շուրջ 200 պատգամավորներ: Համագումարի հենց սկզբում պարզվեց, որ Վարանդայից ուղարկված պատգամավորները սպանվել են: Այդ օրերին Խանքենդում և Շուշիում կրկին իրագործվեցին հայերի կոտորածներ: Համագումարը Սուլթանովից պահանջում է պատժել մեղավորներին, այլապես կդադարեցվեն աշխատանքները: Սակայն Վահան եպիսկոպոսի և մի շարք այլ գործիչների համոզմամբ համագումարը գտավ, որ ուժերը չեն ներում պայքարի համար և պետք է ընդունել ժամանակավոր համաձայնությունը: Օգոստոսի 15-ի նիստը որոշում ընդունեց պատվիրակություն ուղարկել Սուլթանովի մոտ և համաձայնության գալ ժամանակավոր պայմանագրի շուրջ: Պետք է ասել, որ որոշման կայացման խնդրում պակաս դեր չխաղացին Սուլթանովի սպառնալիքները: Շոշը շրջապատված էր հակառակորդի թնդանոթներով: Այնուհանդերձ, ժամանակավոր համաձայնագիրը դառնում է իրողություն և այն կազմված էր 26 կետից.

«1. Ներկա ժամանակավոր համաձայնությունը ընդունվում է կողմերից, մինչև Խաղաղության կոնֆերանսի որոշումը, որի վճիռը երկու կողմերի համար պետք է պարտադիր լինի:
2. Ղարաբաղի լեռնային մասը՝ Շուշիի, Ջևանշիրի և Ջեբրայիլի գավառների հայ բնակչությունը իրեն ժամանակավորապես համարում է Ադրբեջանի մաս:
3. Վերոնշյալ գավառները մնում են գեներալ-նահանգապետության մեջ առանձնացված հատուկ վարչական միավորման մեջ և որ հայկական լեռնային գոտում նշանակվում է հայկական վարչակազմ, փոքրամասնության իրավունքները պահպանելու համար:
4. Ղարաբաղի լեռնային մասում պաշտոնատար անձինք նշանակվում են հայկական խորհրդի անդամների ներկայացմամբ:
5. Գեներալ-նահանգապետությանը կից ստեղծվում է 6-ի խորհուրդ (երեք հայ, երեք մահմեդական):
6. Խորհրդի անդամ հայերը ընտրվում են Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության համագումարում: Համագումարը իրավունք ունի վերընտրությունների:
7. Ազգամիջյան բնույթի բոլոր սկզբունքային հարցերը չեն կարող կյանքի կոչվել առանց խորհրդի նախնական քննարկման:
8. Խորհուրդը 1/3-ով իրավունք ունի նախաձեռնություն ցուցաբերելու՝ գեներալ-նահանգապետության ղեկավարման և կազմակերպման հարցերում:
9. Խորհուրդը իրավունք ունի գեներալ-նահանգապետության վարչական կազմի վրա վերահսկողություն սահմանել, առանց խառնվելու վարչակազմի աշխատանքներին:
10. Սահմանվում է գեներալ-նահանգապետի քաղաքացիական գործերի գծով օգնականի պաշտոն, որը պետք է լինի ազգությամբ հայ:
11. Օգնականի պաշտոնի համար հայկական խորհրդից ադրբեջանական կառավարությանը ներկայացվում է երկու թեկնածու, որոնցից ընտրվում է մեկը:
12. Ղարաբաղի հայերը օգտվում են մշակութային ինքնորոշման իրավունքից:
13. Մշակութային ինքնորոշումը իրականացվում է Ղարաբաղի ազգային խորհրդից ընտրված համագումարների միջոցով, որոնք հրավիրվում են պարբերաբար:
14. Ադրբեջանի կառավարությունը հսկում է Ազգային խորհրդի գործունեությունը՝ լիազորված հայերի միջոցով:
15. Խաղաղ ժամանակ զորամասերը պետք է տեղակայվեն Խանքենդում և Շուշիում:
16. Հայկական Ղարաբաղում զորամասերի ցանկացած տեղաշարժ կարող է իրագործվել միայն Խորհրդի անդամների

2/3-ի համաձայնությամբ:

17. Քաղաքական հայացքների համար որևէ մեկը չպետք է հետապնդվի ինչպես դատական, այնպես էլ վարչական կարգով:

18. Քաղաքական նկատառումներով հեռացված հայերը կարող են վերադառնալ իրենց բնակության վայրերը:

19. Ղարաբաղում դադարեցվում է հայ և մահմեդական բնակչության զինաթափումը մինչև Խաղաղության կոնֆերանսի որոշումը:

**Ծանոթություն.** քանի որ զինաթափումը հայտարարված է ողջ Ադրբեջանում, խոսքը կարող էր գնալ միայն գործընթացի դադարեցման մասին:

20. Ադրբեջանի կառավարությունը նյութական և բարոյական օգնություն պետք է ցուցաբերի հայկական և մահմեդական ավերված բնակավայրերի արագ վերականգնման համար:

21. Ազգամիջյան հարցերի արդյունավետ կարգավորման համար Խորհրդի կողմից պարբերաբար հրավիրվելու են ընդհանուր և տեղական հայ-մահմեդական համագումարներ:

22. Խորհուրդների հրավիրման, խոսքի և մամուլի լիակատար ազատություն: Ռազմական դրության հետ կապված, հավաքները թույլատրվում են բացառապես վարչակազմի կողմից:

23. Մասնավոր և պաշտոնական անձանց բոլոր հանցանքները հետապնդվում են դատական կարգով, բացառությամբ 1919 թ. հունիսի 11-ի Ադրբեջանի հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի կողմից սահմանված դեպքերի:

24. Մինչ այժմ տեղի ունեցած ազգամիջյան բախումների մասնակիցները չպետք է հետապնդվեն:

25. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի կողմից ընդունելու պահից:

26. Ներկա համաձայնագիրը ուժի մեջ է համարվում նաև ռազմական, շրջափակման և այլ պայմաններում:

Ք. Շուշի 22 օգոստոսի 1919 թ.»[1]:

Պայմանագիրը ստորագրվում է 16 հայ պատվիրակների կողմից, որից հետո Խոսրով բեկ Սուլթանովը շնորհավորում է համաձայնագրի ստորագրության կապակցությամբ և երաշխավորում հայ բնակչության անվտանգությունը:

Համագումարը ընտրում է նահանգապետին կից Խորհրդի հայ անդամներին՝ Գ. Քալանթարով, Լ. Վարդապետյան և մի գյուղացի: Գեներալ-նահանգապետի օգնական է ընտրվում Արսեն Հովհաննիսյանը (Արսո): Այդ նույն ժամանակ՝ օգոստոսի 12-13-ը Շուշուց հեռանում են ամերիկյան օգնության կոմիտեն և անգլիական կայազորը[1]: Այդ միավորների հեռանալուց հետո Սուլթանովը անմիջապես փակում է երկրամաս տանող բոլոր ճանապարհները և 48 ժամյա վերջնագրի սպառնալիքով ստիպում է համագումարին ընդունելու համաձայնագիրը:

Պետք է նկատել սակայն, որ համաձայնագրի ընդունումից հետո էլ ՀՀ շարունակում է Ղարաբաղը և Զանգեզուրը համարել որպես Հայաստանի անբաժան մաս: Խաղաղության վեհաժողովին հղված նամակում ՀՀ կառավարությունը արձանագրում է, որ Ադրբեջանը բռնություն է կիրառում և ստիպում է Ղարաբաղին համաձայնության գալ, ինչը, բնականաբար, օրինական համարել չի կարելի:

Այս ընթացքում համաձայնության գալով բրիտանացիների հետ՝ Հասկելը ծնավորում է Շարուր-Նախիջևանի ամերիկյան նահանգապետությունը: Հայաստանի և Ադրբեջանի միջև ստեղծվում է չեզոք գոտի, որը, փաստորեն, ամբողջովին ղեկավարվում է ամերիկացի նահանգապետի կողմից:

Հասկելի նախաձեռնությամբ և Հայաստանի ու Ադրբեջանի լուռ համաձայնությամբ, Զանգեզուրը ճանաչվում էր Հայաստանի մաս, իսկ համաձայնության 12-րդ կետում Ադրբեջանի կառավարությունը համաձայնվում էր բոլոր միջոցներով հեշտացնել Շուշիում և Գորիսում Մերձավոր Արևելքի օգնության կոմիտեների գործունեությունը[2]: 20 կետից բաղկացած համաձայնագրով Ադրբեջանը ճանաչում է Շարուր-Նախիջևանի ամերիկյան գեներալ-նահանգապետությունը, իսկ 9-րդ կետում արձանագրվում էր Հայաստանի իշխանության տարածումը Զանգեզուրում: Ղարաբաղի հարցը կրկին մնաց առկախ: Իր հերթին, Սուլթանովը հույսը չէր կորցրել Զանգեզուրը գրավելու համար, ուստի հրաժարվում է նույնիսկ Ադրբեջանի ներքին գործերի նախարարի առաջարկված պաշտոնից և գլխավոր

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50 (մաս 1), թ. 102:

[1] Տե՛ս, Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 330:

[2] Տե՛ս, Борьба за победу советской власти в Азербайджане 1918-1920, Документы и материалы, Баку 1967, стр. 263:

շտաբի հետ ծրագրում է քրդական խմբերի ձևավորման միջոցով հասնել իր նպատակների իրագործմանը[1]:

Սեպտեմբերի երկրորդ կեսին շարունակվում են Ադրբեջանի զավթողական քաղաքականության դրսևորումները, այժմ արդեն որոշվել էր հարվածի ուղղությունը տեղափոխել Արաքսի հարավային գոտի՝ Ղարաբաբա-Ագարակ-Եղվարդ ուղղությամբ և Մեղրու շրջան: Հարձակումների այս ալիքը Զանգեզուրում ետ է մղվում և մարտերը շարունակվում են մինչև հոկտեմբերի սկիզբը և ավարտվում հայերի հաղթանակով: Արդյունքում՝ Խանքենդ գյուղը գրեթե կորցնում է իր բնակիչներին, ուժեղանում է բարոյալքումը ադրբեջանական զորքերում:

Այդուհանդերձ, ադրբեջանական քարոզչությանը հաջողվում է ապստամբության հրահրել Նախիջևանի մահմեդական բնակչությանը, որի հետևանքով իրականացվում է մոտ 10 հազար հայերի կոտորած[2]:

Թուրք-թաթարական ծրագրված գործողությունները արդեն իսկ իրական սպառնալիքներ են ստեղծում հայ ժողովրդի ամբողջական գոյությանը, ինչը մեծապես կապված էր «բրիտանական զսպող ձեռքի հեռացման հետ»[3]: Թուրքական ռազմական շարունակվող օժանդակության շնորհիվ Ադրբեջանը փորձում էր հաշվեհարդար տեսնել հայ բնակչության նկատմամբ: Այդ մասին Հայաստանի կառավարությանը 1919 թ. հոկտեմբերի վերջին զգուշացնում է վրացական կառավարությունը. «Ադրբեջանի կառավարությունը որոշել է Շիխլինսկու հրամանատարությամբ Սուլթանովին օգնության ուղարկել 7000 զինվոր: Սուլթանովը իր տրամադրության տակ ունի 5000 քուրդ և 3000 նախիջևանցի ապստամբներ: Բայազետ-Սուրմալուի շրջանում հայտնվել են թուրքական ջոկատներ: Ադրբեջանական զորքերը հարձակվում են Գանձակ-Թարթառ-Աղդամ-Շուշի-Գորիս ուղղությամբ»[4]:

Զանգեզուրի դեմ ռազմական գործողություններ նախապատրաստելու համար Ադրբեջան են ժամանում Էնվեր և Նուրի փաշաները: Նպատակ կար հաղթանակի դեպքում Պարսկաստանի միջո-

[1] Տե՛ս, Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 338-340:
[2] Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 346:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 171, թ. 5; Նոր աշխատավոր, 8 հոկտեմբերի 1919, համար 210:
[4] Нагорный Караxаб 1918-1923, նշվ. աշխ., էջ 348.



ցով կապ ապահովել Թուրքիայի հետ, եթե կամավորական բանակը հարձակվի Ադրբեջանի վրա: Ծրագրված էր այդ ճանապարհով զենք-զինամթերք ապահովել Ադրբեջանին[1]:

Ադրբեջանի գործողությունները ստիպում են Հայաստանի կառավարությանը դիմել Անդրկովկասում բրիտանական ուժերին փոխարինած ամերիկյան գլխավոր շտաբի գնդապետ՝ Ջեյմս Ռեյին, որպեսզի վերջինս միջնորդի վիճելի հարցերում համաձայնության կայացմանը:

ՀՀ-ի առաջարկով վիճելի հարցերը լուծելու համար որոշվում է հայ-ադրբեջանական կոնֆերանս հրավիրել Բաքվում[2]: Կոնֆերանսը պետք է տեղի ունենար նոյեմբերի 20-ին, սակայն հետաձգվում է մինչև դեկտեմբերի 3-ը: Մինչ այդ, Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցություններ են տեղի ունենում 1919 թ. նոյեմբերի 20-ին, գնդապետ Ռեյի մասնակցությամբ: Հայաստանը ներկայացնում էր Խատիսյանը, ադրբեջանական կողմը՝ Ուսուբեկովը: Կոնֆերանսի սկզբից Ուսուբեկովը ներկայացնում է Ադրբեջանի պահանջները Զանգեզուրի վերաբերյալ: Երկար քննարկումներից հետո Ադրբեջանը կրկին պնդում է իր նկրտումները հայկական երկրամասի հանդեպ: Գնդապետ Ռեյը իր ելույթում փաստում է, որ դեռ բրիտանական նահանգապետության ժամանակ Զանգեզուրը պատկանել է Հայաստանին և «պետք է ղեկավարվի Հայոց Ազգային Խորհրդի կողմից: Թաթար հովիվները իրենց անասունները ուղարկում են այդ շրջանները: Հուզումները սկսվում են հայերի հետ անասնապահների բախումներից: Այդ ամենից հետո Ադրբեջանը ուղարկում է իր զորքերը հայերին պատժելու համար: Ես առաջարկում եմ դադարեցնել պատերազմը և վերականգնել բրիտանացիների սահմանած կարգը»,- պնդում է ամերիկացի գնդապետը[3]: Ադրբեջանի նախարար-նախագահը ընդդիմանում է, ասելով, որ Ղարաբաղում և Զանգեզուրում Սուլթանովը նահանգապետ է նշանակվել բրիտանացիների կողմից: Հետևում է Ռեյի հետևյալ պատասխանը. «Սուլթանովին անգլիացիները նշանակել են ժամանակավոր՝ գերմանացիների և թուրքերի հեռանալու ընթացքում: Հետագայում Սուլթանովը ետ է կանչվել անգլիացիների կողմից և մեկնել Բաքու: Բրիտանացիները

[1] Нагорный Караxаб 1918-1923, նշվ. աշխ., էջ 350:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 4:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս 2, թթ. 309-311:

նախապատրաստվում էին այդտեղ ուղարկել իրենց զորքերը, սակայն պարզվում է, որ պետք է գան իտալացիները և ղեկավարեն այդ շրջանը: Իտալացիները չեն գալիս և բրիտանացիները կրկին պատրաստվում էին զորքեր ուղարկել այնտեղ, սակայն իրահանգ է ստացվում վերադառնալ Բաքու, իսկ Սուլթանովը առանց նախազգուշացման մնում է այնտեղ»[1]:

Երկարատև բանակցությունների արդյունքում Հայաստանի և Ադրբեջանի կողմից ընդունվում է համաձայնությունների մի փաթեթ, որն իր մեջ ներառում է հետևյալ կետերը.

«1. Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները պարտավորվում են դադարեցնել թշնամական գործողությունները միմյանց նկատմամբ և այլևս չվերադառնալ զենքի ուժի կիրառման:
2. Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները համաձայնվում են գործնական քայլեր կիրառել Զանգեզուր տանող ճանապարհների վերաբացման և խաղաղ առևտրի իրականացման համար:
3. Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները պարտավորվում են լուծել բոլոր վիճելի հարցերը այդ թվում նաև սահմանների հարցը խաղաղության պայմանագրի շրջանակներում: Անհամաձայնության դեպքում երկու կառավարությունները դիմելու են չեզոք երկրի միջնորդությանը, որը ներկա պահին հանդիսանում է ամերիկյան բանակի գնդապետ Ջեյմս Ռեյը:
4. Երկու կառավարությունները պարտավորվում են նշանակել հավասար թվով պատվիրակներ, որոնք պետք է նոյեմբերի 26-ին հանդիպեն Բաքվի կոնֆերանսում, ուստի կոնֆերանսը հետաձգվում է մինչև դեկտեմբերի 4-ը և արդեն պետք է կայանա Թիֆլիսում: Այդ կոնֆերանսը կքննարկի բոլոր վիճելի հարցերը երկու կառավարությունների միջև և իրավունք կունենա որոշել այդ բնույթի հարցերը պայմանագրի կամ միջնորդի միջոցով:
5. Այս պայմանագիրը ուժի մեջ կմտնի խորհրդարանների հաստատումից հետո և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի վարչապետ-նախարարները պարտավորվում են անփոփոխ օժանդակել և կատարել վերոնշյալ պայմանագրի բոլոր կետերը»[1]:

Սույն պայմանագրին Ադրբեջանը ստիպված էր գնալ, քանի որ Զանգեզուրի դեմ պայքարում թուրք-թաթարական զորքերը նոյեմբերին ջախջախիչ պարտություն էին կրել: Ադրբեջանի կողմից պայմանագրի ստորագրումը սակայն չէր նշանակում, թե դադարեցվելու էին Զանգեզուրի դեմ ռազմական գործողությունները: Դա պարզ երևում է հետաձգված և միայն դեկտեմբերի 14-ին հրավիրված հայ-ադրբեջանական կոնֆերանսի ընթացքից: Այն տևեց մինչև դեկտեմբերի 21-ը, որին հայկական կողմից մասնակցում էին Մ. Հարությունյանը, Տ. Բեկզադյանը և Վ. Փափազյանը, իսկ Ադրբեջանից՝ Ջաֆարովը, Խան Խոյսկին և Վեքիլովը: Բազմաթիվ հարցերի թվում քննարկվեց նաև սահմանների հարցը: Արդյունքում, ադրբեջանական կողմի անհամաձայնության պատճառով, հնարավոր չեղավ ճշգրտել սահմանների հարցը:

Ամփոփելով, պետք է նշել, որ այս նախաձեռնությունները չտվեցին այն արդյունքը, որով պետք է խաղաղություն հաստատվեր Հայաստանի և Ադրբեջանի միջև: Ադրբեջանը շարունակում էր հավատարիմ մնալ հայ բնակչության ոչնչացման և Զանգեզուրին տիրանալու նկրտումներին և պանթուրքիստական նպատակներին: Դրա վառ ապացույցն էր հարձակումների շարունակականությունը Զանգեզուրի ուղղությամբ[2]: Ուստի, 1919 թ. նոյեմբերի վերջին Սուլթանովը այդ նպատակով իր մոտ է կանչում Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդի անդամներին և պահանջում ներկայացուցիչ ուղարկել Զանգեզուր և համոզել վերջիններիս ընդունելու Ադրբեջանի իշխանությունը: Սուլթանովը սպառնում է կրկին ուժի և բռնության միջոցով հասնել իր նպատակին. այսինքն՝ Զանգեզուրի հնազանդեցումը, որն էլ կբերեր Ղարաբաղի վերջնական ենթարկմանը:

Այսպիսով, 1918 թ. վերջին և 1919 թ. ընթացքում թուրքերի հովանավորությամբ և ակտիվ միջամտությամբ մուսավաթական Ադրբեջանը փորձում էր տիրանալ Լեռնային Ղարաբաղին և Զանգեզուրին: Այդ գործընթացում նրանք կանգ չէին առնում միջոցների խտրության առջև. բանակցությունների, ամեն տեսակ մեքենայությունների և կեղծիքի միջոցով կարողանում են իրենց համար ապահովել Անդրկովկասը օկուպացրած բրիտանացիների հովանավորու-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս 2, թթ. 309-311:



[1] Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 352-353.
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 5, մաս 2, թթ. 420-426

թյունը: Վեջիններս, իրենց հերթին ունեին իրենց սեփական շահերը տարածաշրջանում և առաջնորդվում էին այդ հետաքրքրություններով: Այլ խոսքով՝ բրիտանական շահերը Անդրկովկասում և Ղարաբաղի նկատմամբ նրանց որդեգրած քաղաքականության վրա ազդող գործոնները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

1. Ժամանակավորապես հեռու պահել Անդրկովկասը բոլշևիկյան վտանգից՝ երեք հանրապետություններից ստեղծելով պատվար: Ինչպես տեսանք, այս գործում ավելի հակառուսական էր մահմեդական Ադրբեջանը, որի հզորացումը ձեռնտու էր Անգլիային:
2. Բաքվի նավթին, նավատորմին և հեռահաղորդակցության ուղիներին տիրանալը:
3. Հավատարիմ իրենց հավասարակշռված քաղաքականությանը՝
   ա) անգլիացիները. Հայաստանին հանձնեցին Կարսը, Նախիջևանը, իսկ Ադրբեջանին՝ Ղարաբաղը, ապա Զանգեզուրը:
   բ) Բրիտանացիները գտնում էին, որ Հայաստանը ընդարձակվելու է Թուրքահայաստանի 6 վիլայեթների միացումով, իսկ Ադրբեջանը, բացի Ղարաբաղից, ընդարձակվելու տեղ չուներ և Ղարաբաղի լեռները Ադրբեջանի բնական սահմաններն են[1]:
   գ) Ղարաբաղը տնտեսական, աշխարհագրական և ռազմավարական տեսակետից կապված էր Բաքվի հետ (հացի և այլ պաշարներով Եվլախի հետ կապը, որը աշխարհագրորեն Կուրի ավազանի մեջ է մտնում, ռազմավարական տեսակետից հսկում էր Բաքվի երկաթուղին): Այս հարաբերություններում որոշակի դեր կարող էր խաղալ նաև կամավորական բանակի սպառնալիքը Ադրբեջանին և հայերի ու Դենիկինի միջև սերտ կապերի հաստատումը:

Անշուշտ բրիտանացիների վերոնշյալ հաշվարկները արդարացի համարվել չէին կարող և ինչպես ցույց տվեց հետագա պատմությունը, հենց բոլշևիզմը ամենից առաջ տարածվեց և հաղթանակեց Ադրբեջանում, իսկ Հայաստանը շարունակում էր հավատարմությամբ սպասել դաշնակիցների օգնությանը: Ղարաբաղի հարցում

[1] Տե՛ս, **Ա. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 182:



բրիտանացիները թերագնահատեցին պանթուրքիզմի գործոնը՝ Թուրքիային համարելով լիակատար պարտված: Սակայն, ինչպես հայտնի է, վերջինս ի դեմս քեմալիզմի նոր դրսևորումներ ստացավ՝ իր գիրկն առնելով նաև Ադրբեջանը: Այս տեսանկյունից Ղարաբաղը և Զանգեզուրը յուրօրինակ պատվար են հանդիսանում վերջիններիս զավթողական նկրտումների դեմ:

Բրիտանական կառավարությանը այդպես էլ չհաջողվեց պահպանել իր որդեգրած հավասարակշռման քաղաքականությունը, քանզի Ադրբեջանն ավելի նպաստավոր բնական պայմաններ ուներ և ստանում էր թուրքերի օգնությունը, իսկ Հայաստանը շրջապատված էր թշնամական օղակով և այդ օղակը Ղարաբաղի կորստով ավելի էր սեղմվում:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ բրիտանական քաղաքականությունը ընդհանուր առմամբ ձախողվեց և ծրագիրն ի սկզբանե, ժամանակավրեպ էր: Այն մշակված չէր և չէր արտահայտում հարցի ազգային և ռազմավարական առանձնահատկությունները:

Որպես բրիտանական քաղաքականության անմիջական հետևանք՝ Ղարաբաղի հայությունը անօգնական մնաց թուրք-թաթարական հարձակումների դեմ: Բրիտանացիների ջանքերով Անդրանիկը հեռացվեց Զանգեզուր-Ղարաբաղից և շրջանը մնաց անպաշտպան: Չունենալով համապատասխան ուժեր՝ անգլիացիները չկարողացան դիմագրավել իրենց իսկ համաձայնությամբ նշանակված նահանգապետ Սուլթանովի նախաձեռնած կոտորածներին, որի արդյունքում ավերվեցին հայկական բազմաթիվ բնակավայրեր և զոհ գնացին բազմահազար հայեր: Չնայած, կոտորածներից հետո բրիտանացիները փորձեցին Ղարաբաղից ետ կանչել Սուլթանովին, սակայն արդեն ուշ էր, քանզի բրիտանական միսիան և զորքերը պատրաստվում էին դուրս բերվել Անդրկովկասից:

## ԳԼՈՒԽ III

# ՀՀ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 1919-1920 ԹՎԱԿԱՆԻՆ

## 3.1. ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 1920 ԹՎԱԿԱՆԻ ՍԿԶԲԻՆ ԵՎ ՀՀ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԴՈՒՐՍ ԲԵՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

1919 թ. օգոստոսի 15-ից բրիտանական զորքերի դուրս բերումը Կովկասից դառնում է անխուսափելի: Միջազգային քաղաքական իրավիճակի վատթարացումը և Թուրքիայի տարածքներում ազգայնական շարժումների ուժեղացումը անհանգստացնում է բրիտանական ղեկավարներին. վերջիններս վճռում են ռիսկի չենթարկվել և դուրս բերել զինուժը: Մյուս կողմից, դաշնակիցները գիտակցում էին, որ Թուրքիայի տարածքներում ծավալված շարժումները բերելու էին տեղի ազգային փոքրամասնությունների կոտորածներին[1]: Այս ամենով հանդերձ սակայն, բրիտանացիները խիստ անհրաժեշտ էին համարում զորքերը դուրս բերել տարածաշրջանից, թեպետ հստակ գիտակցում էին, թե ինչպիսի ողբերգական վիճակի մեջ էր հայտնվելու Հայաստանը: Քայքայված տնտեսությամբ ու հաղորդակցության ճանապարհների բացակայության պայմաններում, կես միլիոնից ավելի սովյալ գաղթականներով Հայաստանը, բնականաբար, ի վիճակի չէր լինելու դիմակայել թշնամիներին, որոնք շրջապատել էին նրա տարածքները[2]:

Բրիտանական զորքերը 1919 թ. օգոստոսի 15-ից դուրս բերվեցին Անդրկովկասից, տեղերում սակայն պահպանելով իրենց ներկայացուցչությունները: Այժմ արդեն խնդիր էր դրվում ճանաչել

[1] Տե՛ս, **Ա. Նասիպեան,** Բրիտանիա և Հայկական Հարցը 1915-1923 թթ., էջ 172-173:

[2] Տե՛ս, Documents on British Foreign Policy 1919-1939, v. 2, London, p. 322:



Անդրկովկասի հանրապետությունները, ինչը բնականաբար, պահանջում էր բրիտանական շահը, որի վերաբերյալ Ուորդրոպը բազմաթիվ հեռագրեր էր ուղարկում իր կառավարությանը:

1919 թ. հուլիսի 5-ին ամերիկյան ներկայացուցիչ Վ. Հասկելի ժամանումը Անդրկովկաս պայմանավորված էր ամերիկյան շահերով և մանդատային խնդիրներով: Ամերիկյան կողմը ուսումնասիրում էր Անդրկովկասը, Թուրքիան և նեղուցները: Հատկանշական է, որ մանդատի հարցում ավելի շատ շահագրգռված էր ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը, որի նախաձեռնությամբ օգոստոս ամսին կազմակերպվում է «Ամերիկյան ռազմական միսիա»-ն: Այն գլխավորեց Ջեյմս Հարբորդը, որը 1919 թ. աշնանը շրջագայեց մանդատային տարածքներով և 1920 թ. ապրիլին համապատասխան զեկուցագիր ներկայացրեց ամերիկյան կոնգրեսին: Այստեղ շատ անորոշություններ կային կապված Քրդստանի սահմանների հետ, որի մանդատը ձգտում էր իր ձեռքում պահել Անգլիան՝ թույլ չտալով ԱՄՆ-ի ազդեցության հզորացումը այս տարածքներում:

Մինչև մանդատային հարցերի ճշգրտումը՝ տարածաշրջանում կատարվում են մի շարք անդառնալի գործընթացներ: Այն ժամանակ, երբ դաշնակիցները համաձայնության չէին գալիս, թե ով կարող է օգնել հայերին, ուժեղանում է թուրքական ճնշումը Արևմտյան Հայաստանում: Կովկասում խաթարված իր հեղինակությունը փրկելու նպատակով 1920 թ. հունվարի 10-ին դաշնակիցների խորհուրդը երկար վիճաբանություններից հետո որոշում է քայլեր կատարել Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների ճանաչման ուղղությամբ: Հայաստանի անկախության ճանաչումը շաղկապվում էր Թուրքիայի հետ ստորագրվելիք հաշտության հետ:

Դաշնակիցների օգնության հետ հույսեր կապող Հայաստանը այդ ժամանակ հայտնվել էր ողբերգական դրության մեջ: Բացի թուրք-ադրբեջանական պայմանագրից, որն ուղղված էր Հայաստանի դեմ (1919 թ. նոյեմբերի 29 Կ.Պոլիս), համապատասխան գաղտնի պայմանագիր էր ստորագրվել նաև Վրաստանի և Ադրբեջանի միջև. նրանում ակնհայտ էր Հայաստանի դեմ ուղղվածությունը. «քանի որ Հայաստանը չի միանում վրաց-ադրբեջանական փոխադարձ օգնության պայմանագրին՝ ռազմական փոխօգնության ոլորտում,- ասվում էր նրանում,- ուստի չի բացառվում, որ Հայաստանը միանա կամավորական բանակին՝ Ադրբեջանի և Վրաստանի վրա հարձակ-

ման դեպքում»[1]: Սա առավել ևս հասկանալի էր դառնում Ադրբեջանի պաշտպանության նախարար Մեհմանդարովի՝ պաշտպանության կոմիտեին ուղղված նամակից, որտեղ փաստվում էր. «Վրաստանի հետ մեր ռազմական դաշնագիրը ամրացրեց մեր ռազմաճակատը Դաղստանի և Հայաստանի սահմանի պաշտպանությունում»[2]:

Հայաստանը հայտնվել էր մեկուսացման մեջ, ինչով և դյուրանում էր հայկական տարածքներին տիրանալու ադրբեջանական ծրագրերի իրականացումը: Ադրբեջանը փորձում էր օգտագործել բարենպաստ իրադրությունը և արագացնել Զանգեզուրի գրավումը, Ղարաբաղի հայության հնազանդեցումն ու ոչնչացումը: Այդ հանգամանքը չէր խուսափում 1919 թ. սեպտեմբերի 29-ի նամակում արձանագրել Ն. Նարիմանովը, որը հետագայում որդեգրեց այդ նույն քաղաքականությունը. «Հայկական բնակչությամբ գավառներում տեղի են ունենում կոտորածներ (Ղարաբաղի և Ղազախի): Կան բնակավայրեր՝ հայկական, մահմեդական և ռուսական, որոնք հրաժարվում են ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և ցանկանում են միանալ Ռուսաստանին: Հայաստանում բախումները մահմեդականների հետ ընդունել են պատերազմական բնույթ: Մահմեդականներին ղեկավարում են թուրքական սպաները (Խալիլ Բեյ և այլք)»[3]:

1919 թ. վերջին Սուլթանովը ողջ Ղարաբաղը պատել էր լրտեսական ցանցով: Հայերի դեմ կազմակերպված ջարդերը դարձել էին ամենօրյա երևույթ: Հայաստանի համար Ղարաբաղի խնդիրը դառնում է հրատապ: Հայաստանի կառավարությունը հավաստի տեղեկություններ է ստանում, որ ռազմական ագրեսիան հայկական Ղարաբաղի դեմ ղեկավարում են թուրքական հրամանատարները և Ադրբեջանի բանակի ղեկավարությունը: Կրկին Ղարաբաղ ժամանած Նուրի փաշան հավաքում է թուրքական սպաներին գեներալ Նովրուզովի գլխավորությամբ՝ Ղարաբաղը և Զանգեզուրը գրավելու համար: ՀՀ-ն միայն 1919 թ. վերջին կարողացավ լուրջ ուշադրություն դարձնել Զանգեզուրի և Ղարաբաղի խնդիրներին: Զանգեզուրում ստեղծվում է «Վարիչների խորհուրդ», որն իր ձեռքում է կենտրոնացնում քաղաքական իշխանությունը: Ռազմական տեսակետից

[1] А. Раевский, նշվ. աշխ., էջ 108:
[2] Նույն տեղում:
[3] Борьба за победу Советской Власти в Азербайджане 1918-1920, Документы и материалы, Баку, 1967, стр. 291-292.



շրջանը բաժանվում է երեք մասի՝ համապատասխանաբար Պ. Տեր-Դավթյանի, Գ. Նժդեհի և Ն. Ղազարյանի հրամանատարությամբ: Այստեղ էլ, Զանգեզուրի պաշտպանության գործում աննախանում է Գարեգին Նժդեհը: 1919 թ. նոյեմբերից նա գլխավորում է Զանգեզուրի ինքնապաշտպանությունը: Նժդեհի և զանգեզուրյան պայքարի մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, սակայն այն առավել համակողմանի և ամբողջական ներկայացված է Արամ Սիմոնյանի «Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.» աշխատության մեջ[1]:

Ադրբեջանական կառավարությունը փորձում էր զորքեր տեղափոխել Ղարաբաղի տարածքով Զանեզուրի դեմ պայքարելու համար: Կոտրելով Շարուրի և Նախիջևանի հայ բնակիչների դիմադրությունը, 1920 թ. հունվարին ադրբեջանական զորքերը շարժվում են Զանգեզուրի դեմ: Վերոնշյալ տեղաշարժերին, բնականաբար, տեղյակ էին դաշնակիցները, որոնք բազում քննարկումներից հետո անգամ, ոչինչ չձեռնարկեցին թուրք-թաթարական հարձակումները կանխելու համար[2]:

1920 թ. հունվարին Փարիզում տեղի ունեցած դաշնակիցների խորհրդի նիստում Ու. Չերչիլը նշում է, որ Հայաստանը հարավից ենթարկվում է թուրքական հարձակումների: ՀՀ բողոքները կրկին մնում են անպատասխան: Այս անգամ հանրապետությունը ստիպված էր քայլեր ձեռնարկել Ղարաբաղը, ինչպես նաև Հայաստանը, թուրք-թաթարական շրջապատումից փրկելու համար: ՀՀ կառավարության հանձնարարությամբ, Դրոն կազմակերպում է իրավիճակի ուսումնասիրություն և ռազմական նախապատրաստություններ է տեսնում: 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին Զանգեզուրի պաշտպանության հրամանատարների հետ Դրոն մահմեդականներից մաքրում է Զանգեզուրի և Ղարաբաղի միջև ընկած տարածքները: Ռազմական այդ գործողությունները տալիս են սպասված արդյունքը: Պետք է նկատել նաև, որ Զանգեզուրի և Ղարաբաղի միջև ընկած մահմեդական օղակի վերացման գործում Դրոյին մեծ օժանդակություն ցուցաբերեց Նժդեհը: Միաժամանակ, Դրոն հորդորում էր Ղարաբաղի պաշտպաններին՝ Ադրբեջանի կողմից հարձակման դեպ-

[1] Տե՛ս, Ա. Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000:
[2] Times, 19 March, Documents on British Foreign Policy 1919-1939, vol. 2, p. 923.

քում իրեն տեղեկացնելու համար[1]: 1920 թ. հունվարի 22-ին Սուլթանովը ժամանում է Վարանդա և Ջանգելան, զորքերն այդ տարածքներ մտցնելու համար: Վերջինս այս քայլը պատճառաբանում է «Զանգեզուրին սպառնացող վտանգով», թեպետ լիովին բացահայտ էր նրա նկրտումները Զանգեզուրի նկատմամբ: Կրկին փորձ է արվում զինաթափել Ղարաբաղի հայությանը՝ Զանգեզուրի վրա հարձակման դեպքում թիկունքն ապահովելու համար: Հունվարի 30-ին Անդրկովկասում բրիտանական ներկայացուցիչ Ուորդրոպին հղված ադրբեջանական ոտնձգություններին միջամտելու ՀՀ դիմումը ոչ մի արդյունք չի տալիս: Քայլեր են ձեռնարկվում Ղարաբաղի պաշտպանունակությունը բարձրացնելու ուղղությամբ: 1919 թ. վերջին ՀՀ կառավարության կողմից Ջրաբերդ ու Խաչեն ուղարկված արցախցի մի խումբ գործիչներ Ա. Միքայելյանի ու Զ. Մեսյանի գլխավորությամբ ստեղծում են Արցախի ինքնապաշտպանության մարմին:

Ստեղծված իրադրությունը պահանջում էր նաև նոր համագումարի հրավիրում: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ութերորդ համագումարը պետք է տեղի ունենար փետրվարի 28-ին, 168 պատվիրակների մասնակցությամբ:[2] Հունվարին կայացած այդ որոշմանը խոչընդոտում է Սուլթանովը՝ պահանջելով համագումարը հրավիրել Շուշիում:

Փետրվարի սկզբին Շուշի ժամանած Խալիլ և Նուրի փաշաները ծրագրում են թուրք-թաթարական հարձակումը: «Թուրքական զորքեր են կենտրոնացվում Կարյագինոյում և Զանգեզուրին հարակից այլ շրջաններում: Փաստ է դառնում, որ ծրագրվում է թուրք-թաթարական դավադրություն Ղարաբաղի և ողջ Հայաստանի դեմ»,- գրում էր «Հառաջը»[3]: Հայերի դեմ թուրք-թաթարները ձգտում են օգտագործել տեղի և այլ բնակավայրերի քրդական ու մահմեդական ուժերին: Այդ մասին բազմաթիվ տեղեկություններ են հասնում ՀՀ կառավարությանը:

1920 փետրվարի 28-ին Ազգային խորհուրդն իրականացնում է 8-րդ համագումարի հրավիրումը: Սուլթանովի ճնշման և սպառնալիքների պայմաններում հնարավոր չի լինում ապահովել համագու-

[1] Տե՛ս, **Հ. Գևորգյան**, Դրո, Կենսագրական հուշեր, վկայություններ, Երևան, 1991թ., էջ 142:
[2] **Բ. Ուլուբաբյան**, Նշվ. աշխ., էջ 79:
[3] Յառաջ, 26 փետրվարի,1920 թ.:



մարի անդամների ամբողջական ներկայությունը Շոշ գյուղում: Ազգային խորհուրդը չի կարողանում նույնիսկ նրանց մեծ մասին հաղորդել, թե որտեղ է կայանալու համագումարը: Ուստի համագումարի պատգամավորների մի մասը հավաքվում է Շուշիում (թվով 50 հայ), իսկ մյուս մասը՝ Շոշում (թվով 77-ը)[1] :

Այդուհանդերձ, 1920 փետրվարի 28-ից մինչև մարտի 4-ը կայանում է Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը, որը քննության է առնում Ադրբեջանի կառավարության հետ 7-րդ համագումարի կողմից կայացրած ժամանակավոր համաձայնագիրը: Համագումարն արձանագրում է, որ Սուլթանովի փետրվարի 19-ին արած այն հայտարարությունը, թե իբր Խաղաղության վեհաժողովը չի կայանալու և հայությունը պետք է ենթարկվի Ադրբեջանին, կոպիտ կերպով խախտում է 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագիրը: Ի դեպ, ադրբեջանական կողմից նման խախտումները միակը չէին. ըստ համաձայնագրի 16-րդ կետի, որ չպետք է զորքերի տեղաշարժ կատարվեր Ղարաբաղի տարածքով, իսկ դրա անհրաժեշտության դեպքում պետք է ստացվեր Խորհրդի 2/3-ի համաձայնությունը, չէր կատարվել: 1919 թ. հոկտեմբերին 12.000 ադրբեջանական զորքը Ասկերանի, Խանքենդի և Շուշիի տարածքով տեղափոխվում է Զանգեզուր: Այսպիսով, Ղարաբաղի հայերի 8-րդ համագումարը, հաշվի առնելով Ադրբեջանի կողմից համաձայնագրի խախտման փաստերը, քաղաքական վիճակի վերաբերյալ բանաձև է ընդունում: Բանաձևում համագումարը վկայում է իր հավատարմությունը համաձայնագրի կետերին և կոչ է անում Ադրբեջանին չխախտել դրանք, հակառակ դեպքում՝ Ղարաբաղի հայությունը դիմելու է պաշտպանության համապատասխան միջոցների, այդ մասին տեղյակ պահելով դաշնակից երկրների հրամանատարությանը[2]: Նույն ժամանակ սակայն, Շուշիի համագումարը Ադրբեջանին ենթարկվելու որոշում է ընդունում: Ադրբեջանական կողմը զայրացած 8-րդ համագումարի որոշումներից, սկսում է ի կատար ածել Ղարաբաղի վերջնական հնազանդեցման իր վաղեմի երազանքը: 1920 թ. մարտի 20-ին Սուլթանովը վերջնագիր է ներկայացնում Ղարաբաղի ազգաբնակչու-

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 20: **Հ. Հարությունյան**, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., էջ 206:
[2] Աշխատավոր, 1920 թ., 13 ապրիլի; Խորհրդային Ղարաբաղ, 1989 թ., 11 նոյեմբերի; **Հ. Թումյան**, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ.:

թյանը զինաթափվելու պահանջով, հակառակ դեպքում, սպառնում է դիմել բռնի ուժի:

Այս շրջանում Ղարաբաղ են վերադառնում ժամանակին անգլիացիների պահանջով երկրամասը լքած մի քանի հայ գործիչներ: Լարվածությունը Ղարաբաղի բնակչության շրջանում գնալով մեծանում է: Տեղեկություն է ստացվում, թե ադրբեջանական կողմը «Նովրուզ Բայրամի օրը»՝ մարտի 23-ին, համատարած հարձակում է սկսելու Ղարաբաղի և Զանգեզուրի վրա, իսկ մյուս կողմից՝ Անդրկովկաս են ներխուժելու բոլշևիկները:

Ադրբեջանական կողմը Ղարաբաղի վրա հարձակումը սկսում է մարտի 22-ին, երբ Սուլթանովն արդեն սկսել էր հայերի բռնի զինաթափումը և հարձակումը Շուշիի հայկական թաղամասի վրա: Հետ մղելով հակառակորդի հարձակումները, հայերն իրենց հերթին սկսում են Ղարաբաղից ադրբեջանական զորքերը վտարելու գործողություններ ծավալել: Մարտի 22-ի լույս 23-ի գիշերը հայկական ուժերը գրոհում են Խանքենդի և Ասկերանի ուղղությամբ: Գրեթե առանց դիմադրության, հայերին հաջողվում է գրավել Ասկերանը: Ադրբեջանական կողմը հայերի վրա նոր հարձակում է նախապատրաստում՝ համալրելով Աղդամի և Ասկերանի իր ուժերը: Ադրբեջանական 1500 զինվորներին օգնության են շտապում հսկայական թվով բաշիբոզուկներ. ծրագրվում էր հայերին ճնշել երկու ուղղությամբ: Ադրբեջանական կողմի բռնաճնշումների հետևանքով պարտիզանական բուռն շարժում սկսվեց Խանքենդում, Ասկերանում, Խոջալուում և Ղարաբաղի ու Զանգեզուրի այլ վայրերում[1]:

Բնականաբար, այս իրադարձությունների մասին դաշնակիցների ներկայացուցիչներին (Հասկել, Ուորդրոպ, Նոնանկոպ, Գաբբա) ՀՀ կառավարությունը համապատասխան դիմումներով տեղյակ է պահում: Ադրբեջանական հարձակումը ներկայացվում է որպես թուրք սպաների նախաձեռնությամբ կատարված գործ: Սակայն ներկայացուցիչները չէին կարող գործնական ոչինչ ձեռնարկել, քանզի այլևս չէին տիրապետում իրադրությանը: Ասկերանի կորուստը թուրք-մահմեդական ուժերին ստիպում է մարտի վերջին վճռական արշավանք կազմակերպել: Սուլթանովը, նախատեսված ծրագրի համաձայն, մարտի 22-ին՝ Նովրուզ Բայրամը նշելու պատրվակով

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 45, թ. 1: Азербайджан, 28 марта, 1920, номер 167; ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 136:



զորքը Խանքենդից տեղափոխում է Շուշի: Մուտք գործելով Շուշի՝ ադրբեջանական խուժանը ներխուժում է հայերի տները և պահանջում հանձնել զենքերը: Բռնությունների արդյունքում թուրք սպայի սպանությունը դառնում է հայերին կոտորածի ենթարկելու նոր պատրվակ, որի նախաձեռնողը կրկին Սուլթանովն էր: Վերջինս իր գործողությունները բացատրում էր Շուշի հայկական զինված խմբերի մուտքով: Ունենալով ռազմական և թվական հսկայական գերակշռություն (մարտի 11-12-ին Բաքվից Ղարաբաղ և Զանգեզուր էր ուղարկվել 90 վագոն զինամթերք)՝ մահմեդական զորքը և խուժանը մի ամբողջ օր՝ մարտի 23-ին սպանդի են ենթարկում Շուշիի հայ բնակչությանը[1]: Դա յուրօրինակ պատասխան էր հայերի կողմից Ասկերանի գրավմանը: Կոտորածին զոհ է գնում մոտ 8.000 հայ: Սպանդից փրկված 5-6 հայեր ապաստանում են Ղարաբաղի մյուս շրջաններում: Հայերին պատկանող տները հիմնահատակ ավերվում են, իսկ ունեցվածքը թալանվում: Թուրք-թաթարական կոտորածների ծրագիրը հետագայում շարունակվում է Ելիզավետպոլի գավառի Կարաչինար, Պարիս, Մանազբեկ, Վերինշեն և Ներքինշեն, Էրքեջ, Աբլահ, Ղարադաղլու, Արմավիր, Սուլուկ, Գետաշեն բնակավայրերում[2]: Այսպիսով, կոտորածի արդյունքում ոչնչացվում է հնամենի հայաբնակ այդ քաղաքի հայ բնակչությունը: Ադրբեջանական զորքերն իրենց հաջողություններից ոգևորված, մարտի 30-31-ին, 10 թնդանոթներով սկսում են հարձակումները Ասկերան-Շուշի, Աղդամ-Խաչեն, Կարաչինար-Էրքեջ (Գյուլիստան) ուղղություններով: Խանքենդի կողմից մի առանձին զորաջոկատ է հարձակվում Գորիսի վրա, իսկ Ջեբրայիլի կողմից՝ Ղափանի վրա: Ապրիլի սկզբին՝ կոտորածներին ու ջարդերին զուգահեռ, թուրք-մուսավաթական զորքերը հարձակվում են Ասկերանի վրա: Վերջիններս հսկայական առավելություն ունենալով (15-ը 1-ի դեմ), հանդիպում են հայերի հերոսական ու համառ դիմադրությանը և հետ են շպրտվում: Խայտառակ պարտությունների հետևանքով ադրբեջանական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Սելիմովը պաշտոնանկ է արվում և նրա փոխարեն նշանակվում է Խալիլ փաշան:

Տեղեկանալով, որ Ղարաբաղում սկսվել է լայնամասշտաբ հար-

[1] Տես Нагорный Карабах 1918-1923, նշվ. աշխ., էջ 416:

[2] Լեռնային Ղարաբաղ, 1989, 11 նոյեմբերի: **Հ. Թումյան**, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում: ՀԱԱ, ֆ. 245, ց. 1, գ. 14, թթ. 75-77: Слово, 16 апреля, 1920 г.:

ծակում, ՀՀ կառավարությունը որոշում է ռազմական օգնություն ուղարկել Ղարաբաղ. «Գորիս-Ավդալար-Շուշի գծով Ղարաբաղ է մեկնել Դրաստամատ Կանայանի գլխավորած Զանգեզուր-Ղարաբաղի էքսպեդիցիոն ջոկատը, իսկ Ղափանի ուժերի մի մասից կազմված և «Հարավղարաբաղյան» անվանումը ստացած ջոկատը Նժդեհի հրամանատարությամբ մտել է Դիզակ»[1]: Մինչ Հայաստանից օգնության ժամանումը՝ հակառակորդին հաջողվում է ապրիլի 3-ին ճեղքել պաշտպանական գիծը և գրավել Ասկերանը: Պաշտպանության հրամանատար Դալի Ղազարը հրամայում է նահանջել, որպեսզի հնարավորինս խուսափի զոհերից: Հարկ է նշել, որ այս հրամանից հետո, հրամանատարն ինքը շարունակելով կռիվը, հերոսաբար զոհվում է դիրքերում:

Ասկերանին տիրելու արդյունքում թշնամուն հաջողվեց Ղարաբաղը բաժանել երկու մասի: Հակառակորդը տիրեց նաև Աղդամ-Շուշի կարևորագույն ճանապարհին: Այս ընթացքում ադրբեջանցիները հասցնում են իրականացնել նաև Դաշտային Ղարաբաղի հայ բնակչության ոչնչացումը:

Ասկերանը գրավելուց հետո, ապրիլի 6-ին, ադրբեջանական զորքերը շարժվում են դեպի Ջևանշիր՝ ավերելով ճանապարհին ընկած հայկական գյուղերը: Սպանվում են Շուշիի կոտորածից փրկված և բանտերում մնացած մի քանի հարյուր հայեր[2]:

Ադրբեջանական զորքերի թիվն այս գործողությունների ընթացքում հասնում է 10.000-ի: Ի դեպ, դրանք միայն կանոնավոր զորամասերն էին. հսկայական թիվ էին կազմում նաև մահմեդական խաժամուժն ու անկանոն թալանչիական ջոկատները, որոնք տեղաբաշխված էին Ղարաբաղի տարբեր հատվածներում և Զանգեզուրի շրջակայքում:

Բազմաթիվ դիմում-նամակներում Հայաստանի կառավարությունը դաշնակիցներից պահանջում է հեռացնել Ադրբեջանի զորքերը Ղարաբաղի տարածքից, ստիպել թուրք սպաներին հետ վերադառնալ և դադարեցնել հայերի կոտորածները[3]: Ստեղծվում է նույնիսկ հատուկ հանձնաժողով, կազմված Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներից, որոնք պետք է ժամանեին Ղարա-

[1] **Ա. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 43:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 144:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 175:



բաղ: Հանձնաժողովը պետք է փորձեր դադարեցնել առճակատումը: Ներկայացուցիչները տիրող վիճակի մասին զեկուցագրեր էին ուղարկում իրենց կառավարություններին[1]:

Հատկանշական է, որ այս շրջանում արդեն ադրբեջանցիների կողմից ուղղակիորեն մերժվում էին բրիտանացիների պահանջները, և ինչպես նշում էր «Թայմսը». «Ադրբեջանի կառավարությունը մերժել է Անգլիայի կողմից արված պահանջը՝ հանձնել թուրք ազգայնական գործիչներ Նուրի և Խալիլ փաշաներին»:[2] Ադրբեջանական կառավարությունը ոչ միայն չէր պատրաստվում հանձնել թուրք սպաներին, այլև 1919 թ. հունվարին Բաքվում կայացած «Մուսավաթի» կուսակցական ժողովում, որին ներկա էին Խալիլը և Նուրին, նախագահ Կարաբեկ Կարաբեկովը Ադրբեջանի հարուստներից պահանջում էր 1 մլրդ ռուբլի, թուրք այս փաշաների գլխավորությամբ 200.000-անոց բանակ ստեղծելու համար: Վերջիններիս խորհրդով էլ որոշվում է Մուստաֆա Քեմալին հրավիրել Բաքու և բանակի ստեղծման նպատակով կազմակերպել կադրերի ընտրություն: Ի դեպ, այս մասին հաղորդում է ՀՀ բանակի գլխավոր շտաբի գնդապետ, հետախուզության բաժնի պետ Ղևոյանցը[3]:

Ապրիլի 7-ին հակառակորդը գրավում է Խանքենդը և շարժվում է Կարյագինո: Այստեղ էլ հայկական մի շարք գյուղեր գրավելուց հետո, նրանց առաջխաղացումը կանգնեցվում է: Ադրբեջանական կողմի և Ղարաբաղի կամավորների միջև թեժ մարտեր են տեղի ունենում նաև ապրիլի 5-13-ը ընկած ժամանակաընթացքում:

1920 թ. ապրիլի 9-ին տեղի ունեցավ Անդրկովկասի հանրապետությունների կոնֆերանսը, որտեղ հայ-վրացական կողմը պահանջում է քննարկել Ղարաբաղում և Զանգեզուրում ռազմական գործողությունների հարցը: Կոնֆերանսը կազմում է հանձնաժողով, որը պետք է մեկներ Ղարաբաղ և իրականացներ ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ կայացված որոշումը: Հանձնաժողովի աշխատանքները ադրբեջանական կողմի հարուցած խոչընդոտների պատճառով այդպես էլ որևէ արդյունքների չեն բերում: Կոնֆերանսին իրենց դիմումներն են ուղարկում Ղարաբաղի հայության գյուղացիական համագումարները, որոնք իրենց նիստե-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 54:
[2] Նոր աշխատավոր, 6 ապրիլի, 1920 թ., էջ 2:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թթ. 180-181:

րում որոշումներ էին կայացրել Հայաստանին միանալու վերաբերյալ, փաստվում էին նաև Ադրբեջանի կատարած ոտնձգությունները և հայ բնակչության կոտորածները[1]:

Այս ընթացքում շարունակվում էին ռազմական գործողությունները Սղնախում և այլ վայրերում, սակայն հայկական բանակի՝ Ղարաբաղին օգնության գալու լուրը ադրբեջանական կողմին ստիպում է թողնել դիրքերը: Նրանք իրենց ողջ զինված ուժերը պահել էին Ղարաբաղի սահմանների վրա, ինչի մասին վկայում էր Ադրբեջանի կառավարության պարագլուխ Խան Խոյսկին. «Մեր պետության համար ստեղծվել է մի շատ տագնապալի պահ. մեր բոլոր զորքերն ուղարկել ենք Ղարաբաղ և ձեռներս ծալած նստել: Ղարաբաղի անցքերը սոսկալի դաշույնի հարված էին մեր այսպիսի ծանր կացության ժամանակ»[2]:

Սակայն մինչ ադրբեջանցիները նոր ծրագրեր կմշակեին Ղարաբաղին տիրելու համար, խորհրդային զորքերը ապրիլի 28-ին մտան Բաքու և գրեթե առանց դիմադրության տիրեցին իշխանությանը: Ադրբեջանական ջարդարար քաղաքականությունը իրագործող Սուլթանովը արագորեն կողմնորոշվեց դեպի բոլշևիկները և «Շուշում ռևկոմ կազմակերպելուց հետո, առաջարկում է ղարաբաղցիներին դադարեցնել կռիվները»[3]:

Դրանից քիչ առաջ, 1920 թ. ապրիլի 14-ին Դրոյի զորքերը մտնում են Ղարաբաղ: Վերջինս հատուկ հայտարարությամբ դիմում է Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը, որտեղ վկայակոչելով Ղարաբաղի ժողովրդի հերոսական անցյալը՝ կոչ է անում նրանց միասնաբար պայքարել ընդհանուր թշնամու դեմ[4]:

1920 թ. ապրիլի 18-ին Ներքին Թաղավարդ գյուղում բացվում է Դիզակի և Վարանդայի հայ ազգաբնակչության ներկայացուցիչների ժողովը, որին մասնակցում է նաև Դրոն: Որոշում է կայացվում ստեղծել ժամանակավոր կառավարություն, բանակի ընդհանուր հրամանատար է հաստատվում Դրոն: Կառավարության առաջին նիստը գումարվեց 1920 թ. ապրիլի 23-ին և որոշում կայացվեց պնդել Ղարաբաղը Հայաստանի անբաժան մաս ճանաչելու որոշումը: Իր հեր-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 191:
[2] Խորհրդային Ղարաբաղ, 11 նոյեմբերի, 1989 թ:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս, **Ա. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 43-44:



թին Նժդեհը Կապանի իր զորամասով տեղավորվում է Դիզակի շրջանում:

Դրոյի հրամանով Վարանդայում և Դիզակում իրականացվում է 21-25 տարեկանների զորահավաք: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ զորահավաքն իրականացվել է 23-35 տարեկանների շրջանում[1]: Այսպիսով, ժամանակավոր կառավարությունն իր լիազորությունները տարածում է նաև Ղարաբաղի մյուս շրջաններում:

Ղարաբաղի հայության կյանքում նշանակալից էր 9-րդ համագումարի հրավիրումը, որը կայացավ 1920 թ. ապրիլի 25-29-ը: Համագումարի ընդունած որոշումներից ամենակարևորը, իհարկե, 7-րդ համագումարի կողմից ընդունված՝ Ադրբեջանի հետ համաձայնագրի չեղյալ հայտարարումն էր և Հայաստանի հետ միավորման հռչակումը[2]:

Խորհրդային Ադրբեջանը իր գոյության առաջին իսկ օրերից սկսած որդեգրեց իր մուսավաթական նախորդի քաղաքականությունը. առաջին հերթին գերխնդիր համարվեց տիրանալ Ղարաբաղին, ապա՝ Զանգեզուրին և Նախիջևանին: Կասկածից վեր էր, որ խորհրդային Ադրբեջանի իշխանության հետևողական այս քաղաքականությունը խորհրդա-քեմալական համաձայնության ակնհայտ հետևանքն էր: Ծրագրված էր, որ խորհրդային զորքերը գրավելով Եվլախը, պետք է շարժվեն Շուշի՝ «Ղարաբաղի վրայով միանալու Տաճկաստանին»[3]: Հայաստանի կողմից դիմադրություն ցուցաբերելու դեպքում նախատեսվում էր պատերազմ սկսել: Մյուս կողմից, պատահական չէր Ադրբեջանի խորհրդային կողմից ՀՀ կառավարությանը վերջնագրի ներկայացումը, որտեղ առաջին կետով պահանջվում էր մաքրել Ղարաբաղը և Զանգեզուրը հայկական զորքերից: Ապրիլի 30-ին ուղարկված այս վերջնագրին պատասխանելու համար տրվում է եռօրյա ժամկետ: Բնականաբար, խորհրդային իշխանության համար Հյուսիսային Կովկասում կամավորական զորքերի ջախջախումից հետո, իրավիճակը բավականին բարենպաստ էր Անդրկովկասում կորցրած ազդեցությունը վերականգնելու համար:

Այժմ արդեն Ղարաբաղի դեմ ռազմական գործողություններ էին նախապատրաստվում նախկին մուսավաթական և Կարմիր բանակի

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 36, թ. 2:
[2] Տես **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 233-234:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թթ. 1-3:

համագործակցությամբ: Վերջնագրի մասին տեղյակ էին նաև բրիտանական և դաշնակից ուժերի հրամանատարությունը և Ֆորին Օֆիսի անձնակազմը: Հատուկ գրությամբ այդ մասին նրանց տեղյակ էին պահել բրիտանական ներկայացուցիչը Կ.Պոլսում և Համո Օհանջանյանը[1]: Սակայն դաշնակից տերությունները հայերին պաշտպանելու ուղղությամբ նույնիսկ այդ ժամանակ ոչինչ չձեռնարկեցին:

Վերջնագրին ի պատասխան՝ ՀՀ արտգործնախարար Օհանջանյանը հեռագիր է ուղարկում Կովկասյան ռազմաճակատի հեղափոխական խորհրդին և Ադրբեջանի հեղկոմին, նշելով, որ Հայաստանը զորքեր չունի Ադրբեջանի տարածքում, և որ ընդհակառակը՝ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունն ինքն է զորքեր պահում «վիճելի համարվող հայկական Ղարաբաղում»[2]:

Մայիսի 1-ին ՀՀ կառավարությանը նույնպիսի մի վերջնագիր է ուղարկում նաև 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը, որի մեջ արդեն սպառնալիք կար. «Պահանջի չկատարումը կհամարվի որպես մարտահրավեր ՌՍՖԽՀ-ի հասցեին: Խնդիրը կկատարվի Ռուսաստանի Կարմիր բանակի ուժերով, իսկ հետևանքների ողջ պատասխանատվությունը կընկնի հայկական կառավարության վրա»,- ասվում էր վերջնագրում[3]: Պարզից էլ պարզ էր, որ օրակարգի էր դրված Հայաստանի խորհրդայնացման հարցը:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները, որոնք իրականում նույն մուսավաթականներն էին, խորհրդային քողի տակ ձգտում էին հասնել իրենց վաղեմի ծրագրերի իրականացմանը: Խորհրդային հրամանատարությունն էլ իր հերթին ռազմական գործողությունները Հայաստանի դեմ արդարացնում էր նրանով, որ «Նախիջևան-Օրդուբադ-Շուշի շրջանի գրավումը նպատակ ունի դադարեցնել հայմահմեդական կոտորածները մինչև Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանների որոշումը»[4]:

Հայաստանի կառավարությունը որոշում է ընդունում բոլոր հնարավոր միջոցներով փրկել հայ ժողովրդի գոյությունն ու ազատությունը: Մայիսի 7-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբը պաշտո-

[1] Տե՛ս, Armenia, նշվ. աշխ., էջ 812-813:
[2] **Ա. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 52:
[3] Նույն տեղում, էջ 53:
[4] Нагорный Карабах в 1918-1923 гг., նշվ. աշխ., էջ 462:



նական հայտարարություն է տարածում՝ քեմալա-բոլշևիկյան համագործակցության և նրանց կողմից ՀՀ դեմ պատերազմի պատրաստության մասին: Հրապարակվում է նաև կոչ՝ ուղղված ՀՀ բանակին և բնակչությանը:

Գեներալ Դրոյի իրականացրած զորահավաքի արդյունքում հավաքագրվում է 8.000 զինվոր: Ադրբեջանի ռազմածովային կոմիսարին ուղղված մի զեկույցից պարզ է դառնում նաև, որ խորհրդային կողմը լիովին տիրապետում է Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների տեղեկատվությանը: Զեկուցագրերից մեկում էլ Ադրբեջանի հետախուզության տեղեկություններն էին,. որտեղ ասվում էր, որ Հայաստանի զինված ուժերի մեծ մասը տեղակայված են Կարս-Երևան գծով, որոնց դեմ կենտրոնացած են թուրքական երեք դիվիզիաներ[1]: Զեկուցագրից պարզ է դառնում նաև, որ խորհրդաթուրքական համատեղ պատերազմ էր ծրագրվում Հայաստանի դեմ:

Մայիսի 19-ին խորհրդային Կարմիր բանակի պատվիրակությունը ժամանում է Շուշի, ուր տեղակայված էր հայկական զորքերի շտաբը: Պատվիրակությունը հավաստում է Դրոյին, որ Կարմիր բանակը հայերի դեմ ուղղված որևէ գործողություն թույլ չի տա: Ուշագրավ է, որ երբ Դրոյի առջև պահանջ է դրվում Ղարաբաղից դուրս բերել հայկական զորքերը, զորավարը պատասխանում է, որ ինքը զինվորական է և Ղարաբաղ է մտել իր կառավարության հրահանգով և կհեռանա միայն վերջինիս հրամանի դեպքում[2]: Այդուհանդերձ, խորհրդա-ադրբեջանական զորքերը սկսում են առաջխաղացումը դեպի Ղարաբաղ: 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը հրահանգում է մայիսի 21-ին գրավել Շուշին, այնուհետև Կարյագինոյի և Ջեբրայիլի շրջանները: Խորհրդային զորքերի կենտրոնացումը Գանձակ-Եվլախ-Շուշի ուղղությամբ պետք է իրականացվեր մինչև մայիսի 29-ը[3]: Խորհրդային բանակի 32-րդ հրաձգային դիվիզիայի՝ Շուշի մտնելուց հետո, Դրոն մայիսի 24-ին Ավետարանոց գյուղում խորհրդակցություն է հրավիրում, ուր և հայտնում է Ղարաբաղի համար այդ ծանր որոշումը. Հայաստանի կառավարությունը համաձայնություն է տվել զորքերը դուրս բերել Ղարաբաղից»[4]:

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 40, թ. 1:
[2] ՀԱԱ, ֆ 1022, ց. 8, գ. 42, թ. 1:
[3] Տե՛ս, Нагорный Карабах в 1918-1923 гг., նշվ. աշխ., էջ 470:
[4] **Ա. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 78-79:

Փաստորեն, Դրոն կանգնած էր կատարված փաստի առաջ, թեպետ երկմտում էր. պատերազմե՞լ խորհրդային զորքերի դեմ, թե՞ ոչ: Մայիսի 24-ի խորհրդակցության արդյունքում որոշվում է հեռանալ Զանգեզուր: Մինչև այդ, մայիսի 23-ին խորհրդային ուժերն արդեն մտել էին Խաչեն, Ջևանշիր և Գյուլիստան և այնտեղ հայտարարել խորհրդային իշխանություն: Մայիսի 28-ին, Դրոն իր ուժերով արդեն Գորիսում էր[1]:

Ղարաբաղից Դրոյի հեռանալը դժգոհության մեծ ալիք է առաջացնում երկրամասում. այդ մասին իր բողոքն է արտահայտում Մելիք-Յոլչյանը, Դրոյի հապշտապ և խորհրդավոր հեռացումը համարելով հանրապետության քաղաքականության ձախողում. «Դրոն անձամբ իշխանությունը հանձնեց տեղի բոլշևիկներին,- գրում է նա,- Դրոյի ջոկատի Ղարաբաղից հեռացումը որոշակի խուճապային իրավիճակ է ստեղծել նաև Զանգեզուրում: Ժողովրդի մեջ հուզումներ են առաջանում»[2]:

Այդ ճակատագրական օրերին՝ մայիսի 28-ին, Ղարաբաղի Թաղավարդ գյուղում կայանում է 10-րդ համագումարը: Այստեղ էլ երկրամասը հռչակվում է խորհրդային և ստեղծվում է հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ: Հունիսի 16-ին Լեռնային Ղարաբաղի և Դաշտային Ղարաբաղի հեղկոմները միավորվում են, կենտրոն է դառնում Շուշի քաղաքը:

Այսպիսով, Ղարաբաղի խորհրդայնացմամբ ավարտվում է երկրամասի գոյապայքարի այս ժամանակաշրջանը: Եթե փորձենք բնութագրել այդ ամենը, ապա կարելի է առանձնացնել այդ գոյապայքարի հետևյալ հանգուցային ժամանակահատվածները.

1. Բրիտանական զորքերը դուրս են բերվում Ղարաբաղից, ինչի արդյունքում երկրամասը մնում է լիովին անպաշտպան:
2. Թուրք-մուսավաթականների միջև կնքված հատուկ համաձայնագրի արդյունքում իրականացվում է հայ բնակչության և մասնավորապես՝ Ղարաբաղի հայության ֆիզիկական բնաջնջումը:
3. Թուրք-մուսավաթականների կողմից սանձազերծված ռազմական գործողությունների գլխավոր նպատակներից մեկը Ղարաբաղի հայության հնազանդեցումն էր:
4. Այդ ընթացքում իրականացվում են Ղարաբաղի հայության զանգվածային կոտորածներ:
5. Խորհրդա-քեմալական համագործակցությունը, ի վերջո, հանգեցնում է Ղարաբաղի խորհրդայնացմանը:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս I, թ. 33:
[2] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 51, թ. 1:



## 3.2. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴԻՐԸ ՓԱՐԻԶԻ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ, ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1919 թ. հունվարին բացվում է Փարիզի խաղաղության վեհաժողովը, որը պետք է քննարկեր և սահմաներ պատերազմից հետո աշխարհաքաղաքական նոր կանոնները: Բնականաբար, այստեղ էլ մեծ տերությունները զերծ չմնացին ազդեցության իրենց ոլորտների համար մղվող պայքարից: Ճակատագրական այս ժամանակաշրջանում մեծ պետությունների հակասությունների հորձանուտում պետք է վճռվեր նաև Հայաստանի հարցը: Թվում էր, թե երկարատև զրկանքներից ու համաշխարհային պատերազմի բերած բազմաթիվ աղետներից հետո Հայկական հարցը պետք է ստանար իր արդարացի հանգուցալուծումը: Խորհրդաժողովում պետք է վճռվեր նաև Հայաստանի սահմանների հարցը: Ցավով պետք է արձանագրել, որ հայ ժողովրդի շահերը պաշտպանող երկու պատվիրակություններին (ՀՀ կողմից՝ Ավետիս Ահարոնյան, արևմտահայերի կողմից՝ Պողոս Նուբար փաշա) այդպես էլ մինչև վերջ չհաջողվեց համաձայնության հասնել և միասնական հանդես գալ հայությանը հուզող հարցերի շուրջ:

Կոնֆերանսի աշխատանքների հենց սկզբից հակասությունները սրվեցին պատերազմի արդյունքում չափից դուրս ուժեղացած բրիտանացիների և նոր հզորացող ԱՄՆ-ի միջև, պակաս լարված չէին նաև Բրիտանիայի և Ֆրանսիայի, ինչպես նաև՝ Բրիտանիայի և Իտալիայի միջև հարաբերությունները: Բրիտանացիները ռուսական կայսրության փլուզումից հետո ձգտում էին թույլ չտալ Ֆրանսիայի հզորացումը և փորձում էին այդ ամենը հակակշռել ամերիկացիների միջոցով: 1919 թ. մայիսի 14-ին կոնֆերանսի Չորսի խորհուրդը որոշում է Հայաստանի և Թուրքիայի մանդատն առաջարկել ԱՄՆ-ին: Հետագայում քննարկվեցին նաև Հայաստանի մանդատը Իտալիա-

յին, նույնիսկ՝ Հունաստանին հանձնելու տարբերակները:

Հայաստանի խնդիրը քննարկվեց խորհրդաժողովի բազմաթիվ մակարդակներում, սակայն որևէ հստակ որոշում այդպես էլ չկայացվեց: Միակ հաստատուն որոշումն այն էր, թե «Դաշնակից և միավորված տերությունները համաձայնվեցին, որ Հայաստանը պետք է ամբողջովին առանձնացվի Թուրքիայից»[1]:

Հայաստանի վրա Ամերիկյան մանդատի խնդիրը շրջանառության մեջ էր այն պարագայում, եթե ԱՄՆ-ի Սենատը համաձայնություն տար մանդատը տնօրինելու համար: Միաժամանակ պետք է նշել, որ քննարկվող տարբերակներից Հայաստանի համար ամենաշահավետը և իրատեսականը ամերիկյանն էր: ԱՄՆ-ն շահագրգռված էր Հայաստանի սահմանների առավելագույն արդյունավետ լինելով և պնդում էր, որ «Հայաստանի սահմանները պետք է որոշվեն այն հաշվարկով, որ բավարարվեն հայերի բոլոր օրինական պահանջները, և ապահովեն հայերին դեպի ծով ազատ և հուսալի ելքը»[2]:

Այդ դեպքում ամերիկյան քաղաքականությունն անվերապահորեն պետք է բախվեր բրիտանական շահերի հետ: «Հայաստանի ամերիկյան մանդատի արժեքը գնահատված է 757 մլն դոլար 5 տարվա համար, որի վերջում մանդատն ինքնաբավ կդառնա: Նախապես 59.000-անոց ուժ է պահանջվում, որը հնարավոր կարիքի դեպքում էքսպանսիայի համար կհասնի մինչև 200.000-ի»[3]: Միաժամանակ արձանագրվում է, որ Մեծ Բրիտանիան ևս հավասարապես կարող է վարել մանդատը, բայց ամերիկյան կողմը հայտարարում է, որ բրիտանական մանդատը այնքան էլ ընդունելի չի լինի հայերի համար այն պարզ պատճառով, որ բրիտանական քաղաքականությունը անտարբեր չի մուսուլմանական շահերի հանդեպ:

ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հակասությունները վեհաժողովում և հատկապես Ազգերի լիգայի ստեղծման շրջանակներում հանգեցնում են ԱՄՆ-ի՝ Եվրոպայում ծավալած քաղաքականությունից հրաժարվելուն: Արդյունքում եվրոպացիները 1920 թ. հունվարին Ազգերի լիգայի բացման նիստն անց են կացնում առանց ԱՄՆ-ի: Մինչ այդ,

[1] Г. Г. Махмурян, Лига наций, Армянский вопрос и Республика Армения, Ереван, 1999, стр 54:

[2] Д. Ллойд Джордж, նշվ. աշխ., էջ 421:

[3] **Ջ. Կիրակոսյան,** նշվ. աշխ., էջ 611-612:



Սևրի պայմանագրի ստորագրման համար Հայաստանի սահմանների հստակեցումը հանձնարարվում է ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին: Այստեղ պետք է նշել, որ ԱՄՆ-ն ձգտում էր ստեղծել Մեծ Հայաստան, «սակայն այդպիսի Հայաստանը ամուր հիմք չուներ և դաշնակից խորհրդաժողովը գտնում էր, որ այդ մտահղացումը չէր համապատասխանում իրականությանը և որպես հիմք պետք էր վերցնել ռուսական Հայաստանը, որտեղ հաշվում էր 400-500 հազար բնակիչ»[1]:

Հետագայում, Մեծ Հայաստանի ստեղծման բարդությունները հաշվի առնելով, Լոնդոնի կոնֆերանսը Հայկական հարցը նմանեցնում է Հրեական հարցի հետ: 1920 թ. առաջին կեսին դաշնակիցները գալիս են այն եզրահանգման, որ արևմտահայկական տարածքները հայերն ի վիճակի չեն լինելու պահպանել և նույնիսկ վերագրավել, ուստի այդ տարածքները Հայաստանին տալը վտանգավոր է[2]:

Դաշնակիցների խորհուրդը վերջնականապես Հայաստանը թողնում է անպաշտպան, ինչի մասին ակնհայտորեն խոստովանում է Լլոյդ Ջորջը. «Ես չեմ կարող պատասխանատվություն վերցնել ինձ վրա և համաձայնվել Մեծ Հայաստանի ստեղծմանը: Ես խորհրդակցեցի Բալֆուրի հետ, որը Փարիզում զբաղվում էր այդ հարցով, և պարզվեց, որ Բալֆուրը ամբողջովին կիսում է իմ մտքերը: Ես գտնում եմ, որ բրիտանական կառավարությունը կհանգի այդ տեսակետին: Լիովին հասկանալի է, որ լորդ Քերզոնը, որպես Լոնդոնի կոնֆերանսին մասնակից արտգործնախարարների և դեսպանների ներկայացուցիչ, մասնակիորեն սատարում էր այդ կոնֆերանսի որոշումը»[3]: Բացի այդ, նա գտնում էր, որ Մեծ Հայաստանի ստեղծումը աշխարհի մահմեդականների շրջանում ոչ ցանկալի տրամադրությունների պատճառ կդառնա: Ահարոնյանի բոլոր պահանջները լուրջ ուշադրության չեն արժանանում դաշնակիցների կողմից: Հայաստանին օժանդակելուն և միավորելուն ուղղված նպատակները վերջնականապես թաղվում են 1920 թ. փետրվարին Լոնդոնի, ապա 1920 թ. ապրիլին՝ Սան Ռեմոյի խորհրդաժողովներում: Դաշնակիցները որոշում են հայերին պաշտպանելու նպատակով որպես միջ-

[1] **Д. Ллойд Джордж,** նշվ. աշխ., էջ 421:

[2] Նույն տեղում, էջ 430-431:

[3] Նույն տեղում, էջ 438:

նորդ դիմել ԱՄՆ-ին: Նախագահ Վիլսոնին հետագայում խնդրում են կազմել նաև Հայաստանի քարտեզը:

1920 թ. օգոստոսի 10-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի և Չեխոսլովակիայի լիազոր ներկայացուցիչների և մյուս կողմից՝ Թուրքիայի միջև ստորագրվում է հաշտության պայմանագիր, որի 88-րդ կետով Թուրքիան ճանաչում էր Հայաստանի անկախությունը և համաձայնվում է, որ ԱՄՆ նախագահի իրավական վճռով լուծվեր Թուրքիայի և Հայաստանի միջև գծվելիք սահմանների խնդիրը[1]: Հետագայում Վիլսոնի կողմից գծված Հայաստանի սահմանների մեջ էր ներառվում Արևմտահայաստանի 90.000 ք.կմ տարածք:

Փարիզի վեհաժողովի ընթացող բանակցություններում բազմիցս քննարկումների առարկա է դառնում նաև Լեռնային Ղարաբաղի հարցը: Նախորդ գլխում ներկայացվել է բրիտանական դիրքորոշումը Ղարաբաղի պատկանելիության վերաբերյալ, որը իր հաստատումը գտավ նաև Փարիզի վեհաժողովում: Ներկայացրած սահմաններում, չնայած Ավետիս Ահարոնյանի առարկություններին, Ղարաբաղը մշտապես ներառված էր Ադրբեջանի կազմում[2]:

1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագիրը Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանների հարցը թողնում էր այդ երեք պետությունների փոխադարձ համաձայնությանը: Դա նշանակում էր, որ վիճարկվող տարածքների շուրջ պայքարը պետք է շարունակվեր: Պատահական չէր, որ խաղաղության վերհաժողովը կայացրեց այդպիսի որոշում, քանզի Անդրկովկասում հենց այդ ժամանակ իր կամքն էր սկսում թելադրել Խորհրդային Ռուսաստանը:

«Կովկասյան սահմանները 1802-1946» բրիտանական արխիվային փաստաթղթերի ժողովածուի մեջ պահպանված է Հայաստանի սահմանների վերաբերյալ մի հուշագիր, որտեղ հիշատակություն կա նաև Ղարաբաղի վերաբերյալ[3]: Հուշագիրը հետախուզության բաժնի ռազմածովային շտաբի համար 32 թվի տակ է և թվագրված է

[1] Տե՛ս, **Գ. Լազեան,** Հայաստանը եւ հայ դատը, Երևան, 1991, էջ 214-215: A History Of The Pease Conference Of Paris, vol. VI, London, 1924, p. 83:

[2] Տե՛ս, **Ա. Նասիպեան**, նշվ. աշխ., էջ 157, քարտեզ 6 (Հայաստանի սահմանները բրիտանական պատվիրակության կողմից առաջարկված 1919 թ):

[3] Տե՛ս, Caucasian Bounderies 1802-1946, նշվ. աշխ., էջ 577-578:



1919 թ. ապրիլի 23-ով: Հուշագրում հստակեցված են Հայաստանի արևելյան սահմանները II և III բաժանումների ներքո: Ղարաբաղի հարցը նախատեսվում էր լուծել ըստ նախկին ցարական բաժանման, գտնելով, որ. «Հայաստան-Ադրբեջան սահմանը թաթարների և հայերի միջև բավականին խառնվել է և անհնար է նշագծել մոտավոր ազգագրական սահմանը: Հետևաբար, առաջարկվող և եղած լավագույն ֆիզիկական սահմանը Ռուսական Երևանի և Ելիզավետպոլի նահանգների միջև եղած սահմանն է. այդպիսով կոպիտ ձևով հայ և թաթար փոքրամասնությունները հակառակ կողմերում հավասարեցվում են այդ գծով»[1]: Հուշագրից պարզ է դառնում, նաև, որ բրիտանացիները այս ծրագրով ձգտում էին իրենց քաղաքականության հիմքում պահել Ելիզավետպոլի նահանգի նախկին սահմանները, որով Ղարաբաղը մտցվում էր Ադրբեջանի կազմի մեջ:

Փաստաթղթում նշված է նաև, որ ՀՀ ներկայացուցիչ Ա. Ահարոնյանը պնդում է Ղարաբաղի հայկական պատկանելիությունը՝ փաստելով գերակշիռ հայ բնակչության առկայությունը երկրամասում: Ահարոնյանը նույնիսկ առաջարկում է Նախիջևանի գավառը փոխանակել Ղարաբաղի հետ, թեպետ հասկանում էր, որ Նախիջևանի օտարումը բերելու էր Հայաստանից Դիլմանի, Խոյի, Սալմաստի և Մակուի հայ բնակչության հաղորդակցության կտրվելուն[2]:

Ինչպես նկատում ենք, զեկուցագրում այնքան անհեռատեսորեն էր վճռված հարցի լուծումը, որ բրիտանացիները իրենք ևս գտնում են, թե հարցը պետք է լրացուցիչ ուսումնասիրության ենթարկվի. «Կարմիր գիծը քարտեզի վրա առաջարկում է համաձայնություն ազգագրական և ֆիզիկական տեսակետներից, սակայն առաջարկը կարիք է զգում լուրջ և բազմակողմանի ուսումնասիրության, որը հավանաբար պետք է կատարել տեղում»[3]: Ուշագրավ է, որ հետագայում բրիտանացիների կողմից առաջարկված Հայաստանի արևելյան սահմանների մեկ այլ նախագծում Զանգեզուրը և Շուշին ընդգրկված էին ՀՀ կազմում:

Հայաստանի արևելյան սահմանների այլընտրանքային մի նախագիծ էլ առաջարկվում է պրոֆ. Դուգլաս Ջոնսոնի կողմից[4]: Վեր-

[1] Caucasian Bounderies 1802-1946, նշվ. աշխ., էջ 577-578:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս, նույն տեղում, էջ 680:

ջինս նշում է, որ Սհարոնյանը պահանջում է այնպիսի սահմաններ հաստատել, որն իր մեջ ներառնի Ղազախի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Շուշու և Զանգեզուրի հայկական գյուղերը արևելյան մասերում, ինչպես նաև Ջեբրայիլի գավառի հայկական մասը: Սհարոնյանի ներկայացրած սահմանները Դ. Ջոնսոնը համարում է անիրական՝ ռազմավարական և տնտեսական տեսակետներից: Այս սահմանը բաժանում է լեռները Կուրի հովտից, երբ դաշտային անասնապահ թաթարները կապված են լեռներին իրենց անասունների հոտերով, իսկ լեռնաբնակները հարթավայրերին՝ տնտեսական առումով:

Իր այս սահմանազատումը պրոֆեսորը բացատրում է այն հիմնավորմամբ, որ. «գծվող աշխարհագրական սահմանները կարևոր են նույնիսկ այն պարագայում, երբ սա թողնում է շատ հայկական գյուղեր Ադրբեջանում և ներառում է թաթարական գյուղեր Հայաստանի կազմում»[1]:

Հաշվի չառնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ գավառների բնակչության գերակշիռ մասը հայեր են, պրոֆեսոր Ջոնսոնը շարունակում է արդարացնել Ղարաբաղի հայ բնակչության բռնակցումը Ադրբեջանին՝ դա բացատրելով միայն տնտեսական պատճառներով, մոռացության տալով էթնիկ պատկանելիության, մշակութային, աշխարհագրական, պատմական, գենետիկ և քաղաքակրթական գործոնները, որոնք Ղարաբաղի հայությանը կապում էին մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ: Ջոնսոնի բերած սահմանբաժանումը ներկայացնում է սահմանային այն գիծը, որը տրված էր Բրիտանական Միջազգային Քարտեզի և Ռուսական Քարտեզի կողմից, ինչի մասին խոսել ենք նախորդ գլխում: Այնուհետև, ի մի բերելով իր նախագիծը, պրոֆեսորը գրում է, որ այն ուղղակի. «իրականացվող փոխհամաձայնություն է - իրական ռազմավարական սահման, որը հնարավորություն կտա Հայաստանի կազմում ներառել Զանգեզուրի գավառը և Շուշի քաղաքը, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է մեծաթիվ հայկական բնակչություն: Այդ սահմանը Հայաստանի կազմում ընդգրկում է ողջ Զանգեզուրի գավառը, ներառյալ և հայերի կողմից պահանջված մասը, ավելի ցածր գտնվող Հաքարլու-Բարգուշա գետային ցանցը, ինչը նրանք չեն պահանջում: Այդ ավազանի ավելի ցածր հատվածն անվիճելի թաթարական է, սակայն, անհնար է այն բաժանել վերին մասից, որը Հայաստանինն է և

[1] Caucasian Bounderies 1802-1946, նշվ. աշխ., էջ 680:



ուստի անհրաժեշտ է այն ամբողջովին ներառել Հայաստանի մեջ: Սահմանագիծը նաև ներառում է Հայաստանի կազմում Շուշու գավառի փոքր մասը, քաղաքի հետ միասին»[1]:

Մյուս կողմից, երբ մանրամասն ուսումնասիրում ենք նախագիծը, ապա նկատելի է, որ Հայաստանից դուրս են թողնված Շուշու գավառի մեծ մասը, Ղազախի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի գավառները և Ջեբրայիլի հայերով բնակեցված մասը, թեպետ քարտեզի հեղինակը գտնում էր, որ անհնար է տալ այլ համարժեք սահման, որը կներառի նշված գավառների հայերին:

Այսպիսով, ըստ վերոնշյալ նախագծի, Ղարաբաղի լեռնային գավառների մեծ մասը ներառվում էր Ադրբեջանի կազմում, սակայն ի տարբերություն նախորդի, Հայաստանի տարածքում էր թողնվում Զանգեզուրը և Շուշի քաղաքն իր մերձակա տարածքներով: Ինչևէ, Ղարաբաղի հայ ազգաբնակչության մեծ մասը պետք է բռնակցվեր Ադրբեջանին, ինչն իրատեսական չէր, քանզի հաշվի չէր առնված տեղի ազգաբնակչության գերակշիռ մասի կարծիքը, որն իր առաջարկած տարբերակում պնդում էր ՀՀ պատվիրակությունը[2]:

Սհա այսպիսի քաղաքականություն էին որդեգրել բրիտանացիները Ղարաբաղի հարցում, ուստի նախագծերին տեղեկանալուց հետո ՀՀ արտաքին գործերի նախարարության արձագանքը չուշացավ. « ... Ղարաբաղի և նրան վերաբերող հարցերում գեներալ Թոմսոնն ու իր գործակիցները և վերջինիս հաջորդները գործել են ոչ իրենց գլխու, այլ արտաքին գործերի զորավոր նախարարության գիտությամբ և համաձայնությամբ: Թե՛ Թոմսոնի, և թե՛ մյուս գեներալների (անգամ մեզանում հայասեր համարվող Բիչի) զեկուցումները մասնավորապես Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերվող խնդիրներում, միշտ եղել են ի վնաս հայերի և Հայաստանի»[3]:

Ղարաբաղի հարցում բրիտանական դիրքորոշման վերաբերյալ բողոք է ուղղվում Ու. Չերչիլին: Վերջինս սակայն, հրաժարվում է միջամտելուց, ուղղակի հայտարարելով, թե բրիտանացիները Ղարաբաղում Ադրբեջանին հնազանդեցնելու քաղաքականություն են վարում[4]: Ուստի, ՀՀ արտաքին գերատեսչության ղեկավարի դժգո-

[1] Caucasian Bounderies 1802-1946, նշվ. աշխ., էջ 680:
[2] Նույն տեղում, էջ 681:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 62, թթ. 1-2:
[4] Նույն տեղում:

հությունը բրիտանական քաղաքականության վերաբերյալ ուներ իր օբյեկտիվ պատճառները, քանզի բազմաթիվ էին այն սխալները, որոնք նույնիսկ չէին ժխտում իրենք՝ բրիտանացիները: 1920 թ. մարտի 3-ի "Times"–ի համարում Ու. Չերչիլը չթաքցնելով գործող կառավարության հանդեպ իր դժգոհությունները, գրում է. «Գեներալ Միլը դժգոհում է, որ նրանք (կառավարությունը) հաշվի չեն առել մի քանի հազար հայերի կյանքի ապահովման հարցը: Հայերի խնդրի դժվարությունը կայանում է նրանում է, որ թուրքական և հայկական բնակչությունը բավական մեծ տարածքներում խառն է»[1]:

Բրիտանական կառավարությունն այլևս ի վիճակի չէր միջամտելու ընթացող գործընթացներին, ուստի ուժեղացող բոլշևիկյան ճնշումը իր գիրկն էր առնելու նաև Հայաստանը, ինչի մասին իր կառավարությանն ուղղված զեկույցում հաղորդում էր կոմանդոր Լյուկը[2]: Նրա զեկույցում նշվում է նաև, որ Լեգրանի հայտարարության համաձայն, Ղարաբաղն ու Զանգեզուրը հայկական տարածքներ են:

Այնուհանդերձ, Լեռնային Ղարաբաղի խնդիրը Փարիզի վեհաժողովում, ինչպես նշեցինք, թողնվեց տեղերին՝ բանակցությունների միջոցով հարցը վճռելուն: Ահա այդ պարագայում, երբ արդեն խորհրդայնացել էր Ադրբեջանը և գործընթացը տարածվում էր նաև Ղարաբաղում և նրան հարակից տարածքներում, ՀՀ-ին ոչինչ չէր մնում անել, քան համաձայնության գալ Խորհրդային Ռուսաստանի հետ: 1920 թ. օգոստոսի 10-ի Բ. Լեգրանի, Ա. Ջամալյանի ու Ա. Բաբալյանի կողմից ստորագրված խաղաղության մասին պայմանագիրը պարունակում էր 6 կետ, ըստ որի վիճելի համարվող «Զանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը զբաղեցնելու էին խորհրդային զորքերով, մինչև մոտ ապագայում նոր խաղաղության համաձայնագրի ստորագրումը»:[3] Պայմանագրի մեկ այլ կետով թույլ էր տրվում Հայաստանի տարածքով խորհրդային զորքերի ազատ տեղաշարժը, ինչին առանձնահատուկ նշանակություն էին տալիս խորհրդային ղեկավարները: Այն նպատակ ուներ Թուրքիայի հետ անմիջական կապ ստեղծել «համաշխարհային հեղափոխությունը» տարածելու համար:

Այսպիսով, ՀՀ-ը Ղարաբաղը ճանաչում էր Խորհրդային ազդե-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, թ. 104:
[2] Տես, Armenia, նշվ. աշխ., էջ 816:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 262:



ցության գոտի, որն էլ բնականաբար, առաջացնում է բրիտանացիների դժգոհությունը: Անդրկովկասում կոմանդոր Լյուկին փոխարինած գնդապետ Ստոքսը իր բողոքն է հայտնում Հայաստանի կառավարությանը: Հոկտեմբերի 3-ին ժամանելով Երևան, նա հայտնում է, թե «Անգլիան այժմ անզոր է ռեալ օգնություն հասցնել Հայաստանին, մտադրություն չունի ռմբակոծել կամ վերցնել Տրապիզոնը, քանի որ Անգլիան չի կարող մեծ ուժ հանել տաճկական ափ՝ երկրի խորքերը գնալու համար, իսկ միայն քաղաքը և նավահանգիստը գրավելը մեծ օգնություն չի լինի Հայաստանին»[1]: Անգլիացի գնդապետը, փաստորեն, հասկացրել է Հայաստանի կառավարությանը՝ հույսը դնել միայն սեփական ուժերի վրա և հրաժարվել օգնություն ստանալու գաղափարից: Այս իրադարձությունների շուրջ իր բողոքն է հայտնում Անգլիայի «Բանվորական Կուսակցությունը», նշելով, որ Ռուսաստանը չի կարող թույլ տալ Թուրքիայի կողմից Հայաստանի տարածքների նվաճումը, քանզի դա անարդարացի է[2]:

Սակայն սա միայն բողոք էր և բնականաբար իրական ազդեցություն ունենալ չէր կարող:

Շարունակվում էր գործել թուրք-թաթարական հայասպան մեքենան, այս անգամ արդեն քեմալա-բոլշևիկյան քողի տակ: Հայ ժողովուրդը հայտնվեց նոր օրհասական վիճակի առջև, ինչի արդյունքում խորհրդայնացվեց նաև Հայաստանը:

Այսպիսով, ամփոփելով վերը նշված իրադարձությունները, պետք է նշել, որ.

1. Անդրկովկասից բրիտանական զորքերի դուրսբերումը Լեռնային Ղարաբաղին լիովին անպաշտպան թողեց թուրք-թաթարական ջարդարարության դեմ:
2. Ադրբեջանական բանակը և մահմեդական խաժամուժը նախաձեռնեցին Ղարաբաղ-Զանգեզուրի բռնազավթումը:
3. ՀՀ քայլեր է ձեռնարկում Ղարաբաղ-Զանգեզուրի պաշտպանության ուղղությամբ:
4. Իրագործվում են Շուշու հայության և Ղարաբաղի մյուս հատվածների հայ բնակչության կոտորածները:
5. Խորհրդա-քեմալական համագործակցության արդյունքում տեղի է ունենում Ղարաբաղի խորհրդայնացումը:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 94, թթ. 1-2:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, թ. 103:

6. Փարիզի վեհաժողովում որոշակիանում են բրիտանական կառավարության դիրքորոշումները Ղարաբաղի սահմանների և պատկանելիության շուրջ, որոնք բնականաբար, հայանպաստ չէին:
7. Վեհաժողովը Ղարաբաղի հարցը թողնում է առկախ, ինչին հետևում են ՀՀ կառավարության հայտարարությունները:
8. Բրիտանական կառավարությունը իր դժգոհությունն է արտահայտում ՀՀ և Խորհրդային Ռուսաստանի միջև օգոստոսի 10-ին կնքված համաձայնագրի վերաբերյալ:

Ղարաբաղի խորհրդայնացմամբ երկրամասի գոյապայքարի պատմությունը չավարտվեց, սկսվեց մաքառումների և՛ հերոսական, և՛ հայրենասիրական պայքարի յուրօրինակ մեկ այլ ժամանակաշրջան:



## ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով, «Բրիտանական քաղաքականությունը և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թթ.» թեմայի ուսումնասիրությունից կարելի է կատարել հետևյալ կարևոր հետևությունները և ամփոփումները:

Առաջին - Անդրկովկասում անգլիացիների վարած քաղաքականությունը մեկ անգամ ևս հաստատեց վերջիններիս որդեգրած կարևորագույն սկզբունքներից մեկը՝ որ չկան հավատարիմ դաշնակիցներ, այլ կան հավատարիմ շահեր: Դաշնակիցները միշտ փոփոխելի են, իսկ շահերը՝ ոչ:

Երկրորդ - Բրիտանացիներն Անդրկովկասում առաջնորդվել են լոկ իրենց շահերով, իսկ հայերին հովանավորելը միայն ժամանակավորապես էր բխում իրենց քաղաքական նպատակներից: Սա հասկանալի է դառնում բրիտանական քաղաքակրթական գենեզիսից:

Երրորդ - Չնայած աննպաստ և թշնամական մթնոլորտին, Ղարաբաղի հայությունը մեծ նվիրումով էր պայքարում իր իրավունքների և գոյության համար: Եզրակացությունը մեկն է - պայքարը և հերոսացումը ապահովում են շարունակականություն:

Չորրորդ - Թուրքական նկրտումները միշտ էլ լինելու են հայության խնդրում, վտանգը ևս, ուստի հայության գոյատևման միակ փրկությունը միասնականության, զգոնության և իր հայրենիքի յուրաքանչյուր հատվածին տեր կանգնելու մեջ է:

Հինգերորդ - Ադրբեջանական նկրտումները և բրիտանական թողտվությունը հանգեցրեցին Շուշիի հայաքափմանը և Ղարաբաղի հայության կոտորածներին:

Անշուշտ, Ղարաբաղի և ողջ հայության հույսերը և՛ դաշնակիցների հաղթանակի, և՛ նրանց գալստյան ու հայ ժողովրդի խնդիրների լուծման, և՛ Փարիզի վեհաժողովի հետ ի դերև եղան: Իհարկե, այսպես էլ պետք է լիներ, քանզի տերություններից և ոչ մեկը չմտահոգվեց հայերի խնդրով: Հայկական երկու պատվիրակությունները

միայն խնդրողի դերում էին և արդյո՞ք նրանք մտահոգված էին «հայկական» այդ տարածքները հայերին տալու հարցում: Հայերն իրենք պետք է տիրանային իրենց իսկ տարածքներին: Պատմության փորձը վաղուց արդեն ցույց է տվել, որ հողը պատկանում է նրան ով պայքարում, մաքառում, տեր է կանգնում այդ հողին: Ինքնակազմակերպում, բարձր գիտակցականություն, արարում, համախմբում և այլ հատկանիշներ, դրանք են, որ երաշխավորում են յուրաքանչյուր էթնոսի շարունակականությունը:

1918-1920 թթ. հայ ժողովրդի պայքարը իր հայրենիքի այս հատվածի համար ունեցավ մի շարք առանձնահատուկ գծեր: Ստեղծված աշխարհաքաղաքական ծանր իրադրությունը հաջողության հասնելու համար պահանջում էր համառության, հայրենասիրության, վճռականության դրսևորում: Շրջապատված լինելով թշնամական օղակով՝ հայության համար միակ գոյության միջոցը մնում էր միասնական պայքարը: Այս տեսանկյունից արցախահայությունը պայքարի միջոցով կարողացավ հարատևել: Չնայած ուժերի անհավասարությանը և ունեցած ծանր կորուստներին, երկրամասը ցայսօր շարունակում է պահպանել իր ազգային նկարագիրը: Առանձնահատուկ դեր այս գործընթացում ունեցել է Ղարաբաղի հայերի միասնականությունը և ազատության ճիշտ արժևորումը:

Գոյապայքարի այս փուլում Հայաստանի Հանրապետության ծանր կացությունը հնարավորություն չտվեց լիարժեք պաշտպանել հայկական երկրամասը թշնամական նկրտումներից: Չիրականացվեցին վճռական գործողություններ, որոնք պետք է ապահովեին արցախահայերի խաղաղ գոյությունը: Չնայած այս ամենին, Հայաստանի Հանրապետությունը երբեք չի ընդունել Արցախի հայրենիքից օտարումը: Արևմտահայության խնդրի հետ մեկտեղ ՀՀ ներկայացուցիչները տարբեր ատյաններում պայքարում էին Արցախի նկատմամբ ադրբեջանական և թուրքական նկրտումների դեմ: Կար հայության համար երկրամասի կարևորության գիտակցումը:

Հայ ժողովուրդը 1918-1920 թթ. ընթացքում հասավ պայքարի կարևոր նպատակին՝ պահպանել Ղարաբաղի հայկականությունը: Արցախահայությունը տասնամյակներ շարունակ պայքարեց բռնությամբ հաստատված խորհրդա-ադրբեջանական իշխանության դեմ: Պայքարը ունեցավ մեծ դժվարություններ: Խորհրդային իշխանությունների թողտվությամբ իրականացվեց հայ բնակչության ցե-



ղասպանություն և օտարում: Զգտելով հայաթափել Ղարաբաղը և այդ միջոցով հասնել իրենց նպատակների իրականացմանը, վերոնշյալ ուժերը կրկին ստիպված եղան հաշվի նստել հայ ժողովրդի անկոտրում ոգու հետ:

1988 թ. սկսված իր հայրենիքի մի հատվածի՝ Արցախի համար հայ ժողովրդի պայքարը պսակվել է հաջողությամբ: Սակայն պատմության ելևէջներում դա միայն մի փուլ է, որից հետո այն պետք է ունենա շարունակականություն: Պայքարի այս շրջանը հիրավի դարձավ հայ ժողովրդի ազատագրական գոտեմարտի փառահեղ էջերից մեկը, որին բնորոշ էին մաքառումն ու հերոսացումը: Ազգային համախմբումը դարձավ հաջողության գրավական: Պայքարի հերթափոխը փոխանցվում է հաջորդ սերունդներին, որոնց ուսերին ծանրանում է այդ բեռը՝ հաջողությամբ ավարտին հասցնելու պատասխանատվությունը:

Արդի սերնդի կարևոր խնդիրներից է ներկա քաղաքակրթական և գլոբալ գործընթացներում ապացուցել համաշխարհային հասարակությանը Արցախի քաղաքակրթական պատկանելիությունը: Ապացուցման կարիք ունի նաև Ադրբեջանի կողմից հայ-քրիստոնեական մշակույթի շարունական յուրացման քաղաքականության առկայությունը:

Այս լույսի ներքո, ներկայումս ազատագրված և Ադրբեջանի կողմից «գրավյալ» համարվող պատմական հողերի յուրացումը դեռ ոչ վաղ անցյալում, միջազգային ասպարեզում համակողմանի լուսաբանման և ներկայացման կարիք ունի:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## 1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի Ազգային Արխիվ

1. Ֆոնդ 114, Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչություն 1849-1918 թթ.
2. Ֆոնդ 150, Տեր-Դանիելյան Միսակ Գաբրիելի հասարակական-քաղաքական գործիչ, գրող, մանկավարժ (1874-1954)
3. Ֆոնդ 200, Հայաստանի Հանրապետության մինիստրների խորհուրդ 1918-1920 թթ.
4. Ֆոնդ 245, Նուխի-Արեշյան հայրենակցական միություն 1918-1921 թթ.
5. Ֆոնդ 252, Ղարաբաղի հայական ազգային խորհուրդ 1919 թ.
6. Ֆոնդ 276, Դիվանագիտական միսիա Վրաստանում 1919-1920 թթ.
7. Ֆոնդ 278, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Ադրբեջանում 1919-1920 թթ.
8. Ֆոնդ 314, Անձնական ծագում ունեցող վավերագրական նյութերի հավաքածու
9. Ֆոնդ 323, Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդ 1917-1919 թթ.
10. Ֆոնդեր 4033, 1022

## 2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, Գիրք Ա, Երևան, Զանգակ-97, 2003.- 340 էջ
2. Ալիշան Ղ., Արցախ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1993.- 124 էջ
3. Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920 թթ.), Երևան, ԵՊՀ հրատարակչություն 1989.- 287 էջ
4. Ավագյան Վ., էջեր Անդրկովկասում օտարերկրյա ինտերվենցիայի պատմությունից 1918, Երևան, Հայպետհրատ, 1957.- 131 էջ
5. Ավետիսյան Հ., Հայկական Հարցը 1918 թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 1997.- 133 էջ
6. Արցախը կանչում է Անդրանիկին, (փաստաթղթեր), Արցախ հայրենակցական միություն, կազմ. Աբրահամյան Հ., Երևան, Հայաստան հրատ., 1995.-120 էջ
7. Վ. Բալայան, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, Ամարաս, 2002.- 439 էջ
8. Գալոյան Գ., Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1999.- 539 էջ
9. Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Երևան, Հայաստան, 1982.- 462 էջ
10. Գևորգյան Հ., Դրո (Կենսագրական, Հուշեր, վկայություններ), Երևան, Ազատ խոսք, 1991.- 416 էջ
11. Ենովք Ա., Լլոյտ Ճօրճի հռչակավոր ճառը և հայկական խնդիրը անգլիական խորհրդարանի մեջ, Կ. Պոլիս, Տպագրատունն Կարօեան, 1918.- 8 էջ
12. Զոհրաբյան Է., Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները», (1918 դեկտեմբեր – 1920 ապրիլ), Երևան, Տիգրան Մեծ, 2002.- 266 էջ
13. Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ 1917-1920 թթ., Երևան, Հայաստան, 1999, XIX.-730 էջ
14. Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ Դատը, Երևան, Ադանա, 1991.- 435 էջ
15. Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, Համազգային, 1968.- 487 էջ
16. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) փաստթղթերի ժողովածու, խմբ. Ջ. Կիրակոսյան, Երևան, 1972.- էջ 810
17. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղ. պատմություն) Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000
18. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., Երևան, տպ. Լուսաս, 2003.- 523 էջ (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու) ՀՀ Պատմության արխիվ, կազմեցին Միրզոյան Մ., Ղազիյան Ս.
19. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1996.- 299 էջ
20. Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական Հարցը 1915-1923, ՀԲԸՄ Վ. Ապտալեան մշակութային հիմնադրամ, 1994
21. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2000.- 672 էջ
22. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, Հայաստան, 1991.- 628 էջ
23. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, 2 գրքով, գիրք Բ, Երևան, Կախսա, 1996.- 830 էջ
24. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, Երևան, Գիր Գրոց, 1994.- 300 էջ
25. Փիրումյան Ռ., Հայաստանը ՀՅԴ - Բոլշեւիկ Յարաբերութիւնների ոլորտում (1917-1921 թթ.), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1997.- 421 էջ


## 3. ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Адресъ – Календарь Азербайджанской Республики на 1919 г., под. ред. Ставровского, Баку, 1920 г., 86 с.

2. Адамия В., Из истории английской интервенции в Грузии (1918-1921) Сухуми, 1961.- 258 с.
3. Архив Полковника Хауза, том 3, Москва, Соцэкгиз, 1939, том 3.- 320 с., том 4- Конец Войны Июнь 1918-ноябрь 1919, ОГИЗ, Гос. Изд. Посе. Литературы, 1944
4. Борьба за Победу Советской Власти в Азербайджане 1918-1920, Док. и мат., Баку, 1967, изд. АН Азербайджан ССР.- 569 с.
5. Бьюкенен Дж., Мемуары дипломата, международные отношение, Москва, 1991.- 337 с.
6. Виноградов К., Дэвид Ллойд Джордж, Мысль, Москва, 1970.- 412 с.
7. Гаджиев И., Совместная борьба бакинского пролетариата и трудящихся Дагестана против английских интервентов и деникинской контреволюции в 1919-1920, Махачкала, 1960.- 54 с. (изд-во по роспостронению полит. и науч. знаний РСФСР, Дагестан отд-ние)
8. Генерал-майор Денстервиль, Британский Империализм в Баку и Персии, 1917-1918, Тифлис, (воспоминания), Изд. "Советский Союз", 1925.- стр. 281
9. Голиков А., В канун октября, Нарастание общенационального кризиса, Москва, Мысль, 1977.- 126 с.
10. Голиков Г., Революция открывшая новую эру, Москва, Политиздат, 1967.- 351 с.
11. Городецкий Е., Рождение Советского государства 1917-1918, Москва, 1965, Наука.- 531 с.
12. Гейкинг А., Англия, ее государственный, экономический строй, С-Петербург, типография М. М. Стас Юлевича, 1909.- 690 с.
13. Дарабади П., Военные проблемы политической истории Азербайджана начала XX века, (АН Азербайджана, Музей ист. Азербайджана), Баку, ЭЛМ, 1991.- 203 (I) с.
14. Деникин А., Очерки русской смуты, Москва, 1991, Наука.- 580 с.
15. Дэвид Ллойд Дж., Правда о мирных договорах, том 2, Москва, 1957, Изд. Иностр. лит., Ф.Д.-556 стр.
16. Дэвид Ллойд Дж., Военные мемуары, т. 1-5, 1938, Соцэкгиз, т. 6, 1937.- 251 с.
17. Из истории иностранной интервенции в Армении в 1918 году (документы и материалы), издательство Ереванского университета, Ереван, 1970.- 249 с.
18. Иоффе А., Англия в наши дни, Москва-Ленинград, 1925, Гос.издат.- 59 с.
19. Кавказский –Календарь на 1916 г., Тифлис, 1917 г.- 1294 с.
20. Киракосян Дж., Младотурки перед судом истории, Ереван, Айастан, 1989.- 495 с.
21. Материалы по истории франко-русских отношений 1910-1914, Москва, 1922, Сбор. секрет. дипломатических документов быв. Импер. Рос. Москва, Иностран. дел.- 733 с.



22. Махмурян Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. (Бремя белого человека), Ереван, Лусакн, 2002.- 309 с.
23. Мелик-Шахназаров З., Записки карабахского солдата, Восп. участника событий 1918-1920 гг. в Нагорном Карабахе, Ереван, 1995.- 67 с.
24. Мирошнников Л., Английская Экспансия в Иране (1914-1920), Москва, 1961, Изд. Вост. Лит.-228 с.
25. Минц И., История Великого Октября, том 1-3, Москва, Наука.- том1-1977, том 2-1978, том 3-1979, том1-784с, том 2-1008 с, том3-203 с.
26. Мортон А., Гейт Дж., История английского рабочего движения 1770-1920, Москва, Изд. иностранной литературы, 1959.- 420 с.
27. Нагорный Карабах в 1918-1923 гг., В.А. Микаелян, Сборник документов и материалов, Ереван, 1992.- 756 с.
28. Нижников В., Накануне Великого Октября, от февральской буржуазно-демократической революции до великой октября, Соц. Рев., Москва, Посвешение, 1972.- 320 с.
29. Пуанкаре Р., На службе Франции, Воспоминания за 9 лет, Москва, 1936, Соцэкгиз.- 427 с.
30. Покровский М., Империалистическая война 1915-1930, 1931, Изд. Ком. Акад.- 340 с.
31. Раевский А., Английская интервенция и мусаватское правительство, Баку, 1927, "Истпарт. Отд. Ц.К. и БКАКП (б) .- 94 с.
32. Трухановский В., Внешная политика Англии на Первом этапе обшего кризиса капитализма (1918-1939), Москва, 1962, Изд-во ИМО.- 411 с.
33. Черчиль У., Мировой кризис, Государственное военное издательство, Москва-Ленинград, 1932.- 327 с.
34. Шамбаров В., За веру, Царя и Отечество, Москва, Алгоритм, 2003.- 656 с.
35. Шахдин И., Дашнакцутюн на службе русской Белогвардейшины и английского командование на Кавказе, Тифлис, Закккнига, 1931.- 104 с.
36. A History of the Peace Conference of Paris, edited by H.W.V. Temporley, in 6v, v6, printed in England, at the Oxford University press by Federick Hall, London, 1924, XXXI.- 709 p.
37. Armenia, Parliamentary Debates, House of Lords, November 13, 1918, House of Commons, October 23, 24, 30, 31, November 6,7,14, 18, 1918.- 41 p.
38. Armenia: Political & Ethnic Boundaries 1878-1948, London, Editor Anita L.P. Burdett, Archive Editions, 1998.- 1059 p.
39. Caucasian Boundaries, Documents and Maps 1802-1946, Edited by Anita L.P. Burdett, Archive Editions, 1996.- 904 p.
40. Documents on British Foreign Policy 1919-1939, volume 1-2, 1919,

London, His Majesty's stationary office, 1947, Edited by E.L. Woolword and R. Butler, volume 2, First ser.- 969 p.

41. Hovhannisian R., The Republic of Armenia, Berkley et. al, University of California press, 1971, 182, vol. 1, the first year, 1918-1919, XXIII, vol. 2, 1919-1920, XV, 1982.- 603p.
42. Kazemzadeh F., The Struggle form Transcaucasia 1917-1921, New York, Philosophical Library, Giorge Ronold, Oxford, 1951, XIII.- 356p.


**4. ՄԱՄՈՒԼ**

1. «Աշխատավոր» օրաթերթ, 1 հունիսի, 10 հունիսի, 18 հունիսի, 24 հունիսի, 3 հուլիսի, 1919, 13 ապրիլի, 1920
2. «Դրօշակ» ամսագիր, Վ. Միքայէլեան Հայաստանի Հանրապետութիւնը եւ Արցախեան Հարցը 1918-1920 թուականներին, թ. 10, 9 սեպտեմբեր, 1992
3. «Զանգ» օրաթերթ, 23 օգոստոս, 28 օգոստոս, 24 նոյեմբեր, 1918
4. Գ. Մախմուրյան, Անգլիական ռազմական վարչակարգը Անդրկովկասում և Հայաստանի կառավարությունը (1918 թ. դեկտեմբեր-1919 թ. օգոստոս), Լրաբեր հասարակական գիտությունների, թ. 2, Երևան, 2001.-էջ 63-80
5. «Խորհրդային Ղարաբաղ» օրաթերթ , 4 հոկտեմբերի, 1989
6. «Խորհրդային Ղարաբաղ» օրաթերթ, 6 հոկտեմբերի, 5 նոյեմբերի, 9-11 նոյեմբեր, 1989 թ.
7. Հայրենիք, Պոսթոն, 1920
8. Հայ Համայնք, Նոր Նախիջևան, թ. 23, 14 հոկտեմբեր, 1918 թ.
9. «Մշակ» օրաթերթ, 10 սեպտեմբերի, 22 հոկտեմբերի, 29 նոյեմբերի, 12 դեկտեմբերի, 1918, 22 փետրվար, 27 փետրվար, 2 մարտի, 7 մարտի, 1919
10. «Յառաջ» օրաթերթ, 29 հունվար, 1919, 26 փետրվար, 1920
11. «Նոր Աշխատավոր» օրաթերթ, 18 ապրիլի, 13 հուլիսի, 27 հուլիսի, 5 օգոստոսի, 6 օգոստոսի, 8 հոկտեմբերի, 1919, 6 ապրիլի, 1920
12. «Վերածնունդ» շաբաթաթերթ, Գ տարի, թիւ 15, 12 հունիս, 19 հունիս, թիւ 22(52), 21 օգոստոս,1919 Փարիզ


5. ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՄԱՄՈՒԼ

1. Азербайджан, 28 марта, номер 167, 1920
2. Абрамян Г., Политика английских завоевателей по отношению к Арцаху (ноябрь 1918-август 1919 гг.), Вестник общественных наук, АН АрмССР, 1989, номер 7, Ереван.- 1989.
3. Arslanian A., The British Decision to Interone in Trans Caucasia during World War I, "The Armenian Review" 1974.- 146-155p
5. Слово, 16 апреля, 1920
6. Times, 19 March, 1920






Ամարաս եկեղեցի, հիմնադրվել է IV դարում, գլխավոր շինությունը կառուցվել է XVIII դարում



Դադիվանք, հիմնական շինությունները թվագրվում են V, XIII և XVIII դարերով







Գանձասար, Սուրբ Հովհաննես
Մկրտիչ եկեղեցի, XIII դար



Տիգրանակերտ



Տիգրանակերտ



*Ասկերան,*
*2002 թ.*



*Սուրբ Ամենափրկիչ*
*Ղազանչեցոց եկեղեցի,*
*կառուցվել է 1868-1887 թթ.*

*Բերձոր*
*Սուրբ Համբարձում*
*եկեղեցի, կառուցվել*
*է 1995-1998 թթ.*





*Հադրութ*
*Սպիտակ Խաչ եկեղեցի,*
*1346 թ.*



Կանաչ ժամ, Շուշի,
հիմնվել է 1847 թ.



***Թուրք-ազերիների կողմից ավերված հայկական թաղամասեր և փողոցներ, Շուշի, 23 մարտի 1920 թ.***





*Թուրք-ազերիների կողմից ավերված հայկական թաղամասեր և փողոցներ, Շուշի, 23 մարտի 1920 թ.*





# 1917

*Թիվ 1*

Ապառաժ. 11 Հունիսի, 1917 թ. № 4, էջ 1

Շուշու Քաղաքագլխից

Ազդ

Ժամանակավոր կառավարության 1917 թ. ապրիլի 15-ի որոշման հիման վրա Շուշու քաղաքային դուման հետևյալ կարգադրությունն է արել:

Ընտրությունների շտապ և կանոնավոր կազմակերպման համար կազմել ընտրական կոմիտե Շուշու քաղաքային վարչությանը կից, ուր պիտի ունենան ներկայացուցիչներ:

1. Ղարաբաղի գործադիր կոմիտեն՝ 2 հոգի
2. Զինվորների պատգամավորական խորհուրդը՝ 2
3. Շուշու քաղաքային ինքնավարությունը՝ 4
4. Բոլոր քաղ. կուսակցությունները (ՀՅԴ, Սոց. յեղ. Սոց-Դեմ. և կադետները)՝ 1-ական
5. Ա և Բ քաղաքամասերի կանայք միասին՝ 2
6. Քաղաքի արհեստակցական միության, բարեգործ. կազ.՝ 1
7. Ռայոնական կոմիտեներից՝ 1-ական
8. Տուն վարձողներ՝ 2
9. Քրիստոնյա և մահմեդական հոգևորականները՝ 2-ական

Ներկայացուցիչ ուղարկել հայտարարությունը լույս տեսնելուց 5 օրից ոչ ուշ

Քաղաքագլուխ՝ Գերասիմ Մելիք-Շահնազարյան

Ապառաժ. 1917, 24 սեպտեմբերի
էջ 3

Շուշու քաղաքային վիճակագրությունն ավարտված է: Ինչպես երևում է քաղաքը հազիվ 25-27 հազար ազգաբնակչություն ունենա:

# 1918

***Թիվ 2***

10 սեպտեմբերի, 1918, Մշակ

## ՂԱՐԱԲԱՂԻ ՇՈՒՐՋԸ

Ի պատասխան Ադրբէջանի հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցչի գրութեան Ղարաբաղ պատուիրակութիւն ուղարկելու մասին, Հայաստանի հանրապետութեան հաւատարմատարը յայտնել է, որ միայն խորին գոհունակութեան և շնորհակալութեան զգացումով կարող է ընդունել Ադրբէջանի կառավարութեան ցանկութիւնը դէպի իր հայ ծագում ունեցող քաղաքացիները բռնած խաղաղասիրական քաղաքականութեան վերաբերութեամբ, աւելացնելով որ այժմ այլ ևս ոչ ոք վիճելի չէ համարում, որ իմ կառավարութիւնն էլ իր հերթին իր ամբողջ ներքին քաղաքականութիւնը հիմնում է Հայաստանում բնակվող ժողովուրդների և մասնաւորապէս մահմեդականների խաղաղ ու եղբայրական կենակցութեան վրա:

Իսկ Ղարաբաղ պատուիրակութիւն ուղարկելու մասին պէտք է նկատեմ, որ իմ առաջարկութիւնը գնահատելիս դուք անտես էք արել մի էական հանգամանք, որ պատճառ է դարձել մտցնելու ձեզ ցաւալի մոլորութեան մէջ: Բանը նրանումն է, որ ես իմ առաջարկութեամբ ամենևին չեմ մտածել ներս խուժել Ադրբէջանի հանրապետութեան արտոնութիւնների մէջ, ինչպէս նաև չեմ կարծում, թէ ձեր կառավարութիւնը խառնվի Հայաստանի հանրապետութեան ներքին գործերի մէջ: Եթէ հարցը վերաբերվէր Ադրբէջանի հանրապետութեան որևէ մի վիճելի շրջանին, ես անկասկած չէի փորձի իմ ծառայութիւնս առաջարկելու՝ վերացնելու համար այն թիւրիմացութիւնները, որ ծագած են այդ շրջանում բնակվող ժողովուրդների միջև, այս ձևով, ինչպէս ես առաջարկել եմ: Սակայն խնդիրը Ղարաբաղի վիճելի հարցի և տեղի տիրապետող հայ ազգաբնակչութեան մասին է, և մեզ բոլորովին ոչինչ չէ, թէ Ղարաբաղը կը միանայ Հայաստանին կամ Ադրբէջանին, կամ թէ նա իրանից կը ներկայացնի ինքնավար քաղաքական միաւոր: Այս վիճելի խնդիրը իր վերջնական լուծումը կը ստանայ կամ Կ. Պոլսի կոնֆերենցիայում և կամ Ղարաբաղի ազգաբնակչութեան ազատ կամքի արտայայտութեամբ:



Ինչ վերաբերում է իմ առաջարկած պատուիրակութեան դերի և ծրագրի մասին, այդ պիտի կայանայ հետևեալում, այս է՝ Ղարաբաղի մուսուլման և հայ ազգաբնակչութեանը յիշեցնել, որ որքան էլ քաղաքական կեանքով ինքնորոշվեն այդ դարաւոր հարևան ժողովուրդները, միշտ պիտի ապրեն կողք-կողքի, դրա համար պէտք է ընդունել ամեն միջոց, որ գոնէ յետագայում նրանց միացեալ կեանքը չը թունաւորվի ամենօրեայ վէճերով և տարաձայնութիւններով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐԸ ԱԴՐԲԷՅՋԱՆՈՒՄ

Հայաստանի հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ է նշանակված Ադրբէյջանում՝ Տ. Բէգզադեան, որը Երևանից արդէն եկել է Թիֆլիս:

***Թիվ 3***

Ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 22

## ТУРКИ В ШУШЕ

25-го сентября 1918 года въ город Шушу вошелъ отрядъ турецкихъ войскъ под начальством Джамилъ Джавилъ бея совместно с уполномоченным Азербайджанского правительства Исмаилъ Хапомъ Знатхаковымъ, с целью водворитъ в Карабаге власть Азербайджана. Армянское население города, которое дотол управлялось совместно с уездами Джеваншрскимъ, Карягинским и Шушинским-Независимымъ Армянскимъ Народнымъ правительствов, предвидя, что требование турокъ в городъ будетъ слишкомъ недолговечно, въ виду блестящихъ победъ, одержимых союзниками на западномъ фронте и капитуляцiи Болгарии, решено не оказывать вооруженного сопротивления грубой силе и темъ спасти ихъ жизнь тысячъ женщинъ и детей обеихъ частей города, зная, что при сопротивлении туркамъ неминуема въ город резня между армянами и татарами.

Въ первые же дни представители Азербайджана публично дали обещание и объявление не преследовать никакого изъ армянъ за ихъ прошлую деятельность.

Рабъ не можетъ быть рыцаремъ.

Въ ночь на первое октября въ дома армян интеллигентовъ ворвались банды турецкихъ аскеровъ, совместно съ представителем доблестной республики, именующим себя уездным начальникомъ. Нагневъ страхъ на женъ и детей, без предъявления ордера они произвели обыскъ захвативъ бумаги, документы и ценность, безъ понятыхъ и безъ выдачи описи и расписокъ на забрания вещи. После обыска они все были препровождены въ Шушинскую тюрьму, где надъ ними былъ установленъ строгий режим-одиночка, лишение книгъ, прогулокъ, свиданий, переписки и прочее. Въ тюрьме армяне томились в течение одного месяца, при чемъ никому изъ арестованныхъ не было предявлено никакого обвиненія. Число арестованныхъ доходило до 60 человекъ. Изъ нихъ были допрошены 4-5 лицъ, причемъ во время допроса председатель Армянского Народного Правительства Егише Ишханянъ был подвергнутъ побоямъ и насилиямъ остальные же во время допроса подвергались всяческимъ оскорблениямъ и глумлениямъ, и все это съ целью вынудить у нихъ уличающія ихъ и товарищей показания "по видимому" "демократическое" азербайджанское правительство решило совершить разгромъ армянской интеллигенціи города Шуши и темъ обезглавить армянскій народъ Карабаха. Былъ установленъ режимъ, который заставлялъ мечтать о самыхъ мрачныхъ дняхъ Николаевского режима. На следуюшій день после ихъ ареста на городскихъ площадяхъ было воздвигнуто восемь виселицъ. Армяне города терроризованы и крайне подавлены этимъ.

Дней черезъ пять после этихъ арестовъ при селении Мсмана былъ разбитъ на голову армянскими войсками турецкий отрядъ, который вздумалъ подчинить себе деревню, при чемъ у нихъ были отобраны пушки и пулеметы.

Безсильное что либо предпринять противъ деревни, Азер. правительство въ отмастку за свое поражение постановило подвергнуть смертной казни некоторых изъ арестованныхъ. Но волею судьбы это имъ не удалось, такъ какъ пришло известіе о полномъ поражении центральныхъ державъ, взятии Константинополя и проч. На виселицахъ пришлось повиснуть тремъ несчастнымъ армянамъ, ни въ чемъ не повиннымъ, изъ коихъ один Саятъ, былъ оправданъ ихъ же "судомъ".

28-го февраля 1919 Арм. Информъ Бюро г. Баку.



### *Թիվ 4*

Ֆ. 323, ց. 1, գ. 1, թ. 22

Ամսույս 2-ին Գորիս եկավ Շուշու Անգլիական միսիայի պետ մայոր Մոնկ Մէսսընը, և նույն օրը իր մոտ հրավիրելով Զանգեզուր-Ղարաբաղի Շրջանային խորհրդի անդամներին, արավ մի քանի հայտարարություն.

1. ճանաչել Ադրբեջանի իշխանությունը
2. Յարմարություն տալ քոչվորներին Զանգեզուրի սարերը գնալու:

### *Թիվ 5*

Զանգ, 24 նոյեմբերի 1918 թ., էջ 6

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Երևան, 17 նոյեմբերի

Ներկայ տարուայ օգոստոս ամսից թուրքերը մեծ ուժերով շրջապատեցին ու ավերեցին Ղարաղշլաղ հայաբնակ գյուղը, որը Ղարաբաղն ու Զանգեզուրը կապող օղակն էր: Ապահովելով թիկունքը՝ սեպտեմբերի 24-ին տաճկական մի զորամաս ադրբեջանական զորքերի հետ միացած մոտ 2000 հոգով, առանց դիմադրության մտավ Շուշի: Երիտասարդ և ըմբոստ տարրերը թողին քաղաքն ու զենքերով հեռացան գյուղերը, ուր Սոկրատ բէկ Մելիք-Շահնազարյանի գլխավորությամբ որոշեցին զենքը ձեռքին չճանաչել ոչ մի տաճկական կամ ադրբեյջանական իշխանություն: Յոկտեմբերի սկզբներին Շուշուց մի զորամաս 400 հոգուց բաղկացած գնում է դեպի Յադրութ, ըմբոստներին պատժելու, բայց ընկնում է ծուղակի մեջ:

Ճարտար գյուղի մոտ մեր քաջերը շրջապատում են նրանց, համարեա բոլորին կոտորում, մի քանիսին գերի առնում և խլում են 4 թնդանոթ, 6 գնդացիր և շատ ռազմամթերք:

Զանգեզուրը իսպառ ազատ մնաց տաճկական ներխուժումից: Տեղական թուրքերը, ունենալով տաճկական հրահանգիչներ, մի քանի անգամ փործ արին հարձակվելու Գորիսի վրա Խոզանվար-Խնածախի և

Կոռնիծորի կողմերից, բայց խայտառակ պարտություն կրելով և Կոռնիծորի մոտ ավելի քան 250 դիակ թողնելով՝ յետ նահանջեցին: Զանգեզուրում է գտնվում Անդրանիկը իր զորամասի հետ, որ զինվորական կազմակերպչական գործում մեծ դեր է կատարել, նա ընդհանրապես գործում է համերաշխ Ազգային Խորհրդի հետ և վերջինս երախտապարտ է նրան իր հայրենիքի փրկության համար:

Զանգեզուրի Կենտրոնական Ազգային Խորհրդի անդամ՝ Գ. Տեր-Սինայան

***Թիվ 6***

Ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս I, թ. 25

Его Превосходительству

Командующему Союзными войсками Бакинского района Генрал-Майору В. М. ТОМСОН

Ваше Превосходительство

Привѣтствуя вступленіе въ городъ союзныхъ войскъ во главѣ съ представителями Англіи, Америки и Франци, я, какъ духовный представитель армянского населенія Бакинской епархіи, считаю священнымъ своимъ долгомъ отъ лица моей паствы....

При взятіи города турецкими и азербейджанскими войсками, въ роковой для Бакинскихъ армянъ день 2/15-го Сентября, была послана имъ навстрѣчу целая делегація съ белымъ флагомъ.

И, дѣйствительно, делегаціи, въ составъ коей входили Датскій и Персидскій Консула, коммандующимъ арміей Мюрсель Пашей были даны офиціальныя завѣренія въ безопасности мирныхъ гражданъ и неприкосновенности ихъ имущества.

Однако, в воскресенье въ полдень, по вступленіи въ городъ организованныхъ бандъ и войсковыхъ частей, началась безчеловѣчная массовая рѣзня и открытій грабежъ, продолжавшіеся полныхъ трехъ сутокъ....

По имѣющимся достовѣрнымъ сведениямъ, помимо дрогъ и арбъ, 25 грузовыхъ автомобилей, грузоподъемностью каждый в 250 пудовъ, въ теченіе 4 сутокъ безпрерывно, днемъ и ночью, вывозили трупыѣи и работа эта все еще не была закончена. Большая часть труповъ для сокрытія слѣдовъ массовой рѣзни была сожжена около Сальянскихъ казармъ, главнымъ образомъ, на свалочномъ пунктѣ.

По приблизительнымъ подсчетамъ полагаютъ, что число убитыхъ армянъ болѣе двадцати тысячъ /20.000/.

.......

Подпись: Почетный Предсѣдатель Бакинскаго Армянскаго Національнаго Совѣта Епископъ БАГРАТъ Бакинскій Епархіальный Начальникъ.

10/23 Ноября 1918 года

Гор. Баку.

Մշակ, 12 դեկտեմբերի 1918 թ. Մ, էջ 2

Շուշու քաղաքագլուխ Մելիք Շահնազարյանը հեռագրում է, թե անգլո-ֆրանսիական միսիան գտնվում է Շուշում:

Միսիան այցելելու է Թարթառ, Գանձակ և Ղազախ: Երկրում հանգստություն է տիրում:

***Թիվ 7***

Ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 164

Эривань
МИНИНДЁЛЪ

Парламентская Комиссія разслѣдованія событій прибыла Карабахь точка Заявленіе Султанова о нападеніи армянъ на кочевниковъ оказались ложными. При разгромѣ Гайбаликенда вырѣзано пятьсотъ армянъ церкове разрушена. Развалины домовъ полны полусгорѣвшими трупами. Мѣстность усѣяна разлагающимися трупами женщинъ, младенцевъ, стариков точка Татары вырѣзали пятьдесятъ армянъ у часовни близъ Гайбаликенда заявивъ приносятъ жертву святымъ точка Мусульманской части города убито сорокъ армянъ запятая армянской части мусульмане не пострадали точка Курды были

вызваны Султановымъ заранѣе обдуманному плану точка Капитанъ Гауансъ упрекаетъ Султанова непринятіи мѣръ несмотря предупрежденіе англичанъ точка Начальникъ Штаба Клатенбергъ донесеніем Шательворту проситъ привлечь Губернатора азербейджанскому суду. 723

Миракянцъ



# 1919

*Թիվ 8*

26 января – 9 мая 1919

## Официальная переписка по вопросу об армянск. Карабахъ и Зангезура

**15 января** 1919 г. Азербейджанское Пров-во постоновляет назначить доктора Султанова генерал-губернатором уездов Шушинскаго, Джеванширскаго, Джибраильскаго и Зангезурского.

**26 января** Мин. Ин. Д. Арменіи телеграммой на имя Мин. Ин. Д. протестует против учрежденія Азербейджанского генерал-губернаторства в назначенный уезд. (1)

**24 февр.** ген. Ассер письмом на имя мин. Ин. Д. Арменіи сообщает содержаніе телеграммы ген. Форестье-Уокера о назначеніи д-ра Султанова ген.-губернатором 4-х уездов. (2)

**28 февр.** Мин. Ин. Д. Арменіи письмом на имя ген. Форестье-Уокера протестует против назначенія Султанова. (3)

**5 марта** ген. Форестье Уокер отвечает на предъидущее письмо, (4)

**В теченіе февраля**

Начальн. Британс. Миссіи в Шуши майор Монк-Мэзон объявляет Карабахскому Армян. Націон. Совету сообщеніе Британск. Командованія о назнач. Азербейджанского Ген- Губернатора для временнаго управленія на 4х уездов. (5)

Карабахский Армянский Наці. Совет отвечает, что для него непреімлемо Азербейджанское управленіе. (6)

Майор Монк-Мэзон, по полученіи отрицательнаго отвѣта Націон. Совета, обращается с тѣм же сообщеніем к четырем воен-начальникам Армянск. Карабаха в случае их отказа подчиниться Азербайдж. Военначальники отвечают, что они присоединятся к ответу Национального Совета их отказа подяиниться Азербайдж. Прав-ству предлагает им дать подписку опредѣленного содержанія (7)....

вслучаѣ.... Лейтенант Британс. Миссіи в Шушѣ вновь обращается

к Военокачалька, с предложеніем дать отвѣт на вопрос Монк-Мэзона. (8)

Военначальники отвѣчают, что на эти вопросы может отвечать лишь Национ. Совет, но не они. (10)

**11 марта** Мин. Ин. Д. Арменіи телеграфирует в Тифлис ген. Томсону точку зренія Армян. Правительства на Карабаг и Зангезур. (11)

**21 марта** Мин. Ин. Д. Арменіи пишет письмо представителю Британск. Командованія в Эривани, полковнику, Темперлео с изложеніем положенія дѣл в 4-х уѣздах и точкой зренія Арм. Правитства, как должно быть организовано временное управленіе на этих уѣздов. (12)

**26 марта** Полков. Шательворт имѣет разговор с предсѣдателем Карабахцев Арм. Націон. Совѣта Асланом Шахназаровым и Шушинксим Городским Головой Герасимом Мелик-Шахназаровым. Протокол этого разговора. (13)

**3 апрѣля** Полков. Шательворт, команд. англійски. силами в Баку, объясняет назначенію 4-х уездов назначеніи д-а Султанова и организаціи управленія. (14)

**15 апреля** Мин. Ин. Д. Арменіи телеграфирует Британск. Командованію в Тифисѣ, протест своего Прав-ства против объявленія полк. Шательворта. (15)

**30 апреля** Правительство Арменіи в вѣсѣде с ген. Мильном между другими пожеланіиями также пожеланіе о способѣ временнаго управленія Карабахом. (16)

**9 мая** Председателем живущих в Тифлисе карабахцев, исполняя порученіе многолюднаго собранія карабахцев, представляют Британск. Командованію в Тифлисѣ обстоятельскую записку о Карабахѣ с изложеніем о прав. армянс. народа на нагорную часть Карабаха. (17)

Ֆ. 200, ց. 1, գ. 244, թ. 1



***Թիվ 9***

Ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս I, թ. 35-36
9 փետրվարի 1919 թ.

Արտաքին գործոց նախարարին: Վրաստանի ներկայացուցչության խորհուրդ. Թումանյան: Անգլիացիների քաղաքականությունը Կովկասում, որքան պարզվում է թե նրանց խոսակցություններից և թե գործողություններից գլխավորապես ի նկատի ունի նրանց ազդեցության ամրապնդումը: Որքան երևում է, որ նրանք աշխատում են այդ ազդեցությանը տևական բնույթ տալու և հաստատվում են Կովկասում երկար ժամանակով: Նրանք առիթ չեն թողնում ընդգծելու իրենց հակակրությունը միացյալ Ռուսաստանի գաղափարին, մինչդեռ ֆրանսիական ներկայացուցիչներն, ընդհակառակը պնդում են, որ պիտի գործեն ամբողջական Ռուսաստանի վերածնության համար: Մի տասն օր սրանից առաջ Ուօկերին ներկայացել էր Անդրկովկասյան Ռուսաց Ազգային Խորհրդի պատգամավորությունը, խնդրելու որ Վրաստանի երկաթուղիների ծառայությունից արձակված ռուս պաշտոնեաներին նորից պաշտոն տրվի: Ուօկերն աջակցություն է խոստացել պայմանով, որ այդ պաշտոնեաները չը համարձակվեն համառուսական պրոպագանդ մղել ու միացյալ Ռուսաստանի գաղափարը տարածել:

Կրճատում

Շարունակվում են նաև բանակցությունները բոլշևիկների հետ, որոնք Վրաստանին խոստացել են կատարեալ ինքնավարություն:

Անգլիացիների ենթադրեալ արշավանքը դեպի Վլադիկավկազ չի իրականանում, ուղարկուած է միայն մի փոքր զորախումբ Կազբեկ, այնտեղից կապ ստեղծելու Յս. Կովկասում բոլշևիկների դեմ գործողների հետ: Զինված ուժով, ինչպես երևում է, գոնէ առայժմ, հակաբոլշևիկյաններին չեն օգնելու: Վրացական շրջաններն աշխատում են անգլիացիներին համոզել, որ հայերը ցանկանում են ռուսների վերադարձը Կովկաս և անբաւական են անգլիական քաղաքականությունից:

Յաղորդում եմ դորա մասին ի տեղեկություն որպեսզի Ձեր տեսակցության ժամանակ Կարս գնացած զեն. Ուոքերի հետ հերքեք այդ բամբասանքները:

Խորհրդական՝ Ռոմիք Թումանյան

*Թիվ 10*

17 փետրվարի 1919 թ.

Ղարաբաղ Ջրաբերդ Գավառի ժամանակավոր իշխանութեան օրինական կոմիսարից Հայաստանի Հանրապետություն նախարարների խորհրդի նախագահին:

1917 թ. նոյեմբերից, ռուս զորքերի հեռացումից հետո իշխանության տեսակետից մնաց յուր երեսի վրա: Շուշի քաղաքում մի շարք քաղաքական կուսակցություններից առաջ եկավ Ազգային Խորհուրդը, որը վարում էր քաղաքում բոլոր ազգային գործերը, շուտով փոխվեց մի քաղաքացիական կոմիտեի, որը շարունակեց վարել ողջ ազգային գործերը: Նույնն առաջ եկավ թուրքերի մոտ: Հետո համատեղ կազմվեց հայ-թուրք խառը, փոխնախագահը թուրք, իսկ նախագահը՝ հայ կոմիտե, որը տնօրինում էր միջազգային գործերը: Այսպես էր մինչև հուլիսի 16-ը 1918 թ.: Իսկ Ղարաբաղի չորս հայաբնակ գավառները՝ Վարանդան, Խաչենը, Դիզակը և Ջրաբերդը, մինչև այդ ժամանակ ապրում էին առանց վարչության: Գործը հասավ անիշխանության: 1918 թ. սեպտեմբերի 20-ին տաճկական հրամանատար Նուրի Փաշան օգնական Բաքվի տխրահռչակ հերոսը Ջեմիլ Ջահիդ բեկը մի ուլտիմատումով առաջարկում է բոլոր գերիները հանձնել տաճկական հրամանատարությանը և անձնատուր լինել, նա ևս խոստանում է հայերին կյանքի և գույքի ապահովություն: Հայոց առաջնորդն ու հայ քաղաքագլուխը պատվիրակություն են ուղարկում Ջեմիլ Ջահիդի մոտ, խնդրելով ուլտիմատումի ժամանակը երկարաձգել մոտ 10 օր:

Ուլտիմատումը քննելուց հետո համագումարը կայացնում է հետևյալ որոշումը: Համագումարը որոշում է ընդունել Ադրբեջանի իշխանությունը, բայց դիմել տաճկական հրամանատարությանը՝ խնդրելով չհավաքել զենքերը՝ հայերին թույլ տալ պայքարել թուրք ավազակների դեմ: Հայերին թույլ տալ պատվիրակություն ուղարկել Բաքու անմիջական բանակցելու համար: Տաճկական հրամանատարը չի ընդունում սա և սեպտեմբերի 21-ին թուրքերը հանկարծակի հարձակվում են Ասկերանի վրա, Փիրջամալ, Քոթուկ, Խանաբար, Նախիջևանիկ, Տիլիս գյուղերի վրա ու թեթև ռմբակոծությունից հետո վերցնում են այդ գյուղերը: Խաչենն ու Շուշին պատրաստվում են անձնատուր լինել, իսկ Վարանդան ու Ջրաբերդը պատրաստվում են զենքով դիմադրել: Երեք անգամ գրոհելուց հետո թուրք-ադրբեջանական զորքերը նահանջում են: Վա-



րանդայում 300 հոգանոց ջոկատը պարտվելով թողնում է 2 թնդանոթ, 2 գնդացիր, փախուստի է դիմում (այլևայլ գրաստներ) Ղարաբաղի հայությունը ընկնում է ծանր և լարված իրադրության մեջ: Որոշ ժամանակ լարվածությունը այսպես պահպանվում է, մինչև որ նոյեմբերի կեսերին լսվում է, որ անգլիացիները մտնում են Բաքու: Իրերի դրությունը հօգուտ հայերին էր: Երևացին և Շուշիում անգլիացիները մայոր Գիբոնի գլխավորությամբ: Մայոր Գիբոնը տեղեկանալով հայերի նախկին ժամանակավոր իշխանության մասին ցանկություն հայտնեց նույնպես կառավարել ժամանակավոր իշխանությունների միջոցով: Կայանում է խմբապետերի և գործիչների ժողով, որ Ղարաբաղը բաժանելով 4 շրջանների՝ Վարանդայի, Դիզակի, Խաչենի ու Ջրաբերդի: Այս չորս շրջաններում կազմելով ժողովրդական ժամանակավոր իշխանություններ, ամեն մի շրջանի իշխանություն իր ներկայացուցիչը ուղարկում էր Շուշի՝ անգլիական միսիային կից կենտրոն կազմելով նրանց դիրեկտիվներն ու ցուցմունքները հաղորդում իրենց իշխանությանը: Միանգամայն պարզ պետք է լինի Հայաստանի Հանրապետության նախարարներին, պարոն նախագահին ու նրա կառավարության բոլոր շրջաններին: Ղարաբաղի հայությունը սպասում է Խաղաղության կոնֆերանսին: Եթե կոնֆերանսը Հայաստանի օգտին վճռի, ապա այնժամ կմիանա, իսկ եթե Ադրբեջանի, ապա Ղարաբաղի հայությունը կապստամբի: Խնդրում ենք օգնել 100.000 դիֆիցիտը:

Հովհաննես Առաքելյան

Ֆ. 199, ց. I, գ. 38, թ. 11-12

*Թիվ 11*

Հայ համայնք, Նոր Նախիջևան, № 23
14 հոկտեմբերի 1918 թ.

## Ս. ՎՐԱՑՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Չնայած, որ պայմանները ընդունված էին, թուրքերը նորից առաջ շարժվեցին և սկսվեց գաղթականների մեծ հոսանք:

Գաղթականությունը սկսվեց դեպի հյուսիս:

Ուլտիմատումը ստորագրելուց հետո Հայոց ազգային Խորհուրդը ընդունեց կառավարության ֆունկցիաները: Կառավարության կազմակերպումը հանձնվեց Ռ. Քաջազնուն:

Կառավարությունը կազմակերպելուց հետո որոշվեց փոխադրել Երևան և Ազգային Խորհրդի անդամների թիվը որոշվեց եռապատկել, որ եղավ 48 հոգի և կազմվեց Ազգային պարլամենտը:

Դրանից հետո առաջ եկավ Կ. Պոլսի կոնֆերենցիայի հարցը, որի նպատակն էր որոշել նոր պետությունների սահմանագիծը: Հայերի կողմից Կ. Պոլսի կոնֆերենցիային մասնակցելու ուղարկվեցին Ա. Ահարոնյան, Մ. Պապաջանեան, Ա. Խատիսեան և խորհրդականներ թվով 12 հոգի: Անհամաձայնություն է առաջ եկել և Տաճկաստանի ու Գերմանիայի միջև, դժգոհություն է առաջ եկել Տաճկաստանի և Գերմանիայի միջև Վրաստանի վերաբերմամբ: Գերմանիան առնում էր իր հովանավորության տակ Վրաստանը, իսկ Տաճկաստանը՝ Հայաստանը և Ադրբեջանը:

......

Հայաստանի տերիտորիան այժմ բռնում է հետևյալ վայրերը Նոր Բայազետի գավառը, Ղազախի լեռնային մասը, ամբողջ Լոռին, Փամբակը, Բորչալուն, Ալեքսանդրապոլի փոքր մասը, էջմիածնի փոքր մասը, Երևանի գավառի մեծ մասը և Դարալագյազի մեծ մասը: Սահմանը Տաճկաստանի հետ որոշ է: Սահմանագիծը թաթարների հետ. թաթարները ուզում են Գանձակը իրենց, հայերն էլ տալիս են, միայն Ղարաբաղը հայերին տան:

Հայաստանը 13.000 ք. վերստ է, որից 2.000 քառվերստ Սևանա լիճն է, 11.000 վերստ ցամաք: 1 մլն 1.100.000 բնակչություն, որից 100.000 թուրք ժողովուրդ է, 15.000 եզդիներ են:

Մոտ 600.000 գաղթականներ կան:

***Թիվ 12***

Մշակ, 27 փետրվարի 1919 թ.

**ՂԱՐԱԲԱՂ**
**(Ուղևորի դիտողութիւններ)**

VI

Ղարաբաղի հայութեան երկրորդ համագումարը պարզ տեսնում էր, որ դրութիւնը խիստ բարդացել է և թիւրքական վտանգը ուժեղացել: Բագուն ընկել էր և թիւրքերը այլևս տիրողի լեզու էին բանեցնում: Համագումարը զրկեց իր գործադիր մարմնին Ղարաբաղի ժող. կառավարութիւն կոչվելու տիտղոսից և այն անուանեց Ղարաբաղի Հայոց ժող. Խորհուրդ: Այս անուանափոխութիւնը մի զիջում էր ստեղծված կացութեան հանդէպ:



Խորհուրդը կազմվեց 10 հոգուց: Միաժամանակ համագումարը սեպտեմբերի 11-ին որոշում է հանում, ո՛ր իր անդամների կեսը ցրվի գիւղերը, իսկ կեսը մնայ քաղաքում՝ աջակցելու Խորհրդին, նկատի առնելով, որ ստեղծվել է չափազանց լուրջ և պատասխանատու վիճակ:

Ղարաբաղի Հ. Ժ. Խորհուրդը պիտի իրագործէր համագումարի մի փափուկ որոշումը: Նա պիտի պատգամաւորներ ուղարկէր Աղդամ և հարթէր հայերի ու թիւրք հրամանատարութեան միջև ծագած տարաձայնութիւնները: Երկու օր շարունակ Խորհուրդը և քաղաքում մնացած պատգամաւորները խառն նիստում զբաղված էին պատգամաւորների ընտրութեամբ: Ոչ ոք չէր համաձայնվում մտնել պատգամաւորութեան մէջ: Պատճառը այն էր, որ ամեն ոք զգում և հաւատացած էր, որ ժողովուրդը խէթ աչքով պիտի նայէ պատգամաւորութեան արածին, որ պատգամաւորի անձը պիտի դառնայ դատապարտութեան առարկայ անպատասխանատու մարդկանց բերանում: Վերջապէս քաղաքացիական քաջութիւն են ունենում պատգամաւորութեան մէջ մտնելու հետևեալ անձինք.

1. Գերասիմ Մելիք-Շահնազարեան (քաղաքագլուխ), 2. Հայրապետ Մուսայէլեան (Ղուկասեան օրիորդաց դպրոցի տեսուչ, այժմ վախճանված), 3. Աշոտ Մելիք-Յովսէփեան (իրաւաբան), 4. Արշաւիր Քամալեան (ուսուցիչ թեմ. դպրանոցի) և 5. Դանիէլ Առաքելեան (գիւղացի): Հայոց պատգամաւորութեանը պիտի ուղեկցէին նաև Միջազգային Կոմիտէի թուրք անդամները, սակայն նրանցից միայն Ինժեներ Լիւֆտալի բէկ Բեհբուտովն է համաձայնվում գնալ Աղդամ:

Սեպտեմբերի 15-ին պատգաւորութիւնը դուրս է գալիս Շուշուց: Նա պիտի բանակցութիւններ վարէր թիւրքական II դիվիզիայի հրամանատար Ջեմիլ Ջահիդ բէյի հետ:

Երբ հայոց պատգամաւորութիւնը Լիւֆտալի բէկի հետ ներկայանում է Ջեմիլ Ջահիդին՝ վերջինս թոյլ չի տալիս պատգամաւորներին նոյնիսկ բերան բանալ և առաջադրում է հետևեալ պահանջները. 1) հպատակվել Ադրբէյջանի կառավարութեան, 2) զինաթափ լինել և 3) թիւրք զորքին ճանապարհ տալ դէպի Շուշի:

Պատգամավորութիւնը մնում է շուարած: Նա գնացել էր միջնորդելու դարաղշլաղեցիների համար և հաւաստիացնելու թիւրքերին, որ Ղարաբաղի հայութիւնը բարի դրացիութեան կողմնակից է: Այժմ առաջադրվում էին այնպիսի պահանջներ՝ որոնց մասին նա չէր լիազօրված

բանակցելու: Պատգամաւորութիւնը պատասխանում է Ջեմիլ Ջահիդին, որ նրա լիազորութիւնները սահմանափակ են: Նա թոյլատուութիւն է խնդրում վերադառնալու Շուշի և ժողովրդի քննութեանը դնելու թիւրք հրամանատարութեան պահանջները: Ջահիդը մնում է անդրդուելի: Նա չի համաձայնվում բաց թողնել պատգամաւորներին և առաջարկում է նամակով յայտնել ժողովրդին պահանջների մասին: Վերջը նա համաձայնվում է, որ պատգամավորներից 3-ը մնան Աղդամում, իսկ 2-ը վերադառնան Շուշի: Վիճակով որոշվում է, որ Շուշի վերադառնում են Յ. Մուսայէլեանը և Դ. Առաքելեանը:

Աղդամում մնացող պատգամավորներին, ինչպէս և Լիւֆտալի բէկին, Ջահիդը բանտարկում է: Մնացողները պատուիրում են վերադարձողներին, որ ժողովուրդը ամենևին նկատի չունենայ բանտարկվածների վիճակը և ազատօրէն իր որոշումը հանէ:

Վերադարձող պատգամաւորները Շուշի են հասնում սեպտեմբերի 16-ին: Նրանք Ասկերանի հայ ռազմիկների միջոցով նոր արտակարգ համագումարի են հրաւիրում Ջրաբերդի, Խաչէնի, Վարանդայի և Դիզակի գիւղերի ներկայացուցիչներին: Թիւրք հրամանատարութեան պահանջը այնպիսի բնոյթ ունէր, որ միայն ժողովրդի ներկայացուցիչները կարող էին այն ընդունել կամ մերժել:

Քաղաքում թիւրքերի պահանջը թողնում է ճնշող տպաւորութիւն: Կազմակերպվում է ժողովրդական հաւաքում, որ քննութեան է առնում ստեղծված կացութիւնը:

Սեպտեմբերի 17-ին բացվում է Ղարաբաղի հայութեան III արտակարգ համագումարը, որին մասնակցում են մօտ 200 պատգամաւոր: Երեք օրվայ տաք վիճաբանութիւններից յետոյ համագումարը ընդունում է հետևյալ որոշումը. «1) Նկատի առնելով ոյժերի փոխյարաբերութիւնը և Բաթումի կոնֆերէնցիայի որոշումները, որոնց տակ ստորագրել են հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչները, որ Ղարաբաղի հարցը վերջնականապէս պիտի որոշվի խաղաղարար վեհաժողովում՝ ճանաչել Ադրբէյջանի իշխանութիւնը: 2) Զինաթափութեան հարցը չի ընդունվում, մինչև որ չը ստեղծվեն որոշ իրաւական նօրմաներ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնն ու գործը պահպանելու համար»:

Մինչ համագումարը զբաղված էր թիւրքական պահանջի քննութեամբ՝ սեպտեմբերի 19-ին Աղդամ է գալիս Նուրի փաշան, բանտից արձակում է հայ պատգամաւորներին և 24 ժամ միջոց տալիս հայերին պատասխան տալու առաջադրված պահանջին, սպառնալով հակառակ դէպքում ռազմական գործողութիւններ սկսել: Յայ պարգամաւորները ուղևորվում են Շուշի: Նրանց միանում են Գանձակի յաջորդ Լևոն վ.



Պսարեանը և քաղ. վարչութեան անդամ Ս. Տէր-Իսրայէլեանը: Վերջիններս դիմում են Շուշի՝ Նուրի-փաշայի կարգադրութեամբ, որ իրանց ազդեցութեամբ համոզեն հայ ժողովրդին ընդունելու թիւրք հրամանատարութեան պահանջները:

Պատգամաւորները Մազէ-կամուրջի մօտ մի խումբ անպատասխանատու հայերի կողմից ենթարկվում են յարձակման, ձերբակալվում և առաջնորդվում Խանքենդի: Այստեղ նրանց հասցնում են կոպիտ վիրաւորանքներ: Պատգամաւորներին մեղադրում են դաւաճանութեան մէջ: Մահվան սպառնալիքը կախվում է նրանց գլխին: Սակայն հայ գիւղացիները խանգարում են անպատասխանատու խմբակի մտադրութիւնը և ազատ արձակում պատգամաւորներին:

III համագումարը սեպտ. 20-ին որոշում է կրկին Աղդամ ուղարկել քաղաքագլուխ Գ. Մելիք Շահնազարեանին, Լևոն վարդապետին և համագումարի նախագահ Գր. Ղարագեօզեանին, որ կարելի լինի՝ բանակցելով Նուրի փաշայի հետ՝ առանց արեան լուծել հպատակութեան հարցը: Այս նոր պատգամաւորութեանը նոյն օրը չի աջողվում դուրս գալ քաղաքից, որովհետև գաւառից եկած գիւղացիների մի խումբ աղմուկ է բարձրացնում և կամենում ինքնադատաստանի ենթարկել պատգամավորներին: Մի կերպ կարելի է լինում լռեցնել աղմկարարներին: Պատգամաւորութիւնը Շուշուց դուրս է գալիս սեպտ. 21-ին, սակայն նոր արգելքների հանդիպում Ասկերանում: Այստեղ հայ գիւղացիները նրանց բանտարկում են և որոշում կոտորել՝ իբրև ազգը ծախողների, դաւաճանների:

Պատգամաւորութիւնը մի օր մնում է Ասկերանում և մի կերպ համոզում գիւղացիներին, որ ինքը միայն բանակցութիւնների համար է դիմում Աղդամ: Նրան բաց են թողնում, բայց լրացել էր Նուրի-փաշայի սահմանած ժամանակամիջոցը և թիւրքերը սկսել էին ռազմական գործողութիւնները:

Սեպտ. 22-23-ին թիւրքերը՝ յանկարծակի բերելով դիրքապահ հայ գիւղացիներին՝ իրար ետևից գրաւում են Ասկերանի աջ ու ձախ թևերի գիւղերը – Միւրիշանլու: Դահրազ, Վարազաբոյն, Փիրջամալ, Նախիջևանիկ, Քեաթուկ, Խորամորթ, Խանաբադ, Ղլիջբազ և Քարագլուխ: Ասկերանի ռազմիկները ստիպված են լինում ետ նահանջել և ճանապարհ բանալ թիւրքական գլխաւոր ոյժերի առաջ: Սեպտ. 26-ին 4000 թիւրք զինուորներ մտնում են Շուշի:

Թիւրք զօրքի արշաւին նախորդում է հետևեալ յայտարարութիւնը, որ փակցվում է քաղաքի պատերին:

«Քաղաքացինե՛ր.

«Գալիս է թիւրք բանակը: Նրա նպատակն է ապահովել Ադրբէյջանի բնակչութեան խաղաղ գոյութիւնը՝ առանց խտրութիւն դնելու կրօնի և ազգութեան մէջ: Այս օրվանից, ով թոյլ կը տայ կրակել քաղաքում, նա մահվան կը դատապարտվի դիվիզիայի հրամանատարի կողմից: Բայօնական կոմիտէները պարտաւոր են անմիջապէս մեղաւորներին հասցնել ոստիկանատուն: Յակառակ դէպքում բայօնական կոմիտէն ենթարկվում է 10.000 ր. կանխիկ տուգանքի՝ յօգուտ Ադրբէյջանի հանրապետութեան»:

Շուշու քաղաքի կոմենդանտ
Յասան Բասրիւ բէյ

Շուշի, 24 սեպտ. 1918 թ.
Դ. Անանուն

***Թիվ 13***

Ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 29

Изъ Баку въ Шушу г. г. Л. Зарафьянъ и Г. Балаянъ, обязанности которыхъ заключились въ томъ, чтобъ установить правопорядокъ и организацию, а также создать определенное общественное настроение. Они приехали въ Шушу и застали тамъ 4-ый съездъ Карабага, на обсуждение которого былъ поставленъ вопросъ объ отношении къ Азербайджану и назначенному имъ генералъ-губернатору.

Съездъ единогласно высказался противъ подчинения Азербайджану и протестовалъ против назначенного им генерал-губернатора. Былъ избранъ там же Карабагскій Национальній Советъ, въ который вошли также наши товарищи. Съезду удалось устранить разногласия между военначальниками и утвердить единство действій.

Въ это время во взаимоотношенія Карабага и Азербайджана вмешалась Британская миссія въ Шуше, возглавляемая майоромъ Манкъ-Мэзономъ и предложила Національному Совету принять проектъ объязательного постановления определяющего отношеніе Карабага къ Азербайджану, который прилогается при семъ, отдельнымъ оттискомъ подъ заглавіемъ Карабагъ. Но Національный Советъ отвергнулъ этотъ проектъ в своемъ отвѣтѣ. Карабагский Советъ проситъ Томсону объ организации управленія Армянскимъ Карабагомъ въ виде смешанной коммисіи, избранной населеніем с сохранениемъ правъ мусульманского меньшенства. Между темъ Азербайджан сейчасъ подготовляетъ военные силы, стягиваютъ войско подводятъ пушки въ Агдамъ, словомъ, готовятъ наступление. Положение это изо дня в день становится угражающимъ и должны быть приняты все меры для предатвpашенія конфликта.

Первого марта 1919 г.
г. Баку
Председатель Бюро

ՀՀ կառավարությանը, Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդից

Անգլիական հրամանատարության վարած միակողմանի քաղաքականության իբրև նմուշ կարող են ծառայել և հետևյալ դեպքերը, վորի մասին հենց նոր սուրհանդակի միջոցով ստացվեց: Ջրաբերդի շրջանի Ավան-Խզբայյանի կալվածքում գտնվում է անգլիական միսիա: Այդ միսիայի գլխավորը մայիս 15-ին, երբ վոստիկական պրիստավ Սերգեյ Ստեփանյանը գնացել է Մարաշալի գյուղը, վորտեղ եղել է թուրքերի կողմից սպանություն, հրավիրում է շատ սիրալիր նամակով իր մոտ հիշյալ պրիստավին և ձերբակալելով շտապով ուղարկում Բագու, գեն. Թոմսոնի մոտ: Նույն բովանդակությամբ նամակներ են ստանում նաև մյուս պաշտոնյաները շրջանի, որոնք աչքի են ընկնում իրենց աչալուրջ գործունեությամբ: Այս դեպքը սաստիկ հուզել է շրջանի հայությանը: Ազգային Խորհուրդը մտահոգության մեջ է:

***Թիվ 28***

Ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 144
16 հունիս 1919 թ.

Срочно Эривань Мининдѣлу
изъ Тифлиса № 1498 чис. слов. 150

Сейчасъ американскій консулъ, сообщилъ мнѣ, что полученному имъ донесенію, седьмого татары около Шуши окружили армянское село перебили до шестьсотъ душъ, обоего пола, возмущенный этимъ консулъ телеграфируетъ в Парижъ и Вашингтонъ. Члены шу-

шинскаго землячества Карабегянъ и Меликъ-Осепянъ просятъ реальнаго вмѣшательства и командированіе въ Тифлисъ Предсѣдателя Правительства Хатисова для переговоровъ англійскимъ командованіемъ точка Лично я поддерживаю это ходатайство завтра повидаю генерала Кори. № 94.

Предстарменъ ЕВАНГУЛЯНЪ.

***Թիվ 29***

Ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 128-131
24.6.1919 թ.

ДОКЛАДНАЯ ЗАПИСКА
ПРЕДСЕДАТЕЛЯ КАРАБАХСКАГО АРМЯНСКАГО НАЦИОНАЛЬНАГО СОВЕТА

(Կրճատ)

Въ результатѣ завязавшихся переговоровъ, для устраненія межнаціональныхъ треній, былъ созданъ на паритетныхъ началахъ, новый интернаціональный органъ. Армяно-Мусульманскій Комитетъ изъ представителей совѣта армянскихъ организацій и мусульманскаго національнаго Комитета.

Цѣной напряженныхъ усилій новому Совѣту удавалось поддерживать порядокъ въ краѣ и не допускать межнаціональнаго пожара...

Положеніе стало ухудшаться съ апреля 1918 г., когда во всѣхъ населенныхъ мусульманами пунктахъ Карабаха появились турецкіе коменданты и эмиссары. По ихъ появленіи къ нимъ перешла вся власть въ мусульманской полосѣ. Не располагая войсками, они регистрировали мусульманъ, способныхъ къ ношенію оружія, и образовывали изъ нихъ банды.

Господство турецкихъ комендантовъ ознаменовалось новыми ужасами...

Всѣ эти издѣвательства подкрѣплялись требованіемъ, направленнымъ къ армянскому крестьянству: признать турецкую власть...



Но армянское крестьянство упорно и съ достоинствомъ отвергало это требованіе...

Затѣм, послѣ паденія Баку, по освобожденіи необходимаго количества войскъ, на Карабахъ были двинуты регулярныя турецкія воинскія части подъ командой Джамиль Джавидъ Бея.

Этотъ палачъ прославившійся еще въ Баку, прибывъ въ Агдамъ, вызвалъ представителей армянъ и поставил имъ два требованія: признать власть Азербейджана и ея высокой покровительницы оттоминской имперіи и сдать все орижіо. Онъ обьявилъ про этомъ, что мусульмане обезоружены не будутъ. Такимъ образомъ, натравивъ ихъ на армянъ, Турція стремилась обезоружить послѣднихъ. Армяне отказались исполнить эти требованія. Въ срокъ ультиматума турки повели наступленіе на села пограничной полосы: Пирджамалъ, Нахичеваникъ, Даграсъ, Мршалу, Кятыкъ и Храмуртъ.

Былъ открытъ артиллерійскій и пулеметный огонь... Лишь по исходѣ патроновъ армянскія силы отступили. Упомянутыя деревни были взяты и разгромлены...

Затѣм турки вступили въ Шушу.

Вся армянская интеллигенція была брошена в тюрьмы, гдѣ надъ ней издѣвались, подвергали побоямъ и пыткамъ...

Но туркам надлежало еще покорить Карабахъ, ибо ихъ власть простиралась только на городъ и малую часть Хачена, а Джрабердъ, Варанда и Дизакъ изъ Карабаха и Зангезура были во власти армянъ. В это же время съ Зангезура, который все это время былъ свободенъ отъ турокъ, двинулся ген. Андраникъ. Шествіе ген. Андраника было побѣднымъ, и онъ, занявъ всѣ важные стратегическіе пункты противника, былъ въ 35 верстахъ отъ Шуши. Возстаніе армянъ Карабаха готово было увѣнчаться успѣхомъ, турко-азербейджанцы были въ паникѣ.

Как разъ въ это время Союзники вступили на Кавказъ.

По порученію ген. Томсона въ Карабахъ прибыла Военная Союзная Миссія, которая потребовала пріостановки военныхъ дѣйствій и вмѣстѣ съ тѣмъ взяла на себя установленіе порядка... Союзная Миссія обьявила, что отнынѣ никакихъ войсковыхъ передвиженій сосредоточеній не должно быть съ обѣихъ сторонъ.

Но не прошло и месяца, какъ Азербейджанское Правительство стало концентрировать въ армянскихъ районахъ и по сосѣдству съ

ними въ Ханкендахъ, Забугѣ, Карягинъ свои войска...

Наконецъ, Британскимъ Командованіемъ было объявлено, что для установленія порядка среди 300.000 армянскаго населенія Карабаха нужно признать власть Азербейджанскаго Правительства, впредь до рѣшенія вопроса о Карабахѣ на Мирной конференціи.

4 и 5 съѣзды армянъ Карабаха рѣшительно отвергли это предложеніе ибо подчиненіе Азербейджану, хорошо извѣстному армянамъ еще со времени турокъ, грозило самому физическому существованію ихъ... Тогда Англійское Командованіе объявило, что непризнаніе Азербейджанскаго Ген. Губерн. Доктора Султанова, бывшаго турецкаго агента и извѣстнаго армянофоба, будетъ считаться актомъ, враждебнымъ Великобританіи.

Въ то же время начались репрессіи по отношенію к Армянскимъ дѣятелямъ. Представитель Арменіи при Британской Миссіи в Шушѣ г. Арзумановъ былъ высланъ изъ Шуши, и подвергнутъ обыску на ст. Акстафа въ присутствіи британскаго офицера, сопровождавшаго его, съ отобраніемъ всей дипломатической переписки и оружія.

Британское Командованіе не признало Кар. Арм. Нац. Совѣта, несмотря на то, что онъ въ армянскихъ районахъ является единственной организованной Властью...

Предсѣдатель Карабахскаго Армянскаго Національнаго Совѣта
30 мая 1919 года

### *Թիվ 30*

Աշխատավոր № 124, 24 հունիսի, 1919, ՅՅԴ էջ 1

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ՄԻՏԻՆԳ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիսի բոլոր հայկական հասարակական կազմակերպությունների և հիմնարկությունների հրավերով Թիֆլիսի Վանքի բակում տեղի ունեցավ համահայկական մեծ միտինգ, որին մասնակցում էին տասնյակ հազարավոր քաղաքացիներ:

Միտինգը բացեց հայրենակցական միության կենտրոնական վարչության նախագահ Հ. Թումանյանը: Ելույթ ունեցան Յ. Սպենդիարյան, Ալ. Պոպովան, Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդի անդամ Աշոտ Մելիք Յուվսեփյան, Արշակ Թադևոսյան, Տեր-Գրիգորյան, Տարոնեցի (արևմտահայ): Վերջում միտինգի նախագահ Հովհ. Թումանյանը կարդաց հետևյալ բանաձևը:

Կիրակի, հունիսի 22-ին Վանքի գավթում, տասնյակ հազարավոր հայության, Անդրկովկասի և Տաճկա-Հայաստանի գավառների հայ հայրենակցությունների և հայկական այլ հասարակական, կուլտուրական 40-ից ավելի հիմնարկությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, հայկական Ղարաբաղում տեղի ունեցող արյունալի դեպքերի առթիվ կայացած միտինգը արեց հետևյալ որոշումը. «Ի նկատի ունենալով, որ համաշխարհային պատերազմի ընթացքում, այն ժամանակ, երբ հայ ժողովրդին վիճակվեց մեն-մենակ պաշտպանել Երզնկայից մինչև Խրամ գետը ձգվող հսկայական ֆրոնտը, Ղարաբաղը իր 300.000 հայությամբ, որ կազմում էր ամբողջ ազգաբնակչության 80%, հերոսական կռիվ մղեց տաճկական զորքերի դեմ: Ադրբեջանի ոտնձգություններր անվիճելի հայտարարելու Ղարաբաղը բխում են նրա նվաճողական քաղաքականությունից, որ ներշնչում է Ադրբեջանին Հայաստանի և Անտանտի թշնամի Տաճկաստանը:

Միտինգը իր ցասումն ու զայրույթն է հայտնում Ղարաբաղի անզեն կանանց ու երեխաների վերաբերմամբ տեղի ունեցած վանդալիզմի հեղինակներին:

Իր ողջույնն է հղում այն կռվի համար, որ նա վարում է հանուն մայր երկրի կյանքով ապրելու սրբազան իրավունքի: Միևնույն ժամանակ դիմում է Դաշնակից երկրներին և նրանց ներկայացուցիչներին, որ նրանք անմիջապես ձեռք առնեն ամենակտրուկ զինական միջոցներ, անմիջապես ձերբակալել և դատի հանձնել տեղի ունեցած կոտորածների հեղինակներին, անպայման հեռացնել ամբողջ հայկական Ղարաբաղից Ադրբեջանի իշխանությունը, որին չի ճանաչում և երբեք չպիտի ճանաչի Հայկական Ղարաբաղը: Թույլ տալ Հայկական Ղարաբաղին, համաձայն ազգաբնակչության անդրդվելի կամքի՝ կցվել Հայաստանին և եթե այդ կցումը որևէ պատճառով անհնար գտնվի, առայժմ, Հայկական Ղարաբաղում կազմակերպել դաշնակից պետությունների վարչություն՝ մինչև Պարիզի կոնֆերանսի վերջնական վճիռը»:

## Թիվ 31

Աշխատավոր, 1 հուլիսի, 1919, էջ 2

Հայ-Ադրբեջանական Պառլամենտական հանձնաժողով
Երևան, 27 հունիսի

Ադրբեջանի Արտաքին գործերի մինիստրը տվել է հետևյալ հեռագիրը.
(Կրճատ)
Ադրբեջանի կառավարությունը առաջարկում է Հայաստանի կառավարության վերոհիշյալ նպատակով կազմել խառը պարլամենտական մի հանձնաժողով Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներից: Ադրբեջանը ոչինչ դեմ չունի հանձնաժողովի մեջ եվրոպական պետությունների և Ամերիկայի ներկայացուցիչներ ընդունելուն, եթե դա կարևոր է գտնում Հայաստանի կառավարությունը:

Հայաստանի հասարակապետ, արտաքին գործերի մինիստրը պատասխանել է հետևյալը.

«Հայաստանի կառավարությունը, որ միշտ կանգնած է եղել Ադրբեջանի և Հայաստանի հասարակապետությունների միջև ամենաամուր բարի հարևանական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտության տեսակետի վրա, պատրաստակամությամբ է ընդունում Ադրբեջանի առաջարկը կազմելու խառը պառլամենտական հանձնաժողով Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչներից, յուրաքանչյուր կողմից երկու հոգի դաշնակից ներկայացուցիչների մասնակցությամբ»:

## Թիվ 32

Ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 212

7 հուլիսի 1919 թ.

Հայաստանի Հանրապետության
Արտաքին Գործերի Նախարարին

Ադրբեջանում ՀՀ ներկայացուցիչ Տիգրան Բեգզադյանից

Մեր անցյալ հաղորդագրություններից Ձեզ արդեն հայտնի է, որ յունիսի 28-ին Ղարաբաղի գեներալ-գուբերնատոր Սուլթանովի առաջարկությամբ նշանակված էր Ղարաբաղի վեցերորդ համագումարը, որին ներկայ պիտի լինեին Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչները: Համագումարը կայանում է նշանակված օրը Շօշ գյուղում և երեք օր կառավարության ներկայացուցիչներին սպասելուց հետո գրվում է՝ ընտրելով մի նախագահություն, որը և լիազորում է կառավարության ներկայացուցիչները գալու դեպքում բանակցել և աշխատել հաշտության որոշ պայմաններ մշակելու:

Յունիսի 30-ին Ղարաբաղ են հասնում Ադրբեջանի ներկայացուցիչներ Շարիֆ Բեկ Ուսուբեկովը և Շահսուվարովը և սկսում բանակցությունները: Հետևանքն այն է լինում, որ համագումարի կողմից ներկայացուցիչ է ընտրվում Արամայիսը (Մ. Տեր-Դանիելյան) և Շուշու Հայոց կոմիտեի կողմից Ռուբեն Շահնազարեանը, որոնք և կառավարության ներկայացուցիչների առաջարկությամբ երեք օր առաջ Բաքու եկան Ադրբեջանի կառավարության հետ բանակցություններ վարելու համար:

Նախքան բանակցություններ սկսելը Արամայիսը մի զեկուցում արավ Բաքուի Հայոց Ազգային Խորհրդի ամսույս 4-ին կայացած արտակարգ նիստում, որտեղ մանրամասն ներկայացրեց այն բոլոր դեպքերը, որ տեղի ունեցան Շուշիում Յունիսի 4-ին, 5-ին և 6-ին: Արամայիսը, համարելով Ղարաբաղի ներկայացուցիչների դերը չափազանց ծանր և պատասխանատու, համագումարի ցանկությամբ առաջարկեց Ղարաբաղցիների ներկայացուցիչների կազմը ուժեղացնել Բաքվի ղարաբաղցիների Հայրենակցական Միության անդամներով: Անկախ դրանից Ադրբեջանի կառավարության առաջարկելիք պայմանների մշակման աշխատանքներին մասնակցում են նաև Բաքվի Ազգային Խորհրդի անդամները: Այն բոլոր պայմանները, որոնք մշակելու և առաջարկելու են Ադրբեջանի կառավարությունը՝ անգամ համաձայնության դեպքում, վերջնականապես պիտի ներկայացվի նոր սպասելիք յոթներորդ համագումարի հաստատությանը, որից հետո միայն այդ պայմանները կարող են լուծված համարվել:

Այսօր առաջին անգամ Ղարաբաղի ներկայացուցիչները պետք է ներկայանային և կառավարություն ներկայացնեին մշակված պայմանները, որի շուրջ մտքերի փոխանակություն պետք է տեղի ունենար, սակայն այսօր այդ տեսակցությունը չհաջողվեց:

Ղարաբաղի պատվիրակությունը բաղկացած է Արամայիսից, Մելիք-Յոլչյանից, Ռուբեն Շահնազարյանից: Ցանկություն է հայտնել պատվիրակության կողմից կառավարության հետ վարելիք բանակցություններին մասնակցել նաև Թիֆլիսի ղարաբաղցիների Հայրենակցական Միության ներկայացուցիչները:

Սկսված բանակցությունների հետևանքի մասին կաշխատինք Ձեզ փութով տեղեկացնել:

*Թիվ 33*

Նոր Աշխատավոր, 25 հուլիսի, № 148, էջ 2

## ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆՑՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի պառլամենտը Ղարաբաղի անցքերի վերաբերյալ ընդունել է «Մուսավաթ» ֆրակցիայի ընդունած հետևյալ բանաձևը:

«Լսելով կառավարության զեկուցումը և բացատրությունը Ղարաբաղի անցքերի վերաբերմամբ և գտնելով, որ տեղական իշխանության և մասնավորապես գեներալ-նահանգապետի գործողությունների մեջ անօրինական ոչ մի փաստ չկա, պառլամենտը հավանություն է տալիս այդ անցքերին վերջ տալու համար կառավարության ձեռք առած միջոցներին և անցնում է հերթական գործերին: Այս բանաձևն ընդունված է "Азербайджан"-ի ասելով ձայների մեծամասնությամբ, հայկական ֆրակցիայի ձայների դեմ:

Բացի "Мусават"-ի բանաձևից առաջարկված է եղել մի ուրիշ բանաձև, որը սակայն "Азербайджан"-ը առաջ չի բերում»:

*Թիվ 34*

Նոր Աշխատավոր, 27 հուլիսի, № 150, էջ 4

## ԿՈՎԿԱՍ

## ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ

Արմավիր, 14 հունիսի

Արմավիրի հասարակությունը չէր կարող անտարբեր մնալ դեպի Ղարաբաղի դեպքերը: Եվ այսօր, ամսույս 14-ին կայացավ միտինգ, նախաձեռնությամբ տեղիս հայերին օգնող կոմիտեի: Այդտեղ պ. Եարվելյանը զեկուցեց Հայաստանի Ղարաբաղի և տեղիս գաղթականական գործերի մասին: Ա. Տոնյանը կոչ արեց հայ հասարակության, որ խրատված անցյալ դառը փորձերից, օր առաջ ամապարի մեր մայր երկիրը շենացնելու ու վերածնելու մեր նորաբողբոջ հանրապետությունը: Ընդունվեց բանաձև.



1. Մենք՝ Արմավիր քաղաքի հայերս, հավաքվելով մեծ թվով ընդհանուր ժողովի 1919 թ. հունիսի 14-ին նախագահությամբ պ. Յով. Եարվելեանի, քարտուղարությամբ Արամ Տոնյանի, լսելով զեկուցումներ Հայաստանի դրության և Ղարաբաղի վերջին դեպքերի մասին, պարտք ենք համարում բարձրաձայն յայտարարել հետևյալը:

Նախարարություն պատերազմի ընթացքի և Ղարաբաղի հայ ժողովրդի վիճակի մասին:

Ի լրումն ամենի Ադրբեջանի կառավարությունը, արյունարբու երիտասարդ թուրքերի այդ բացարձակ գործելակերպը, որը անցեալ տարվա սեպտեմբեր ամսին Բագուն տաճիկների կողմից գրավելու ժամանակ, նրա հետ միասին կոտորեց երեսուն հազար հայ, և որը շարունակվում է մինչև օրս հայերի կոտորածը և իր բնաջնջումը հարազատ երկրում, այդ կառավարությունը բացարձակ ժողովում էր ու շրջապատում արյունարբու Նուրի Փաշային մինչև վերջ չենթարկվող հերոսական Ղարաբաղը և հեռացնելով կամ աքսորելով հայ հասարակական կարծիքի ղեկավարներին, սույն հունիսի 4-ին հայտնի արյունարբու բժիշկ Սուլթանովի ղեկավարությամբ նորից սկսել է հայերին կոտորել, որի հետևանքն է եղել, ըստ նախնական տեղեկությունների, վեց հայ գյուղերի և վեց հարյուր հայ բնակիչների ոչնչացումը, մեծ մասամբ կանանց և երեխաներին: Հայերը սարսափով էին հետևում այդ հերոսամարտին, որովհետև ղարաբաղցիների ընդդիմադրությունը ջլատվում էր Կովկասում գտնվող բրիտանական զինվորական իշխանության գործելակերպով ու հրահանգներով, որոնք ոչ միայն արգելք չէին լինում, այլ խորհուրդ էին տալիս ենթարկվել արյունարբու սուլթանովների իշխանության: Դրա հետևանքը՝ նորից հոսեց հայի արյունը:

Հայի դառնության բաժակը արդեն լցվել է և մենք պարտք ենք համարում հաղորդել Մեծ Բրիտանիայի կառավարության նրա գործակալների գործունեության մասին, միանգամայն հավատացած լինելով, որ նրանց գործելակերպը միանգամայն հակասում է կենտրոնական կառավարության քաղաքականության և որ Մեծ Անգլիան նորից հայերին չի մատնի դահիճի՝ երիտասարդ-թյուրքերի և նրանց գործակալների ձեռքը: Ելակետ ընդունելով վերոհիշյալը, մենք պնդում ենք.

1. Որ Հայաստանում և Հայկական գործերի համար նշանակվին այնպիսի գործակալներ, որոնց քաղաքականությունը չնպաստեր և չուժեղացներ երիտասարդ թուրքերի գործունեությունը ոչնչացնելու հայերի մնացորդը:
2. Որ վճռական պահանջ ներկայացվի տաճիկներին իսկույն մաքրելու Հայաստանը և յանձնելու Հայաստանի կառավարության:

3. Որ Հայաստանը շուտափույթ գրավվի համաձայնականների զորքերով կամ իրավունք տրվի գրավել սեփական զորքերով:
4. Որ հեռացվեն այն արգելքները, որոնք թույլ չեն տալիս հարյուր հազարավոր հայ գաղթականներին վերադառնալ հայրենիք՝ քանի վրա չեն հասել ցրտերը և վերաշինելու իրենց քանդված օջախները, որովհետև մի նոր ձմեռ ևս օտարության մեջ՝ կոչնչացվի ժողովրդի մնացորդը:
5. Հայտնել մեր հիացմունքը Ղարաբաղի մեր եղբայրներին, որոնք հերոսաբար կռվում են Սուլթանովի դեսպոտիզմի դեմ հանուն ժողովրդների ինքնորոշման ու քաղաքակրթության և մեր խորին զզվանքը մարդ-գազան Սուլթանովներին:

Սույն բանաձևը վճռեցինք հանձնել Հայաստանի ներկայացուցիչ պ. Յ. Սաղաթելյանին, բրիտանական և ամերիկյան միսիաներին Եկատերինոդարում հաղորդելու իրենց կառավարությանը և դիմել Հս. Կովկասի այլ հայ գաղութաց միանալու սույն բանաձևին:

Արամ Տոնեան

***Թիվ 35***

Օգոստոս 5, էջ 2, Նոր Աշխատավոր, 1919

**ՀԱՅԱՍՏԱՆ**
**ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ**
(Սեփ. թղթ.)

Ղարաբաղի հայութեան ներկայացուցիչների վեցերորդ համագումարից յետոյ յատուկ մի յանձնաժողով լիազօրուած էր անմիջական բանակցութիւններ վարել Բագւում Ադրբէջանի կառավարութեան հետ՝ Ղարաբաղի հարցի շուրջը փոխադարձ համաձայնութեան գալու նպատակով:

Բանակցութիւնները կրում էին ոչ պաշտօնական բնոյթ, քանի որ Ադրբէջանի կառավարութիւնը, համարելով Ղարաբաղը իր անվիճելի երկրի մի մասը, մերժեց Հայաստանի հանրապետութեան Բագւի ներկայացուցչին մասնակցել բանակցութիւններին, յայտնելով, որ նա թոյլ չի տալ օտար երկրին խառնւել իր ներքին գործերին:



Յանձնաժողովը Ուսուբբէգովին ներկայացրեց մօտ տասնեակ կէտերից բաղկացած մի առաջարկութիւն, որի համաձայն Ղարաբաղի հայութիւնը ժամանակաւորապէս ընդունում է Ադրբէջանի իշխանութիւնը, սակայն հետևեալ պայմաններով.

1. Ադրբէջանի իշխանութիւնը ընդունւում է ժամանակաւորապէս, մինչև հարցը վերջնականապէս որոշւի հաշտարար կոնֆերանսում, որի վճիռը պարտադիր է երկու կողմերի համար:
2. Ղարաբաղի ընդհանուր նահանգապետին կից ընտրւում է մի խորհուրդ, բաղկացած վեց հոգուց - երեք հայերից և երեք թուրքերից: Խորհուրդը կրելու է կոնտրոլի բնոյթ և առանց այդ խորհրդի համաձայնութեան և վաւերացման ընդհանուր նահանգապետը ոչ մի խոշոր գործ չի կարող ձեռնարկել:
3. Ընդհանուր նահանգապետը պիտի ունենայ մի օգնական, որը պիտի լինի հայ:
4. Ղարաբաղի այն մասերում, ուր թւով գերազանցում է հայ տարրը, վարչական բոլոր պաշտօնեաները պիտի լինին հայեր:
5. Հայկական վայրերից թուրք զօրքերը դուրս են բերւում և
• կենտրոնացւում Խանքենդում և Շուշում:
6. Դադարեցւում են հայերի միջև ձերբակալութիւնները. խուզարկութիւնները և հալածանքը, աքսորուածները վերադառնում են իրենց վայրերը և այլն...

Ադրբէջանի կառավարութիւնը, ի հարկէ, չէ ընդունում այս առաջարկութիւնը, նա պահանջում է, որ Ղարաբաղի հայութիւնը ընդունի Ադրբէջանի իշխանութիւնը առանց մի որևէ պայմանի և այն էլ դեկլարացիայի միջոցով:

Իր կողմից Ուսուբբէգովի կառավարութիւնը առաջադրում է վերև յիշուած յանձնաժողովին մի հակա առաջարկութիւն, որը միանգամայն անընդունելի է հանդիսանում Ղարաբաղի թէ ֆիզիքական և թէ բարոյական կացութեան տեսակէտից:

Յանձնաժողովը իր լիազօրութիւնից վեր համարելով կառավարութեան նման առաջարկի ընդունելը, հարցը թողնում է տեղերում գտնւող ազգային հիմնարկութիւնների հայեցողութեան: Սրանք քննութեան առնելով Ադրբէջանի իշխանութիւնների հակաառաջարկութիւնը, գտնում են այն միանգամայն անընդունելի և վիրաւորական և, հետևապէս, բացարձակապէս մերժում են:

Այդպէս բանակցութիւնները խզւում են, և հարցը ներկայում մնում է թերի և անորոշ: Ղարաբաղի տառապող աշխատաւորութեան անկեղծ ձգտումը՝ հարցը վերջացնել փոխադարձ համաձայնութեամբ և համե-

ռաշխութեամբ, համդիպում է բէզական կառավարութեան յամառութեանը:

Սակայն, Ադրբէջանի ղեկավարները, որոնք մինչև այժմ չէին ուզում լսել անգամ ղարաբաղցիների օրինական պահանջները, տեսնելով, որ հարցը նորից բարդանում է և պիտի պատասխանատու հանդիսանայ նոր անակնկալ արիւնահեղութիւնների, գործի նման ընթացք ստանալուց դրդւած, կարծես, նորից ուզում են որոշ զիջողություններ անել:- Ինչպէս տեղեկացանք, Ադրբէջանի նախարարապետ Ուսուբբէգովը մի քանի օր առաջ դիմել է Հայաստանի հանրապետութեան ներկայացուցչին պաշտոնական բանակցութիւններ վերսկսել Ղարաբաղի և մի քանի այլ հարցերի վերաբերեալ:

Դոստեան

Բագու

***Թիվ 36***

Նոր Աշխատավոր, 5 օգոստոսի, 1919 թ., էջ 2

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ենթադրում են, որ անարխիան Հայաստանում անշուշտ կը շարունակվի այնքան ժամանակ, մինչև որ Ամերիկան չվճռի մանդատի խնդիրը: Բրիտանական զորքերի խոստացած հեռացումը Հայաստանը կը թողնի անօգնական վիճակի մեջ թուրքերի անգթությունների դեմ: Արդեն հաղորդագրություններ կան, որ չարագործությունները վերսկսել են դաշնակիցների դանդաղ գործելակերպի պատճառով, որից խրախուսվել են թուրքերը: Անգլիացիները չեն կարող կարգը պահպանել, թողնելով այնտեղ իրենց զորքերը, որովհետև բանվորական կուսակցությունը պահանջում է, որ նրանք վերադարձվեն հայրենիք: Հայերը, որոնք հույս ունեն պաշտպանություն գտնելու, այն ժամանակ կը հանձնվեն անխնա թուրքերի և քրդերի ձեռքը: Այստեղ գտնում են, որ Ամերիկայում աճող դժգոհությունը եվրոպական գործերից՝ չպետք է առիթ տա վատատես լինելու այն մարդասիրական ծրագրերի վերաբերմամբ, որոնք կարող են իրագործվել այնքան հեշտ կերպով: Եթե միայն թուրքերը հասկանան, որ Ամերիկան եռանդուն մասնակցություն կունենա մանդատի



գործում, նրանք կը դադարեցնեն իրենց անգթությունները: Հայաստանի մանդատը քաղաքական խնդիր չէ: Ընդհանուր կացությունը պահանջում է սահմանել մի ուժեղ կառավարություն, բարեխիղճ և անկաշառ իշխանություն: Եվրոպան գիտէ արդեն, որ Ամերիկան գործը ստանձնելուց հետո եռանդուն կերպով առաջ կտանի այն և դա ավելի հեղինակություն կտա մանդատին:

***Թիվ 37***

Ֆ. 200, ց. 1, թ. 65
13 օգոստոսի 1919 թ.

Баку
Министру Председателью
Копия Министру иностранныхъ делъ

Въ течение двухъ недель нужно Азербайджану покончить съ Зангезуромъ и сдвинуть войска до Кемарлю. Теперь самое подходящее время. Съ приездомъ американского полковника комиссара Армении будетъ поздно. Если Вами будетъ принято мое предложение, то переводите безъ объявления войны. Оченъ прошу воспользоваться моментомъ и не терять времени.

Дипломатический Представитель Текинский

***Թիվ 38***

Ֆ. 200, ց. 1, գ. 50 (մաս I), թ. 102
15 օգոստոսի 1919

**ВРЕМЕННОЕ СОГЛАШЕНІЕ**

Армянъ Нагорного Карабаха съ Азербайджанскимъ правительствомъ.

Принимая во внимание, что вопросъ объ участи нагорной части Карабаха разрешится на мирной Конференціи, что всякія столкно-

вения губельны для населяющихъ Карабахъ національностей, что при всякомь разрешеніи Карабахского вопроса армяне и мусульмане должны будутъ жить совместно, 7 съездъ Армянь Карабаха на 4-м утреннемъ заседаніи отъ 15 августа 1919 года, постановилъ остановиться на следующихъ условияхъ временного соглашения с Правомъ Азербайджанской Республики.

д. I

Настоящее временное соглашение принимается сторонами до решения этого вопроса на Мирной Конференціи, таковое решеніе одинаково обязательно для обеяхъ сторонъ.

2.

Нагорная часть Карабаха, Шушинского, Джеваншироского и Джебреильского уездовъ (Дизакъ, Варанды, Хаченъ, Джрабердъ), населенная армянами, считаеть себя временно въ переделахъ Азербайджанской Республики.

3.

Шушинский, Джеваншироский и Джебраильский уезды остаются выделенными в особую административную единицу Карабахского генерал-губернаторства, внутренняя организация такова, что въ нагорной армянской ... назначается администрація изъ армянъ съ соблюдениемъ права меньщеньства.

4.

В Нагорной части Карабаха (Дизакъ, Хаченъ, Варанда и Джрабертъ) административныя должностныя лица назначаются по представлению членовъ совета Армянъ.

5.

При Карабахскомъ Генералъ-Губернаторствъ учреждается Советъ въ числе Шести: трехъ армянъ и терхъ мусульманъ.

6.

Армянскіе члены Совета избираются съездомъ армянского населенія Нагорного Карабаха. Съездъ имеетъ право перевыборовъ.



7.

Все проницательные вопросы международнального характера не могутъ быть проведены в жизнь безъ предварительного обсуждения в Советъ.

8.

Советъ имеетъ право иниціативы по вопросамъ устраненія и управленія генералъ-губернаторомъ.

9.

Советъ имеетъ право наблюденія и контроля надъ администраціей генералъ-губернаторства без права вмешательства в действія администрація.

10.

Учреждается должность помощника Генералъ-губернатора по гражданской части, на каковую должность назначается армянинъ.

11.

На должность помощника по гражданской части армянскимъ съездомъ представляются Азербайджанскому Правительству два кандидата, одинъ изъ коихъ утверждается имъ.

12.

Армяне Карабаха пользуются правомъ культурного самоопределенія.

13.

Право культурного самоопределенія осуществляется Карабахским Армянскимъ Национальным Советомъ избираемымъ на съездахъ періодических созываемыхъ изъ армянъ Карабаха съездъ созываетъ національный Советъ.

14.

Правительство Азербайджанской республики контролируетъ деятельность армянского національного Совета черезъ уполномоченных армянъ.

15.

Войсковыя части квартируютъ въ Ханкендах и Шуше въ составе мирного времени.

16.

Всякое передвиженie войсковыхъ частей въ раiонъ нагорной полосы Карабаха, Шушинского, Джеванширского и Джебраильского уездовъ, населенного Армянами можетъ производится съ согласия 2/3 членовъ Совета.

17.

За политического убеждения никто не можетъ подвергаться преследованiю не въ судебномъ, нi въ административномъ порядке.

18.

Все вынужденные выехать по политическимъ мотивам армяне имеютъ право возвратиться на свои места.

19.

Въ Карабахе прiостановливается разоруженie армянского и мусульманского населенiя до решения вопроса о Карабахе на Мирной Конференцiи.

Примечанie. Въ виду того, что разоруженie объявлено по всему Азербайджану, речь может идти о прiостановленiи.

20.

Правительство Азербайджанской Республики оказываетъ материальную и моральную поддержку населению Карабаха въ деле скорбавшего возстановленiя разоренныхъ селенiй мусульманъ и армянъ.

21.

Для лучшего урегулированiя международных отношенiя советомъ созываются периодически общiе и местные армяно-мусульманские съезды.



22.

Полная свобода союзовъ, слова и печати, собрания въ виду военного положенiя по всему Азербайджану разрешаются администрацiей.

23.

Всякiе поступки частныхъ и должностных лицъ преследуются въ судебномъ порядке за исключенiемъ поступковъ и преступныхъ деяний изьятыхъ изъ общей подсудности обязательнымъ постановленiемъ Комитета государственной обороны отъ 11 июня 1919 года.

24.

За участiе въ международныхъ столкновенияхъ, происходящихъ до сихъ поръ, никто не подвергается преследованию.

25.

Настоящее соглашенie вступаетъ въ силу съ момента принятия его 7-омъ Армянском Карабахскимъ съездомъ.

26.

Настоящее соглашенie остается въ силе при всякомъ положенiи.

1. Даниелъ Аракелянцъ, 2. Абраамъ Гисабекянцъ, 3. Симонъ Погосовъ, 4. (боленъ), 5. Сумбатъ Балаянцъ, 6. Бениаминъ Бабакевянцъ, 7. Исраелъ Гусикведянъ, 8. Абраамъ бекъ Киханов, 9. Бахши Мурадовъ, 10. Ованесъ Аврамянъ, 11. Степанъ Степанянъ, 12. Акопъ Баласанянъ, 13. Тигранъ Меликъ Каспарянъ, 14. Аванесъ Каспаровъ, 15. Левонъ Вартановъ, 16. Арсенъ Иоганисянъ.

г. Шуша
22 августа 1919 г.

Пункты Договора 22 августа 1919 г. между Правительствомъ Азербайджана и Армянскимъ населенiемъ Карабаха, нарушенные Азербайджаномъ Ген. Губ. Султановымъ.

*Թիվ 39*

Ֆրանսերեն
Ֆ. 200, ց. 1, գ. 201, թ. 72ա
9 օգոստոս

Պատճենները

Խաղաղության կոնֆերանսի նախագահ
Պարոն Կլեմանսոյին

Պողոս Նուբար փաշային ազգային պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանին (ՀՀ պատվիրակության նախագահ)

Հայաստանի կառավարության կողմից ստացված պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ ընթացիկ օգոստոսի 15-ին Բրիտանական զորքերը հեռանում են Անդրկովկասից և էրզրումից: Թուրք-թաթարական շարժումը արդեն սկսում է սպառնալ հայ ժողովրդի գոյությանը: Բրիտանական ուժերի ներկայությունը մասամբ զսպում է այդ շարժումը: Նրանց հեռացումով անխուսափելի աղետ կսկսի: Ամբողջ հայ ժողովրդի գոյությունը վտանգի տակ է, այն դեպքում, երբ դաշնակիցների հաղթանակը Հայաստանին խոստանում էր ազատություն և կուլտուրական կյանք: Մարդկային արդարության և Հայաստանի գոյության անունից պահանջում եմ շտապ և եռանդուն միջոցների ձեռք առնում աղետից խուսափելու համար: Հայկական կառավարությունը խորապես համոզված է, որ դաշնակիցները իսկական միջոցներ կտրամադրեն իրենց որոշումները պարտադրելու թուրք-թաթարներին:

Հայաստանի նախագահ մինիստր՝ Խատիսյան
Արտաքին գործերի մինիստր



*Թիվ 40*

23.09.1919 թ.
Ֆրանսերեն

Պարոն Կլեմանսոյին
Խաղաղության Կոնֆերանսի նախագահ
Փարիզ

Պարոն նախագահ

1918 թ. օգոստոսի 28-ին կայացած վերջին ժողովում, որոշվեց ձևական կերպով և ժամանակավորապես կարգավորել Ղարաբաղի հարցը տեղեկանալով Ադրբեջանի կառավարության ժամանակավոր փաստաթղթերի հետ, սույն երկրի մասին:

1918 թ. Անդրկովկասում թրքական ներխուժման ժամանակ, Ադրբեջանի զորքերի բոլոր ջանքերը, որոնք օգնում էին գերմանա-թրքական շարժմանը, Ղարաբաղի հայերի հերոսական դիմադրության շնորհիվ ջախջախվեցին, որոնք իրերի բնական բնույթով կռվում էին համաձայնականների կողքին (Դաշնակից երկրների - Ա. Ղ.): Այսպիսով, երբ Մեծ հաղթանակը գերմանացիներին և թուրքերին ստիպեց ազատել Անդրկովկասը, Ղարաբաղի ժողովուրդը, իր երկրի բացարձակ տերն էր (հիմնականում հայեր): Երբ դաշնակից պետությունները իրենց իսկությունների տակ առան Անդրկովկասը և այնտեղ ուղարկեցին գեներալ Թոմսոնին, բրիտանական զորքերով: Ղարաբաղի բանակի գլխավոր հրամանատար, գեներալ Անդրանիկը հաղթանականորեն շարժվում էր Շուշի՝ Ղարաբաղի մայրաքաղաքը: Այն ժամանակ գերագույն կոնֆերանսը կարգադրեց՝ դադարեցնել ամեն տեսակ թշնամություն՝ գրավված երկրներում, սպասելով վերջնական որոշմանը: Գեներալ Անդրանիկը դադարեցրեց իր առաջխաղացումը և նույնիսկ հետ քաշեց զորքերը կռվի դաշտից, Անդրկովկասի բրիտանական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Թոմսոնի պահանջով, գեներալ Ֆ. Ուոկերի 1919 թ. փետրվարի 19-ին գրած նամակի համաձայն: Հայկական Հանրապետությունը ուզեց խստիվ հետևել համաձայնականների ցանկությանը: Սակայն փետրվարի սկզբից Ադրբեջանի կառավարությունը իր զորքերը առաջ շարժեց և գրավեց այդ երկրի ռազմագիտական կետերը: Հակառակ Ղարաբաղի ազգային ժողովի բուռն բողոքներին և ՀՀ բողոքներին գեներալ Ուոկերը, իր նամակով հայկական զորքերը ետ էր քաշել Ղարաբաղից, իսկ թաթար Սուլթանովին երկրի կառավարիչ նշանակեց և Հայկական Հանրապետությունը տեղեկացրեց իրողության

մասին: Հայկական կառավարությունը բողոքեց Ադրբեջանի կառավարությանը, որ ստատուս-քուոն փոխվել է և որի երաշխավորությունը դաշնակից պետությունները պետք է ապահովեն: Ղարաբաղի ժողովուրդը կատաղի դիմադրություն ցույց տվեց Սուլթանովին Ադրբեջանի ներխուժմանը և չնայած հայկական ուժերի բացակայությանը, Սուլթանովը ստիպված եղավ նահանջի և Ղարաբաղից հեռացավ: 1919 թ. Բաքվից դաշնակից զորքերի հրամանատար գնդապետ Շատելվորդը Կոմյունիկե հրապարակեց, որով Ղարաբաղի ժողովրդին հրավիրում էր՝ առանց դիմադրության հպատակվել Սուլթանովին և ընդունել Ադրբեջանի վարչությունը: Մյուս կողմից գնդապետը ջանում էր հայ ազգային ժողովին համաձայնեցնել՝ ընդունելու Ադրբեջանի հպատակությունը: Հայաստանի կառավարությունը հեռագրով բողոքեց Անդրկովկասի դաշնակից հրամանատարությանը գնդապետ Շատելվորտի կոմունիկեի դեմ, որը հակառակ էր խաղաղության կոնֆերանսի որոշմանը: Ղարաբաղի ազգային ժողովը անմիջապես մերժեց Շատելվորտի այս առաջարկը ուսումնասիրելուց հետո: Այն ժամանակ Ադրբեջանի կառավարությունը կանոնավոր զորքերով և անկանոն քուրդ-թաթար հորդաներով հարձակվեց հայկական գյուղերի վրա: Թալանեց ամեն ինչ և կոտորեց անպաշտպան ժողովրդին: Բրիտանական ուժերի հրամանատարն իր զորքերը դուրս էր բերել Ղարաբաղից: Հայկական միսիան հեռացել էր այնտեղից: Կողոպուտի ու թալանի հետևանքով սկսվեց սովը: Տեղական մուսուլմանները, Ադրբեջանի կառավարությունը տնտեսական բոյկոտ ու ճնշում կատարեցին և ստիպեցին Ղարաբաղի հայկական ազգային ժողովին վերոհիշյալ ժամանակավոր զինադադարը ընդունելու:

Հայաստանի հանրապետական կառավարությունը այս իրողությունները ներկայացնելով Խաղաղության կոնֆերանսին, բուռն բողոքում է ժամանակավոր կարգավորման դեմ, որ բռնի կերպով է հարկադրված Ղարաբաղի ժողովրդին, երկիր, որ միշտ Հայաստանի անբաժան մասն է եղել, որի այժմ ճնշող մեծամասնությունը հայ է, 355.000 հայ, միայն 130.000 զանազան ազգություններ:

Աշխարհագրությամբ Ղարաբաղը կպած է հայկական սարահարթին և Հայաստանի հյուսիսային սահմանների պաշտպանության միակ ելակետն է հանդիսանում:

Ղարաբաղին ուրիշ տիրապետության հարկադրել, դա կնշանակի հակառակել ազգերի իրավունքի այն սկզբունքներին, որի հիման վրա ամեն ազգ իրավունք ունի իր ճակատագիրը տնօրինել ինչպես ինքն է կամենում (խոսքն ինքնորոշման իրավունքի մասին է - Ա. Ղ.): Ղարա-



բաղի գրավման հետևանքով, Ադրբեջանը ձգտում է պանտուրինյան (խոսքը պանթուրքիզմի մասին է - Ա. Ղ.) ձգտումների իրականացմանը: Ղարաբաղն ու Նախիջևանը միացնելով Ադրբեջանին և ապա՝ Թուրքիային ու Պարսկաստանին, ստեղծել խիստ մուսուլմանական մաս, ռուսական Հայաստանը կտրել թուրքական Հայաստանից, թույլ չտալ միասնական Հայաստան կազմել:

Այդ նպատակին հասնելու համար՝ քրդական ու թաթարական հորդաները կոտորում էին Ղարաբաղի հայկական գյուղերի բնակիչներին: Ադրբեջանի կառավարությունը ջանասիրությամբ ապստամբության էր դրդում Նախիջևանի և Շարուրի մուսուլմաններին՝ հատկապես հանրապետության դեմ: Ադրբեջանը իր տիրապետությունը Ղարաբաղում հաստատելուց հետո, ամեն կերպ կաշխատի այնպես անել, որ հայ ժողովուրդը ստիպված լինի թողնել հեռանալ իր հայրենի օջախից, ինչպես այժմ անում է Նախիջևանում և Արեշում:

Այդ տիրապետությանը հակադրվելով, կնշանակի մշտական դարձնել այն արյունահեղ կոնֆլիկտները, որ տեղի են ունեցել մինչև այժմ:

Հայկական կառավարությունը այս վերոհիշյալ իրողությունները ներկայացնելով, մի անգամ ևս իր խորին վստահությունն է հայտնում խաղաղության կոնֆերանսի արդարադատության նկատմամբ: Նա բոլորովին ապահով է, որ այդ հարցի նկատմամբ բարյացակամ որոշում կընդունվի, մի հարց, որ կենսական նշանակություն ունի Հայաստանի համար:

Ըստ Խատիսյանի

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355 (մաս I)

***Թիվ 41***

«Նոր Աշխատավոր» 210, 8 հոկտեմբերի 1919 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լոնդոնի “The Westmister Gazete”-ի օգոստոսի 18 թվակիր համարի մեջ տպված է հետևյալ հոդվածը. «Ինչ կը պատահի, երբ բրիտանական զորքերը հեռանան: Կարևոր նկատառումներ»:

Դժբախտ Հայաստանը մեծապես մտահոգված է ինքն իրեն ձգվելու հեռապատկերեն: Վաղուց արդեն վճռված էր, որ Մեծ Բրիտանիան հետ

պիտի կանչի իր զորքերին այս ամսի կեսին և չափազանց դժվարին է փոխել այդ որոշումը: Մեզ վրա առանձին պարտականություն կա Հայաստանի վերաբերմամբ, իսկ մեր զորքերի հեռացումը հավասարազոր է հանդիսանում հայոց գրեթե անխուսափելի ոչնչացում թուրքերի և քրդերի ձեռքով:

Սիա արդեն մի քանի շաբաթից ի վեր յայտնի է դարձել, որ նորից սկսվել են ինտրիգները և ամենավատ թուրք տարրերը գլուխ են բարձրացրել այն հեռապատկերի առջև, որ Մեծ Բրիտանիայի զսպող ձեռքի ազդեցությունը դադարելու է:

....

Բայց բոլորովին անհնարին է, որ մենք կարող լինեինք ցինիկաբար հեռանալ, առանց հաստատուն վարչություն սահմանելու այդ շրջանում:

Տարակույս չկա, որ Հայաստանի ապագայի ապահովումը կը հանձնվի ժողովուրդների լիգային: Չնայելով այն բանին, պետք է համոզել Ամերիկային, որ ընդունի մանդատը, իսկ մինչ այդ՝ Հայաստանի պաշտպանության հոգածողությունը Մեծ Բրիտանիայի կենսական պարտքն է հանդիսանում:

Ինչ կարող են անել հայերը:

Բայց նախ պետք է այնպես անել, որ հայերը կարողանան իրենք իրենց պաշտպանել: Հակառակ դեպքում իմ ստացած տեղեկությունների համաձայն անխուսափելի է որ պիտի ասենք սոսկալի կոտորածների մասին: Տարակույս չկա, որ զենքն ու ռազմամթերքները կը թողնվեն հայերին, չնայելով, որ մինչև այժմ մերժված են ռազմամթերքների վերաբերյալ բոլոր խնդրանքները: Եթե ինչպես հարկն է զինենք հայերին, նրանք կարող կլինեն պաշտպանվելու համար 50.000 զորք հանդես բերել:

Մեր զորքերի հեռացումը յետաձգելու պատճառաբանություններն հիմնավոր են մանավանդ այն պատճառով, որ Ամերիկան գործնականապես հետազոտություն է կատարում, թէ հնարավոր է արդյոք որ նա իր վրա վերցնի մեր պատասխանատվությունը:



***Թիվ 42***

Ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 115

**ДОКЛАДЪ**
**О ПОЛОЖЕНІИ В АРМЯНСКОЙ ЧАСТИ КАРАБАХА.**

Шестого іюня изъ г. Шуши прибыли въ Тифлисъ члены Карабахскаго Національного Совѣта Ишханян, Тумянъ, Теръ-Аствацатурянь и обрисовали событія въ Карабахѣ, совершившіяся съ 3-го іюня:

3 іюня изъ армянскихъ дѣятелей г. Шуши семь человѣк приглашаются въ англійскую миссію, где начальникъ миссіи маіор Макъ-Мосинъ требуетъ отъ нихъ подписку въ томъ, что они съ этого момента болѣе не будутъ заниматься политическими дѣлами. Приглашенные, выяснивъ нѣсколько коренных вопросовъ, дали эти подписку.

Въ тот же день азербейджанскіа войска въ извѣстныхъ частяхъ города производятъ передвиженія и занимаютъ нѣкоторыя важныя позиціи въ армянской части города. Въ городѣ начинается паника...

Одновременно изъ миссіи получается свѣдѣніе, что Султановъ требуетъ ареста и передачи ему указанныхъ выше армянскихъ дѣятелей, угрожая въ противномъ случаѣ бомбардировать городъ орудійнымъ огнем. Маіоръ Макъ-Мосинъ заявляетъ, что онъ не передастъ Султанову армянскихъ дѣятелей, но совѣтуетъ имъ во имя интересовъ армянскаго населенія оставить городъ и подъ охраной англійскихъ солдатъ выѣхать въ Тифлисъ...

Начальникъ Информаціоннаго Бюро
при Армянской Дипломатической миссіи въ Грузіи

*Թիվ 43*

Ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 4/բ
18 նոյեմբերի 1919 թ.

Հայաստանի Դիվանագիտական
ներկայացուցչին Վաշինգտոնում
Արտաքին Գործերի Մինիստր

Անգլիացիների գնալուց հետո մենք գտնվում ենք ամերիկացիների հովանավորության տակ, բայց այդ հովանավորությունը կրում է միայն պլատոնական բնավորություն, որովհետև, ամերիկացիք զրկված լինելով զինվորական ուժից, ոչ մի հնարավորություն չունեն ստիպելու թաթարներին և տաճիկներին կատարել իրենց կարգադրությունները: Մեր կառավարութեան առաջարկությամբ և Ադրբեջանի համաձայնութեամբ որոշվել էր, հայ-ադրբեջանական Կոնֆերանս կազմակերպել Բաքվում նոյեմբերի 20-ին, ուր պիտի վճռվեն այն բոլոր վիճելի խնդիրները, որոնք պատճառ էին դառնում երկու հարևան երկրների թշնամությունների: Բայց այս կոնֆերանսի կայանալը յետաձգվեց և մեր յարաբերությունները ավելի սուր կերպարանք ստացան հետևյալ պատճառով:

Շնորհիվ Հասկելի միջամտությանը Ադրբեջանը արդեն ընդունել էր մի պայմանագիր, որով Շարուրի, Նախիջևանի և Գողթանի շրջանները պիտի կազմեին Ամերիկյան նահանգապետություն, չեզոք զոնա, մինչև վեհաժողովը:

Ա. Խատիսյան





*Թիվ 44*

6 մարտի 1920 թ.

**ԿՐՃԱՏՈՒՄՈՎ**

1.

Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը բաղկացած 96 պատգամավորներից՝ Գյուլիստանի, Ջևանշիրի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի շրջաններից, որը տեղի ունեցավ Շոշ գյուղում 1920 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 4-ը, մանրամասն և բազմակողմանի քննության առնելուց Լեռնային Ղարաբաղի ներկա քաղաքական դրությունը գտնում է, որ 7-րդ համագումարից հետո (22-ին օգոստոս 1919 թ.): Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը, 8-րդ համագումարը համաձայն իրենց ընտրած ժողովրդի տված մանդատի, հետևյալ որոշումները կայացրեց՝

- Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը:
- 1920 թ. փետրվարի 22-ին Խանքենդում, Ասկերանում և Շուշի-Եվլախ տրակտի վրա կառավարության զորքերի և ագենտների ձեռքով ակնհայտնի ձևով կոտորել են հարյուրավոր հայերի, թալանել ու տարել Խանքենդի հայերի բնակարանները:
- 8-րդ համագումարը հաստատ մնալով 7-րդ համագումարի որոշումների և երկուստեք ստորագրած ժամանակավոր համաձայնութեան, մինչև վեհաժողովի վերջնական որոշումը Ղարաբաղի և առհասարակ Անդրկովկասի հանրապետությունների սահմանների վերաբերյալ պահանջված Ադրբեջանի կառավարությունից ժամանակավոր համաձայնության կետերի ամբողջական կիրառումը կյանքի մեջ:

Վճիռ

- Բողոքում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ Խանքենդում, Ասկերանում և Շուշի-Եվլախ տրակտի վրա տեղի ունեցած անլուր կոտորածի առթիվ և կոչ է անում կուլտուրական աշխարհի խղճին վերջ տալու Ադրբեջանի կառավարության նման քաղաքականության:

Որ նման դեպքերի կրկնությունը կը ստիպէ Լեռնային Ղարաբաղի հայութեան իրենց կեանքի և պատվի պաշտպանության համար համապատասխան միջոցների դիմել:

Նախագահ Ղարաբաղի
Հայութեան 8-րդ համագումարի

Ֆ. 200, ց. 1, գ. 563, մաս I, թ. 32

*Թիվ 45*

Ֆ. 1022, ց. 3, գ. 260, թ. 1
20.03.1920 թ.

Բաքվից Թիֆլիսում Դիվանագիտական ներկայացուցչին

Ըստ կառավարական աղբյուրների՝ դա մի կազմ. որոշ պլանով գործողություն է, որը ծավալվում է: Հարձակումը հանկարծակի է եղել առանց նախանշանների, կասկածում են թե Հայաստանի կառավարության մատն է միջին, թե կապ ունի բոլշևիկների առաջխաղացման հետ:

Անեն միջոց ձեռք են առնում շարժումը խեղդելու: Ուղարկում են կանոնավոր զորամասեր՝ հետևակ և քնդանոթաձիգ: Գավառներում կազմակերպում են կամավորական խմբեր, որոնք ուղարկում են ճակատ:

*Թիվ 46*

Ֆ. 1022, ց. 5, գ. 54, թ. 1-2

Թե ինչ էր կատարվում Ղարաբաղում, տեղյակ էր նաև Լենինը ՀՀ Արտգործ նախարարից հղված հեռագրից առ այն, որ Ղարաբաղը իր հայ ազգաբնակչությամբ հրաժարվում է մտնել Ադրբեջանի կազմի մեջ:



*Թիվ 47*

Ֆ. 200, ց. 1, գ. 563, էջ 48-50 / բնագիր

Մեմորանդում Ղարաբաղի VIII համագումարի կողմից երկրի քաղաքական դրութեան վերաբերեալ, ներկայացրած դաշնակից պետութիւնների և Անդրկովկասի հանրապետութիւնների ներկայացուցիչներին

1919 թ. օգոստոսի 15-ին Ղարաբաղի հայ ժողովրդի ամբողջ ներկայացուցչութիւնը VII-րդ համագումարում մանրամասն քննելով Ղարաբաղի քաղաքական վիճակը, այն իրաւական հողի վրայ էր կանգնած, թե վիճելի երկրամասերի այս կամ այն պետութեան հետ վերջնականապես կցելու խնդիրը կապած է Վեհաժողովի որոշումից և հետևապես իզուր արիւնահեղութեան տեղիք չըտալու և հարևան ժողովրդի հետ խաղաղ կենակցելու համար անհրաժեշտ է կեանքի այնպիսի ճանապարհ կցել, որ երկու ժողովուրդներն էլ համերաշխ և հանգիստ ապրեն:

Այդ հիման վրայ Ղարաբաղի հայութեան VII-րդ համագումարը Ադրբեջանի կառավարութեան ներկայացուցիչների հետ որոշ համաձայնութեան գալով մշակեց 26 կետից բաղկացած ժամանակավոր համաձայնութեան մի կանոնագիր: Հայ ժողովրդի ներկայացուցչութիւնը այն յոյսն ունէր, թե այդ համաձայնութեամբ երկու ժողովուրդներին էլ հաշտ ու համերաշխ կըկենակցեն առանց իրար վնասելու ու կառավարութիւնն էլ առանց աչառութեան երկու ժողովուրդներին համահաւասար վերաբերմունք ցույց կըտայ և կարգ ու կանոն կըպահպանեի:

VIII-րդ համագումարի շօղը հաւաքուած պատգամաւորները դժբախտաբար ստիպւած էին մատնանիշ անել այն տխուր ու միանգամայն ցաւոտ հանգամանքը, որ համաձայնութիւն կայացնելուց յետոյ մինչև այսօր Ադրբեջանի Կառավարութիւնը ոչ մի կարգ ու կանոն չըկարողացաւ պահպանել Ղարաբաղում, այլ ընդհակառակը առիք եղաւ անիշխանութեան: Անցեալներում ոչ մի ժամանակ հայ ժողովուրդը գոհերով և թե տնտեսապես այնքան վնասներ չի տարել որքան համաձայնութիւնը կայանալուց յետոյ շնորհիւ կառաւարութեան աչառութեան և թուլութեան: Ակնյայտնի մարդասպաններում ու գողերը օրը ցերեկով սպանում, թալանում են խաղաղ ժողովուրդին և դրա դեմ ոչ մի միջոց ձեռք չի առնուում, մեղաւորները չեն պատժւում կանոնաւոր ասկեարները թալանում են խաղաղ ժողովրդի տները կոտորում տղամարդկանց, կանանց ու երեխաներին և ոչ ոք դրանցից չի պատժւում: Աւիրւած գիւղերի հայ բնակիչները մինչև այսօր էլ թափառում են այս ու այն գիւղե-

րում և Ադրբեջանի կառավարութիւնը հակառակ իր խոստման դրանց չի բնակեցրել իրենց վայրերում: Ժամանակաւոր համաձայնութեան ամենագլխաւոր ծրագիրը միանգամայն խախտւած են Ադրբեջանի կառավարութեան կողմից: Առաջին կետը պարզ ասում է “Настоящее Временное Соглашение принимается сторонами до решения ... вопроса на Мирной Конференіи, каковое решеніе обязательно для обоихъ сторонъ”. Մինչդեռ Ղարաբաղի ժամանակաւոր գեներալ նահանգապետը իր սոյն տարւոյ փետրուարի 14-ի գրութեան № 1927 յանուն Շուշու Ազգային Խորհրդի յայտնում է հետևեալը “....Дальше въ первихъ пунктахъ программы относительно политического вопроса Карабаха, прошу поставить на обсужденіе принципиальный вопросъ объ окончательномъ вюжденіи Карабаха въ Азербайджанъ, Карабах неразрывный экономии его часть”.

Բացի դորանից Ղարաբաղի ժամանակավոր գեներալ նահանգապետը Սուլթանովը սոյն թւի փետրուարի 14-ին ըստ ազգային Խորհրդի, յուր խորհրդին կից հայ անդամների և հայ ինտելիգենցիայի ներկայացուցիչներին պաշտոնական խորհրդակցութեան մեջ պարզ կերպով արտայայտել է այն մտքով, որ կոնֆերանցեն գոյութիւն չունի ահա նոյն խոսքերը բառացի “Какъ смотритъ Национальный советъ на будущее Карабаха. Мирный Конференціи уже больше ...., Францiя, Италия не могутъ раслабить свои силы, не то что нашу кашу и мы самы должны выйти изъ этого ненормального положения”: Այս խոսքերից պարզ հասկանալի է, որ Սուլթանովը մինչև իսկ ոչ մի արժեք չէր տալիս վեհաժողովի որոշումներին, որին մենք երկու կողմերս ոչ ժամանակաւոր համաձայնութեամբ պարտաւորուել ենք ենթարկել հետևապես նա խախտում է մեր պայմանների հենց առաջին կետը:

Համաձայնութեան 7 կետը ասում է ”Все принципіальные вопросы междунаціонального характера не могутъ быть проведены въ жизнь безъ предворительного убежденія въ советомъ”: Մինչև փետրվարի 19-ը գրութեամբ ժամանակավոր գեներալ նահանգապետ Սուլթանովը Շուշու Ազգային Խորհրդին իր վերոյիշեալ պաշտօնական թղթով առաջարկում է ի քննութեան ամենագլխաւոր պրինցիպիալ հարցեր Ղարաբաղի վիճակը ընդ միշտ կապել Ադրբեջանի հետ. Նախ Շուշու Ազգային Խորհրդին չի վերապահած ոչ մի քաղաքական հարց քննելու իրաւունք և երկրորդ համաձայն 7-րդ կետի այդպիսի սկզբունքային խնդիրը նախ պետք է քննութեան առնւի նահանգապետի կից Խորհրդում և ապա առաջարկւում է համագումարին հետևապես և ամբողջապես խախտած համաձայնութեան այդ կետը:



Համաձայնութեան 15-րդ կետը հետևապես “Войсковые части квартируются въ Ханкенгахъ и въ Шуше въ составе мирного времени”, բայց ամբողջ 6 ամսոյ ընթացքում այդ կետը չի պահպանւած. Զանգեզուրի դեմ երկու անգամ արշաւելու դեպքում թե Խանքենդի և թե Շուշի մտել են մի քանի գնդեր, որոնք եկել են Գանձակից, Բագւից և Ջաբրաիլից, որոնք ահագին յուզում են առաջ բերել Ղարաբաղի ժողովրդի մեջ....:

16-րդ կետը ասում է”Всякие передвижения войсковых частей въ районы нагорной части Карабаха Шушинского, Джеванширского и Джебраилского уездовъ, населенный армянский можетъ производится съ согласия 2/3 чистовъ совета”.

Համաձայնութեան այս կետը հիմնովին խախտուած է սկսած 1919 թ. հոկտեմբեր ամսից մինչև այժմ Ադրբեջանը մոտ 12 հազար զորք է անցկացրել Ասկերանից, Խանքենդուց և Շուշուց հոկտեմբեր ամսին դեպի Զանգեզուր առանց նոյն իսկ Խորհրդի անդամների կարծիքն իմանալու, մինչդեռ այդպիսի մի կարևոր խնդիր պիտի որ քննութեան առնւեր խորհրդում և որոշւեր ձայների 2/3-ի համաձայնութեամբ: Բացի դրանից Ադրբեջանի կառավարութիւնը պաշտոնապես առաջարկել է Ազգային Խորհրդին և Ջիւանշիրի հայ ժողովրդին Աւան Խզբալինի կալւածքում զորք կենտրոնացնելու համար, մի հանգամանք, որ միանգամայն խախտում է ամբողջ ժամանակաւոր համաձայնութիւնը:

Ղարաբաղի հայութեան VIII համագումարը քննութեան առնելով Ղարաբաղի ներկայ քաղաքական վիճակը և մանրամասն ծանօթանալով բոլոր վերոյիշեալ փաստերի հետ յանգեց հետևեալ եզրակացութեան՝

Ղարաբաղի VIII համագումարի բանաձևը քաղաքական դրութեան վերաբերեալ.

Լեռնային Ղարաբաղի հայութեան VIII-րդ համագումարը (բաղկացած 26 պատգամավորներից՝ Գիւլիստանի, Ջիւանշիրի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի շրջաններից), որը տեղի ունեցաւ Շօշու գիւղում 1920 թ. փետրուարի 28-ից մինչև մարտի 4-ը, մանրամասն և բազմակողմանի քննութեան առնելուց Լեռնային Ղարաբաղի ներկայ քաղաքական դրութիւնը, գտնում է, որ VII համագումարից յետոյ (22-ին օգոստոսի 1912 թ.) Ադրբեջանի կառավարութիւնը պարբերաբար խախտել է ժամանակաւոր համաձայնութեան ամենագլխաւոր կետերը: VIII համագումարը համաձայն պատգամաւորների իրանց ընտրած ժողովրդի տւած մանդատի, հետևեալ որոշումները կայացրեց՝

1. Ադրբեջանի կառավարութիւնը պարբերաբար խախտել է Ղարաբաղի ժամանակաւոր համաձայնութեան ամենագլխաւոր կէտերը:
2. 1920 թ. փետրուարի 22-ին Խանքենդում, Ասկերանում և Շուշի-Եւլախ տրակտի վրայ կառավարութեան զորքերի և ազենտների ձեռքով ակնյայտնի նպատակով կոտորել է մի քանի հարիւր հայերի, թալանել ու տարել Խանքենդում հայերի բնակարանները:
3. VIII համագումարը հաստատ մնալով VII համագումարի որոշումների և ..... ստորագրւած ժամանակաւոր համաձայնութեան մինչև Վեհաժողովի վերջնական Ղարաբաղի և առհասարակ Անդրկովկասեան հանրապետութիւնների սահմանների վերաբերեալ՝ պահանջւած և Ադրբեջանի կառավարութիւնից ժամանակաւոր համաձայնութեան կէտերի ամբողջական վերահաստատվում են:
4. Վճռականապես բողոքում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ Խանքենդում, Ասկերանում և Շուշի-Եւլախ տրակտի վրայ տեղի ունեցած անլուր կոտորածի առթիւ և կոչ է անում կուլտուրական աշխարհի խղճին՝ վերջ տալու Ադրբեջանի կառաւարութեան նման քաղաքականութեան:
5. Որ նման դեպքերի կրկնութիւնը ...............Լեռնային Ղարաբաղի հայութեան իրենց կեանքի և պատւի պաշտպանութեան համար համապատասխան միջոցներ դնել:

Միաժամանակ VIII համագումարը կոչ է ուղղում Ադրբեջանի թուրք գիւղացիութեան իր բողոքի ձայնը միացնելու Լեռնային Ղարաբաղի հայութեան բողոքի, ինչպես նաև դիմումն է անում մամուլին:

Այս բանաձևի պատճենը որոշվել է ուղարկել Դաշնային պետութ. Անդրկովկասի ներկայացուցիչ Յասկելին, Դաշնակից պետությունների դիվանագիտական և զինվորական ներկայացուցիչներին, Անդրկովկասյան երեք հանրապետություններին, ինչպես նաև Ղարաբաղի ժամանակավոր գեներալ-նահանգապետին:

Նախագահ Ղարաբաղի հայութեան
8-րդ համագումարի՝ Դ. Առաքելեան

Քարտուղար՝ Բ. ...........

1920 թիվ
6 մարտի



## Թիվ 48

Նոր Աշխատավոր, 21 մարտի, 1920, էջ 2

### ՂԱՐԱԲԱՂԻ ԴԱՎԱՃԱՆՆԵՐԸ

Մարտի 13-ին Բագվից մեզ հեռագրում են որ նախարարապետ Ուսուբեկովի կարգադրությամբ Ղարաբաղի համագումարը հետաձգված է անորոշ ժամանակով: Յավաքված պատգամավորների մի մասը հեռացավ իր տեղերը, մնացածից 50 հոգի, գլխավորապես բոլշևիկներ և սոցիալիստ հեղափոխականներ քաղաքացի վճռեցին Ղարաբաղը համարել Ադրբեջանի մաս, իսկ քաղաքական կապը ապագայում հարմարեցնել Ադրբեջանի քաղաքականության հետ: Գավառի ներկայացուցիչները՝ 77 հոգի հավաքվեցին Շուշու վերին մասում և վճռեցին պնդել գրավոր համաձայնության վրա, եթե համաձայնությունը խանգարվի որոշեցին դիմադրել:

(Յառաջ)

(Սուլթանովը թնդանոթներով շրջապատել էր Շուշին)

## Թիվ 49

Ֆ. 1022, ց. 8, գ. 45, թ.1

Март 22-23

### ДОКЛАД

О положении на фронтах в Карабахе.

**Обстановка до прихода регулярных войск.**

В ночь с 22-23 марта 1920 года в день Байрама армянами было совершено организованное нападение одновременно на гарнизоны: Ханкенды, Аскеран с целью обезоружить первый и захватить второй, как сильную природную позицию запиравшую нагорный Карабах, от остальной части Республики.

......

Захват Аскерана поставил в критическое положение гарнизоны:

Ханкенды и Шуши, лишив их во первых, моральной поддержки и во вторых отрезав их от базы.

Шушинские события 23-го марта являются, несомненно, отголоском этих нападений и особо ожесточенность этих событий, объясняется безнадежностью положения Мусульманского населения, в которое оно попало, окруженное со всех сторон армянами, после захвата Аскерана. Старым Правительством был сформирован отряд составе 1500 штыков и двух батарей-кому была поставлена задача, водворить порядок в Карабахе и восстановить сообщение Агдам-Шуша.

Отряд этот вступил в бой 28-29 марта, который кончилось неудачей.

Отряд этот прибыл в Агдам сосоредоточился 28-го марта, а 29-го марта была сделана первая попытка овладеть Аскераном, которая кончилась неудачей.

.....

**Թիվ 50**

Ֆ. 1022, ց. 2, գ. 168, թ. 14

Մարտի 21

## ДОКЛАД

Доводится до сведения Центрального Советск[ого] Правительства, что Шушинская организация А. К. П., состоящая по качеству своему 75% из главным образом в городе Шуше занимались спекуляцией, контрабандой и т. д....

Панисламистов "Итихада" в партию коммунистов пользуясь новым положением, заниматься бесприпятственно спекуляцией работая подпольно в пользу бывшего мусульманского Правительства....

